

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԿԻՄ ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆ

ՕՋԱԽԻ ԳԻՐԸ.  
ՆՇԽԱՐՆԵՐ



ԿԻՄ ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆ

# ՕԶԱԽԻ ԳԻՐԷ. ՆՇԽԱՐՆԵՐ

45 171



ԵՐԵՎԱՆ 2002

Հլատարակության է երաշխավորվել ՀՀ Գլխադասնունների  
Ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի կողմից

Տպագրությունն իրականացվել է հովանավորությամբ  
ՇԱՀԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ՀՈՎԱՍՏՓՅԱՆԻ և  
ՎԻՏԱԼԻ ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Պատասխանատու խմբագիր՝  
**Ա. ՂԱԶԻՅԱՆ**

**Ղ 287 ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ Կ. Հ.**

ՕՋԱԼԻ ԳԻՐԸ. ՆՇԵԱՐՆԵՐ: — Եր.: «Տիգրան Մեծ», 2002 թ., 280 էջ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող գրքի մեջ ամփոփված են Արցախ  
աշխարհի գյուղատնտեսության մեկի՝ Գյուլիստանի մեկնության՝ խորհրդային ժա-  
նանակների Շահումյանի շրջանի համառոտ պատմությունը, պատմա-ճարտա-  
րուսկետական հուշարձանների նկարագրությունն ու վիճակագրական նյութերը, բա-  
նախյուսակաև ու ազգագրական բնույթի նյութեր: Բերված են այդ գյուղերի խոս-  
վածքի՝ հեղինակի տեսանկյունից ուշադրության արժանի բառերի և տարածված  
ազգանունների ցանկերը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Կարող է հետաքրքրել պատմաբաններին, բանասերներին, ազգագրագետ  
ներին, ինչպես նաև ընթերցող լայն շրջաններին:

Ղ 050302091.5  
774(01)-2002

ԳՄԳ 63.3 (2Հ)

**ԱՌԱՋԱԲԱՆ**

Հայաստան աշխարհի մի դրախտային անկյուն՝ պատմական Գյուլիստանի  
մեկնության տարածքը, 1921 թ. բռնակցվեց Ադրբեջանին, բայց կարողացավ մա-  
քառումով պահպանել իր ազգային նկարագիրն ու ոգին: Հայ ժողովրդի այդ հերո-  
սական հատվածը սխրանքներ գործեց անցյալում. թե՛ նորոթյա ինքնապաշտպա-  
նական անհավասար կռիվներում, արյան գնով նպաստեց Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կայացմանը: Սակայն ... 1992-ի հունիսի 13-14-ին հայաթափ-  
վեց հայոց հողի այդ չքնաղ անկյունը՝ Շահումյանի շրջանը: Եղան հարյուրավոր զո-  
հեր, անհայտ կորածներ ...

...Դրախտային հողը դարձավ խորտակված նրագների աշխարհ: Եվ շահում-  
յանցին այսօր, որտեղ էլ գտնվի. ճոխ, թե՛ սող պայմանների մեջ, ապրում է իր գեր-  
այ բնօրաննի կարոտով: Այ՛ մի ցոր չի հագնեցնում նրա ծարավը, որովհետև նա սո-  
փոր է Բնրդի ու Չիքի աղբյուրներին, Սպիտակ աղբյուրին, նա սոփոր է Վարար գետին  
ու Գյուլյուտին, Մոսովի ու Այհարակի լանջերից բխող կարկաչափոտ առվակներին:  
Նրա համար աշխարհի ոչ մի միլիգ իր այգիների բերքի համը չունի, ոչ մի հանրա-  
հայտ քաղաք ու հրապարակ «կենտին դրաղի» հմայքը չունի: Որտեղ էլ տուն կատուցի  
նա, տան առաջ մուշկերթի «չարդախ» պիտի սարքի, ինչ այգի էլ որ գցի, անպայման  
գկոթ պիտի տնկի, հող չէ, եթե նույնիսկ հեռավոր հյուսիսում մուշկերթ չհասնի, այդ  
վազը նրան ամեն օր հայրենի գյուղը կհիշեցնի, գկոթն նրան կհիշեցնի հարազատ  
անտառները: Շահումյանցին աչքը փակում է՝ իր հայրենիքն է տեսնում, յույսը բաց-  
փում է՝ այդ մասին է խոսում: Հնուավոր Ղազախստանի Պետրոպոլիսով քաղաքում  
շահումյանցու թոռնիկը կարծում է, թե կենտար հենց խանություն է ստեղծվում, ասում  
է. «Մադի վրա կենտա կլինի»: Իսկ նրա Մարուս տատիկի սիրտը փող է գալիս դրա-  
նից. «Բա մեր դրախտ այգին թուրքի բաժին դառնա, իսկ իմ թոռը կենտաի ծառ տե-  
սած չլինի»: Փոքրիկ Գոռը Երևանում հարցնում է. «Պա՛պ, Շահումյանը բնություն  
ունե՞ր», իսկ նրա հայր Շահենը հուզմունքից խեղդվում է, որ իր որդին չի տեսել ու  
չգիտե, թե ինչ չքնաղ նրկիր է գերի դարձել:

Ցավոք, ոչ միայն մի փոքրիկ Գոռ, շատ-շատները՝ լրագրողներ, նույնիսկ պատ-  
մաբաններ, այն կարծիքին են, թե Շահումյանի շրջանը դաշտային Ղարաբաղն է:  
Շուրջ յոթանասուն տարվա մեկուսացման հետևանքով այսօր հայ մտավորականը  
տնկյակ չէ, որ դա բարձր սարերի ու անդնդախոր կիրճերի, կուսական անտառների  
ու քաջարի հայրդիկների մի լեռնաշխարհ է, որ հայ կյանքն այդ հողի վրա հարա-  
տևել է քաղում դարեր անընդմեջ: Հայ ժողովրդի այն նգակի հատվածներից է դա,  
որն անհիշելի ժամանակներից ի վեր ծնվել, ապրել է այդ հողի վրա, չի տնդահան-



վել, չի խտանվել և անխառը ձևով պահպանել է տոհմիկ ազգային շատ հատկանիշներ, գծեր, նրևայթներ, որոնք վաղուց վերացել են այլ տեղերում:

Բռնապառլի ենթարկված շահումյանցիները ցրվեցին աշխարհով մեկ՝ իրենց հետ տանելով հայրենի հողի ցավն ու կարոտը, անթիվ կորուստների կակիծը: Սակայն ազատագրման ու վերադարձի հույսը չեն կորցնում: Նրանք հավատում են, որ կգա այդ նրջանիկ օրը: Կարոտը բորբոք պահելու, հավատն ամրապնդելու և այդ նրջանիկ օրվա գալու՜ն աջակից լինելու ակնկալիքով ձեռնարկեցինք սույն աշխատանքը:

Աշխարհասփյուռ շահումյանցիների հետ մեկտեղ աշխարհով մեկ սփռվել են այդ հողի վրա ստեղծված գրույցները, խրատական ու թևավոր խոսքերը, զվարճալի պատմությունները, լեզվական եզակի նրևայթները, խաղերը, անկրկնելի սովորույթները, ավանդույթները... Իր հայրենի խոսվածքից մի բառ լսելուն պես շահումյանցին տեղից վեր է թռչում, մեր գյուղերից մի գրույց լսելուն պես կարոտով չի նրա աչքերը փայլում են: Նրա համար թանկ է հայրենի հողի պատմության ամեն մի դրվագ, մեր գերյալ գյուղերին վերաբերող ամեն մի տեղեկություն: Այդ ամենը պահանջեց ու խթանեց ձեռնարկելու սույն աշխատանքը: Ակնկալում ենք, որ շահումյանցու տատապած հոգուն մի փոքրիկ թեթևություն կբերի այս գիրքը: Նպատակ ունեցանք նաև ուժերի ներածին չափով կորստից փրկելու այդ լեռնաշխարհում ստեղծված բանահյուսական, ազգագրական և այլ նյութերը, որոնք կարող են հետաքրքրել ազգագրագետներին, լեզվաբաններին, տարբեր մասնագետներին: Ընդհանրապես կրեդուններ բոլոր արժեքավոր դիտողություններն ու լրագումները:

Համայն հայության օրավոր համախմբումը, հայ պետականության միջազգային հեղինակության ամրապնդումը, հայ ժողովրդի արդարացի դատի նկատմամբ աշխարհի հզորների վերաբերմունքի փոփոխությունը և, ի վերջո, մեր տարածաշրջանի քաղաքական գործընթացների միտումները փստահություն են ներշնչում, որ մեր գերյալ շրջանը անպայման կազատվի: Այդ հողի վրա վերստին կթևածի հայ կյանքը, սակայն դա արդեն կլինի մի նոր, բոլորովին ուրիշ աշխարհ՝ բնակչության կազմով, հարաբերություններով, նիստուկացով: Իսկ կինը, այն, որ կործանվեց, կմնա որպես խորտակված նրագների աշխարհ: Դա մի անբացատրելի ցավազին նրևայթ է, որի ամբողջ ողբերգությունը ըմբռնելի կլինի գուցե միայն շահումյանցուն, ուստի և ստալին հերթին նրան է հասցեագրված սույն համեստ աշխատանքը:

#### ԿԻՄ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

## ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՅԱՆ, ՀՈՂԸ ԿԱՆՉՈՒՄ Է

ԼՂՀ կարգավիճակի, ազատագրված արցախյան փարածքների, իրենց պապենական հողերի բռնի տեղահանված հարյուր հազարավոր հայերի, անհայր կորած, պապանդ համարվող հարյուրավոր խաղաղ բնակիչների հեղազա ճակատագրի հիմնախնդիրների լուծման համար պահանջվում է հսկայական պարկեզայն ուժեղացում Հայաստանի Արցախ-Ուրիշք աշխարհի անցյալի իրողությունների ու նորօրյա պարտության մասին:

Արցախը և Ուրիշքը Մեծ Հայքի՝ պարմական ճակատագրով շաղկապված մահանգներից են, որոնք ներգրավված են եղել հայ կյանքի հուղվույթի մեջ՝ սկսած հեռավոր դարերից: Նրանք հայրենի են եղել մահ որպես *Հայոց Արևելից կողմանք* կամ *Արևելից աշխարհ*:

Հայ պարմագրության մեջ այդ մահանգների մասին առաջին հանգամանակից տեղեկությունները հայտնում է Մովսես Խորենացին (V դ.): Նա գրում է, որ Վաղարշակ թագավորը միասնական հայ պետականության համար սահման է գծել «գեգեթի հայկական խօսիցս», այսինքն՝ հայոց լեզվի փարածման սահմաններով՝ հյուսիսում հասնելով Կուր գետին, բնականաբար ներառելով դրանից հարավ գտնվող Ուրիշքն ու Արցախը: Եվ այս վերջինների վրա կուսակալ է կարգվել Հայկի փոսից Սիսակի որդի Առանը<sup>1</sup>: Կուր գետը Հայաստանի հյուսիսային սահման են ճանաչել մահ ավելի վաղ շրջանի հույն և հռոմեացի պարմիչները: Նույնը շարունակվել է մահ հեղազա դարերում:

Ռուսական գործի առաջխաղացման կապակցությամբ ծանոթանալով անցյալի ու իր ժամանակի նյութերին (XVIII դ. II կես)՝ ռուսական բանակի զորավար Ա. Վ. Սուվորովը Կուր գետը սահման է ճանաչում Հայաստանի ու Աղվանքի միջև<sup>2</sup>: Նույնպիսի փաստեր քանիցս հայտնել է Աբաս-Կուլի-աղա Բաքիխանովը XIX դարում: Հնագույն աղբյուրների վկայությունը ներքան բերում է այն համոզման, որ «Կուր գետի աջ ափը, մինչև Արաքսի հեղ

<sup>1</sup> Տես *Մովսես Խորենացի*, Պատմություն հայոց: Մոսկվա, 1860, էջ 113:

<sup>2</sup> Տես *А. В. Суворов. Документы*, том II. Москва, 1951, с. 224.

միախառնվելու փեղը, կազմել է Հայաստանի սահմանը»<sup>3</sup>: Ա. Ա. Յագարելին Կուր գետից հյուսիս փարածված Բուն Աղվանքը հափակորեն սահմանազարում է Կուրից հարավ գրմվող հայոց երկրից: Առաջինը նա անվանում է Աղվանք (Ալբանիա), իսկ երկրորդը՝ «Հայկական Աղվանք»<sup>4</sup>: Ռուսաստանին միացվելու հենց սկզբնական ժամանակաշրջանից Ալեքսանդր կայսեր իսկ կարգադրությամբ փազգրված նյութերի մեջ Կուր գետը ճանաչվում է որպես սահման Հայաստանի ու Աղվանքի (Ալբանիա) միջև<sup>5</sup>: Յարական պաշտոնական աղբյուրներն ըստ էության մինչև վերջ այդպես էլ ընդունում էին, որ Կուր գետից հարավ ընկած այդ երկրամասը հայկական է ու «մինչև վերջերս հայերն են կառավարել»<sup>6</sup>:

Բնակլիմայական բարենպաստ պայմանների և ռազմավարական կարևոր դիրքի շնորհիվ Արցախ և Ուրիք նահանգները միշտ գրմվել են հայոց երկրի փերերի ուշադրության կենտրոնում: Դեռևս հնագույն շրջանում այս փարածքները ներգրավված են եղել Վանի կամ Արարատյան (կոչված նաև Ուրարտու) թագավորության սահմանների մեջ (մ. թ. ա. IX–VI դդ.): Երկրամասն իր դերն է ունեցել Արարատյան, հետո էլ Արշակունյաց հայկական թագավորությունների կյանքում: Հայաստանում քրիստոնեության փարածման ժամանակ առանչին ուշադրություն է դարձվել երկրի այս կողմերին: Այսփեղ պահպանվել են առաջին քրիստոնյա քարոզիչների հիշատակի հետ կապված բազմաթիվ ուխտավայրեր ու հնագույն հրաշակեթո կեղեցիներ: 301 թ. Հայաստանում քրիստոնեությունը հռչակելով պեղական կրոն՝ հայոց Տրդատ թագավորը հավաքում է երկրի բոլոր 15 նահանգների նախարարներին ու կուսակալներին, որոնց շարքում էին փասներկուերորդը՝ Արցախի, փասներթերորդը՝ Ուրիքի իշխանները: Նրանք ուղեկցում են Գրիգոր Լուսավորչին Վաղարշապատ մայրաքաղաքից մինչև Կեսարիա: Այնփեղ Գրիգոր Լուսավորչին օծվում է հայոց քահանայապեղ: Վերադարչի ճանապարհին Լուսավորչին իր բոլոր ուղեկցողներին մկրտում է Եփրատի ջրերում, Արևելից աշխարհում հոգևոր հայր նշանակում Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսին (IV դ.):

V դարի սկզբներից, ինչպես հայրնի է, հայ գրերի սփեղծող Մեսրոպ Մաշտոցը չգրում էր նոր դպրոցներ բացել երկրի ծայրաշրջաններում, որպեղակի ամուր մնա Հայոց աշխարհի միասնությունը: Այդ առաքելությամբ

<sup>3</sup> *Абас-Кули-ага Бакиханов*. Гюлистан-Ирам. Баку, 1926, с. 8.

<sup>4</sup> Տես «Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся до Грузии», том II, вып. II, под ред. А. А. Чагарели. С.–П., 1902, с. XI, прим. 1.

<sup>5</sup> Տես «Описание Кавказа с кратким историческим и статистическим описанием Грузии». Санкт-Петербург, 1805 (Яков Ланген), с. 28.

<sup>6</sup> Տես «Акты, собранные Кавказской археографической комиссией», том VI, часть 1. Тифлис, 1874, с. 840.

նա անչամբ շրջեց Արցախում, հիմնեց դպրոցներ: Ծահունյանի շրջանի Վերին Ծեն գյուղում թերևս եզակի մի ուխտավայր կար մինչև վերջերս՝ նվիրված հայ գրին, և այդպես էլ կոչվում էր՝ «Գիր խաչ»: Այն գրմվում է բնության նույնպես եզակի մի հուշարչանի մոթ, սուրբ համարվող վիրթսարի ստի ծառի փակ, որը փնկվել է, ըստ ավանդության, Մեսրոպ Մաշտոցի կողմից:



Եղիշե առաքյալի վանքը քրիստոնեական հնագույն սրբավայրերից է հայ հողի վրա: Այսփեղ է գտնվում Վաչագան Բարեպաշտ թագավորի (5-րդ դ. երկրորդ կես–6-րդ դ. սկզբներ) գերեզմանը: Վանքը, որն ավելի շատ ամրոց է հիշեցնում, դարեր շարունակ կարևոր դեր է կատարել մեր լեռնաշխարհի հոգևոր-մշակութային, ինչպես նաև թագաթական կյանքում: Մինչև այսփեղ էլ այս վանքը շահունյանցիների կարևորագույն ուխտավայրերից է: Եղիշե առաքյալի վանք այցելելու և լուսանկարելու մեր երագանքի իրականացմանն օգնեց Արթուր Հակոբյանը: Գծվարին տեղանքով մեզ դեպի վանք ուղեկցեցին Նովիկ Գյուլումյանը, Ծահեն Մայիլյանը, Կամո Հարությունյանը 2001 թ. ամռանը:

387 թ. Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև: Պարսկական մասում հայ Արշակունիների թագավորությունը գոյափեղվեց մինչև 428 թվականը, որից հետո Արևելյան Հայաստանը վերածվեց մարգպանության՝ պարսկական փիրապեղության ներքո: Մեկ առանչին մարգ էլ, Աղվանք անունով, չևավորվեց Ուրիք և Արցախ նահանգներից՝ նըրանց միացվելով Կուր գետից հյուսիս գրմվող բուն Աղվանք (Ալբանիա) երկիրը: Նորասփեղծ այս մարգի երկու մասերը գրմվում էին զարգայման ան-



համարեղելի աստիճանների վրա: Կուրից հյուսիս փարածված աղվանական փարալեզու ցեղերին դժվար էր վարչականորեն միավորել, իսկ Կուրից հարավ Ուփիքն ու Արցախը միափարք հայ բնակչություն ունեին, միասնական հավաք և դարերով մաս էին կազմել միասնական հայ ազգային պետության: Դրա շնորհիվ նորաստեղծ մարզի հայկական մասում Առանից սերող Առանշահիկ բնիկ նախարարական փոհմից Վաչագանը կարողացավ V դ. 2-րդ կեսին ստեղծել մի փոքր կիսանկախ թագավորություն: Վաչագանը հայրնի դարչավ ազգանվեր ու եկեղեցանպաստ անթիվ գործերով, որի համար Բարեպաշտ մականուն ստացավ: Նա փարվա օրերի թվով եկեղեցիներ ու վանքեր է կառուցել, քայել բազմաթիվ դպրոցներ<sup>7</sup>: Փոքր թագավորությունը լիարժեք հասարակական-քաղաքական կյանքով էր ապրում: Հասկապես ուշագրավ է Աղվենում բազմամարդ ժողով գումարելու և Սահմանադրություն ընդունելու հանգամանքը, որոնք վկայում են ոչ միայն հոգևոր, այլև ընդհանրապես հասարակական կյանքի կազմակերպման բարձր մակարդակի մասին: Իրավագիտական այդ եզակի հուշարձանը՝ արդեն 1500-ամյա հայ առաջին սահմանադրությունը, ամբողջապես պահպանվել է մինչև այսօր<sup>8</sup>:

Արցախ-Ուփիք աշխարհը կարևոր դեր է կատարել արաբական փիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ընթացքում, ինչպես նաև Բագրատունյաց հայկական թագավորության կազմի մեջ (IX–XI դդ.): Բագրատունյաց թագավորության կործանումից հետո Հայաստանում ստեղծվեցին հայկական մանր թագավորություններ ու իշխանություններ: Սակայն դրանք էլ հետագայում ավելի մանրափայլեցին թուրք-սելջուկյան, հետո էլ թաթար-մոնղոլական արշավանքների ու փիրապետության հետևանքով: Տնտեսության համար քայքայիչ դեր ունեցավ քոչվոր անասնապահական ցեղերի ներթափանցումը երկրամաս, օտար էթնիկական փարքի ու քաղաքակրթության հաստատումը դաշտային շրջաններում: Այդ ժամանակներում էլ հենց երկրամասը նոր շնով սկսեց կոչվել նաև Պարաբաղ, այսինքն՝ մեծ ալգի (պարսկերեն), ինչպես որ միջինասիական անապատներից եկած քոչվորների աչքին երևացել էր բարեբեր ու ծառաշատ երկրամասը:

Աղեքաղի եղան XV դ. 2-րդ կեսից ծայր առած արյունալի ընդհարումները Թուրքիայի ու Պարսկաստանի միջև՝ Հայաստանին փրկելու համար: Այդ պատերազմները 1555 թ. հանգեցրին Հայաստանի բաժանմանը երկու տերությունների միջև: Արցախը մնաց պարսից գերիշխանության ներքո,

<sup>7</sup> Տես *Մովսես Կաղանկատուացի*, Պատմություն Աղուանից աշխարհի: Թիֆլիս, 1912, էջ 39, 271:

<sup>8</sup> Տես նույն տեղում, էջ 65–69:

սակայն արյունահեղ պատերազմները դրանով չդադարեցին: Թուրքիան ամեն կերպ ջանում էր փրկել Կուր գետի աջափնյա բարեբեր փարածքներին և խրախուսում էր իր հավաքակիցների ասպատակությունները Դաղստանի կողմերից: Պարսկաստանի ներքին քաղաքական խառնակ վիճակը թույլ չէր փալիս պաշտպանելու իրեն հպարտակ բնակչությանը:



Ղյուլիստանի բերդը առաջին պլանի վրա գտնվող բարձունքին:

Այդպիսի հանգամանքներում լեռնաշխարհի զինական ուժերը սկսում են համախմբվել, դիմագրավել օտար նվաճողներին ու ասպատակողներին, սեփական ուժերով պաշտպանում հայրենի հողը: Այս կերպ չևավորվում ու զորանում են հայկական ռազմաքաղաքական նոր ուժեր՝ մելիքություններ:

1639 թ. պայմանագրով, ինչպես հայրնի է, Թուրքիան ու Պարսկաստանը վերստին Հայաստանը բաժանեցին իրենց միջև, և վերստին Արցախը մնաց պարսից գերիշխանության ներքո: Չնայած պայմանագրին՝ Թուրքիայում հասունանում էին ամբողջ Անդրկովկասը նվաճելու ծրագրեր: Դրան գուցա հեռ շարունակվում էին կովկասյան ավարառու ցեղերի արշավանքները: Հրապարակ է դառնում լեռնաշխարհի ինքնապաշտպանության խնդիրը: Խորանում է մելիքությունների հզորացման ընթացքը: Պարսից իշխանություններն էլ շահագրգռված էին դրանում՝ Թուրքիայից ու Դաղստանից սպառնացող վրանգի հանդեպ լրացուցիչ ամուր պարվար ունենալու նպատակով: Տեղերում բնական ամրություններ կային, որտեղ հեշտությամբ բերդ

ու ամրոց կարելի էր կառուցել: Կային մեծ թվով մեքանիզմներ ու զինագործ վարպետներ, իսկ ռազմական գործը, դարավոր ինքնապաշտպանության պայմաններում, դարչել էր համարյա մարդկանց կենցաղի մի մասը. հրնույց ի վեր ժողովրդական շատ տոներ ու հանդիսություններ դարչել էին զինավարժության, չհարշավների ու այլ սրբությունների խրախուսիչներ:

Ռազմական հուսալի կենտրոններից էր Գյուլիստանի համրահայր բերդը: Այն կառուցված է մի անմաքչելի ժայռի վրա, որին հմարավոր է մոտենալ միայն մի մեղ արահեփով: Լեռնային գեփակը երեք կողմից շրջանցում է բերդը, որի կենտրոնից մինչև չորը՝ գեփակի, չգվում է սփորգեփոյա գաղփմի ճանապարհ՝ քարե ասփիճաններով: Նույնիսկ ամենամաքչելի հսարվածում, շուրջ 70 – 80 մետր բարչություն ունեցող համարյա ուղղահայաց ժայռի երկայնքով կառուցված են քարչք պարիսպ ու աշտարակներ: XVI–XVII դդ. Արցախ–Ղարաբաղում նկարելի առաջընթաց է ապրում նաև փնփեսական ու մշակութային կյանքը: Բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվում, կերտվում են քարչքարվեստ խաչքարեր<sup>9</sup>:

Հայ ազափագրական շարժման փառավոր ժամանակներից էին XVIII դ. առաջին փասնամյակները. ազափագրվեցին Արցախ–Ղարաբաղը՝ Գիգակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի մեղքությունները, ինչպես նաև Սյունիքը: Նրանցից անբաժան էր նաև Գանչակի հայ մեղքությունը: Անկախացած հայ մեղքները փորչում էին միավորվել, վերացնել իրենց արանքում բուն դրած թշնամական էթնիկական փարբերին, ազափագրել մինչև Երևան ընկած փարածքները, վերականգնել միասնական հայկական փեսականությունը<sup>10</sup>: Այդ գաղափարի ջափագրվներն առաջին հերթին Գյուլիստանի մեղքներն էին:

Մեղքները հանգվում են, որ միայն իրենց ուժը բավական չէ պարսկական գերիշխանությունից ընդմիշտ ազափվելու և օսմանյան աճող վրանգի առաջն առնելու համար: Նրանք սկսում են բանակչություններ ռուսաց արքունիքի հետ, փեղեկացնում, որ կիպափակվեն Ռուսաստանին, եթե ռուսական զորքն օգնի ընդմիշտ թոթափելու օտար գերիշխանությունը: Ցարական իշխանությունները հայերին որոշ հույսեր փվել էին դեռևս XVIII դ. սկզբներին (Իսրայել Օրում)՝ հաշվի առնելով Հայաստանի ռազմավարական կարևոր փեղն ու դերը իրենց արևելյան ծրագրերի իրականացման գործում, ինչպես նաև Ղարաբաղի փնփեսական կարողությունն ու ռազմական ուժը (շուրջ 40 հազարանոց զորք): Ռուսաստանի Ղեփոռս Առաջին կայսեր

պափվարակ Իվան Կարապետը 1724 թ. գեկույում է արքունիքին, որ «այդպիսի ուժեղ կովող ժողովուրդ, ինչպիսին Արցախի հայերն են, ոչ մի փեղ չկա»<sup>11</sup>: Նա գրում է, որ Ղարաբաղի մեղքները 12 հազարանոց ընդիր հեծելազոր ունեն, իսկ հեփակին հաշիվ չկա, և բողորն էլ հրալցան և թուր ունեն ու ամեն օր հրացաններ են պափրաստում<sup>12</sup>: Պարկերայում փարու համար հիշեցնենք, որ դրանից շատ փասնամյակներ հետո՝ 1800 թ., ըստ ռուսական արքունիքի փվյակների, վրաց թագավորի զորքի մեջ յուրաքանչյուր փասը հոգույց միայն երկուսն ունենին հրացան, մյուսները «զինվում էին հոնի մահակներով»<sup>13</sup>:

Արժե հիշել, որ 1725 թ. մարտի 1-ին երեք փաշաների փլսավորությանը Ղարաբաղ մարած թուրքական 4700-անոց հեծելազորին հայերն այնպիսի ջարդ փվեցին, որ միայն 150 հոգի է կարողանում փախչել ու փրկվել: 1766 թ. Գանչակի խանի զորքը հարչակվում է Գյուլիստանի մեղքական ուժերի վրա, բայց ջարդ կրում ու փախուստի դիմում:

Երկրամասի միացումը Ռուսաստանին անընդհատ չգզգվում էր, որովհետև Անդրկովկասը գրնվում էր ոչ միայն Ռուսաստանի, Թուրքիայի և Ղարսկաստանի, այլև եվրոպական փերությունների շահերի բախման հանգուցակետում: Եվ ... շարունակվում է հայերի համատ դիմադրությունը շրջակա մահմեդական իշխանությունների նվաճողական չգրումներին, ավերիչ ասպարակչություններին ու կողոպուտներին, բոնի հավափափոխությանը: Արցախի ռազմական ուժն ընդհանրապես մեծ համբավ ուներ փարածաշրջանում: Նկարագրելով Վրաստանին սահմանակից մարգերը, վրաց Հերակլ Երկրորդ թագավորը 1769 թ. գրում է. «Արցախի ամբողջ բնակչությունը հայեր են, հողը բերքառատ է, կան ամուր բերդեր և ... հայերը կովելու գործում չափազանց քաջ են»<sup>14</sup>:

XVIII դ. 2-րդ կեսին Ղարաբաղը Հայաստանի այն եզակի երկրամասերից էր, որ փեղ, ինչպես 1780 թ. գրում է ռուս գորավար Ա. Վ. Սուվորովը, «հայերն ապրում են սեփական իշխանավորների ներքո, որոնք կոչվում են մեղքներ»<sup>15</sup>: Ուշագրավ է, որ մեղքներն իրենք իրենց համարում էին «հայոց թագավորաց ազնիւ զինուորաց մնացեալ ժառանգք»<sup>16</sup>:

1783 թ. մի պահ հասունացել էին Ղարաբաղը Ռուսաստանին միացնելու

<sup>11</sup> Տես «Армяно-русские отношения», том II, часть II, с. 255.

<sup>12</sup> Տես «Акты, собранные Кавказской археографической комиссией», том I. Тифлис, 1866, с. 124.

<sup>13</sup> Տես «Армяно-русские отношения», том II, часть II, с. 255.

<sup>14</sup> Տես «Армяно-русские отношения в XVIII веке (1760–1800)». Сборник документов, том IV. Ереван, 1990, с. 95.

<sup>15</sup> А. В. Суворов. Документы, том II, с. 224–225.

<sup>16</sup> Տես «Армяно-русские отношения», том IV, с. 180.

<sup>9</sup> Այդ մասին տես մեր «Հյուսիսային Արցախ. գոյության պայքար», գիրք Ա: Երևան, 1993, էջ 10:

<sup>10</sup> Տես «Армяно-русские отношения», том II, часть II. Ереван, 1967, с. 85.



լու պայմանները: Իշխան Գ. Ա. Պոպոյունկինը Ռուսաստանի Եկատերինա II կայսրուհուն ներկայացրած գեղարվեստի մեջ նշում է, որ «այդ մարզին, որը կազմված է հայ բնակչությունից, պետք է փոքրիկ ազգային կառավարում և այդ ճանապարհով Ասիայում վերակազմվի քրիստոնեական մի պետություն, համապատասխան Յ. կ. մ. բարձրագույն խոսքումներին, որոնք իմ միջոցով փոխվել են հայ մելիքներին»<sup>17</sup>: Սակայն այդ ծրագրի իրականացումը դարձյալ չգտվեց:

Պարսից շահի կողմից Ղարաբաղի կառավարիչ նշանակված Իբրահիմ խանը, ինելով թուրքական ցեղից, Վրաստանի կողմերից բռնությամբ թուրքական քոչվոր ցեղեր է բերում, փեղավորում Ղարաբաղում, որպեսզի հեռաբան ունենա երկրամասում, ինչպես նաև Ղարաբաղի խանության փարբեր գյուղերում փորձում է բռնի մահմեդականացնել հայերին: Արցախահայությունը համառորեն դիմադրում ու պայքարում է նրա դեմ: 1791 թ. վրաց Վերակլ Երկրորդ թագավորը, որ հայ մելիքների դաշնակցին էր մինչև այդ, գաղտնի համաձայնության է գալիս Իբրահիմ խանի հետ, որ նա վերադարձնի Վրաստանից Շուշի փախչրած 200 թաթարներին, իսկ ինքը նրան հանձնի Գյուլիստանի մելիք Աբովին և Ջրաբերդի մելիք Մեծյունին, որոնք չէին հպարակվում Իբրահիմին: Իմանալով այդ մասին, Գանչակի մոտ Աբովն ու Մեծյունը 1500-ամոց հեծյալ ջոկատով ջախջախում են Իբրահիմի 3000-ամոց հեծելազորը, որը մեծ կորուստներով նահանջում է Շուշվա բերդ: Դեպքերի ժամանակակից ռուս զինվորական գործիչ (հեփագայում ակադեմիկոս) Պ. Գ. Բուրկովը զարմանքով է նկարագրում, թե կիսով չափ պակաս ուժերով հայերն ինչպիսի ջարդ են փոխել Իբրահիմ խանին<sup>18</sup>:

Ղարաբաղի միացումը Ռուսաստանին կատարվեց ըստ էության հարվածաբար՝ Գյուլիստանի մելիքությունն ու Արցախի հյուսիսային մյուս շրջանները, որոնք չէին հպարակվում Շուշիում հաստատված խանին, կայսրությանը միացվեցին քիչ ավելի վաղ՝ 1804 թ., հարևան Գանչակի խանության միացման հետ, իսկ ամբողջ Ղարաբաղը՝ 1805 թ.: Դրա հետևանքով հյուսիսային այդ շրջանները վարչականորեն ավելի վաղ կապվեցին Գանչակում հաստատված ռուսական իշխանությունների հետ:

Ռուսաստանին միացվելու շնորհիվ ավելի քան մեկ դար երկրամասը գերմանաց արյունալի պատերազմներից ու հավաքի նկատմամբ բռնություններից: Արցախ-Ղարաբաղը ներքաշվեց համառուսական, նրա միջոցով նաև արևմտաեվրոպական փոփոխական, մշակութային, կրթական կյանքի զար-

գացման ընթացքի մեջ: Սակայն մահմեդական քոչվոր ամասնապահական ցեղերի հաստատումն այդ հողի վրա առաջ բերեց բազմաթիվ նոր հակասություններ: Հաճախակի դարձան արյունալի բախումներն արտավայրերի համար: Դաշտային շրջաններից ամառային արտավայրեր մեկնելու ու վերադարձի ժամանակ քոչվորները մեծ վնաս էին հասցնում նստակյաց հայ բնակչության փոքրամասնությանը՝ դաշտերին ու այգիներին: Նստակյաց դարձած մահմեդական բնակչությունը սովորություն չունեց չմեծվա համար ամասնակեր կուրակելու և չմռանն ու վաղ գարնանը անխնա կտրորում էին անտառների մարդաշ ծառերը, որպես անասնակեր: Կենցաղային ցածր կուլտուրան բազմաթիվ հիվանդությունների պատճառ էր դառնում, և որովհետև նրանք խոստատում էին բժշկից, հաճախակի համաճարակներ էին բռնակվում քոչվորների բնակավայրերում: Նրանք խոստատում էին նաև կրթությունից, հրաժարվում էին դպրոցներից, որ փորձում էին բացել ռուսական իշխանությունները: Հայրամի են բազմաթիվ փաստեր, թե ինչպես հայկական գյուղերը խնդրում էին իշխանություններին, որ մահմեդականների կողմից մերժված դպրոցների փոխարեն դպրոցներ բացվեն իրենց գյուղերում: Արժե հիշել միայն մեկ օրինակ. 1882 թ. Գերանբոյ-Աննեդլի բնակավայրի մահմեդականները բողոքում են իրենց մոտ դպրոց բացելու դեմ, իսկ Ղարաչինարի հայերը խնդրում են այդ դպրոցը բացել իրենց գյուղում: Եվ կարճ ժամանակում Ղարաչինարի դպրոցը դառնում է Ելիզավետպոլի նահանգում չավագույններից մեկը, որտեղ երեխաները կրթությունից բացի նաև սովորում էին շերամապահություն՝ լուրջ եկամտի բերելով դպրոցին ու գյուղին:

1896 թ. փոխվեցին Ելիզավետպոլի նահանգի ուսումնարաններում սովորողների գերակշռող մասը կազմում էին հայերը, մյուսները՝ ռուս, հրեա, վրացի, թաթար, չնայած հայերը բնակչության ընդհանուր թվի կեսից պակաս էին<sup>19</sup>: Պարկերը միանգամայն հակառակն էր հանցագործությունների հարցում: Բնակչության համարյա հավասար թվի պայմաններում հանցագործների ընդհանուր թվի մեջ թուրք-թաթարական ազգության ներկայացուցիչները յոթ անգամ շատ էին հայերից<sup>20</sup>: Վիճակն ավելի էր սրվում այն պատճառով, որ հեղափոխության բարբեր խրախուսվում ու պաշտպանվում էին այդ ցեղերի վերնախավի կողմից: Ցարական Ռուսաստանի մամուլը լի է փաստերով, թե ինչպես Ելիզավետպոլի նահանգի մուսուլման իշխանավորները, կալվածատերերն իրենք էին զբաղվում գողությամբ, կողոպուտով ու ավազակությամբ, գլխավորում այդպիսի խմբեր: Իսկ այդ ցեղերի մուսուլմանականներն իրենց ժողովրդի մեջ սերմանում էին այն գաղափարը, թե կոր-

<sup>17</sup> Նույն տեղում, Կ. 241.

<sup>18</sup> Տես II. Գ. Կիրով, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803, Санкт-Петербург, 1869, Կ. 144.

<sup>19</sup> Տես «Обзор Елизаветпольской губернии за 1896 год». Тифлис, 1897, Կ. 70.

<sup>20</sup> Տես «Кавказский календарь». Тифлис, 1896, Կ. 108. часть вторая, Санкт-Петербург, 1869, Կ. 281.



թությունը կտրանի դեպի ռուսականացում: Հայքնի են նշանավոր թուրք բանաստեղծ Սաբիրի խոսքերն այն մասին, թե՛ «Երեխան իմն է, դպրոց չեմ փանում, չեքք քաշեք ինչնից»:

Կարելի է ասել, որ թուրքական քոչվոր անասնապահական ցեղերի ներթափանցումը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններ և աստիճանաբար մտնելույնից անցնելը ոչ միայն էթնիկական փոփոխությունների և միջ-էթնիկական բախումների պատճառ է դառնում, այլև առաջ է բերում ավելի սուր պայքար հակադիր բարբերի ու անհամարեղելի քաղաքակրթությունների միջև: Այդ երևույթը նկատվել է եվրոպական քաղաքական գործիչների կողմից դեռևս XIX դ. II կեսին: «Ադրբեջանական թաթարները վրիժառու են ու փզեք, հակված են խաբերալության, գողության ու կողոպուտի, որի պատճառով չարիք են հանդիսանում նստակյաց բնակչության համար», գրում են ռուս հեղափոխողները, իսկ հայերի մասին գրում են. «Հայերը դրսևորում են մեծ հակվածություն եվրոպական կրթության և առևտրով ու արդյունաբերությանը զբաղվելու նկատմամբ»<sup>21</sup>: Քննելով Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իրականացվող դաժան բռնությունների ու զանգվածային կոտորածների հարցը՝ հայտնի իրավաբան ու դիվանագետ, պրոֆեսոր Ֆ. Մարտենսը գրում է. «Դարերի փոքր համոզում է, որ իսլամն ու քրիստոնեությունը, թուրքերն ու քրիստոնյաները, թուրքական ռեժիմն ու քրիստոնեական համայնքների ազատությունը ոչ մի կերպ չեն կարող հաշտ ապրել»<sup>22</sup>: Որոշ իմաստով դրա վկայությունն են մաս ներկայիս անվերջանալի թվացող արյունահեղությունները Հյուսիսային Կովկասում, Բալկաններում և, ընդհակառակը, դաժան էթնիկական զրման շնորհիվ արյունահեղության դադարումը թուրք-ադրբեջանցիների ու հայերի միջև այժմ:

Հայության համար անբարենպաստ մյուս համգամանքը կապվում էր Անդրկովկասի վարչական բաժանման սահմանների հետ, որոնք զծվել էին սոսանց հաշվի առնելու էթնիկական, բնակչության, փոփոխական գործոնները: Ստացվել էր այնպես, որ երկրամասի բոլոր 55 ուեզդներից ու օկրուգներից միայն 5-ում էին գերակշռում հայերը, չնայած նրանք կազմում էին բնակչության ընդհանուր թվի 25 փոկոսը. վրացիները՝ 26 փոկոսը, իսկ մուսուլմանական ազգաբնակչությունը (թուրք-թաթարական և այլ ցեղեր)՝ 33 փոկոսը:

Հայության հիմնական զանգվածները ներգրավված էին առևտրի ու արդյունաբերության բնագավառում, սակավաթիվ էին կալվածատերերը,

իսկ ռուսական միապետական իշխանությունը գրնվում էր այդ դասի չեռքում: Այդ պատճառով պետական պաշտոնական մարմիններում հայերն իրենց չեռքով իրենց ազգային շահերը պաշտպանելու շարքից հնարավորություններ ունեին, իսկ վրացիների ու մուսուլմանության մեջ կալվածատիրական համեմատաբար սուղար խավ կար, որը մեծ չափերով ներգրավված էր իշխանության փողակն մարմինների մեջ: Դրա հետևանքով հայերը գրնվում էին վարչական ու բարոյահոգեբանական ճնշված վիճակում: Մյուս կողմից էլ հայերը, ի փարբերություն մուսուլման բնակչության, լայնորեն ներգրավված էին Ռուսաստանում միապետական կարգերի դեմ ծավալվող դեմոկրատական հեղափոխական շարժումների մեջ, որի հետևանքով, ի փարբերություն ռուս մտավորականության, պետական-պաշտոնական վերաբերմունքը հայերի նկատմամբ չէր կարող լինել բարյացակամ: Այդ հանգամանքը չարաշահում էին ազդեցիկ մուսուլմանները՝ ռուսական պաշտոնեությանը փրամադրելով հայության դեմ:

1906 թ. Կովկասի նորանշանակ փոխարքա Վորոնցով-Դաշկովը ռուսաց կայսերը հղած զեկուցագրում հայտնում է, որ փեղերում հակահայ կըրքերն այն աստիճան են բորբոքվել, որ «ամեն ահաբեկչություն ու խլրտում վերագրվում է հայերին, նույնիսկ այնպեղ, որպեղ հայ չկա»<sup>23</sup>:

Հայության ազգային շահերը պաշտպանելու, միջէթնիկական անվերջանալի բախումներից խուսափելու համար պահանջվում էր վարչական նոր բաժանում կատարել, որը թե՛ փոփոխական, թե՛ քաղաքական առումով արդյունավետ կլիներ Ռուսաստանի համար: Հայերի ներկայացրած ծրագիրը համոզում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին: Վերջինս 1906 թ. կայսերն առաջարկում է Ելիզավետպոլի նահանգը բաժանել երկու գեներալ-նահանգապետության՝ Շուշի և Ելիզավետպոլ նստավայրերով: Առաջինը պեքք է ընդգրկել ամբողջ Արցախ-Ուտիք հայաշխարհը, Ելիզավետպոլ քաղաքի հայկական մասով՝ Գանչակով (որը հին հայկական քաղաք էր, նույնամուն գետի ափին, իսկ այդ գետի հակառակ ափին ուշ միջնադարում չկապորվել էր մուսուլմանական նոր բնակավայր): Երկրորդը պեքք է ընդգրկել Կուր գետի աջափնյա դաշտը և չախափնյա շրջանները, որոնք գերակշռող մուսուլմանական բնակչություն ունեին: Փոխարքայի առաջարկը մերժվում է: Հետագա տարիներին հայերը քանիցս հարց են բարձրացնում՝ վարչական այնպիսի վերաբաժանում կատարելու, որ Անդրկովկասի 3 հիմնական ժողովուրդներից ամեն մեկը գերակշռող լինի մի մասում՝ հայկա-

<sup>21</sup> Шу «Энциклопедический словарь», том XIII, Санкт-Петербург, 1894, с. 837-838.  
<sup>22</sup> Шу «Martens, Die russische Politik in der orientalischen Frage», М., 1877. Այս մասին հանգամանորեն *И. А. Каларовский*, Восточный вопрос, Москва, 1896, с. 12.

<sup>23</sup> Ձեկուցագիրն ամբողջությամբ տես *Գ. Անանյան*, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 2: Վենետիկ, 1921, էջ 367-370:

կան, վրայական, թաթարական կամ՝ Երևանի, Թիֆլիսի, Բաքվի: Այդ առաջարկներին ամեն անգամ միասնաբար դեմ են հանդես գալիս վրայական ու թուրք-թաթարական գործիչները՝ չգտելով պահպանելու իրենց գերիշխող պիղքը գերակշռող հայ բնակչություն ունեցող և պատմականորեն հայկական շրջաններում:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում փապավելեյ միապետությունը, ստեղծվեց ժամանակավոր կառավարություն: Վերջինս վարչական սահմանների որոշ փոփոխություններ կատարեց Ռուսաստանում՝ հաշվի առնելով էթնիկական գործոնը, որի հետ կապված հայ ազգային գործիչները նորից ծրագրեր մշակեցին Անդրկովկասում գոյություն ունեցող սահմանները վերափոխելու մասին: Անհրաժեշտ համարվեց Գանչակի նահանգը բաժանել երկու մասի՝ լեռնային (հարավ-արևմտյան) շրջաններն առանձնացնելով Կուր-Արաքսի ցածրադիր հովտային շրջաններից: Առաջինը, որ ստավելապես հայ բնակչություն ուներ, պետք է կազմեր Գանչակի նահանգ, իսկ երկրորդը, որտեղ գերակշռում էր մուսուլմանական ազգաբնակչությունը (թաթար, պարսիկ, թուրք, քուրդ, լեզգի և այլն)՝ Ելիզավետպոլի նահանգ: Քաղաքն էլ պետք է նույնամուն գետով բաժանվեր 2 մասի՝ հայկական՝ Գանչակ (որտեղ 20 հազար հայ էր ապրում), և մուսուլմանական՝ Ելիզավետպոլ (40 հազար խառը բնակչությամբ), որոնք պետք է դառնային առանձին նահանգային կենտրոններ<sup>24</sup>:

Երկրամասի սահմանները վերագծելու համար ստեղծվեց երեք հիմնական ազգությունների հնգական ներկայացուցիչներից բաղկացած հանչանաժողով: Հայերի առաջարկներին նախկինի մասն համերաշխ կերպով դեմ էին դուրս գալիս վրացիներն ու մուսուլմանները: Եթե միապետության օրոք նրանք ջանում էին անփոփոխ պահպանել գոյություն ունեցող վարչական սահմանները, այսօր համապատասխանում էին իրենց ազգային շահերի սահմաններին, ապա միապետության փապավելեյից հետո, Ռուսաստանի հեղհեղուկ ժամանակավոր կառավարության պայմաններում, մասնավաճ աջակցություն ստանալով Թուրքիայի և այլ պետությունների կողմից, նրանք արդեն չգտնում էին նպաստավոր սահմաններով անջատվել, ազգային անկախ պետություններ ստեղծել:

Ելիզավետպոլը Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության օրոք դարձել էր մուսուլմանական քաղաքական ուժերի կենտրոն, իսկ Ղարաբաղի հայության քաղաքական կենտրոնը Շուշին էր: Թուրքիան ու նրա դաշնակիցները, որոնք ամեն կերպ ջանում էին Ռուսաստանին դուրս մղել Անդր-

<sup>24</sup> Шу А. *Шушаньдан*, Административный передел Закавказского края. Тифлис, 1918, с. 127-128.

46/21

կովկասից, բանակցություններ էին վարում երկրամասը կառավարող նոր մարմնի՝ Մեյմի հետ՝ նպատակ ունենալով մասնատելու այն: Արևմտյան Հայաստանում ցեղասպանություն իրականացնելուց և լրիվ հայաթափելուց հետո Թուրքիան չգտնում էր նույնը կատարելու մաս Արևելյան, այսպես կոչված Ռուսահայաստանում: Այդ նպատակով թուրքերը քաղաքային աջակցում էին տեղի մուսուլմանական ուժերին ու վրացիներին՝ քաղաքական ասպարեզում մեկուսացնելով հայերին, որպեսզի հեշտամա հայկական հողերի զավթումը: Այդպիսի հանգամանքներում հայերի համար պարզ է դառնում, որ «մեզ չեղնվում է հզոր Ռուսաստանը... Եթե մերժվի Ռուսաստանի իրավունքը Անդրկովկասի նկատմամբ, մեզ համար կստեղծվի դժվարին կացություն»<sup>25</sup>:

1917 թ. վերջերին, մի կողմից Թուրքիայի, Գերմանիայի և այլ պետությունների ճնշումը, մյուս կողմից, ներքին քաղաքական ու փոփոխական ծանր վիճակը Ռուսաստանին ստիպեցին հետ քաշվել Անդրկովկասից: Դրա հետ կապված անհետազգելի քայլեր էին պահանջվում արքայազնության պաշտպանության համար: Գեկերեմբերին Շուշիում ստեղծվեց հայկական կուսակցությունների ու կազմակերպությունների միջկուսակցական բյուրո, որն իր վրա վերցրեց ինքնապաշտպանության կազմակերպման և ազգային կյանքը փոփոխելու խնդիրները, իսկ մի քանի ամիս հետո չևավորվեց Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը:

Ծանր կացության մեջ հայտնվեցին մասնավորապես Հյուսիսային Արցախի՝ Գանչակի լեռնային շրջանների հայկական բնակավայրերը, որոնց ճանապարհներն իջնում էին դեպի Գանչակի դաշտը, որտեղ կուրակված էին մուսուլմանական ուժերը, իսկ իրենք միմյանց հետ թույլ կապեր ունեին: Գրեթե մեկուսացված այդ գյուղերում արագ չևավորվեցին ինքնապաշտպանության ջոկատներ: Այդ գործում կարևոր դեր կատարեցին տեղացի ցարական նախկին սպաները, ռազմաճակատից վերադարձած զինվորները: Թալիշից ու Գյուլիստանից Գեդաշենով ու Բանանցով մինչև Գեդաքեկ ու Չարդախլու չգվեց, հայ գյուղերի պաշտպանության մի ամուր շղթա, որը պատմեց մուսուլմանական ուժերի մուրքը Հյուսիսային Արցախ: Առանձին գյուղախմբեր կազմում էին պաշտպանական փոքր շրջաններ, որոնք միավորում էին ամբողջ ուժը՝ գեներ, զինամթերք, փոխադրամիջոց և այլն, ինչպես նաև բուն կոմիտեիներն, հարկապես հեծյալներին:

Լեռնաշխարհի ինքնապաշտպանության կազմակերպման գործում մեծ դեր կատարեցին Մնացական Հովհաննիսյանը (Բուլղուխ), որի հեծյալ ջո-

<sup>25</sup> Գ. Անանյան, Ռուսահայերի հասարակական գաղափարներ, հ. 3, էջ 638:

կարող ակտիվ մասնակցություն ունեցավ Գանձակում 1920 թ. մայիս-հունիսին մուսավաթականների հակախորհրդային խռովության ճնշման գործում, Վարդազար Մնացականյանը (Մամաշիդ), որը մեծ աշխատանք էր կատարում զենք հայթայթելու ուղղությամբ և հենց զենք բերելու ժամանակ էլ դավադրաբար սպանվեց, Հակոբ Հուրունցը (Ղարաչինար), Մարտիրոս Վեյլանը, Տերունց Նազարը, Աղաջանանց Աղաջանը (Ներքին Շեն), գյուլիստանցի Ասատուրը և ուրիշ շարքերը՝ ցարական բանակի սպաներ, առաջին համաշխարհային պատերազմում աչքի ընկած զինվորականներ, Անդրանիկի բանակի զինվորներ: 1918 թ. մայիսի վերջերին հռչակվեցին Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների անկախ հանրապետություններ՝ Վրաստանի, Հայաստանի և Մուսուլմանական: Վերջինս հռչակվեց Ելիզավետպոլում, որը վերանվանվեց Գանձակ, թուրքական հնչողությամբ՝ Գյանջա. մուսավաթականների կողմից այն հենց այդպես էլ կոչվում էր՝ Մուսուլմանական, առանց ազգային կամ փարածքային հատկանիշի: Հենց սկզբից Գանձակի մուսուլմանական իշխանությունները գաղղանի դիմելին թուրքիայի կառավարությանը, որպեսզի միանան այդ երկրին, սակայն թուրքիան հասկանում էր, որ հիշյալ փարածքի քայահայտ միացումն իր դեմ կհանի Ռուսաստանին և մյուս տերություններին, ուստի հարմար գտավ զավթումը քողարկել՝ դրա համար որպես վարագույր օգտագործելով մուսավաթականների կողմից իրենց «անկախության» հռչակումը<sup>26</sup>:

Անդրկովկասում երեք հանրապետությունները հռչակվեցին առանց սահմանների ճշգրտման ու ճանաչման: Մուսուլմանական հանրապետությունը (հետագայում Ադրբեջան կոչված), թիկունք ունենալով Թուրքիան, սրիպում էր, որ Հայաստանն ամբողջ Ելիզավետպոլի նահանգը ճանաչի որպես Ադրբեջանի մաս և ռազմական բոլոր միջոցները գործի էր դնում այդ նպատակի իրականացման համար: Ծանր վիճակ սրբեղծվեց Գանձակի հայկական շրջանների և Արցախի համար: Արդյունք չգրվեցին մաս Անգլիայի ջանքերը, որն Անդրկովկասում Ռուսաստանի դիրքը թուլացնելու նպատակով ամեն կերպ սրիպում էր ռուսամետ արցախահայությանը՝ հայատակվել Ադրբեջանին: Արցախը, այդ թվում և Լեռնային Գանձակը, այդպես էլ չհպատակվեց Ադրբեջանին և հուսալի ինքնապաշտպանության շնորհիվ փաստացի գտնվում էր Հայաստանի Հանրապետության կազմի մեջ: Իսկ ինչ մնում է իրավաբանական կողմին, երկու երկրների սահմաններն այդպես էլ չընդունվեցին երկուստեք:

Իրավիճակը բարդացավ Ռուսաստանի բուլշևիկյան բանակի միջոցով

<sup>26</sup> Տես *Е. А. Токаревецкий*, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане. Баку, 1957, с. 83.

Ադրբեջանում խորհրդային կարգեր հռչակվելուց հետո (1920 թ. ապրիլ): Խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակն ըստ էության գործիք դարձավ Ադրբեջանի հակահայկական քաղաքականության համար: Այլ ելք չգտնելով՝ 1920 թ. մայիսի 22-ին Ղարաբաղի ժողովրդական կառավարությունն իշխանությունը զիջեց տեղական բուլշևիկներին, որպեսզի գոնե այդ չևով Ղարաբաղը մնա հայկական: Դրա հետևանքով Հյուսիսային Արցախը կտրվեց Ղարաբաղի հիմնական մասից: Հայաստանը բավարար ուժ չունեցավ պաշտպանելու այդ շրջանները. հանրապետության գորամասերը պաշտպանում էին միայն Գեղարքեկի հանքերը, իսկ մյուս բնակավայրերը պաշտպանվում էին ինքնապաշտպանական ջոկատներով:

Ադրբեջանի ղեկավարությունը հորդորում, համոզում է ռուսական 11-րդ բանակի հրամանատարությանը՝ Հյուսիսային Արցախում փասպալել հայկական իշխանությունը. զինաթափել հայերին, ընդ որում՝ օգտագործելով հայ բուլշևիկներին: Այդպես էլ կատարվում է: Արդյունքը եղավ այն, որ Հայաստանի տակավաթիվ ուժերը չկարողացան դիմակայել 11-րդ բանակին, հեռացան այդ շրջաններից: Հայկական այդ գյուղերում ու շրջաններում իշխանությունն անցավ հայ բուլշևիկների ձեռքը, որոնք ղեկավարվում էին Բաքվի կողմից: Այդպես «աննկատ» ռուսական զենքի ու թուրք բուլշևիկյան իշխանությունների միջոցով Գանձակի հայկական շրջանները «կապվեցին» Ադրբեջանի հետ: Չնայած Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանն այդպես էլ չի ճշգրտվել ու ճանաչվել, սակայն Ադրբեջանի և 11-րդ բանակի հրամանատարությունը Հյուսիսային Արցախը փաստորեն ճանաչել են որպես հայկական, ընդհուպ մինչև 1920 թ. հունիսի 11-ը<sup>27</sup>:

Հայերն ակնկալում էին, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո սահմանների հարցը կլուծվի արդարացի, սակայն արցախահայության հարյուր քաղաքական խարդավանքների գոն դարձավ: 1921 թ. Ռուսաստանը և Թուրքիան համաչալնության եկան, որ Ղարաբաղը, ինչպես նաև Նախիջևանը, մտնեն Ադրբեջանի կազմի մեջ՝ ինքնավարության կարգավիճակով: Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիային Ռուսաստանն՝ այդպիսի զիջումներ կատարեց արտաքին քաղաքական ճնշումների և ներքին անկայուն վիճակի պատճառով (բուլշևիկները Թուրքիան համարում էին Արևելքում հեղափոխություն փարածելու կարևոր օղակ):

Պահպանված արխիվային փաստաթղթերը, մասնավորապես Ամենայն Հայոց կաթողիկոսին հղված՝ Գանձակի թեմի առաջնորդ Լևոն փարիապետի 1921 և 1922 թվականների զեկուցագրերը<sup>28</sup> վկայում են, թե ինչպես

<sup>27</sup> Տես «Интернациональная помощь XI армии (документы и материалы 1920—1921 гг.)». Баку, 1989, с. 500.

<sup>28</sup> Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 176, ք. 6-12 և գ. 271, ք. 5-8:

Գանձակի լեռնային շրջանների հայությունը, գեներով քաջաբար դիմակայելով մուսուլմանական զինված ուժերին, միամտորեն խաբվել է բոլշևիկյան քարոզչությունից: Հայերը հավատացել են, թե խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի և Ադրբեջանի սահման չի լինելու, բոլորը հավասար են լինելու միասնական պետության մեջ: Դրա համար էլ նրանք դադարեցրել են ինքնապաշտպանությունը, ընդունել հայ բոլշևիկների իշխանությունը: Իսկ հետո արդեն շրջանի հայերը իրենց փարակուսանքը ու վրոպվումքն են հայտնել Լևոն վարդապետին, որ իրենք կտրված են Հայաստանից, ստիպված են ենթարկվելու Ադրբեջանի մուսուլման իշխանավորներին:

Լևոն վարդապետը փորցում է համոզել, թե, չնայած ստեղծված վիճակին, բոլոր հայերի համար գլխավոր իշխանությունը Ամենայն Հայոց կաթողիկոսությունն է՝ Էջմիածինը: Եվ ահա խորհրդային իշխանությունների առաջնահերթ խնդիրներից մեկն է դառնում Հայաստանի (Էջմիածնի) հետ այդ կապը կտրելը: Ադրբեջանի հայ բոլշևիկները, Ադրբեջանի հանդեպ իրենց նըվիրվածությունը ցույց տալու համար, հենց առաջին օրերից բռնություններ են գործադրում հայ հոգևորականների նկատմամբ, փակում եկեղեցիները, դրանք վերածում պահեստի, երբեմն նույնիսկ ավերում: Լևոն վարդապետը ցավով հայտնում է, մասնավորապես, թե Գյուլիստանի շրջանում հայ հավաքի և եկեղեցու նկատմամբ ինչ բռնություններ է գործել Մադաթ Հովսեփյանը (Օսիպովը): Իհարկե, կրոնական հավաքի դեմ պայքարը բնորոշ է եղել ամբողջ Խորհրդային երկրին, սակայն Լևոն վարդապետը նշում է, որ Ադրբեջանի հայության նկատմամբ այդ հարցը ծայրահեղ բնույթ է ստացել: Դեռ ավելին, նա նշում է, որ մուսուլման հոգևորականները թուրք ժողովրդի մեջ պահպանում են իրենց դիրքը, նույնիսկ սրանում են քաղաքացիական պաշտոններ, որոնք վարում են հենց կրոնական հագուստով, իսկ հայերի մոտ, ընդհակառակը, հոգևորականներին վարկաբեկում, հասարակական կյանքից մեկուսացնում են:

Խորհրդային իշխանության առաջին փառիներին մոսկովյան պաշտոնական աղբյուրներն «արդարանում» էին, թե Ղարաբաղի բռնակցումն Ադրբեջանին կատարվել է Անգլիայի կողմից<sup>29</sup>: Դժվար է ասել, թե քաղաքական ինչ խաղերի միջոցով է Անգլիան Ղարաբաղը բռնակցել Ադրբեջանին, քանի որ այդ տարածքները գտնվում էին Ռուսաստանի հսկողության տակ (եթե չասենք՝ կազմի մեջ): Այդ նույն խաղախ խաղերի շարունակությունը եղավ այն, որ Ադրբեջանը փորձեց նախադեսված ինքնավարությունից էլ զրկել հայերին, հարցը չգզգեց երկու փարի, ի վերջո ստիպված եղավ տեղի տալ:

<sup>29</sup> См. «Большая советская энциклопедия», том I. Москва, 1926, с. 664.

1923 թ. հուլիսին կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ԼՂԻՄ), սակայն նրա սահմաններից դուրս թողնվեց Գյուլիստանի մեկընթացյալ փարածքը, չնայած հայկական գյուղերի այդ խումբը ոչ միայն պատմության ամբողջ ընթացքում, այլև հենց 1918–1920 թթ. անբաժան էր եղել Ղարաբաղի ինքնակառավարումից, խոշոր տերությունների ներկայացուցչի կողմից նշված է եղել քաղաքեզի վրա՝ որպես Ղարաբաղի անբաժան մաս, երբեք չի ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը և Հայաստանի հանրապետության հետ է պահել իր կապը: Անհրաժեշտության դեպքում բանիցս ՀՀ ղեկավարությանն են դիմել Գյուլիստանի շրջանի ներկայացուցիչները՝ իրենց շահերը պաշտպանելու նպատակով:

Հայտնի է, որ ԼՂԻՄ-ի սահմաններն այնպես գծվեցին, որ Հայաստանից լրիվ կտրված լինի: Եվ մայր երկրից կտրված Հյուսիսային Արցախի համար սկսվեց ծանր, հոգեմաշ պայքար՝ ԼՂԻՄ-ի կազմի մեջ մտնելու համար: Ադրբեջանի խորհրդային իշխանությունները հենց առաջին փառիներից դատապարտում ու պատժում էին այդպիսի քայլերը: Ընդ որում, «իրավապահ» մարմինները հաճախ այնպես էին «լուծում» հարցերը, որ ժողովուրդը պատկերացում չունենա իրողության մասին: Շրջանը ԼՂԻՄ-ին միացնելուն կողմ խոսելու պատճառով դարաշինարյի Սահակ Աբրահամյանին հեռացրին կոմունիստական կուսակցության շարքերից: Նրան այնպես էին «հարցաքննել», որ չի կարողացել ուրբի վրա կանգնել, հարցաքննության են տարել սայլին պառկեցրած:

1926 թ. մանաշիդցի Հակոբ Առստամյանի գլխավորությամբ 15 հոգուց կազմված հեծյալ մի պարվիրակություն մեկնեց Ստեփանակերտ՝ միավորման հարցով: Հարցը խլացվեց, պարվիրակները բանտարկվեցին:

Խորհրդային իշխանության առաջին փառիներին, ավելի ստույգ՝ 1922 թ., Գյուլիստանի շրջանի վարչական կենտրոն է դառնում Վերին Շեն խոշոր գյուղը: 1924 թ. շրջկենտրոն դարձավ Ներքին Շենը, որը 1938 թ. վերանվանվեց Շահումյան (1961-ից՝ քաղաքապետի ավան): Գյուղերում ստեղծվեցին գյուղխորհուրդներ, կոմունիստական կուսակցական (բոլշևիկյան) սկզբնական կազմակերպություններ: Առաջին բոլշևիկներից էին Մադաթ Օսիպովը, Սահակ Աբրահամյանը, Միքայել Քոչարովը, Կարապետ Մադաթյանը, Մանաս Աղաբեգյանը, Մովսես Չաքարյանը, Պետր Մարգարյանը, Խաչո Ղուլյանը և ուրիշներ: Շրջանը ղեկավարվում էր կուսշրջկոմի կողմից: Բոլոր ղեկավարները մեծ մասամբ դրսի հայեր էին: Շրջանն ապրում էր ներքին ինքնավարությամբ: Բոլոր գյուղերում բացվեցին դպրոցներ (Ներքին Շենում, Վերին Շենում, Ղարաշինարում վաղուց կային): Անփոխարինելի դեր կատարեցին մանկավարժական հին կադրերը՝ Արշակ Խաչարյանն ու

Եղիշ Առսրամյանը (Ներքին Շեն), Սերգեյ Առսրամյանը (Էրքեջ), Եղիշ և Անդրևաս Հովասափյանները (Գյուլիստան), Հակոբ Առսրամյանը (Մանաշիր) և ուրիշներ: Բազմաթիվ խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ: Մի քանի փարուն ամբողջ չափահաս բնակչությունը գործնականում գրաճանաչ դարչավ: Աշխուժացավ մշակութային կյանքը, սրեղծվեցին ինքնագործ հասերգային ու թատերական խմբեր: Այդ առումով հիշատակության են արժանի աշուղ Բախշին (Ներքին Շեն) ու աշուղ Բաղդասը (Հայ Պարիս), երաժիշտներ Եղիշ Պետրոսյանը (Խրիստոփոր), Մուխի Հովսեփյանը (Հայ Պարիս), Սարգիս Բուրաղյանը (Սարդարը), Պողոս Վարդանյանը (Մանաշիր), Բեգլար Բալյանը (Ներքին Շեն) և ուրիշներ: Թատերական խմբերում աչքի էին ընկնում Սուրեն Կարապետյանը, Կոլյա Խաչատրյանը (Ներքին Շեն), Լևոն Բաղմանյանը (Ղարաչինար), Ռուբեն Եղյանը (Գաղթութ), Գրիշա Ազարյանը (Վերին Շեն), Ալեքսան Հովհաննիսյանը (Մանաշիր): Նշանակալից երևույթ էր կնոջ բեմ բարչրանալը. առաջիններից էին Շուշանիկ Գալստյանը (Մանաշիր), Փառանջեմ Հակոբյանը, Սարգսիս Սամվելյանը (Վերին Շեն) և ուրիշներ:

Շրջանի կյանքում անուրանալի դեր է կատարել 1935 թ. հիմնված շրջանային թերթը՝ «Բուլշևիկ», «Սփալինյան ուղիով», «Լենինյան ուղիով», «Կոլտնտեսական», «Նոր ուղի» ամուսններով (իսկ 1992-ից հասարակական հիմունքներով սկսեց լույս տեսնել Երևանում՝ «Մոսվի դողանցներ»): Շրջանային թերթի առաջին խմբագիրը Օլյա Սարգսյանն էր՝ ուղարկված Բաքվից: Նրան հաջորդեցին արդեն փեղայիներ՝ Չինավոր Մովսիսյանը, Հմայակ Ղահրամանյանը, Ազատ Բաբայանը, Երվանդ Մարությանը, Մամիկոն Պետրոսյանը, Գուրգեն Հակոբյանը, Բահադուր Պետրոսյանը, Լյուդվիգ (Ռոմեն) Մեծուսյանը: Թերթի շուրջ համախմբվեցին սրեղծագործող ուժեր՝ խթանելով ընդհանրապես հայ հոգևոր կյանքի զարգացումը փոքր լեռնաշխարհում: Հիշելու արժանի է հավակապես շնորհալի բանաստեղծ Վլադիմիր Ավագյանը (ավաղ, կյանքի թելը կտրվեց երիտասարդ տարիքում, ողբերգական չեղով):

Նոր կարգերն արմատական բարեփոխություններ առաջ բերեցին կենցաղում ու փոքրասական կյանքում: Չքավորները հողի ու անասունի տեր դարչան: Պետությունն աջակցում էր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելուն: Հին ու բարի ավանդույթներից շատերը զարգացման խթան ստացան: Կթան ունեցողներից կաթ էին հավաքում և բաժանում չունեցողներին: Վերին Շենում իրար օգնելով, գետից չեղով ջուր բարչացնելով: Թըռած կոշվող փեղամասում այգիներ գցեցին, որը հետագայում դարչավ գյուղի շեն թաղամասերից մեկը: Ընդհանուր ջանքերով Բուլղուխի կողմերից առու անցկացրին մինչև Հայ Պարիս, որի շնորհիվ գյուղը ծաղկում այգիներ, բերքառատ դաշտեր ունեցավ և այլն: Հավակապես արգասավոր եղան կուս-

շրջկոմի առաջին քարտուղար Առսրամ Առսրամովի գործունեության փառիները (1934–1937 թթ.). մի շարք գյուղերում լեռնային գեղակների վրա կառուցվեցին փոքրիկ էլեկտրակայաններ, դպրոցական շենքեր կառուցվեցին Վերին Շենում, Բուլղուխում, շրջկենտրոն հասցվեց Վանքի աղբյուրի ջուրը, ինչպես նաև անցկացվեց գյուղի վերին առուն՝ մեծ դեր կատարելով շրջկենտրոնի ընդլայնման ու ծաղկման գործում: Ուշագրավ երևույթ էր հատկապես հասարակական-փոքրասական կյանքում կնոջ դերի ակտիվացումը: Մոսկվայում բացված առաջին գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակից դարչան շրջանի առաջավորներ Վարսենիկ Սյրբուսյանը (Բուլղուխ), Լուսիկ Ալեքսանյանը (Մանաշիր), Հերիք Մարտիրոսյանը (Վերին Շեն): Նույնիսկ նրանց ստացած պատենտները երևույթ էին Շահումյանի գյուղերի կյանքում: Երևույթ էր Սանդուխտ Ավագյանի՝ Գաղթութի կոլտնտեսության նախագահ, իրականում՝ գյուղի ղեկավար դառնալը:

Շնունդ առան մեծ վնասակար զանազան երևույթներ: Հակակրոնական մոլուցք էր բոլորքովում, որի պատճառով շատ եկեղեցիներ ավերվեցին, հոգևորականները հալածվեցին: Հալածանք սկսվեց մանավանդ նրանց նրկափունսր, ովքեր ակտիվորեն մասնակցել են ինքնապաշտպանական կռիվներին, ցարական բանակի սպա են եղել, դաշնակցական կամ այդ կուսակցության էին հարող և այլն: Եվ այդ ամենի նպատակն էր ճնշել ազգային ոգին ու ինքնագիտակցությունը: Էրքեջի Սաշա Սարգսյանին, որ ցարական բանակի սպա էր եղել, վերադարչել էր հայրենի գյուղ, փոքրասություն հիմնել, սպառնում են, թե բռնելու են, և մա հեռանում է անտառները, «դաչաղ» դառնում: 1931 թ. յոթ հոգուց բաղկացած նրա խումբը, այլ հեռանկար այլևս չը-փեսներով, գնում է Սրբեփանակերտ, հանչնվում փեղի հայ իշխանություններին: Ավաղ, նրանց, չգիտես ինչու, փեղափոխում են Գանչակ, հանչնում թուրք իշխանավորների չեղքը. «դար» է կազմակերպվում, և բոլորին գնդակահարում են:

1924 թ. շրջկոմի առաջին քարտուղար է նշանակվում Արշակ Աղաջանյանը (1924–1925 թթ.)՝ գործողված Բաքվից: Արժե նշել, որ կուսշրջկոմի քարտուղարները (և ընդհանրապես խորհրդային ղեկավարները) նշանակվում էին վերադաս կուսակցական մարմնի կողմից, բայց՝ չնայած «ընտրության» եղանակով: Շրջանի գործկոմի նախագահ ընտրվեց Միքայել Քոչարովը, կոմերիտական շրջկոմի առաջին քարտուղար՝ Ծափուր Ղահրամանյանը (դավադրաբար սպանվեց 1928 թ.):

Շրջանի կյանքում անցնելի հեղք թողեց Հայրենական Մեծ պատերազմը՝ հարյուրավոր զոհեր, մյուսական վիրախարի զրկանքներ... Ծափ շատերը պատերազմում աչքի ընկան իրենց սխրանքներով, բազմաթիվ շքանշանների ու մեդալների արժանացան: Գյուլիստանցի Գարեգին Բալայա-



մըն արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Ռ-ագմաճակար մեկնած 2647 շահումյանցիներից (այդ թվում՝ 10 կին), 1200 հոգի չվերադարչավ: Մի ամբողջ ջոկատ ռազմի դաշտ ուղարկեց դարաշինարցի Մուվանց Քոբորը՝ վեց փղա, որոնցից հինգը զոհվեցին ռազմի դաշտում, վեցերորդը վիրավորված վերադառնալով վախճանվեց գյուղում: Նույն գյուղից Կիզիրանց Մուվանը երեք որդի ուներ, երեքն էլ զոհվեցին պատերազմում (Մամիկոն, Շամիկո, Գաթիկո): Ներքին Շենից պատերազմ մեկնեցին Մուավ և Նարգիզ Չիրքինյանների չորս որդիները՝ Սարգիսը, Օհանջանը, Կոլյան, Սաշան, և ոչ մեկը չվերադարչավ ռազմի դաշտից: Վեց որդի ռազմաճակար ուղարկեց նույն գյուղից Հոռոմսիմ Դանիելյանը (Հոռի բիբը)՝ չորսը հրամանափար, երկուսը շարքային: Պատերազմից չվերադարչան երեք հրամանափար որդիները՝ Շամվոնը, Վոլոդյան, Կոլյան: Սարգիսյին մեծ ողբերգություն է արչանագրվել որդեկորույս մոր շիրմաքարին. նրա խնդրանքով գրել էին, թե այն հիշատակ է Կոլյայի կողմից, որպեսզի գոնե այդ չևով պահպանվի անհիշատակ (չամուսնացած) զոհված որդու անունը:

Յավոք, այդպիսի ընդամենիքների, մաս մյուս մասնակիցների մասին ամբողջական փեղեկություններ չեն պահպանվել, իսկ այդ գյուղերի հայաթափումից հետո մնան կարգի նյութեր հավաքելը գործնականում անհնարին է:

Ոչ պակաս ծանր եղան հետպատերազմյան շուրջ 10 փարիները, երբ գյուղացին գրկված էր իր սրբեղծածի մեծագույն մասից՝ համարյա ամեն ինչ մթերվում էր հոգուր պեփոխության: Պարզապես կողոպուտ էր դարչել պեփական փոխառություն կոչված երևույթը: Գիտակից, հայրենասեր ու ազգին նվիրված շահումյանցիներից շատերը զոհ էին գնացել 1930-ական թվականների, հատկապես 1937-ի զանգվածային բռնություններին, որոնք իրականացվում էին ամբողջ ԽՍՀՄ-ում: Այդ երևույթը վերստին սկսվեց պատերազմից հետո: Այնուամենայնիվ, գյուղերն աստիճանաբար սկսեցին ուշքի գալ կրած ծանր կորուստներից: 1950-ական թվականների կեսերից քաղաքական մթնոլորտը Խորհրդային Միության մեջ որոշ չափով սկսեց մեղմանալ: 1960-ական թվականների սկզբներից շրջանի գյուղերի կյանքը նկատելիորեն բարելավվեց: Սակայն հիմա էլ մի նոր վտանգ ծառայեց: Ամբողջ ԽՍՀՄ-ում իրականացվող փոփոխությունների ու շրջանների խոշորացման պատճառով փակ Ադրբեջանը որոշեց Շահումյանի փոքր հայկական շրջանը միացնել Կասում-Իսմայլովի (Գերանբոյ) խոշոր ադրբեջանական շրջանին, որը կդառնար ներքին ինքնուրույնության կորուստ և հայերի արտահոսքի պատճառ: Շրջանի ժողովուրդը ըմբոստացավ, պահանջեց գոնե միացնել հարևան հայկական Խանլարի շրջանին, բայց Ադրբեջանը, բնականաբար, այդ քայլին չէր գնա, որովհետև հայերը դրա շնորհիվ

ավելի համախմբված ու մեծ ուժ կդառնային: Համառ պայքարի շնորհիվ շրջանը պահպանվեց: Յավոք, Խանլարի հայկական շրջանը չկարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը. հայ ղեկավարներին որոշ խոստումներով հնազանդեցին, Խանլարը միացրին հարևան ադրբեջանական շրջանի հետ, որի պատճառով ադրբեջանցիներն այնքան գերակշռող դարչան: Շահումյանի կուսշրջկոմի քարտուղար Մելիք Ծափուրովը հեռացվեց աշխատանքից, բայց շրջանը պահպանվեց՝ որպես բացառիկ երևույթ ամբողջ ԽՍՀՄ-ում. «արդարացնելու» համար այն կոչեցին Շահումյանի լեռնային շրջան, բայց այդ հավելումն էլ շուտով մոռացվեց:

1960–1970-ական թվականները շրջանի զարգացման լավագույն փարիները դարչան: Գյուղերը բարեկարգվեցին, կառուցվեցին դպրոցի, ակումբի, գրադարանի նոր շենքեր, հիվանդանոցներ, բուժկետեր: Բոլոր գյուղերը էլեկտրիֆիկացվեցին, ապահովվեցին հեռախոսով, բոլոր փեղերում կինոփեղակայումներ կային: Զգալիորեն աճեց հայ բնակչության թիվը: Սպորտ բերում ենք թվական ու փաստական որոշ փվյալներ, որոնք այդ փարիներից մեր կատարած հետազոտության արդյունքն են:

1970 թ. **ՇԱՀՈՒՄՅԱՆ** շրջկենտրոնը, հնում՝ Ներքին Շեն (1961-ից՝ քաղաքափայ ավան) լեռների գրկում, այգիների մեջ սուզված, ասֆալտապատ փողոցներով, անհարական ու պեփական գեղեցիկ շենքերով, բարե-



1961 թ. Շահումյան գյուղը դարձավ քաղաքափայ ավան



կարգ կենցաղով մի անգուգական բնակավայր էր. ուներ 697 փուն, 3418 բնակիչ (1704 փղամարդ, 1714 կին), 2 միջնակարգ դպրոց՝ հայկական ու ռուսական, մաս գիշերօթիկ դպրոց (1965-ից), հայկական և ռուսական մանկապարտեզներ, երաժշտական ու մարզական դպրոցներ, արհեստագործական ուսումնարան, շրջանային և մանկական հիվանդանոցներ, շրջանային և մանկական գրադարաններ, կենցաղի փուն, բաղնիք, կինոթատրոն, հյուրանոց: Աճեցնում էին խաղող, ծխախոտ, հացահատիկ, զբաղվում էին անասնապահությամբ (խոզ, ոչխար, փավար): Հին անունը՝ *Ներքին Շեն*, հայտնի է դեռևս 1805 թ. մի արչանագրությունից՝ գրված հին գերեզմանոցի մի փապանաքարի վրա, որտեղ կան մաս XV–XVI դդ. խաչքարեր. որպես հին գյուղատեղեր հայտնի են Վանքը, Կողերը՝ ավելի հին խաչքարերով ու եկեղեցիներով: Ռուսական աղբյուրներում պաշտոնապես գյուղը կոչվել էր Ներքին Աղջաքենդ՝ Շառաշեն, երևի անփառով ու այգիներով հարուստ լինելու պատճառով:




Տեաթան Շահումյանի շրջկենտրոնից

**ՂԱՐԱՅԻՆԱՐԸ** ուներ 438 փուն, 2010 բնակիչ (940 փղամարդ և 1070 կին), միջնակարգ դպրոց՝ հայկական և ռուսական բաժիններով, կինոփողակայում, մշակույթի փուն, գրադարան, բաղնիք և այլն: Չբաղվում էին այգեգործությամբ, անասնապահությամբ, մշակում էին ծխախոտ, հացահատիկ և այլն: Գյուղը կոչվում է մաս Աղջաղալա՝ Բերդ ծառ: Այդ, ինչպես մաս

Ղարաչինար՝ Մեծ չինարի, անվանումները երկուսն էլ կապվում են ծառի հետ, որը բնական է այգեշատ ու անփառամերչ գյուղի համար: Գյուղի մոտ, Ինջի չորում, կա մի վիթխարի չինարի (բարդի), որի հետ մույնպես կապվում է գյուղի անունը:



Ղարաչինար գյուղի եկեղեցին: Ըստ տարեցների հիշողության եկեղեցին ունեցել է մաս գմբեթ (գույց՝ զանգակատուն), որը կործանվել է 1930-ական թվականների սկզբներին:



Ղարաչինարը Գաղթոս գյուղին կապող կամուրջը:

**ԳԱՂԹՈՒԹԸ** մտնում էր Ղարաչինարի գյուղխորհրդի կազմի մեջ: Ուներ 77 փուն, 299 բնակիչ (137 փղամարդ, 162 կին), բուժկետ, փարրական դպրոց, գրադարան: Հանրային փոստային կենտրոնը վերջին փարիններին Ղարաչինարի հետ միացյալ էր: Հեփաքրքիր ճակատագիր ունի այս գյուղի անունը: Հին աղբյուրներում գրվում է Ղահթութ (գույց՝ Շահթութ), որը ռուսական փիրապետության շրջանում գրվել է Гахты: Դա էլ կապվել է գաղթելու հետ, թուրքերը մոր ժամանակներում կոչել են Ղարիքքյանդ



(օտարի գյուղ), որն էլ իր հերթին հնչյունափոխվել է, ասում էին մաս Ղար-  
րիքյանը:

**ԽՐԽՎՓՈՐԸ**, որ կոչվում է մաս **Խարխափուր**, մախ մտնում էր Ղա-  
րաչինարի գյուղխորհրդի, 1973-ից՝ Շահումյանի ավանային խորհրդի կազ-  
մի մեջ: Ուներ 100 փուն, 550 բնակիչ (237 փղամարդ, 313 կին), 130 աշակեր-  
տով ութամյա դպրոց: Չբաղվում էին անասնապահությամբ, մշակում էին  
ծխախոտ, հացահատիկ, աճեցնում խաղող և այլն: Հին գյուղը ներկայիս  
տեղից մոտ 1 կմ վերև էր գտնվում, խիտ անտառի մեջ, որտեղ պահպանվել  
են հին եկեղեցին ու այլ հուշարձաններ: Անունը հենց տեղանքից է բխում՝  
խարխափ տեղ, խարխափի չոր (հնում փորը չոր էր նշանակում):



Բնակելի տուն Խրխափուրում


**ՄԱՆԱՍԻՆ ՇԵՆԸ**, հնում կոչված **Մանասին քաղ**, հիմնված Գյուլիս-  
տանի մելիք Եսայու շառավիղների կողմից, կոչվել է մաս Նորաշեն, ադրբե-  
ջանցիները պաշտոնապես գրում էին նույնի թարգմանությունը՝ Ենիքենդ:  
Գյուղն ուներ 180 փուն, 842 բնակիչ (398 փղամարդ, 444 կին), 180 աշակեր-  
տով ութամյա դպրոց: Չբաղվում էին հիմնականում խաղողագործությամբ,  
ծխախոտագործությամբ, անասնապահությամբ և այլն: Ուշագրավ հու-  
շարձան էր գյուղի «Պռավին հանգիստը» (պառավի գերեզման), արժեքա-  
վոր նյութեր կային ոչ հեռու գտնվող Չաքին մահապրակ հնավայրում:



Մանասին Շենի դպրոցի կոլեկտիվի հանդիպումը Հայրենական  
մեծ պատերազմի վետերանների հետ, 1986 թ.:

Մեզ տրամադրելով այս լուսանկարը՝ գյուղի նախկին ղեկավար Թևոս Եսայանը (առաջին  
շարքում աջից՝ երրորդը) մակագրել է.

*Կոլեկտիվով նկարվեցինք, «անասնացանք»  
Ավա՛դ, հեկո մեծ ցավերի մենք փիրացանք,  
Աշխարհով մեկ սփռվեցինք ու հեռացանք,  
Նորից իրար փնտնելու մենք շարժանացանք:*



Բուզլումս գյուղի եկեղեցին

**ԲՈՒԶԼՈՒԽԸ** ուներ  
133 փուն, 612 բնակիչ  
(294 փղամարդ, 318  
կին), 188 աշակերտով  
միջնակարգ դպրոց, ա-  
կումբ, բուժկետ, գրա-  
դարան և այլն: Չբաղ-  
վում էին անասնապա-  
հությամբ, մշակում  
կարտոֆիլ, ծխախոտ,  
հացահատիկ և այլն:  
Հիշարժան էր գյուղի  
գեղեցիկ եկեղեցին ու  
Սուրբ Սինաս մատու-



որը Գյուղի մոտ է գտնվում բարձրադիր Սոնապոն վայրը, որտեղ՝ վիթխարի ժայռաբեկորների արանքում, միշտ սառույց էր լինում: Այդպեղից էլ, թարգմանաբար, գյուղի ներկայիս անունը:

**ԳՅՈՒԼԻՍԱՆ:** Հնագույն աղբյուրներում հայտնի է Վարդուր անունով, XV–XVI դդ. սկսած գործածական է դարձել այդ անվան պարսկերեն թարգմանված չևր: Գյուղն ուներ 204 փուն, 1012 բնակիչ (447 փղամարդ, 565 կին), միջնակարգ դպրոց, ակումբ, գրադարան, բուժկետ և այլն: Զբաղվում էին հիմնականում կարտոֆիլի, ծխախոտի, հացահատիկի մշակությամբ, անասնապահությամբ: Պատմամշակութային արժեքավոր հուշարձաններ կան հանրահայտ բերդում, գյուղի եկեղեցում ու շրջակա գերեզմանոցում, Կոփրած եկեղեցում, Հացուտում և այլուր:



Գյուլիստան: Խորհրդային միության հերոս Գարեգին Բալայանի հուշարձանի բացումը 1972 թ., ձախից՝ Վարդգես Հովասափյանը, որը երկար տարիներ եղավ Գյուլիստանի գյուլխորհրդի նախագահ, կոլտնտեսության վարչության նախագահ և բարի ավանդ ունեցավ գյուղի զարգացման գործում:

**ՎԵՐԻՆ ՇԵՆ:** 1973 թվականից քաղաքափայ ավան էր: Ուներ 826 փուն, 4141 բնակիչ (2043 փղամարդ, 2098 կին), միջնակարգ և ութամյա դպրոց, մանկապարտեզ, մշակույթի փուն, 2 գրադարան, հյուրանոց, բաղնիք և այլն: Հիմնականում զբաղվում էին կարտոֆիլի, հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, անասնապահությամբ: Ռուսական և աղբրեջանական պաշտոնական փաստաթղթերում գյուղի անունը գրվում էր Վերին Աղջաբենդ: Հի-

շարժան է գյուղի եկեղեցին, հուշարձաններով հարուստ Լիփրը, մանավանդ Գիր խաչ ուխտատեղին՝ բազմադարյան վիթխարի սուսի ծառի մոտ:



*Վերին Շեն գյուղում, կանաչ սարի փակ, որպես հիշարակ  
Կանգնած է հպարտ կոթող-հուշարձան, իսկ գույնը՝ արյան:  
Դա ժողովուրդը ինքն է կառուցել, հարգանք մատուցել  
Մեծ կովոռ: զոհված այն մարտիկներին, բայց հերոսներին,  
Որոնք հաղթության ճանփաներն անցան, բայց ... չվերադարչ  
223 անձահ հերոսներ,*

*Չեր սերունդների հպարտ սրբերում  
Դուք կապրեք դարեր:*

**ՎԱՆՈՂՅԱ ԱՄՔԱՆԱԶԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ,**

**Վերին Շեն, 1976 թ**

Ավաղ, գոհերի թիվը 223-ով չսահմանափակվեց: 1988 թ. սկսված ինքնապաշտպանական կռիվներում նորից գոհեր տվեց Վերին Շենը: Նորոթյա նահատակների շիրիմներն ամփոփվեցին, ցավոք ոչ միայն գյուղում, այլև Եռաբլուրում և այլուր, ոմանք էլ մնացին անհայտության մեջ:

**ՍԱՆԱՇԻՂԸ** ուներ 144 փուն, 615 բնակիչ (291 փղամարդ, 324 կին), 157 աշակերտով միջնակարգ դպրոց, գրադարան, ակումբ, բուժկետ և այլն: Զբաղվում էին անասնապահությամբ, մշակում ծխախոտ, հացահատիկ, խաղող, կարտոֆիլ և այլն: Ներկա փեղում գյուղը հիմնվել է XIX դ. կեսերին: Դրանից առաջ գտնվում էր ոչ հեռու, հին հայկական Թողան գյուղափեղի մոտ,




որտեղ պահպանվել են հին գերեզմանոցը, մաքուրը՝ կառուցող մանաշիլ-ցիների հիշարկությունը: Գյուղի անունը հին աղբյուրներում հանդիպում է փարբեր չևերով՝ *Մանուշեն, Մնաշեն, Մանաշեթ* և այլն: Ժողովուրդն ինքը Մնաշեն է ասում. հավանաբար հին փեղում գյուղը ավերվելուց, ինչ-որ աղեփի կամ այլ պատճառով փեղափոխվելուց հետո մարդիկ այն կոչել են Մնաշեն՝ բարի ակնկալիքներով: Եզակի արչամագրություն կա 1892 թ. կառուցված եկեղեցու մուրաբի վերևում, որի մեջ նշված է, որ եկեղեցին կառուցել է գյուղի ամբողջ հասարակությունը՝ 34 փուն, բացի ...-ից (չենք ուզում հիշել անարժան մարդու անուն-ազգանունը. — Կ. Ղ.):



Մանաշիլը 1954–1955 թթ. ձմռանը: 1960–1970-ական թթ. հիմնովին փոխվեց գյուղի տեսքը, բարեկարգվեց, կանաչապատվեց, փոխվեց կենցաղը:

**ԷՐՔԵՋԸ** ուներ 182 փուն, 739 բնակիչ (343 փղամարդ, 396 կին), 224 աշակերտով միջնակարգ դպրոց, գրադարան, ակումբ, բուժկետ և այլն: Տնտեսության հիմնական ճյուղերն էին անասնապահությունը, այգեգործությունը, ծխախոտագործությունը, հացահատիկի արտադրությունը: Նորագույն ժամանակներում գյուղի ցածրադիր բերրի «Ղունանա փակ» հանդամասում շենքեր կառուցեցին, փորձեցին գյուղը փեղափոխել կամ պարզապես նոր բնակավայր հիմնել, անավարժ մնաց գործը: Գյուղն ունի գեղեցիկ եկեղեցի (XVI դ.), արժեքավոր այլ հուշարձաններ: Անունը հանդիպում է հին աղբյուրներում *Էրքաջ* չևով:



Տեսարան Էրքեջի լուսանկարված Թողանի դաշից: Գիմացի Քերծը մի ամբողջ է հիշեցնում քարայրներով ու խիտ անտառով: Քերծի լանջով հողիզոնական ուղղությամբ ձգված էր հանրահայտ Քյամանդը՝ քարայրների շարքով, երեք հատը՝ առանձին-առանձին սենյակների չափ, իսկ չորրորդը՝ մի խոշոր սրահի չափ: Գարեր շարունակ դրանք պաշտպանական դեր են կատարել, իսկ ավելի հին ժամանակներում գուցե նաև հիմնական բնակավայր են եղել: Կարծում ենք, այդ տեղից էլ ծագել է գյուղի անունը՝ *Այրքաջ*, որը հնչյունափոխվելով դարձել է *Էրքաջ*, իսկ նոր ժամանակներում՝ *Էրքեջ* (լուսանկարը, ինչպես նաև Էրքեջի մասին բազմապիսի այլ նյութեր մեզ է տրամադրել Սերժիկ Լալայանը):

**ՀԱՅ ՊԱՐԻՍՆ** ուներ 179 փուն, 879 բնակիչ (419 փղամարդ, 460 կին), միջնակարգ դպրոց, ակումբ, բուժկետ, գրադարան և այլն: Սակավաջուր գյուղի կյանքում հեղափոխիչ դեր է կատարել 1930-ական թվականներին չեղրով անցկացված ռոտզման ջրանցքը, ավելի ճիշտ՝ առուն՝ Պրսառու կոչված, մոտ 10 կմ երկարությամբ, լեռնային փեղանքով: Գյուղի անունը Պարիս չևով հայտնի է XV դ. սկզբներից, սակայն XIX դարից սկսած խեղաթյուրման է ենթարկվել: Պարիսը ներկայիս փեղից քիչ ավելի բարձր էր գտնվում, հիմա Հին Պարիս է կոչվում: Անունն էլ, հասկանալի է, «բարիք» բառից է, որը մեր բարբառում *պ-ով* է ասվում: XIX դ. կեսերին շրջանի փարածքում հայտնվում են ռուս վերաբնակներ: Փոխադարձ համաձայնությամբ նրանց փեղավորում են Պարիսի մոտ, իսկ պարիսեցիները փեղափոխվում են ոչ շատ հեռու, ցածրադիր փեղ: Իրարից զանազանելու համար ռուս վերաբնակների գյուղը անվանում են Ռուսական Պարիս, հայերինը՝ Հայկական Պարիս: XIX դ. պաշտոնական գրությունների մեջ նկատելի է, թե



ինչպես ռուսերեն Պարիսը սկսել են գրել Բարիս չևով, հետո էլ դա շփոթվել է Բորիս անվան հետ, խորհրդային փարիսներին այդ գյուղերն սկսել են փաշտոնապես կոչել Հայ Բորիս և Ռուս Բորիս անհերթել չևերով:



Հայ Պարիսի թեկուզ մեկ թաղամասը պատկերող միայն այս լուսանկարն է մեզ հաջողվել ձեռք բերել: Շրջանի մյուս գյուղերի նման Պարիսը նույնպես հայտնի էր երկարակյացներով: Գալունց Հակոբը (կենտրոնում) ապրել է 93 տարի, կինը՝ Շախին, մոտ 90 տարի:

1980-ական թվականներից զգալի դարձավ հայերի արտահոսքը շրջանից, որը ոչ միայն չէր մտահոգում Բարձիկ ուղարկված ղեկավարին, այլև, ընդհակառակը, նա հենց ինքը հաճախ դրսից աղբյուրներից կադրեր էր բերում, նշանակում պարասխանափու պաշտոնների, անտեսում փեղապիներին: Հաճախ մարդիկ չէին կարողանում մի փոքրիկ հողակտոր ստանալ փուն կառուցելու, զավակ սմուսնացնելու համար, իսկ հանրային կոչված հողերի մեծ մասն անարդյունավետ էր օգտագործվում: Երկար փարիսներ խոսք էր գնում Վերին Շենի գիպսի հանքն ընդլայնելու, երկաթուղի անցկացնելու մասին, այդպիսի պլան ընդունվել ու հրապարակվել էր Մոսկվայում դեռևս 1960-ական թվականների սկզբներին, սակայն Աղբյուրը չի քաղածեց այդ պլանը, որպեսզի հայկական շրջանի բնակչությունը չամրանա փեղում:

Արցախյան շարժումն սկսվելուց հետո, երբ բռնությամբ հայաթափվեցին Աղբյուրի բոլոր հայաբնակ շրջանները, ԼՂԻՄ-ի հետ միասին՝ դիմակայեցին միայն Շահումյանի շրջանն ու Գեփաշենի ենթաշրջանը, որոնք ժողովրդի կամքով միավորվեցին՝ կազմելով մեկ շրջան: 1990–1991 թթ. խար-

դախ միջոցներով, հետո նաև հեփխորի դային բանակի ուժով հայաթափեցին Գեփաշենի ենթաշրջանը: Շահումյանն ըստ էության մնաց միայնակ Աղբյուրի դեմ, որովհետև հայկական ճակատում չկար հստակ, միասնական ղեկավարություն, ուժերը մասնավորված էին, մարտավարվում, հաճախ նաև ղեկավարվում էին փարբեր քաղաքական, անմիաբան հրամանավարության կողմից: Ճակատագրական դեր խաղաց այն, որ հայերի դեմ Աղբյուրի սանձազերծած բացահայտ պատերազմին զուգահեռ Հայաստանում փեղի էր ունենում արմատական իշխանափոխություն, որին հաճախ զոհաբերվում էին ինքնապաշտպանության շահերը: Անտեսելով այդ ամենը, Շահումյանն կազմակերպվեց բավական հուսալի ինքնապաշտպանություն՝ Շահեն Մեղրյանի ընդհանուր հրամանավարությամբ: Ռազմական շարքի պեղը Սերգեյ Չալյանն էր, գլխավոր հրամանավարի փեղակալներ՝ Հակոբ Խիդիրյանը և Շահեն Հովասափյանը: Չենքի նորոգումն ապահովում էր Բորիկ Բաբաջանյանը: Կար մեկ «գրադ» կայանք, չորս ԵՄՄ-1 և ԵՄՄ-2, Դ-72 մեկ փանկ և Դ-30 մեկ թնդանոթ:

Յուրաքանչյուր գյուղ ուներ մարտական մշտական ջոկատ, բացի դրանից՝ նաև աշխարհագր: Վերին Շենի մարտական ջոկատը (75 հոգի) սկզբում գլխավորում էր Սամսոն Մարյանյանը, որը վարառողջության պարճառով հեռացավ ջոկատից, նրան փոխարինեց Նովիկ Գյուլումյանը: Գյուղի աշխարհագրը գլխավորում էր Սևարոն Շելունցը: Հարկ եղած դեպքում գյուղից 40–50 հոգի գնում էր Սանաշիդին օգնության: Ներքին Շենի (Շահումյան ավան) մարտական ջոկատը (39 հոգի) սկզբում գլխավորում էր Հակոբ Խիդիրյանը, հետո՝ Վարդան Սկրպումյանը: Աշխարհագրը կազմակերպում էր ավանային խորհրդի նախագահ Ավագ Վելյանը, այն պաշտպանում էր Բուզլուխի սահմանը:

Բուզլուխի ջոկատը (13 հոգի) գլխավորում էր Համլետ Սփեփանյանը, իսկ գյուղի ընդհանուր պարասխանափուն գյուղխորհրդի նախագահ Գեղամ Մուրադյանն էր: Այսպեղ էին գործում նաև Սասուն Միմոնյանի (Ալավերդի) գլխավորած ջոկատը և Կարոտ Սկրպյանի գլխավորած միավորյալ ջոկատը՝ Նաիրիի շրջանից (Պոռոջյան, Նոր Երզնկա, Բուժավան): Սանաշիդում կարևոր դեր էր կատարում ընտանիքով գյուղ վերադարձած Խաչիկ Սահակյանը, որը գլխավորում էր թե՛ գյուղխորհուրդը, թե՛ կուլտուրեսությունը: Այսպեղ էր գործում «Արաբ» ջոկատը Մանվել Եղիազարյանի ընդհանուր հրամանավարությամբ: Երբեջի ջոկատը (37 հոգի) սկզբում գլխավորում էր Վանիկ Լալայանը, նրա զոհվելուց հետո՝ Կամո Հովհաննիսյանը, որի զոհվելուց հետո էլ՝ փեղակալը՝ Յուրա Մարգարյանը: Գյուղի պաշտպանությանն օգնում էր նախկին երբեջիների խումբը՝ Արմովյանից, այսպեղ էր



գործում նաև «Տիգրան Մեծ» միավորման մեկ ջոկատ: Հայ Պարիսի ջոկատը (33 հոգի) գլխավորում էր Արփաշ Մարգարյանը: Խրխսավորի ջոկատի հրամանատարն էր Վազիֆ Գևորգյանը, Գաղթաթիմը՝ Ռուդիկ Եղյանը, Մանասին Շենինը՝ Վարդան Մալխասյանը. այս երեքը Ղարաչինարի ջոկատի հետ կազմում էին մեկ զումարտակ (152 հոգի), որի հրամանատարն էր Կոլյա Պեպրոսյանը, շտաբի պետը՝ Գենարի Դուլյանը: Այսպես էր գործում նաև հատուկ գնդից մի ջոկատ (շուրջ 100 հոգի)՝ Վլադիմիր Կարապետյանի գլխավորությամբ: Գյուլիստանի ջոկատի (25 հոգի) հրամանատարն էր Պողոս Մեղրյանը, այն պաշտպանում էր Բուզուլխի սահմանը: Գյուլի աշխարհագրորդ գլխավորում էր Ռաշիդ Սեյրանյանը: Նրանց օգնում էր նախկին գյուլիստանցիների խումբը, որը պաշտպանում էր Ինջի գետի սահմանը (կազմակերպում էին հիմնականում Մարկել Մակյանը և Վալերիկ Խաչատրյանը): Բուզուլխի և Մանաշիդի տեղամասի ընդհանուր պաշտպանությունը գլխավորում էր Սերգեյ Չալյանը, Էրթեջի ու Հայ Պարիսի տեղամասինը՝ Հակոբ Խիդիրյանը: Այս բոլորը մեկ ռազմական կառույց էին ներկայացնում, բայց կուռ ամբողջություն ստեղծելը դժվար էր, որովհետև փարբեր էին ոչ միայն մարտական պարաստականության աստիճանը, այլ հաճախ նաև մարտավարական ու համալրման աղբյուրները, երբեմն նույնիսկ ենթակայությունը: Մայր երկրի հետ կապը երկար ժամանակ միայն օդով էր, իսկ ուղղաթիռները չէին բավարարում, թռիչքները վտանգավոր էին՝ թշնամու կրակի փակ:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերպում ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների ժողովրդական պարզամավորների կողմից հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ մարզի և շրջանի սահմաններով, բայց ինքնապաշտպանությունը դրանով չամրացավ: Շրջանի հույսը դարձյալ մնում էր հիմնված սեփական մասնաշեռնության ու նվիրվածության վրա:

Ինքնապաշտպանության ուժերը քանիցս ջարդ փվեցին աղբրեջանցիներին ու հետ շարժեցին հայրենի սահմաններից: Սակայն քայքայվող ԽՍՀՄ-ի քայքայված ու ապականված ղեկավարության ու բանակի օգնությամբ հակառակորդը 1991 թ. գավթեց Էրթեջ, Մանաշիդ, Բուզուլխ գյուղերը, օրհասական դարձավ մյուս գյուղերի վիճակը: Նույն թվականի օգոստոսի վերջերին հիշյալ ապականված ղեկավարության չեռնարկած հեղաշրջման փորձը չախտովեց, միառժամանակ աղբրեջանցիները զրկվեցին մոսկովյան օգնությունից, և շրջանի ինքնապաշտպանության ուժերը խայտառակ պարտության մատնեցին նրանց, ազատեցին Էրթեջը, Մանաշիդն ու Բուզուլխը: Սակայն հետո վիթխարի ուժին անհնարին եղավ դիմակայել անձնագրիությամբ...

1992-ին ազատագրվեց Շուշին, մաքրվեց Լաչինի շրջանը, ապահովվեց անմիջական կապ մայր հայրենիքի հետ: Հաջողություններն ինքնահանգրստանում առաջացրին, իսկ ներքին ու արտաքին քաղաքական հակասությունները խորացան հայկական ճակատում: 1992 թ. հունիսի 13-ին հակառակորդը վարձեց Գանձակում (Գյանջա) գտնվող հեթանոսական դիվիզիան, որը մեկ օրվա ընթացքում հայաթափեց Շահումյանի շրջանը: Հայրենի հողի սահմաններում իրենց կյանքը զոհեցին Դավիթ Հովհաննիսյանը, Համազասպ Նահապետյանը, Արեգ Սուրյանը և ուրիշներ, սակայն չկարողացան կասեցնել վիթխարի ուժերի և հզոր տեխնիկայի առաջխաղացումը:



Շահեն Մեղրյանը (ձախից երրորդը) վիթխարի դեր կատարեց Շահումյանի ինքնապաշտպանության գործում, շրջանի անկումից հետո էլ անմասնադեպ սխառնք եղավ պարտիզանական ջոկատի կազմակերպումը նրա կողմից, որը մեծ դեր ունեցավ արցախյան մի շարք տարածքների ազատագրման ժամանակ:

Հարյուրավոր խաղաղ բնակիչներ զոհվեցին իրենց տներում ու բռնի տեղահանության դաժան ճամապարհին: Հարյուրավոր մարդիկ մնացին հայրենի գյուղերում, ու մինչև հիմա նրանց ճակատագիրն անհայտ է: Շահումյանցիները ցրվեցին աշխարհով մեկ, բայց ինքնապաշտպանության ուժերի միջուկը մնաց հայրենի սահմաններում, Շահեն Մեղրյանի գլխավորությամբ շարունակեց պայքարը պարտիզանական եղանակով: Նրանք կարե-



վոր դեր կատարեցին ԼՂՀ հյուսիսային որոշ փարածքների, ինչպես նաև պարամական արցախյան այլ փարածքների ազափագրման գործում:




Պարտիզանական ջոկատ: Հերթական հաղթական մարտական գործողությունից հետո:

1993 թ. Շահումյանի շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների մի մեծ խումբ պարզամավորներ Երևանում հրավիրեցին միայնալ արտակարգ միսր, կազմեցին շրջանի ժամանակավոր գործկոմ, նախագահ ընտրվեց Շահեն Հովասափյանը, որը կարևոր դեր կատարեց պարտիզանական ջոկատին օգնելու (կազմակերպելու, համալրելու), ինչպես նաև բռնի տեղահանված բնակչությանն աջակցելու ուղղությամբ:

1994 թ. մայիսին կնքվեց հրադադարի համաձայնագիր: Պարտիզանական ջոկատի մարտիկներից շատերն իրենց ընտանիքները բերեցին ազափագրված փարածքներ, վերաբնակություն հաստատեցին: Հունիսին ստեղծվեց ԼՂՀ Շահումյանի շրջանի վարչակազմ, սկսվեց կազմակերպված վերաբնակեցում: Գործընթացը խորանալու շնորհիվ հնարավոր դարձավ նոր վարչական սահմաններով ստեղծել Շահումյանի շրջան՝ ներառելով նաև Մարտակերտի շրջանի որոշ մասը և Քարվաճառի շրջանը: Մի քանի փառում ստեղծվեց վերաբնակների փասներեք գյուղ՝ նպաստելով արցախյան հողի վրա շահումյանցիների համախմբմանը և մեր գերյալ գյուղերի պահանջափորության հասունացմանը, ազափագրման հնարավորությունների ամրապնդմանը: Կարծում ենք՝ այդ սուրբ նպատակի իրագործմանը կարող է նպաստել նաև աշխարհասփյուռ շահումյանցիների միջև կապի ամրա-

պնդումը, գերյալ հայրենիքի կարողը բորբոք պահելը, հայրենի պատմությունը, հարազատ բառ ու բանը հիշելը, մայր հայրենիքի հետ ամուր կապը, որին կոչված է սույն գիրքը:



Բնակատեղի նորաստեղծ Շահումյանի շրջանից

Քարվաճառ: Գարե շարունակ այստեղից ջրաղացի, ձիթանքի և այլ քարեր են տարվել մեր լեռնաշխարհի տարբեր գյուղերի համար: Արբեջանին բռնակցվելուց հետո սկսեցին դուրս մղվել նաև այս հողի բնիկ տերերը: 1957 թ. արբեջանական թուրքերն այս ժայռի վրա պայթեցրին բազմադարյան հայկական եկեղեցին՝ ճանապարհ կառուցելու պատրվակով: Պղծվեցին շատ սրբություններ, նույնիսկ բերում էին խաչքարերը՝ խաչի պատկերը վերացնելու համար: Արցախյան պատերազմի շնորհիվ հայը նորից տեր դարձավ իր այս հրաշք հողին և սկսեց վերականգնել նոր կյանք: Քարվաճառն այսօր վարչական նոր սահմաններով ստեղծված Շահումյանի շրջանի կենտրոնն է:



Վարչական նոր սահմաններով ստեղծված Շահումյանի շրջանում վերականգնվում, իրենց վաղեմի հայկական տեսքն են ստանում բազմաթիվ գյուղեր, որոնցում համախմբված կերպով ապրում են շահումյանցիների տասնյակ ու տասնյակ ընտանիքներ:

Լուսանկարում ԼՂՀ Շահումյանի նորաստեղծ շրջանի Ավանաբերդ գյուղի Շահեն Մեղրյանի անվան հմ. 1 միջնակարգ դպրոցի երգչախումբը:





Ազատագրված արցախյան տարածքների վերաբնակեցումը պատմական մեծ սխրանք է, որն իրականացվում է իրենց հայրենի բնօրրանից գրկված մարդկանց կողմից: Սակայն նրանց հոգում մշտապես բորբոք է գերյալ հայրենիքի ազատագրման հույսը: Բռնի տեղահանված շահումյանցիները հաճախակի են դիմում ԼՂՀ և ՀՀ իշխանություններին, աշխարհի խոշոր տերություններին, միջազգային կազմակերպություններին՝ աղբյուրների կողմից բռնազավթված Շահումյանի շրջանի գյուղերի ազատագրման խնդրանքով: Այդ պահանջատիրությանը պետք է միանան աշխարհասփյուռ մեր հայրենակիցները, հայ քաղաքական բոլոր ուժերը:

Լուսանկարում պատկերված է մի պահ երևանում Ֆրանսիայի դեսպանատան առջև բռնի տեղահանված շահումյանցիների ցույցից:

Գերյալ հայրենի հողը սպասում, կանչում է...

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Հեյ՛ ճամփանե՛ր, ճամփանե՛ր,  
Անդաքո՞ւ ու հին ճամփանե՛ր,  
Ովքե՞ր սնցան չեզանով,  
Ո՞ր գնացին, ճամփանե՛ր:

ՅՈՒՆ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մեր լեռնաշխարհի ամեն սար ու չոր, դաշտ ու անտառ, առվակ ու աղբյուր, ամեն կածան, նույնիսկ որոշ ծառեր ու թփեր իրենց անունն ունեն: Իսկ դրանք սուկ անվանումներ չեն, այլ հիշողություն ու վկայություն են մեր նախնիների կյանքի մասին, նրանց ապրումների, պատկերացումների ու մտորումների մասին: Ծմվելով այդ հողի վրա, բազում դարեր ապրելով ու արարելով, հպարտանալով ու պաշտպանելով իր բնօրրանը՝ մեր ժողովուրդն անկրկնելի փրկանուններ է ստեղծել, անկրկնելի, ինչպես որ անկրկնելի է մեր անցյալի ամեն մի դրվագը, մեր բնության ամեն մի անկյունը, մարդկային հոգեվիճակի յուրաքանչյուր պահը: Սակայն մեր գյուղերի փրկանունները ոչ միայն թանկ հիշողություն են, այլև, մեր կարծիքով, գործնական կարևոր նշանակություն ունեն, հուշում են, թե որտեղ են գտնվում աղբյուրները, առուները, արտաքավայրերը, ճանապարհներն ու կածանները:

Շինարարություն կադարելով Շահումյանի նորաստեղծ շրջանում՝ ազատագրված արցախյան փարածքներում, Խաչիկ Սահակյանը հանդիպել էր «Հանգած եղջի» անվան ու չէր կարողանում պարզել, թե կոնկրետ որտեղ է այն գտնվում, և մտածում էր, որ այն կարող է պատմական արժեքավոր հուշարձան լինել: Բնիկ հայ հողը պատմական մի կարծ ժամանակում հայաթափվել է, վերստին ազատագրվել, արդեն վերստեղծում է իր ազգային կերպարանքը, սակայն ... մոռացվել է, թե որտեղ է «Հանգած եղջի»: Ահա այդպես կազատագրվեն նաև մեր գյուղերը, սակայն մինչ այդ շար փրկանուններ կարող են մոռացվել, որովհետև փառեցներն աստիճանաբար հեռանում են կյանքից, և աճում է նոր սերունդ: Այսօր կփոր-

չենք ներկայացնել հիմնական ճանապարհները և փեղանուններն այնպես, որպեսզի պարզ լինի, թե որտեղ ինչպես կարելի է գնալ<sup>1</sup> :

Շրջանի գլխավոր մայրուղին սկիզբ առնելով Շահումյան շրջկենտրոնից (նախկինում՝ *Ներքին Շեն*) հասնում է Խրխափոր, այնտեղից՝ *Ղարաչինար*, որտեղից դեպի աջ թեքվում է *Մնասին Շեն* հասցնող ճանապարհը, իսկ ուղիղ՝ *Ղարաչինարին* համարյա չուված *Շեֆնկ* (նախկին *Մոլլափալարի*) գյուղի ծայրով հասնում *Ձեյվա* և, շրջանցելով այդ գյուղը, դուրս գալիս շրջանի վարչական սահմաններից, չգվում դեպի *Գերասերոյ* աղբբեջանական շրջկենտրոն: Այդտեղից դեպի չախ մայրուղին փանում է *Գանչակ* (*Գյանջա*), իսկ դեպի աջ՝ *Գյորաս* երկաթուղային կայարան և Բաքու: Շահումյան ավանից մյուս գլխավոր ճանապարհը փանում է *Հայ Պարիս*, այնտեղից դեպի չախ՝ *Ռուս Պարիս*, դեպի աջ՝ *Գյորգալար*, ուղիղ՝ դեպի *Էրքեջ*: Էրքեջից ճանապարհը փանում է *Մանաշիդ*, չհասած Մանաշիդ, դեպի աջ փանում է *Թողան*: Մանաշիդից ճանապարհը փանում է *Բուզլուխ*, այնտեղից դեպի չախ՝ *Վերին Շեն*, ուղիղ՝ *Բաշղուաղ*: Վերին Շենից գլխավոր ճանապարհը բերում է հեփ, դեպի շրջկենտրոն, իսկ մի ճանապարհ էլ փանում է դեպի Գյուլիստան: Շրջկենտրոնից դուրս եկող մյուս ճանապարհն անցնում է Խրխափորից դեպի Գյուլիստան, մեկ ուրիշն էլ *Ղարաչինարից* չգվելով դեպի աջ, հասցնում է *Թալիչ*: Գյուլիստանից մի հիմնական ճանապարհ փանում է դեպի *Ղարաքաղի* խորքերը, մյուսը՝ դեպի *Մուսի արտոբալարներ*:

Հիմնական ճանապարհները բազմաթիվ մանր ու մեծ ճյուղավորումներ ունեն, որոնք անցնում են հիշարժան վայրերով, հասցնում պատմական փեղեր: Դրանք կփորձենք ներկայացնել համգամամորեն, ըստ գյուղերի:

ԲՈՒՉԼՈՒՄ գյուղից փարբեր ուղղություններով մեքենայի չորս ճանապարհներ են դուրս գալիս: Առաջինը՝ Բուզլուխ—Վերին Շեն—Շահումյան: Ծանապարհն սկսվում է գյուղի ծայրին գտնվող *Պիծի* (փոքր) *Հանեսանց ճաղաջից* (ջրաղայ): Ի դեպ, այս ջրաղայը գյուղում գործել է մինչև վերջին ժամանակները: Այն գտնվում է գետի չախ ափին: Ծանապարհն անցնում է կամրջով, բարձրանում գառիվեր (դիք), ոլորապտույրներով անցնում *Գյուլարեղ* դաշտով, որից հեփո գալիս է *Սյուկնածով* կոչվող փոքրիկ լճակը: Այդտեղից հեփո ճանապարհն անցնում է չորի մեջ գտնվող ... աղբյուրի

<sup>1</sup> Լախապես համոզված ենք, որ առանձին տեղանուններ ակամա դուրս կհանան սույն նկարագրությունից: Հայցելով ըմբերողի ներողամտությունը, ակնկալում ենք, որ անորոշոր լրացումներ և դիտորոշումներ կարվեն՝ մեր հետագա աշխատանքներում հաշվի առնելու համար: Սույն բաժնի մյուսերը հավարելու գործում մեզ օգնել են *Պետրոս Մեդրյանը*, *Աշոտ Պուսպանը*, *Անդրանիկ Հայրյանը*, *Խաչիկ Սահակյանը*, *Սերժիկ Լալայանը*, *Հայկազ Ջանունը*:

մոտով, որն անսովոր փեսք ունի, ջուրը դուրս է գալիս մի խոշոր քարի անցքից, մտնում մեկ այլ անցքի մեջ, մորից մեկ այլ անցքից դուրս հորդում: Իրանից հեփո ճանապարհն անցնում է *Տանչուր* կոչվող փեղանքով, հեփո գալիս է *Ղարաեղը* (բերդափեղ): Դա ըստ երևույթին հին բերդափեղ է, ինչպես որ հուշում են անունը և չորը լցված քարերը: Ի դեպ, հողն այստեղ սողքային է, հավանաբար սողքի հեփանքով ավերվել է շինությունը, քարերը լցվել են չորը: այդպիսի քարերի կուտակումն այստեղ նման ենթադրության հիմք է փալիս:

Աղբափեղից հեփո գալիս է *Գյաղուկը*՝ բարձունքի վերին մասում. այդտեղ սողքի հեփանքով բարձունքի գագաթը կիսվել է, բացվել են հին գերեզմաններ, քարե դագաղներ<sup>2</sup>: Գյաղուկից հեփո գալիս է *Իշաջուրի դաշտը*, որի միջով անցնելով՝ ճանապարհը հասցնում է *Պարիսի առո*: Այդտեղից մի ճանապարհ թեքվում է դեպի չախ, փանում դեպի *Չիքի աղբյուրը*՝ անփառի մեջ, ժայռի փակ, այնտեղից էլ՝ դեպի Ռուս Պարիս և Հայ Պարիս: Չիքի աղբյուրի ժայռի վերևում *Շելիրսապուկն* է (շամփուրի գագաթ): Պարիսի արխից ուղիղ ճանապարհն իջնում է *Յերսաջուրով*, փանում Վերին Շեն:

Բուզլուխից դուրս եկող մեքենայի երկրորդ ճանապարհն սկսվում է գյուղի մյուս ծայրին գտնվող *Կալերից*, անցնում *Փունփուխ փանջի փափով* (դաշտ), *Էրգան* (երկար) *չորով*, որտեղ կա *Բլբլան* անունով աղբյուր: Այդ աղբյուրից հեփո գալիս է *Նահապակի յալը* (բարձունք), մտնում Մանաշիդ:

Մյուս ճանապարհը (մեքենայի) անցնում է գյուղամիջով, *Աղաբեկանց խաչի*, հեփո՝ *Փոքր խաչի*, հեփո՝ *Միջին խաչի* մոտով, հասնում *սուրբ Միմաս* գյուղի ծայրին, որտեղ կա փոքրիկ մատուռ և հին գերեզմանոց: Այդտեղից ճանապարհը գառիվեր բարձրանում է մոտ 7-8 հարյուր մետր, հասնում *Մրոնաբուն*: Այդտեղ խոշոր ժայռաբեկորներ են կուտակված, որոնց արանքում, ճեղքերի խորքում կտր փարիս սառույց է լինում, որտեղից հնում փարվա փաք եղանակներին մույնիսկ հեռավոր գյուղերից գալիս, սառույց էին փանում (խորջիմով) հիվանդի համար կամ այլ նպատակով (փաթաթելով բրդն շորերի մեջ): Այդտեղ, ժայռաբեկորների արանքից հորդում է *Յորցուր* (սառը) անունով աղբյուրը: Մրոնաբունից հեփո ճանապարհն ուղիղ գնում, անցնում է *Գյուլին դաշտով*, որտեղ անշրտաջրերից միջտ փոքրիկ լճակ է գոյանում: Այստեղից ճանապարհը փանում է դեպի *Ղշաղ* կոչվող հարթը, որն անասուն պահելու հարմար փեղ է: Դրանից հեփո գալիս է «*Թորքին հանը*» դաշտը, հեփո՝ *Բաշղուաղ* անունով այրումների գյուղը: Այդ

<sup>2</sup> Պատմում են, որ հետաքրքրասերները սալաքարերի արանքով մտնում էին ճեղքները, հանում մտրղային ոսկորներ:



գյուղի կողքով չկնատալ գեղակ է անցնում, որի հոսանքն ի վեր արահեպը փանում է դեպի լեռնաշղթայի հակառակ կողմը՝ *Բարվանտի* փարածքը, որտեղ առաջինը *Յանշաղ* գյուղն է: Ընդ որում, Բաշղլաղի գեղակը երկու ակունք ունի, երկու հորը աղբյուրներ, որոնցից մեկը բխում է *Օմարի* փեշերից, մյուսը՝ *Բյախազի* սփորոտից, հեղուկը միասնաբար միասնաբար դառնում են լեռնային արագահոս գեղակ:

Բուզլուխի շուրջը գտնվում են *Դողո-սար*, *Շևիրապարտկ* և *Ռեդրաքար սարերը*՝ պարված անտառներով: Ի դեպ, Դողո-սարը կոչվում է նաև *Դրնդրմասար*, որը, թերևս, նշանակում է *Դեմադեմասար*:

Բուզլուխի մյուս ճանապարհը, որը փանում է դեպի Էրքեջ, սկսվում Դիծի Հանեսանց ջրաղացից, գետի հոսանքով գնում մինչև քարե կամարակապ կամուրջը, հեղուկը անտառի միջով՝ *Ներքին քյուղ* (անտառ) չգլում դեպի Էրքեջ: Մեկ այլ ճանապարհ գյուղի միջից, գերեզմանների կողքով գնում, անցնում է Յմքաչորով, *Մեծ* և *Փոքր Չամբազ* սարերի արանքով, *Չախար* սարի կողքով (որտեղ կա լավ աղբյուր), որոշ տեղ գնում է գառիվեր, հեղուկը ջրում ցած, դեպի *Սարի-սու* գյուղը, այնտեղից, *Կուշի-Արմավիր* գյուղի մոտով, դեպի Գեղաշեն:

ՄԱՆԱՇԻԴԻՑ դեպի շրջկենտրոն հիմնական ճանապարհը (մեքենայով) անցնում է և՛ Էրքեջով, և՛ Բուզլուխով: Էրքեջ փանող ճանապարհն սկսվում է գյուղի ծայրից՝ Նըզարանց փան մոտից, հասնում Սիմոն հայի այգու վերևի մասը: Դա գյուղի ներքևի մասն է: Այդտեղից ճանապարհն իջնում է, անցնում ֆերմայի մոտով, հասնում Լեմսի փունը և այգին: Այդտեղից աջ, *Քիմրազի յալի* (քյումրազ՝ գմբեթ) բարչունքում գտնվում է *Թորքի գյուղը*: Հենց Լեմսի այգու և գյուղուրի արանքով անցնում է ճանապարհը, կիսվում, չախով գնում դեպի *Թողան* աղբեջանական գյուղը, իսկ ուղիղ, Լեմսի այգու վերջում գտնվող *Շենկարեղի* վերին մասով շարունակվում *Կրոմբոտ* կոչվող տեղով: Այդտեղից ճանապարհն իջնում է դեպի գետ, որտեղ գտնվում է Էրքեջի *Սրանցին* երբեմնի փոքրիկ հիդրոէլեկտրակայանը գետի չախ ափին: Այդտեղ մեքենայի ճանապարհին միանում է Մանաշիղից Էրքեջ փանող հեղուկային ճանապարհը: Գեղափին նկատելի են հին քարե կամրջի հետքեր, իսկ գործողը բեթոնե կամուրջ է, որն անցնելով, ճանապարհը փանում է Էրքեջ:

Մանաշիղից շրջկենտրոն փանող մեքենայի մյուս ճանապարհն սկսվում է *Նահապարակի յալից*, որը գերեզմանոցի (Ճղապուրի) վերին մասում (դեպի Վերին Շենի կողմը) գտնվող մի ոչ մեծ թունր է: Այդտեղից ճանապարհը փանում է *Մասրուր* կոչվող հանդսմասը, որից հեղուկը գալիս է *Ծաղ-*

*կին չորագ* անունով հարթ տեղը, հեղուկը՝ *Ղարդաղուզ* կոչվող տեղանքը. այդտեղ կան հորափանքներ (ժամանակին ուսումնասիրվել է ընդերքում դարդաղուզի՝ գիպսի հանքաքարի պաշարը): Այդտեղ կա նաև Ղարդաղուզի անունով հորը աղբյուր, որը ճամփաբաժան է. մեկն ուղիղ գնում է դեպի *Բուզլուխի Գյունին*, այնտեղից՝ *Բուզլուխ* գյուղ, մյուսը չախով գնում է *Ծակ քար*: Դա մի մեծ քերծ (ժայռ) է, որի փակ անցրեի ժամանակ պապապարվում են անասնապահներն ու անցորդները: Ծակ քարի մոտով ճանապարհը փանում է դեպի մանաշիղից Փուլու Թյունիի կառուցած քարե կամարակապ կամուրջը, որը չգլած է խոր կիրճի միջով հոսող գեղակի վրա: Կամրջով անցնելով գետի աջ ափը՝ ճանապարհը շարունակվում է անտառի միջով (մինչև այդ տեղը սոսկ թփուտներ էին), բարչրանում, հասնում *Ղաչաղի աղբյուրը*, այնտեղից՝ *Պարիսի սոուն* (արխը):

Նահապարակի յալից աջ գտնվում է *Լեխիկը*. դա մի դաշտակ է, որտեղ կա աղբյուր: Հողն այդտեղ կավային է, որի պարճառով ջուրը միշտ պղտորվել է լիմում: Լեխիկից մեքենայի ճանապարհը փանում է դեպի *Բլբլանի չորը*, որտեղ գտնվում է *Բլբլանի աղբյուրը*: Սրանից չախ գտնվում է *Պրպրիսանի փակի հանդը*: Չախիվեր ճանապարհը Բլբլանի չորով փանում է ուղիղ դեպի Փունփուլիս փանջին, որը գտնվում է Բուզլուխի այդ դաշտի միջին մասում, ճանապարհի չախ կողմում:

Մանաշիղից ոչ հեռու գտնվում է *Քիրամեջ* հանդը. որտեղ եղել են գյուղի կալերը, կոլտնտեսային ֆերմաները, խոտի դեզերը, սիլոսի հորերը: 1980-ական թվականների սկզբներին այդ ամենը տեղափոխվել է գյուղի մյուս ծայրամասը՝ Սիմոն հայի այգու վերին մասը՝ ջրամատակարարումը բարելավելու նպատակով, որովհետև այս նոր տեղը ցածրադիր է: Այս նոր ֆերմաների ու կալի մի կողմում, այսպիսով, Սիմոն հայի այգին է, հակառակ կողմում՝ Թողանա դորողը: Ճանապարհը Քիրամեջով բարչրանում է դեպի Գյոռուր անունով հանդը: Այստեղ, ճանապարհի աջ կողմում գտնվում է *Քրակրանքին յալը*, իսկ չախում նույնպես դաշտեր են: Ճանապարհը Գյոռուրով բարչրանում է դեպի *Փոքր Չամբազ սարը* (Գյոռուրից մոտ 1-1,5 կմ հեռավորության վրա): Այդտեղ ճանապարհի աջ մասում *Սզևուրին դոշն* է, չախում՝ *Փոքր Չամբազ սարը*: Այդտեղից ճանապարհը շարունակվում է մոտ 1 կմ, հասնում *Մեծ Չամբազ սարը*: Մեծ Չամբազի սփորոտից ճանապարհը կիսվում է, չախով փանում է դեպի Բուզլուխի դաշտը, իսկ աջով՝ դեպի *Բյախազ լեռը* և *Կանքի քյուղ* (անտառ):

Մանաշիղից *Սարի-սու* փանող ճանապարհն սկսվում է *Քիրամեջից*, բարչրանում դեպի *Պորուսանց փոս* անունով հանդը, որտեղ միանում է գյուղի մյուս թաղամասից՝ *Փոռանգին յալից* նույնպես դեպի Սարի-սու փա-

նող ճանապարհին: Իրար միացած ճանապարհը փանում է ուղիղ դեպի *‘Իրդեն յալը*, որտեղ բաժանվում է. ուղիղը գնում է դեպի *Բրքանց փոս հանդը*, որտեղից ուրքով կարելի է իջնել *Բլանուխի չորը*, որը փանում է դեպի Կուշչի-Արմավիր, այնտեղից՝ *Մարտունաշեն*, *Գեարաշեն*: Դըրդեն յալից դեպի չախ թեքվող ճանապարհը փանում է մինչև *Գիլաբա փիհար հանդը*, որտեղ կիսվում է. ուղիղը գնում է անփառով դեպի ցած, հասնում Մեծ Ջամբագի փեշերից եկող առվին, անցնում առուն, *Քոլին դորող* մեծ հանդամասով բարչրանում դեպի վեր, մտնում Սարի-սու գյուղ: Գիլաբա փիհարում կիսվող ճանապարհը չախով փանում է դեպի «*Շուլին առաջը*», որը մի ճահճոտ հանդամաս է, կամ շափ աղբյուրներ, եղեգնուրներ: Այստեղ հայտնի է հափկապես *Մարջան աղբյուրը*՝ որպես քեֆերի ու հանգստի լավ փեղ: Այն կոչվում է նաև *Ջամալին աղբյուր*՝ մանաշիղցի մեղվաբույժ Ջամալի անունով, որն այդտեղ մեղուներ է պահել և մաքրել աղբյուրի շրջակայքը, կարգի բերել:

Շուլի առաջի աղբյուրների ջրերը թափվում են Ջամբագից եկող առվի մեջ, ճանապարհն անցնում է այդ առվի վրայով, բարչրանում «*Շինջանոցի փակով*» (այդտեղ կտվումբետության ճանճերը՝ մեղուներն էին պահում), գնում մոտ 200 մետր, հասնում *Նգարանց փոսը*: Այդտեղ մի մեծ փանցենի կա: Ճանապարհի աջ կողմը «թռուսխ» է (ջրերից գերհագեցած հող), որն առաջացել է Լըզարանց փոսի աղբյուրի ջրից, որը գտնվում է ճանապարհի չախ՝ բարչրաղի մասում: Այդ աղբյուրի ջուրը հոսում է մոտ 50 մետր, անհեքանում, և ճանապարհի աջ կողմում «թռուսխ» է գոյանում, սողանք է: Այստեղից ճանապարհն ուղիղ գնում է Սարի-սու:

Մանաշիղցի դեպի Գեարաշեն փանող ճանապարհն սկսվում է գյուղի ներքին մասում գտնվող դարոցի մոտից, ուղիղ իջնում դեպի *Թոդսևա դորող*, *Էրգան* (երկար) *փակեր* հանդամասով անցնում, մտնում *Էրգան չորը*: Այս չորի վերջից մի ճանապարհ աջով փանում է դեպի *Թոդսև*, մյուսը չախով իջնում է *Բըլանուխ վայրը*, այնտեղից՝ Կուշչի-Արմավիր գյուղ, այնտեղից՝ Գեարաշեն: Մանաշիղցի դարոցի մոտից մեկ այլ ճանապարհ չախով մտնում է *Մարոսի չորը*, չորով բարչրանում յալը, անցնում Էրգան չորով, միանում Բըլանուխի ճանապարհին:

Մանաշիղցից մի ճանապարհ էլ անցնում է *Պիլոր հողով*, *Կրահորի չորով*, *Աղջաղլսևոցով*, փանում դեպի Ռուս Պարիս: Մեքենայի մի ճանապարհ էլ նույն *Կրահորի չորով* գնում, անցնում է *Ջրաղսցի* մոտով, գետն անցնում, գնում դեպի *Իփանանց հարթը*, այնտեղից, *Չիքի փակով*, դեպի *Վերին Շենի Գյոռուր* և *Ղըչաղին աղբյուր*, այնտեղից՝ *Պարիսի առու*, որտեղից էլ ուղիղ իջնում է դեպի Վերին Շեն:

ԷՐՔԵՁ գյուղից դեպի Մանաշիղ փանող ճանապարհն սկսվում է *Միջի քունք քաղանասից*, թեքվում դեպի չախ, հասնում կամրջին, անցնում գետը: Այդտեղ, ճանապարհի չախ կողմում, գտնվում է Սրանցին՝ նախկին փոքրիկ հիդրոկայանը, որից միայն կիսավեր շենք է մնացել: Դրանից 60–70 մետր բարձր պահպանվել է ամբարփակը, որտեղ ամռանը լողանում են երեխաները: Սրանցու մոտ միանում են Էրքեջի և Մանաշիղի ճանապարհները: Էրքեջի Միջի թունք թաղամաս չհասած, գյուղամիջյան գլխավոր ճանապարհից դեպի չախ գնացող մի ճանապարհ կա, որը փանում է *Քոլի քախնեք* (անփառի այգիներ): Այդտեղ գյուղացիների այգիներն էին, անփառին մոտ, դրա համար էլ փեղանքն այդպես է կոչվում: Մինչև Քոլի քախնեք հասնելը *Քաբարուլիսած չորն* է (սայլը գլորված փեղը): Ճանապարհը չորով հասցնում է Քոլի քախնեք, որից հեքո գալիս է *Թոսածը*: Սա բարչրաղի լանջ է, հողը՝ թռած (սահած, սողացած): Թոսածի միջով ճանապարհը անցնում է, նորից գալիս են այգիներ, որից հեքո մտնում է անփառ, անցնում մոտ 3–4 հարյուր մետր, հափում Էրքեջ գնացող առուն, շարունակվում գետնի վեր անփառի միջով, մինչև քարե կամարակապ կամուրջը: Այդ կամրջից ճանապարհները փանում են Մանաշիղ, Բուզլուխ, Վերին Շեն: Քարի կամրջից 3–4 հարյուր մետր ցած, սակայն գետի հակառակ կողմում, Էրքեջից եկող ճանապարհի հանդիպակաց մասում Մանաշիղի հին ջրաղացն է՝ ավերված վիճակում:

Էրքեջից դեպի Հայ Պարիս փանող ճանապարհն սկսվում է գյուղի ծայրամասի *Կալին կիլիս* (Կալի գլուխ) թաղից, որը գտնվում է Կալի վերին մասում: Դրանից հեքո ճանապարհն անցնում է *Քինալանց այգիների* մոտով, *Մանասին փափի* ծայրով, *Շլորի չորով*, հեքո՝ *Գյուրջին չորով*: Դրանից հեքո գալիս է *Քոլաբակի աղբյուրը*: Աղբյուրի մոտից մի ճանապարհ թեքվում է չախ, փանում *Գյուրգալար գյուղը*, մյուսը գնում է ուղիղ դեպի *Չոռաբա կապ* կոչվող ժայռոտ հանդամասը: Դրանից 1–1,5 կմ հեքո գալիս է Հայ Պարիսը:

Էրքեջից Հայ Պարիս փանող հիմնական ճանապարհը Մանասին փափի ծայրից ճյուղավորում է փալիս դեպի չախ, հասցնում *Մոխրապրանջի դաշը* (այդտեղ կա մի մոխրափանջի, որը մանր, ուրելու համար ոչ պիտանի փանջ է փալիս): Դրանից հեքո ճանապարհը դառնում է *Միպրակ հղեց* (սպիտակ ուղի)՝ սպիտակավուն, կավճանման և փոշոտ հողե ճանապարհ: Այդտեղից մի ճանապարհ բաժանվում է դեպի *Խաչին հարթ փեղանքը*, որտեղ կա այդ անունով լավ աղբյուր: Դրանից հեքո Միպրակ հղեցից մի ճանապարհ էլ ջոկվում է դեպի չախ, փանում *Միպրակ քերծ*: Դա սպիտակ քարի հանք է, որից շինաքար են փանում գյուղի կառույցների համար:

*Միպրակ հղեց* անունով այդ հիմնական ճանապարհը շարունակվում է, հասցնում *Յուդասար*: Հնարավոր է, որ վերջինս *Ռէյուդասար* է եղել, որովհետև այդ բարչունքում հնում զինվորական դիրակներ է եղել, որին Ռէյուդ են ասում: *Ռէյուդ* կոչվածը երկրաբաշխական չողանիչ է (ռեպեր), մոտ մեկ մետր բարչությունը, ամրացված հողի մեջ, բարչունքի վրա, քարտեզագրման և այլ մպագակով: Այդպիսի մշան կա Ներքին Շենի Գյոգրուլաղի վերին աղբյուրի մոտակա բարչունքի վրա՝ *Ռէյուդի յարակ*, Ռուս Պարիսի մերչակա բարչունքի վրա և այլուր: Երբեջի հիշյալ Ռէյուդաբեղը կոչվում է նաև Բանակայինների րուն: Հնարավոր է՝ ժամանակին այդտեղ զինվորական կացարաններ են եղել. պահպանվել են շինության որոշ հետքեր: Դրանից հետո ճանապարհն անցնում է *Հացին չորով*, հետո՝ *Ռուսին չորով*, հետո՝ *Ղազարին չորով*, հասնում *Ղունանա սար*: Այդտեղ քարհանքեր կան, որտեղից շինաքար են փանդում գյուղի համար: Տեղանքը կոչվում է նաև *Կրոմբուր* (կեռումեռ): Կրոմբուրից հետո գալիս է *Ղունանա փակ* մեծ դաշտը, որից հետո ճանապարհը թեքվում է աջ, դեպի *Շորբուլաղ* հրաշալի աղբյուրը: Այդտեղ Երբեջի կոլտնտեսության (հեֆագայում՝ սովխոզի) անասնապահական ֆերմաներն են եղել: Դա բարենպաստ պայմաններ ունեցող չմեռանոց է: Ռեդիոլ գնացող ճանապարհը փանում է դեպի Բաղեբը, որտեղ խաղողի մոտ 400 հեկտար այգիներ են եղել: Այդտեղից փարբեր ուղղություններով շրջանից դուրս փանող ճանապարհներ են սկսվում՝ դեպի *Ղազանբուլաղ*, *Գանչակ*, *Չայյար*, *Դարադաղու* և այլն:

*Երբեջի Երի* (վերին) *թաղից* մի ճանապարհ գնում է դեպի *Մեծ հարթ*, այնտեղից *Սողուննա քերծի* փակով, ինչպես նաև *Քերծի* գլխով (դրանք միանում են իրար), փանում *Յորգ* (սառը) *աղբյուրը*, որից խմելու ջուր է հասցվում Երբեջ: Այդ ջուրը ոչ միայն սառնորակ ու համով է, այլև բուժիչ, քայքայում է երկվաններում գոյացող քարերը: Յորգ աղբյուրից ճանապարհը փանում է Չիքի աղբյուրը, այնտեղից՝ Վերին Շեն: Յերի թաղից մեկ այլ ճանապարհ էլ՝ հեփտոբնային, փանում է դեպի *Պրբրուս քողազ* կոչվող խոր չորը, չորով հասցնում Ռուս Պարիս: Սեքենայի ճանապարհը գյուղի *Կալին գլխի* թաղամասից փանում է դեպի *Թամբասար յալը* (բլուրը), *Բանակալինների րուն* կոչված տեղը (այդ անունով երկու տեղանք կա, սա երկրորդն է): Դրանից հետո ճանապարհը գնում, հատում է Պարիսի առուն (արիւը), հասնում Ռուս Պարիս:

ԳՅՈՒԼԻՄՏԱՆ գյուղից Վերին Շեն փանող ճանապարհին սկսվում է գյուղի ծայրին գրնվող *Մարդարի աղբյուրից*, անցնում *Փիրանին հարթի* միջով: Այդ հարթից (դաշտից) մի քիչ բարձր գտնվում է *Ճիլ* կոչվող տե-

ղանքը, որտեղ *Ճիլի աղբյուրն* է: Դրանից քիչ վերև *Մալականեր* անունով տեղանքն է, որը ճամփաբաժան է. չախով գնում է *Գյադուկ*, մեջտեղով, մեքենայի ճանապարհով՝ *Խրիսախոր*, աջով, դարչյալ մեքենայի ճանապարհով՝ դեպի *Արամի աղբյուր*, այնտեղից՝ *Պրբրնբար*, իսկ մի ճանապարհ էլ, ուրքով, Արամի աղբյուրից հասցնում է ուղիղ *Կրոմբուլաղ քալը*, այնտեղից դեպի ցած, անփառի միջով՝ Ներքին Շեն (շրջկենտրոն):

Գյադուկից չախ ընկած է *Նոթին ծովը*. այդտեղ լճակ է եղել, ցամաքել է, տեղը մնացել է ճահճուր և եղեգնուր: Գյադուկից հետո սկսվում է անփառը, որտեղով ճանապարհը փանում է Վերին Շենի *Նովին աղբյուրը*. այդտեղ կիսախողովակ (նով) կա՝ անասունների ջուր խմելու համար: Նովին աղբյուրից ճանապարհը դաշտերով իջնում է Վերին Շեն:

*Մալականեր* կոչված տեղանքից ուղիղ գնացող մեքենայի ճանապարհը մինչև Արամի աղբյուր հասնելը (մոտ 5 կմ) անցնում է *Քրծարակով*, հետո՝ *Պյոխի հողով* (բացափ), հետո՝ *Չյոքազ-ուրդ* կոչվող տեղով, որից հետո գալիս է Արամի աղբյուրը:

Գյուլիստանի կենտրոնական մասից՝ գյուղամիջից հիմնական ճանապարհն ինջնում է դեպի *Միպրակ թաղ*: Այնտեղից, գյուղից դուրս գալուց անմիջապես հետո, որտեղ վերջանում են այգիները, սկսվում է *Կապին ծակեր* կոչված տեղը: Այդտեղ կրային հողեր են, իսկ ճանապարհը շարունակ, դժվարանցանելի է դառնում: Կապին ծակերից ճանապարհը փանում է *Խուզլաներ*, որտեղ խոզերի ֆերման է եղել, դրանից հետո գալիս է *Ճյահին առուն*: Առուն անցնելով, ճանապարհը փանում է *Մեդրունց միգիլաբեղը*: Դա Մեդրյանների րոնմի հիմնադիր Մեդրի պապի անասունների կեսօրվա հանգստի՝ մյազալի տեղն է եղել: Մեդրունց միգիլաբեղից հետո գալիս է *Մարմարի դաշը*, որտեղ մարմարի քարեր կան: Դրանից հետո անփառն ավելի խոր (պեմդուր) է դառնում ու խիտ: Ճանապարհն անփառով իջնում է դեպի Կապը, որից հետո գալիս է *Կեփի կյունեղը* (գետի գունը): Այդտեղ գտնվել է գյուղի կոլտնտեսության անասնապահական ֆերման, կան լավ աղբյուր, բերքաբու ծառեր: Մարմարի դաշից մինչև Կապն ընկած անփառը կոչվում է *Հացուր*: Կեփի կյունեղից մի ճանապարհ ուրքով իջնում է մինչև *Ինջի գետը*:

Մարդարի աղբյուրից («շենին կլիան») դեպի չախ դուրս է գալիս մեքենայի մի ճանապարհ, գնում դեպի վեր, հասնում *Տաիսիլ հող* ուղիղ դաշտը: Այդտեղից գնում է *Չրխանբիսագյոլ* (կան շար չախմախաքարեր՝ կայծքարեր): Դա արհեստական փոքրիկ լճակ է ոռոգման համար և առափ է չկներով: *Չրխանբիսագյոլից* մեքենայի ճանապարհը գնում է ուղիղ դեպի *Մեծ Միշին առուն*, կտրում-անցնում: Դրանից հետո գալիս է *Խանբուլաղ աղբ-*

*յուրը*: Այդպեղից դեպի վեր ճանապարհը հասնում է *Այդուշի բարձունքը*: Այդ բարձունքից մի ճանապարհ աջով փանում է դեպի Նոթին ծովը, որտեղ կոլտնտեսության ամասնապահական ֆերման է եղել, մյուսը՝ չախով դեպի *Քրծարակ*, որտեղ ամռանը գտնվում էր ոչխարի ֆերման: Մեջտեղի ճանապարհն Այդուշից իջնում է դեպի գետը, որն Ինջի գետի վտակներից է: Մինչև այդ գետին հասնելը գտնվում է Խոզարափի հանդամասը: Մեքենայի ճանապարհը կտրում-անցնում է գետը, մի քիչ բարձրանում վեր, գալիս է ուղիղ փող: Դա *Բաբադյուշանն* է, մի հարթություն, որտեղ հնում սովորաբար եզներն արչակում էին սայլերից, դժվարին վերելքը հաղթահարելուց հետո դադար առնում: Իսկ գետին անմիջապես մտրիկ, 3-4 մետրի վրա, Բաբադյուշանի աղբյուրն է:

Բաբադյուշանից երկու ճանապարհ է դուրս գալիս՝ «*Ճոխարակ հող*» (գույգ ուղի): Դրանք հեփիտոմային են եղել, բայց վերջին ժամանակներում կարգի են բերվել, ընդլայնվել, և մեքենա էր գնում մինչև *Թեղի հող*: «Ճոխարակ հող»-ի աջը փանում է դեպի վեր, ամրառի միջով պարպելով հասնում *Թեղի հող* (մոտ 5 կմ՝ սկսած Բաբադյուշանից): Թեղի հողը Բաբադյուշանից վերև գտնվող մի մեծ բացատ է, որի ցածրադիր մասում, ամրառի եզրին, աղբյուր կա: Այդ բացատի միջով ճանապարհը մտնում է ամրառ, գնում դեպի վեր, քիչ հետո գալիս է *Քարկապը*՝ մի նեղ փող, որտեղով հեծյալը հագիվ կարող է անցնել: Կապից դուրս գալուց հետո ճանապարհը հասնում է *Չափարդալա* տեղանքը՝ գետի ափին: Դա Ինջի գետի վտակներից է և կոչվում է *Չափարդալի* գետ: Դրանից հետո ճանապարհը փանում, հասցնում է Մռավի լանջը: *Չափարդալայից* ուղիղ և մի քիչ աջ *Մռավա սարն* է, իսկ դեպի չախ ամրառով ճանապարհը (կածանը) փանում է *Ղազանդրմազ* անունով բավականին հեռու արտաբավայրը, որը փոված է Մռավի փեշերին:

Գյուլխարան գյուղից դեպի բերդ երկու տեղով կարելի է գնալ: Առաջինը մեքենայի ճանապարհն է, որը Տափակ հողով իջնում է *Փոքր Միշին առուն*: Այս առվի մոտ ճիլկոտ (ճահճուտ) կա, որտեղ կա աղբյուր: Առուն անցնելուց հետո մեքենայի ճանապարհը դառնում է հեփիտոմային, գառիվերը (դիք) դուրս գալուց հետո կածանը փանում է Ռուսին ուրդը. դա բերդին դեմադեմ գտնվող բարձունքն է, որտեղ 1813 թ. ռուս-պարսկական պայմանագիրը կնքելու ժամանակ դրված են եղել ռուսական հրանոթները: *Ռուսին ուրդից* հետո գալիս է *Օխնակը*՝ օխտը (յոթ) ակնը, որտեղ կամ յոթ աղբյուրներ, որոնց ջրերն իրար միանում են և ջրվեժի մնան բարձունքից թափվում ցածով անցնող ճանապարհը, այնտեղից էլ հոսում, լցվում *Ինջի գետը*: Օխնակում եղել է գյուղի կոլտնտեսության փավարի ֆերման, որտեղից ար-

դեն մեքենայի ճանապարհ է փանում դեպի *Խոզարափ*, որտեղից էլ կարելի է գնալ հեփ՝ դեպի գյուղ, կարելի է գնալ նաև դեպի *Բաբադյուշան*, ինչպես նաև դեպի *Խամբուլաղ*:

*Փոքր Միշին առվից* մեքենայի ճանապարհը փանում է *Մրյանանց քաղը*, որտեղ պահելիս են եղել կոլտնտեսության մեղուները: Դա հենց անմիջապես բերդի ստորոտում է գտնվում: Մրյանանց թաղում, ճանապարհից մոտ 30-40 մետրի վրա, բարձրադիր մասում, կա աղբյուր: Այդ աղբյուրի մոտով, բերդի փակով (բարձունքի ստորոտով) ճանապարհը փանում, հասցնում է գետը, որտեղից ճանապարհը բաժանվում է երկու մասի, երկուսն էլ՝ մեքենայի: Դրանցից մեկն աջով գնում է *Քինբազին դաշը*, որտեղ կան շինության հեփեր, այն գտնվում է բերդի փայածքի մեջ: Այդտեղից անտառի միջով ճանապարհը թեքվում է աջ, գնում, անցնում Օխնակի աղբյուրի ջրվեժի փակով, նորից ճյուղավորվում, դառնում է երկու ճանապարհ: Դրանցից մեկն աջով գնում է Խուզաներ, գառիվեր բարձրանում, հասնում *Խոզարափ*: Մյուս ճանապարհը չախով մտնում է գետը, անցնում գետի չախ ափը, մի քիչ գնում, հասնում է այնտեղ, որտեղ իրար միանում են *Տնիշենի գետը* և *Բաբադյուշանի գետը*:

*Բերդի* փակից դեպի չախ գնացող ճանապարհը միանգամից անցնում է գետը, և այդ փարածքը կոչվում է *Ղալա*: Այդտեղ զանազան շինությունների ավերակներ կան: Մեքենայի ճանապարհը Ղալայից փանում է *Ղըլեն աղբյուրը*: Այդ աղբյուրի շրջակայքում հասցնում, ընկուզենու, փանչի և խընչորի ծառերի պտրակ կա, զյված արհեստականորեն, իսկ բարձրադիր մասում բնական խիտ անտառ է ամբողջովին:

Գյուլխարանի գյուղամիջից մյուս հիմնական ճանապարհն իջնում է *Օրոտուր քաղով* (ատում են նաև *Նոր քաղ*), հասնում գյուղի ծայրը, որը կոչվում է *Սերոբին Սուղին դաշ* (Սուղին այդ առանձնացված մասում փուն է կառուցել, և դաշը կոչվում է նրա անունով): Ճանապարհը դաշից թեթևակի ցած իջնելով, գետի մոտ բաժանվում է երկու մասի: Աջով ուղիղ գնում է դեպի *Ճյակջին քերձը*: Այդ քերձի՝ ժայռի մեջ քարանձավներ կան: Ժայռի դիմաց *Քրքրի կարմունջն*՝ քարե խոշոր կամարակապ կամուրջ, որով անցնում են գետի մյուս ափը, գնում դեպի Ղալա, այնտեղից՝ բերդ: Սա ուրբով գյուղից բերդ փանող կարճ ճանապարհն է, որը չգվում է մոտ հինգ կիլոմետր:

Սերոբին Սուղին դաշի մոտից, գետափից դեպի աջ անտառն է, իսկ դեպի չախ գնացող ճանապարհն անցնում է փայտե կամրջով, մի հարյուր մետրի չափ բարձրանում, գնում դեպի վեր, հասնում *Իրիզին դորոդը* (խտրհարք): Դա մի հարթ տեղ է, ֆուտբոլի դաշտի չափ: Այս դորոդի վերևով



ճանապարհին անփառով փանում է մինչև *Կապը* (քարկապ), որից հետո գալիս է *Նապարի դաշր*: Այստեղ կուրմաբեության խուզվաներն են եղել (խոզանոցները): Ճանապարհին այստեղից մի հարյուր մետրի չափ իջնում է բայ տեղանքով դեպի ցած, հասնում *Նապարի վանքը* և նույնանուն գեղը: *Նապարի գեղը*, որը հոսում է վանքի դիմացով, իջնում է ցած, Սերոբին Սուրին դաշի փակ միանում *Բարադյուշանի* և *Ղըլեն* իրար միացած գեղակների հետ, դառնում Ինջի անունով գեղ:

**ՇԱՆՆՄԱՆ** շրջկենտրոնից (Ներքին Շեն) մեքենայի գլխավոր ճանապարհը դեպի Հայ Պարիս սկսվում է Կալի մոփից, անցնում այգիների ու փնների վերին մասով: Այդտեղ, ավանի ծայրամասում, երկհարկանի պեփական բնակելի շենքեր և հիվանդանոցի շենք կա աջ կողմում, իսկ չախ մասում բարչունք է, որի գագաթին գտնվում է զոհվածների հուշարձանը: Այդ մասում գեղի աջ ափից նոր կամրջով մի ճանապարհ (մոտ 400 մետր) աջափնյա մայրուղուց սկսվում, գալիս միանում է Հայ Պարիս փանող այս ճանապարհին: Այդ բարչունքը, որտեղ գտնվում է հուշարձանը, կոչվում է *Լինջ*: Դրանից հետո ճանապարհը փանում է (կետմաններով) գինու գործարան և ֆերմա՝ աջ կողմում, իսկ չախ կողմում՝ շինարարական գրասենյակի շենքը և պահեստներ: Այդ շենքերի փարածքը՝ չորակներ, կոչվում է *Կյոդ* (գոդ) *առու*, որովհետև հեռվից՝ *Չիբիդարի աղբյուրից* եկող ջուրն այդտեղ անհետանում է: Դրանից հետո ճանապարհը հափում անցնում է *Նազին չորը*, որտեղ կային անասնապահական ֆերմաներ (չախ կողմում): Դրանից հետո սկսվում են Հայ Պարիսի այգիները, հետո՝ գյուղը (մոտ 3 կմ):

Մեքենայի մեկ այլ՝ բարչրադիր ճանապարհ Կալի մոփից չախ կողմով, բլուրների վրայով փանում է, անցնում Նազին չորի վերին մասով, մտնում Հայ Պարիս (մոտ 2 կմ):

Նույն կողմերում, Երիվանքի մոտ Մ. Բարխուդարյանը նկարագրել է 1271 թ. խաչքար<sup>14</sup>:

Մանաշիղ ու Էրթեչ գյուղերի միջև, անփառի խորքում կա Չիք անունով

<sup>10</sup> Մակար Եպիս. Բարխուդարյան, Արցախ, էջ 252:  
<sup>11</sup> Նույն տեղում:  
<sup>12</sup> Նույն տեղում:  
<sup>13</sup> Մակար Եպիս. Բարխուդարյան, Արցախ, էջ 252:  
<sup>14</sup> Նույն տեղում, էջ 254:

աղբյուր, որի ցեխը բուծում է վերքեր ու հիվանդություններ<sup>15</sup>: Աղբյուրի մոտ կա քարանձավ, որի մուրքի առջև կանգնեցված է շիրմաքար, այսպիսի գրությունը.

ՍԷ ՏԱՊԱՆ ԵՒ ՊՐԱԿՍԵԱՑ ԿՈՒՍԻ  
ԻՆԴՈՒՆԵԼՈՎ ՄՈՒՍԻՆ  
ԺԱՆԱՆԱՑ ԱՆՎԵՐ ԼՈՅՍԻՆ  
Ե.ՍԷ ՅԻՇԱՏԱԿ ՏԷՐ ՍԱՐԳՍԻՆ ՄԱՐՏ 22 1919 ԱՄԻ:

1957 թ. բեպոննե հիմք է պատրաստվել, քարը դրվել վրան:

Ճարտարապետական գեղեցիկ կոթող է Էրթեչի սուրբ Սարգիս եկեղեցին: Կառույցը դրսից համարյա կիսով չափ հողածածկ ու անշուք է, բայց ներսից ակնախտիփ տեսք ունի՝ գեղեցիկ ու ընդարձակ բեմով, ամբողջական քարերից կերտված երկշարք սյուններով, քարե կամարակապ բարձր փամփոփ: Սուրբի չափս կողմում խոշոր, համաչափ փառերով զբրված է ՌՃԿԵ (1716):

ԱՌ ՔԻ Մ Ռ ԱՎԵՏ:

Բեմի մի անկյունում, վերից վար՝ «ՍԱՐ//ՔԻ//ՍԻ//ՌԴ (1555)»:

Նույն ուղղությամբ, բեմի հակառակ կողմում՝ «ՍԱՐԻԻ...//ՌԴ (1555) Բեմի մոտ, պարի մեջ ագուցված է մի փոքրիկ խաչքար, խաչի թևերի վրա՝ «ԹՎ ՌՁ» (1557): Նույն խաչքարի ստորին մասում՝

ԵՍ...ԿԻՍ ԿԱՆ  
ՆԵՑԻ ԶԻԶՍ  
Բ..ՍԱԵԿ/ԱՐՄԱՄ/Ն  
...ԱՑ ՄԵՐՈՑ ԱՄ:

Ներսի պարի մեջ, մեկ այլ քարի վրա կարդացվում է. Դ//ՔԻ ՄՌ// Ա..ԲԱ...: Ներսի պարերի վրա նկարվում են նաև այլ մանր գրություններ, սակայն ավելին կարդալ մեզ չհաջողվեց (ներքը մութ էր. իսկ պարերը խոնավ փոշու հասար շերտով ծածկված): Բեմի աջ կողմի խցի մեջ կա մի անշուք շիրմաքար: Պատմում են, որ դա հրաշագործություններով աչքի ընկած պարանի սուրբ Սարգսի գերեզմանն է: Այս եկեղեցու ավագանի մոտ, մի խաչքարի վրա Մ. Բարխուդարյանը կարդացել է «ԹՎ. ԶԹ. Ես Ակոբ կանգնեցի զխաչս Սարգիսա Եւ կամ ամեն ծնողաց մերոց Աստուած ողորմի»<sup>16</sup>: Նրան հաջողվել է նաև եկեղեցու արևմտյան պարի մոտ մի փասպանաքարի վրա կարդալ. «ԹՎ ՌՄԿԶ, որ է Պօլնուսու գալն մայիսի ի. Քրիստո-

<sup>15</sup> Չիք անունով բուծիչ աղբյուր կա նաև հին Խրիստոփորի ձորում:  
<sup>16</sup> Մակար Եպիս. Բարխուդարյան, Արցախ, էջ 250:



սի ծառայ Դանիել»<sup>17</sup>: Նշված տեղում 1977 թ. այս տրապանաքարն արդեն չկար:

Հայ Պարիս և Ռուս Պարիս գյուղերի միջև գտնվում է Պարիս հին հայկական գյուղատեղը: Այստեղ, հին գերեզմանոցի բարչքադիր մասում, բլրազագաթին կանգնեցված է մի հասարակ, բայց խոշոր խաչքար: Քարի ամբողջ բարչքությամբ խաչ է քանդակված, թևերի տակ ևս մեկական խաչեր: Աջակողմյան փոքր խաչի տակ գրված է « Ի Զ. ԵՒ//ՂԹՎԱ//ԿԱՆ (1341 թ.)» և ապա արչանագրությունը շարունակվում է խաչքարի ստորին մասում.

ԵՍ ԽԱԻ ԹԱՐ ԿԱՆԳՆԵ  
ՑԻ.ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱ  
ՐԵՑԽԱԻՍՈՒԹԵ ԾՆՈՂԱ  
Ց ԻՄՈՑ ՈՐՔ ԵՐԿԻՐ ՊԱ  
.ԵՔ ՅԱՂԱԻԹՍ .Ի.ԵՑԵՔ

Գերեզմանոցի հնագույն մասում կա մի խոշոր շիրմաքար, գեղեցիկ գարդաքանդակներով. երիզված է այսպիսի գրությամբ.

ՍԲ ԽԱԶՍ ԲԱՐԻԽԱԻՍ ՍԱՐԿԱԻԱՔ  
ՄԻԻԹԱՐԻՆ  
ԻԻՐ ԿՈՂԱԿԻՑ  
...ԵԴԻՆ.ՔԱՀԱՆԱ...ՅԱՂՈԹ  
Ս ԻԻՐ...

Նույն տեղում մեկ այլ քանդասագարդ շիրմաքարի վրա կարդացվում է թվականը՝ ՈՂԳ (1244 թ.):

Գերեզմանոցի ցածրադիր մասում կան վիմագրերով մի քանի շիրմաքարեր.

- ա) ԱՅՍ Է ՏԱ//Պ/ԱՆ/ ԱՐՈՒԹԻՆ// ՔՕ...ԽԱԶՍ  
ԴՈՒՐ...Ռ//ՄԻ (1771):
- բ) ԱՅՍ Է ՀԱՆԿ//ԻՍՑ ԷՍ+ԵՂԻ// ՈՐԴԻ ՄԱՐՈՒԹԻՆ  
ՔԻ ԹԻՎ ՌՃՂԲ (1743):
- գ) ԱՅՍ.Տ//..ՂԻՆՄԷԼԻԲ//ԹԱՄՐԱԶԻ//ԴՈՒՍԴ...Պ  
ԱՃԸԻՆ...//ԿՈՂԱԿԻՑԻ// ԱԶԱԴՈՒՐ Ք//ՕԻԻՆ Թ ՌՄԸ (1759):
- դ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐՈՒԹԻՆ ՈՐ Է ՈՐԴԻ ԾԱՏՈՒՐԻՆ  
ԹՎ ՌՄՂԲ (1843):

Բավական լավ պահպանված մի խոշոր գերեզմանաքարի վրա չորս խորաններ են՝ խաչերի պատկերներով և գարդաքանդակներով: ՈՒՆԻ այսպիսի գրությամբ.

ՍԲ ԽԱԶՍ ԲԱՐԻԽԱԻՍ ՓԻՐԻ ԿԻՆ ՂԱԶԱՐԻՆ+. .ՔԱԹԻ  
Ն ԹԱՄԱՐԻՆ:

Հայ Պարիս գյուղում կա 1901 թ. կառուցված, լավ պահպանված եկեղեցի: Ճարտարապետական ուրույն կառույցներ են Խրիստոփոր գյուղի եկեղեցին (կառուցված 1873 թ.), Ղարաչինարի սուրբ Հովհաննես եկեղեցին (1868 թ.), Ղարաչինար և Գաղթուփ գյուղերը միացնող քարե կամարակապ կամուրջը, Մանասի Շեն գյուղի եկեղեցին: Մանասի Շեն գյուղի հին գերեզմանոցում մի հեքաքրքիր հուշարչան կա՝ «Պապիկ քար» անունով: Տապանի տեսքով, մտքավորապես 70×170 սմ չափերով մի քարի վրա երեք շարքով փորված են յոթ քառակուսայն փոսեր և մի պարզ, անզարդ խաչ: Որոշակի արարողությամբ այսպեղ «վախ են հավաքում»: Նույն գերեզմանոցում կա նաև մեկիքական շառավիղների մի հիշատակ՝ երբեմնի գեղեցիկ հուշարչանի վերին մասը, որի վրա գրված է՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԵԿԼԱՐ ԲԵԿԻՆ ՄԵԼԻՔ ԵՍԱՅԱՆ ՄԵԼԻՔ  
ՅՈՍԵՓԵԱՆՑ ՎԱԽՃԱՆ (9-րդ ամսի 20-ին) 1819 ԱՄԻ:

Գյուլիստանի Մեյք Արովի շառավիղների շիրիմներ կան ամփոփված Օջունի եկեղեցու բակում, որոնք զբաղեցնում են գերեզմանոցի կենտրոնական մասը: Դրանք տեղեկացնում են, որ նոր տեղում էլ այդ շառավիղներն աչքի են ընկել իրենց հասարակական դիրքով ու բարեգործություններով: Ահա դրանցից մի քանիսը.

- ա) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՑ ՊԱՐ//ՈՆ ԱԲԱՍԱՅ ԱԲՕ  
ՎԵԱՆՑ ՇԻՆՕՂԻ// ԶԱՆԳԱԿԱՏԱՆՍ// ԹՎ 1852:
- բ) ԱՅՍ Է ՀԱՆ//ԳԻՍՑ ՀՈՒՓ//ՄԻՄԷԻ ԿՆՈՋ  
ՊԱՐՈՆ ԱԲԱ//ՍԱՅ ԱԲՈՎԵ//ԱՆՑ: ՀԱՆԴԻ  
ՊՕՂԸ ՈՂՈՐՄԻ//ԱՍԱՑԷՔ 1860:
- գ) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՑ//ՀՈՒՓՍԻՄԷԻ ՏԻ//ՐՈՒՀԻՈՑ ԲԱՐՍԵՂ  
ՔԱՀԱՆԱՅԻ Ա//ԲՈՎԵՆՑ ՎԱԽ//ՃԱՆԵԼՈՑ Ի 18  
74 ԱՄԻ Ի 18 ԱՊՐԻԼԻ 69//ԱՄԱՅ ՀԱՍԱԿԻ:
- դ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՐՍԵՂ ՔԱ//ՀԱՆԱՅԻ ԱԲԱԶԻՆ ԱԲՈՎԱՆՑ  
ՎԱԽՃԱՆԵԼՈՑ Ի 18 ՅՈՒՆՎԱՐԻ 1870//ԱՄԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ  
ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 250-251:

Ե) ԵՍԱՅԻ ՆՈՅԵՄՋԱՐ  
ՏԷՐ ԲԱՐՄԵՂԵԱՆ ՏԷՐ ԱԻԵՏԻՔԵԱՆ  
ԱՔՈՎԵԱՆՆԵՐ

1850-1914 1857-1945

ԾՆՈՂՆԵՐ ԱԻԵՏԻՔԻ ԵՒ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ

ՕՁՆՈՅ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ:

զ) ՇԻՐԻՄ ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ՏԻ//ԿՆՈՋ ԵՂԻՍԱԲԵԹԻ ԱՔՈՎԵ  
ԱՆՑ: ՄԱ ԷՐ ՄԱՅՐ ԶԳՈՆԱ//ՓԱՅԼ ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿ ՄԱՅ  
ՐՈՒԹԵԱՆ ՈՂՈՐՄԱԾ ԱՌ//ԿԱՐՈՏԵԱԼՍ ՈՒՆԵԼՈՎ ԵՎ ՈՐԴԵԳԻՐՍ  
ՔԱԶՈՒՄՍ ՈՐ//ԴԻՔՆ ԻՐ ՕՐՀՆԵԱԼՔ ՅԱ  
ՍՏՈՒԾՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԻՆ//ՁԵԿԵՂԵՑԻՆ ՕՁՆՈՅ ՍՈՐԻՆ ԻՍԿ  
ԿԱՄՈՔՆ Ի ԾԵՐՈՒԹԵԱՆ ԱՆ//ԶԿԱՆՈՔ ՀԱՅՐԵՆԵԱՑՆ ԹՈ  
ՂԵԱԼ ԶԱՄԵՆԱՑՆ ՓԱՌՍ//ՏԱՆՆ, ՈՐ Ի ՏՓՂԻՍ, ԵԿՆ Ի  
ՀԱՅՐԵՆԻՍ ԻՐ ՎԵՐԱԲՆԱ//ԿԵԱԼ ԱՅՄՐ ԵՎ ԱՄՓՈ  
ՓԵԱԼ ԱՌ ՆԱԽՆԻՍ ԻՐ//ՀԱՆԳՈՒՍՑԵ ԱՄ ԶՆԱ Ի  
ԿԵԱՆՍ ՅԱԻՏԵՆԱԿԱՆՍ Ա/ՄԷՆ ԾՆԵԱԼ ՅԱՄԻ ՏԵԱ  
ՌՆ 1819 ԵՒ ՎԱԽՃԱՆ//ԵԱԼ 12 ԱՊՐԻԼԻ 1887 ԱՄԻ:

*Մեղիք-Բեզլարյանների հիշատակներ կան Մոսկվայի հայկական գե-  
րեզմանոցում: Այնտեղ մի հուշարձանի վրա գրված է. «Շառավիղ հայ մե-  
լիքների Դաւիթ Մերգեյեան Մեղիք-Բեզլարեանց. ծն. 1875-վախճ. 1913»:*

*Ետևը՝ նաև ռուսերեն<sup>18</sup>:*

*Թաղիչում պահպանվել է մի խոշոր գերեզմանաքար, որի վրա արչա-  
նագրված է. «Այստեղ հանգչում է Սօլօմոնբեգ Մեղիք-Բեզլարեանը որդի  
մեղիք-Հովսեփի թոռն մեղիք Ֆրիդոնին»<sup>19</sup>:*

<sup>18</sup> Այդ մասին մեզ տեղյակ է պահել Էռնեստ Դանիելյանը (Ձապորոթին):

<sup>19</sup> Այդ մասին մեզ տեղյակ է պահել Թաղիչցի Ջարսիկ Վարդանյանը:

## ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.

### ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳԻՐ<sup>20</sup>

#### ՎԵՐԻՆ ՇԵՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Միանավ բազիլիկ եկեղեցի է, կառուցված 1756 թվականին, գտնվում է գյուղի մեջ, գետի չախ ավիին, սարի ստորոտում, որի հյուսիսային պատը միաժամանակ հենապատ է: Կառուցված է փեղական կիսահղկված քարե-րով (կրաքարեր և մերգելներ)՝ շարված կրաշաղախով: Շարվածքում օգ-տագործված են նաև խնամքով հղկված գորշ դեղնագույն ավազաքարեր: Միակ դուռը գտնվում է հարավային պատին: Մուտքի կամարները իրակա-նացված են հղկված ավազաքարերից՝ երիզված հյուսաչև զարդանախշե-րով, որոնք հիմքում վերջանում են հավերժանշանով: Դռան ճակատակալ քարի վրա կա արչանագրություն: Մուտքի կամարի շուրջը նույնպես կան արչանագրություններ և ծաղկազարդ խաչեր: Դռան վերևի երեք քարերի վրա քանդակված է խոշոր խաչ, մտքը՝ արչանագրությամբ քարի քեկոր: Հա-րավային պատին կա արևի ժամացույց:

Ծածկը իրականացված է կիսաշրջանաչև թաղով, հենված թաղակիր կամարների վրա: Երկայնական պատերը թեթևաքամ են շրջանաչև կա-մարաշար խորշերով, պատերում կան փարթեր թեքությամբ անցքեր՝ հա-ղորդակցության համար: Փոքր խորանների վրա կան գաղփարաններ, որոնք կապված են միմյանց հետ մեղ ու կոր միջանցքով: Պատերում կան հրազեն օգտագործելու անցքեր, իսկ պատերի արտաքին մակերեսին հրազենի հետ-քերը վկայում են, որ եկեղեցին հաճախ ծառայել է նաև պաշտպանական նպատակների: Եկեղեցին մերկայումս կանգուն է ու ամբողջական:

#### ԵՐԻՑՄԱՆԿԱՑ ՎԱՆՔ ԿԱՍ ՅԵՐԻՔԱՎԱՆՔ

Եղել է եռանավ բազիլիկ եկեղեցի: Գտնվում է Ներքին Շենից ոչ հեռու, Վանք վայրում: Կիսաքանդ վիճակում է: Ամբողջապես պահպանված է հյու-սիսային ավանդադունը, կենտրոնական խորանի և պատերի մի մասը: Պատերը հիմնականում շարված են կիսամշակ քարերից (մերգելներ), քար-չորորակ կրաշաղախով: Շարվածքում օգտագործված են նաև փարթեր գույ-

<sup>20</sup> Օգտվել ենք Կառլեն Դահրամանյանի ձեռագիր արժեքավոր աշխատությունից՝ նվիրված շրջանի հուշարձաններին (չափագրություններով և գծագրերով):



նի և չափերի ավագաքարեր: Շրջակայքում նման քարհանքեր չկան, դրանք բերվել են այլ տեղից: Արտաքին նշաններից և շարվածքներում նրանց ունեցած դիրքից լավ նկատվում է, որ դրանք բերված են այլ կառույցներից:

Ավանդաբան լուսամտի քարավորը նուրբ զարդանախշերով մի գեղեցիկ խաչքար է: Ավանդաբան խորշերը շարված են գեղեցիկ խաչքարերով, իսկ նրանց շուրջը շարված են խոշոր խաչքարերի բեկորներ շրջված դիրքով: Այս բոլորը վկայում են, որ եկեղեցին ժամանակին վերականգնվել է, ընդ որում վերականգնող վարպետները տիրապետել են ճիշտ վերականգնման օրենքներին և թողել են համապատասխան նշաններ: Պատերում կան արչանագրություններով և զարդանախշերով քարերի բազմաթիվ բեկորներ: Կան հաղորդակցության անցքեր և գաղտնադրանքներ: Եկեղեցու հյուսիս-արևմտյան անկյունը ցածրում շարված է կիսակլոր, իսկ վերևում սովորական հարթ պատ է: Նման լուծում ուրիշ կառույցներում չի հանդիպում:

### ՀԱՅ ՊԱՐԻՍԻ ԵԿԵՂԵՑԻ

Եռանավ բազիլիկ եկեղեցի է, կառուցվել է 1901 թ., պատերը շարված են կիսամաքրափաշ քարերով, անկյունաքարերը և քիվո գորշ-դեղնավուն մաքրափաշ ավագաքարերից են՝ շարված կրաշաղախով: Թաղակիր կամարները հենվում են քառակուսի հարվածի մաքրափաշ սյուներից: Ի տարբերություն այլ եկեղեցիների, այստեղ գմբեթարդի պատերը ծածկին միանում են ուղղակից պատով (կենտրոնական խորանը զլանաչև է և ոչ թե սֆերիկ): Եկեղեցին ամբողջական է ու բարդ վիճակում:

### ԽՐԻՍՏՈՍԻ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻ

Եռանավ բազիլիկ եկեղեցի է՝ կառուցված 1873 թ.: Սյուները կանոնավոր ութանիստ հարվածքի են, լավ հղկված ամբողջական քարերից, որոնց վրա քանդակված են փոքր խաչեր: Կամարաչև դռները երկված են զարդանախշերով: Թաղը և թաղակիր կամարները լավ պահպանված են, սակայն կաթոցներից պաշտպանելու մպարակով ժամանակափորապես ծածկվել է ասրոշիֆերով: Երկար ժամանակ ծառայում էր որպես ակումբ:

### ՂԱՐԱՉԻՆԱՐԻ ՍՈՒՐԲ ՀՈԿՅԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Եռանավ բազիլիկ եկեղեցի է: Կառուցվել է 1808 թ.: Սյուները լավ հղկված բազալտից են, որոնց վրա քանդակված են խաչեր: Պատերը կիսամշակ կանոնավոր շարվածքի ավագաքարերից են, կրաշաղախով: Ռեմի որմնամույթեր, կամարակապ դռներ և մեծ լուսամուտներ: Լավ պահպանված է:

### ԲՈՒՋԼՈՒՆԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ

Եռանավ բազիլիկ եկեղեցի է՝ կառուցված 1905 թ.: Պատերը շարված են կրաշաղախով, հիմնականում տեղական կիսահղկված քարերից, իսկ անկյունաքարերը և մյուս հղկված քարերը բերված են Մնաշենի քարհանքից: Սյուները լավ հղկված կանոնավոր հարվածքի խոշորաչափ քարերից են, ծածկը թաղակապ է: Լավ պահպանված է:

### ԷՐԲԷՋԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Եռանավ բազիլիկ եկեղեցի է, կառուցված 1716 թ.: Գտնվում է գյուղի մեջ, լեռան լանջին, որի հյուսիսային և արևելյան պատերը միաժամանակ հենապատ են ծառայում: Պատերը շարված են կրաշաղախով, տեղական կիսամաքրափաշ քարերով: Սյուները և կամարները շարված են մաքրափաշ ամուր քարերից: Սյուներին քանդակված են բազմաթիվ մանր խաչեր: Պատերում օգտագործված են մաս մաքուր հղկված քարեր և փոքր խաչեր, որոնց վրա կան արչանագրություններ: Արտաքին նշաններից զգացվում է, որ դրանք բերված են այլ կառույցներից:

Թաղերում և պատերում կան քայքայված փոքր հարվածներ, որտեղ օգտագործված են կավե կարասներ:

Խորանները երկհարկանի են, սակայն այնտեղ կարելի է անցնել միայն գաղտնադրանքով: Հարակից մաքրափաշ քարերով խնամքով սալահարակված է: Եկեղեցին այժմ անխնամ վիճակում է և քայքայման վտանգի տակ:

### ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐԴ

Բերդը գտնվում է խիստ գառիթափ լանջերով բարչունքի վրա, որը երեք կողմից շրջանցում է գետը: Միակ մտքեցման տեղը գառիթափ քայ լանջն է, որտեղից նույնպես մտքեցմալը շատ դժվար է: Աշխարհագրական դիրքի ճիշտ օգտագործումը բերդը դարչրել է անառիկ:

Պարսպապատերը շարված են կիսամշակ և անկանոն քարերից, բարձր որակի կրաշաղախով և ունեն մինչև 120 սմ հասություն: Պատերը տեղ-տեղ չոլվում են բնական ժայռերի հետ՝ ստեղծելով մի ամբողջություն:

Հրագենի օգտագործման համար պարսպապատերում թողնված են տարբեր ուղղություններով և տարբեր բարձրության վրա անցքեր: Բերդը ունի պարկառելի չափեր: Կան գորանոցներ, զինամոցներ, պահեստներ, բազմաթիվ սենյակներ, մեկ և երկհարկանի տներ, ջրավազան և այլն: Ռեմի գետնուղի, որը հասնում է մինչև գետ: Սարի ստորոտում կան մի շարք շենքերի ավերակներ, դարբնոց և ջրաղաց՝ կիսաքանդ վիճակում:

XIII դ. խաչքար  
Կողերի եկեղեցու մոտ



Վերին Շենի եկեղեցու պատերի մեջ կան բազմաթիվ ահա այսպիսի գեղեցիկ քանդակներ:




1308 թվականի  
խաչքար  
Մանաշիղի  
մատուռի մոտ



Գյուլիստան գյուղի հին գերեզմանոցը





Միջնադարյան խաչքար Ներքին Շենի հին գերեզմանոցում



Կողերի եկեղեցու ավերակը




Հին  
Խրխափորի  
կիսավեր  
եկեղեցին





Գյուլիստան: XIII դ. խաչքար Կոտրած եկեղեցու մոտ:



Գյուլիստան գյուղի  
եկեղեցու մուտքը



Գյուլիստան, 1986թ.

Գյուլիստան: Զարդարանդակ մեխրական գերեզմանից:







Մեր գյուղերում կան հուշարձաններ, որոնք երբեք լքողներն չեն ուսումնասիրվել: Գրանցից մեկն ահա այս ավերակն է հանրահայտ Արամի աղբյուրի մոտ:


ՊԱՍԿԱՆ



Ադրբեջանական բուրքը հայաբախ է արել արցախյան այս հողը, այս խաչքարի վրայից էլ քերել է խաչի պատկերը և այն առանց ամաչելու ցուցադրել Քելրաջար կոչված Քարվաճառի քանդարանում: Տասնյակ տարիներ հետո հայը այս նույն ձևով քերել ջնջել է բուրքի հետքը Քարվաճառից, տեղ դարձել իր պապենական հողին: Հուսով ենք, այդ նույն ձևով բուրքի հետքը կջնջվի մահ Շահումյանի շրջանից՝ երբեմնի Գյուլիստանի մելիքության հողից, և մենք ետից տեղ կդառնանք մեր օջախներին:

## ՀՆԱՄՅԱ ՄԱՏՅԱՆՆԵՐ

Հնագույն ժամանակներից սկսած շրջանի գյուղերում եղել են շեռագիր ու նկարազարդ մաքրամաներ: Դժվարին պայմաններում անգամ մարդիկ հոգևոր արժեքներ են սրելով ու պահպանել, հաճախ մեծ գոհողությունների գնով հայրենի սրբություններն ազատել են օտար զավթիչների շեռքից: 1417 թ. Պարիս գյուղում սրելով մագաղաթյա մի ավերարանի գրիչը դիմում է ընթերցողին այսպիսի բառերով. «Թողութիւն արարեք եղանակիս, որ գրուեցաւ. անձրեւ խիստ և տեսիքս գէն ու հողս ջրքաշ եւ ես մեռակ»<sup>1</sup> (նա



Մեր եկեղեցիներն ու վանքերը դարեր շարունակ ոչ միայն հոգևոր կենտրոններ են եղել, այլև պաշտպանական ամրություններ ու հայ մշակույթի զարգացման օջախներ: Մասյաններ են գրվել ու արտագրվել, փոխանցվել սերունդն սերունդ ու հային հայ պահել այդ հողի վրա:

Լուսանկարում՝ մի հատված Եղիշե Առաքյալի վանքի պարսպից:

խնդրում է ներել վաթ շեռագրի համար, որովհետև գրել է անչրևոփ ժամանակ, խոնավ փեղում, ջուր քաշող հեղի վրա և միայնակ է եղել, այսինքն՝ օգնող չի ունեցել): Իսկ Վերին Շենի եկեղեցում պահվող ավերարանը, որ «անհետացավ» խորհրդային իշխանության հաստատումով, այսպիսի հի-

<sup>1</sup> «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450)»: Երևան, 1955, էջ 205:



շարակարան ուներ. «Ես Վերին Շենի փանուրեր Յարութիւնս առի զայս Քրիստոսի սր Ավետարանս ի անօրինաց չեռքէն, իբր թէ գերի անկեալ թափեցի» (Ես՝ Վերին Շենի փանուրեր Հարությունս, Քրիստոսի այս սուրբ ավետարանը զնեցի անօրենների չեռքից և փրկեցի, ինչպես որ գերի ընկածի):


Խորհրդային իշխանության հաստատումից հետո եկեղեցական գույքի հետ հին մատրիարհները կամ բռնագրավվել են, կամ անհետացել: Այնուամենայնիվ, առանձին նվիրյալների հաջողվել է փրկել հայ մշակույթի այդ նըշխարների գոնե մի մասը, հասցնել մեր օրերը: Գյուլիսփանում հայրանի էր Օեր ավետարանը, որը պահվում էր Բեգլարանց Մամուշի մոտ: Դա լավ պահպանված մի հին չեռագիր է՝ Մատթեոսի ավետարան, հրաշալի մանրանկարներով: Պատմում են, որ փարբեր փեղեղից հիվանդներ էին բերում, որոնց բուժում էր Օեր ավետարանը: Հեղափոխության ճակատագրի է արժանացել այս մատրիարհը: Խորհրդային զանազան պաշտոնյաներ քանիցս փորձել են բռնագրավել այն, բայց Մամուշ մայրիկն ամեն անգամ մի հնարամտությամբ փրկել է մատրիարհը: Եվ նրա փունն ուխտավայր էր:

1973 թ. մենք Երևանից մեկնեցինք Գյուլիսփան՝ այդ չեռագիրն ուսումնասիրելու: Ծանոթներն ուղեկցեցին Բեգլարանց փուն: Իմանալով մեր այցելության նպատակը, Մամուշ մայրիկն ասաց, որ դեռևս 1947 թ. մատրիարհը բռնագրավվել և փարվել է Բաքու՝ այնտեղից եկած պաշտոնյայի կողմից, և ցույց տվեց այդ ամենը հավաստող հին փեղեկանքը՝ պեղական կտր կնիքով: Երբ զարմանք հայտնեցինք, թե ինչպես է, որ փարբեր փեղեղից շարունակում են ուխտի գալ, նա այսպես բացատրեց. «Ահա սա Օեր ավետարանը պահելու փայտե փուփն է, կարմիր շորով փաթաթված: Դե, ուխտավորները հո չե՞ն ասում՝ փուփը բացեք, ավետարանը տեսնենք: Նրանք համբուրում են փուփը, նվերը կամ դրամը դնում վրան, հեռանում: Ես էլ դրանով են ապրում, մեծ կին են, ի՞նչ անեն»:

Վերադառնալուց հետո մեզ ասացին, որ խաբվել ենք: Ստիպված նորից գնացինք՝ մեզ հետ փանելով «Էջմիածին» համադեսը, որտեղ փախաբված էր մեր հողվածը: Բացատրեցինք, որ հավատարմաբար ենք, վրանգավոր մտադրություն չունենք, այլ միայն՝ զիտական հետաքրքրություն: «Բա որ այդպես է, ինչո՞ւ էիր անցյալ անգամ կասկածելի ու անհավատ մարդու հետ եկել», իր հերթին զարմացավ Մամուշ մայրիկը և սիրալիք ցույց տվեց Օեր ավետարանը: Ես հարցրի, թե որտեղից է այն հին կեղծ փեղեկանքը: «Դա կեղծ չէ, իսկական փեղեկանք է,—բացատրեց նա ու շարունակեց:—1947 թ. ես հասկացա, որ Բաքվից եկած պաշտոնյային ավելի շար կգրավի մատրիարհի արժաթե կազմը: Կազմը պոկեցի, փվեցի նրան և ասացի, թե գիրքը վաղուց կորել է, պահվում է միայն կազմը: Ժողովուրդն էլ հո չի՞ իմանում՝ փաթաթվածը ավե-

տարանն է՞, թե՞ միայն կազմը, այդպես էլ միշտ ուխտավորներ են գալիս»: Պաշտոնյային շայնում է արժաթե կազմը, նա վերցնում է արժաթը, փեղեկանք փախ ավետարանը բռնագրավելու մասին, հեռանում. գիրքն այդպես էլ պահպանվում է հետագա պաշտոնյաներից այդ փեղեկանքի շնորհիվ:

1992 թ. շրջանի կործանման ժամանակ խոր ծերության հասակում Մամուշ մայրիկը չհեռացավ գյուղից, մնաց հայրենի հողի վրա, ճակատագիրը՝ անհայտ: Նրա հարս Սեդա Բեգլարյանը (Վալոդյայի կինը) Օեր ավետարանը փրկեց նորօրյա աղեփից, հասցրեց Արովյան, որտեղ և հիմա գտնվում է: Այն որևէ հիշատակարան չունի (գուցե անհետացել է՞ կազմի հետ). վերջին թերթերը պակասում են, բայց մանրանկարները հրաշալի պահպանված են:




Բեգլարանց Պապը Օեր ավետարանը (Մատթեոսի ձեռագիր ավետարան) և խաչը: Քանի՜ քանի՜ շահունյանցիներ են ուխտի գնացել «Պապին տակը»: Տավոք, շահունյանցիներն այսօր ցրված են աշխարհով մեկ: Թող Բեգլարանց Պապն այս գրքի հետ այցի գնա իր տարագիր գավակներին՝ հույս ու հավատ ներշնչելով, հաջողություն պարգևելով նրանց:

Ուշագրավ է, որ Օեր ավետարանին ժողովուրդը Պապ էր ասում: Պապ էին ասում նաև շրջանի մի շարք այլ ուխտավայրերի, որտեղ կային սուրբ գիրք, մեղադրե խաչ կամ այլ խորհրդանիշ: Ուխտի գնալը կոչվում էր Պապին փակը գնալ: Ազգագրագետ Ալվարդ Ղազիյանը դա բացատրում է այսպես. ժողովուրդն Աստծոն պատկերացնում է իմաստուն ծերունու փեսքով, ինչպես բարի ծերունի՝ Պապ:

Որոշակի արժեք էր ներկայացնում Գյուլիսփանում Նադեժդա Մակ-




յանի մտք պահվող հմայիլը, մագաղաթե մի երկար ժապավեն, կլոր փաթաթված: Պարունակում էր զանազան հմայություններ: Մեզ հայտնի չէ, թե հիմա որտեղ է գտնվում այն: Իսկ ահա Հայ Պարիսում եղած նշանավոր ավերարանը, մեզ հասած լուրերի համաչայն, գտնվում է Մոսկվայում:



Նապատի եկեղեցին բրեի տեղահանված շատույնացիների վերջին հանգրվանը եղավ հայրենի հողի վրա 1992 թ. հունիսի 13-14-ին: Հետագայում պարտիզանական ջոկատն ազատագրեց այս տարածքները, բարեկարգեց Մուրր Ամենափրկիչ անապատի (Նապատ) ամբողջ տարածքը, կարգի բերեց եկեղեցին, մաքրեց տասնամյակների ընթացքում կուտակված աղբը: Ազատամարտիկներն իրենց ուժերով բարեկարգեցին բնակ, մոմ վառելու տեղեր պատրաստեցին և, ամենակարևորը, գարդարեցին եկեղեցին ահա այսպիսի սրբապատկերներով: Երևի թե նույնիսկ գարեր առաջ Նապատի եկեղեցին այնպիսի գրավիչ տեսք չի ունեցել ներսից, ինչպես որ այսօր:

# ՄՌԱՎԻ ՂՈՂԱՆԶՆԵՐ



Է՛լ հին ծանոթներ, է՛լ կանաչ սարեր,  
Ահա ձեզ տեսա, ու միտքս ընկան,  
Առաջոս եկան երջանիկ օրեր,  
Սիրելի դեմքեր, որ հիմի չրկան:  
Հովի Թումանյան

## ՑԱՎ ՈՒ ԿԱՐՈՏ, ՀՈՒՅՍ ՈՒ ՀԱՎԱՏ

«Մռավի ղողանջներ» թերթը դարձել է շահունյանցիների կորուստների ու ցավերի, վշտերի ու հոգսերի, կարոտի ու հույսերի փարեգորություն: Նրբանց ապրումների ու առօրյա խոհերի, սրեղծագործական կարողությունների մասին պատկերապես փալու նպատակով ներկայացնում ենք որոշ նյութեր թերթի էջերից: Այս նյութերի հեղինակները գրող կամ բանաստեղծ չեն, ոչ էլ լրագրող, այլ ... պարզապես հայրենակորույս ու փարագիր շահունյանցիներ: Նրանց գրածները թերթում հրապարակվելուց առաջ, բնականաբար, մեր կողմից ենթարկվել են որոշակի խմբագրման՝ անխաթար պահպանելով, սակայն, հեղինակների հիմնական գգապումները, ապրումները, եզրահանգումները, որոնք բնութագրական են մեր փարագիր ամբողջ բնակչության համար:

### ՀԱՐՄԱՂ ԱՅՄՆ

Շարձաղ այան 94 տարեկան էր, որ ըսկըսվեց Շահունյանի շրջանի բռնի տեղահանությունը: Շատերը մտածեցին, որ նրան փրկել անհնարին կլինի: Բայց...

Բարի ու աշխատասեր կին է եղել նա, բոլորի նկատմամբ հոգատար: Կոլտնտեսությունում աշխատել է հիմնադրման օրից, մեղակների ու գովեստների արժանացել: Ոսկե ձեռքեր ուներ նա: Վերին Շենոմ շատերի համար է թոնիր պատրաստել: Թոշակի անցնելուց հետո սկսեց գորգ գործել: 136 գորգ գործեց, մեկը մյուսից գեղեցիկ, բայց բոլորն էլ նույն ձեռագրով. նրա աշխատանքները մի յուրահատուկ գրավիչ կողմ ունեին, որով առանձնանում էին բոլորից:

Շարձաղ այայի կեսրարը՝ Շելունց Բաղդասարը, ապրել է 115 տարի, և վերջին 15-ը կույր վիճակում: Հարևանները հիշում են, որ Շարձաղ այան սեփական երեխայի նման խնամում-պահում էր այդ ծերունուն: Նա նույնիսկ հատուկ ճեղքակալ էր պահում և ճաշ ուտելուց հետո մաքրում էր կեսրարի ճեղքակալ մորուքը:

Ամոթխած կին էր Շարձաղ այան, ավանդապահ: Խոսում էր ցածրաձայն ու կշռադատված, խոսեցիս էլ գլխաշորի ծայրով փակում էր բերանը: Ասում են՝ 30 տարեկա վառարան ուներ, որն այնքան մաքուր էր, կարծես հենց նոր էր գնել խանութից: Թվում էր, այդ բարի կինն ամեն ինչ ուներ, բացի մի բանից՝ բախտ չուներ: Տղաներից

մեկը մահացել էր երիտասարդ հասակում: 1982 թ. մահացավ նաև ամուսինը: Թողը՝ Միշիկը, ընտանիքով տեղափոխվեց Շարժադ այսօրի մոտ, որպեսզի նա մեծակ չմնա: Մեկ տարում՝ 1986 թ., մահացան Միշիկի հայրն էլ, մայրն էլ, այսինքն՝ Շարժադ այսօրի տղան ու հարսը: Միշիկը տատիկի հեռավոր դարձավ և՛ թոռ, և՛ տղա: Սակայն չար ճակատագրով հաջորդ տարին էլ Միշիկը մահացավ:

Միշիկի կին Վասիլիսան երիտասարդ հասակում այրիացավ, երկու որբերի հետ հոգատարությամբ պահում էր անբախտ Շարժադ այսօրին: Որպեսզի տատիկն իրեն ծանր բեռ չհամարի, Վասիլիսան ճաշ եփելու գործը նրան էր թողել. «Այա, որ դու ես եփում, երեխաներն այտոթակով են ուտում, միշտ դու կեփես ճաշը»: Տան փողն էլ տատիկն էր պահում: «Որ ինձ մոտ է մնում, շատ եմ ծախսում», ասում էր Վասիլիսան: Փոքրիկ Միշեն ու Ռիտան էլ երբ ճաշի էին նստում, միշտ հետևում էին, որ Շարժադ այսօրի ճաշը նախշում արհեստի մեջ ցվի, նրա բաժակն էլ ամենագեղեցիկն էր:

Շարժադ այսօրի երկու աղջիկներից մեկը վաղուց երևանում էր, մյուսը՝ գյուղում, երկուսն էլ մեծ ընտանիքի տեր: Ամեն աղիքով նրանք հուզվում էին, թե որքան հոգատար է Վասիլիսան իրենց մոր նկատմամբ:

Գյուղի շրջափակման ծանր օրերին Շարժադ այսօրի աղջկա միջնեկ տղան՝ Բորիկ Ագարյանը, իր մեքենայով քանի անգամ տատիկին տարավ Գյուլիստան, որպեսզի ուղաթիռով ուղարկի Երևան, չկարողացավ: 1992-ի հունիսի 13-ին, երբ գյուղը տակնուվրա էր լինում, ամեն մեկը ցանք էր բափում՝ մի կերպ փրկվելու կամ ազատելու իր զավակներին: Բորիկն առաջին հերթին մտածեց տատիկին փրկելու մասին: Նա իր 3-4 տարեկան զավակներին թողեց կնոջ՝ Կարինեի ու նրա եղբոր հույսին, ինքը մեքենա ճարեց, Վասիլիսային ու նրա երեխաներին ուղարկեց մինչև Գյուլիստանի անտառը, որից հետո պիտի ուղարկվեցին: Հետո վերցրեց Շարժադ

այսօրին, տարավ իր ընտանիքի մոտ ու միացան մարդկային տանջահար քարավանին:

Կես ճամպարահին արդեն առաջ գրնայն անհմարին դարձավ: Բորիկը պիտի տաներ և՛ իր 2 փոքրիկներին, և՛ 94 տարեկան տատիկին: Նա հանեց իր պիջակը, փռեց քայ գետնին, տատիկին նստեցրեց մի քանի ուրիշ պատավերի մոտ, ինքը գրնայ մի տեղից օգնություն քեռելու: Շատերը մտածեցին, թե Շարժադ այսօրի հետևից էլ եկող չի լինի. ո՞վ կթողնի իր երեխաներին, գա 94 տարեկան տատի հետևից: Սակայն... Բորիկի կնոջ քրոջ ամուսինը՝ ազատամարտիկ Պավլիկ Մեմբրյանը (ափսոս, հետո գոհվեց), օգնեց նրա ընտանիքին, երեխաներին մի կերպ դուրս հանեցին այն անավոր կրակի տակից, լեռներով ու անտառներով, անձրևի տակ, ցեխի միջով... Շատերը մտածեցին, թե Բորիկը Շարժադ այսօրին ազատեց թուրքի ձեռքից, բայց հիմա անտառում կմնա, գազանների բաժին կդառնա:

Դժվար է ասել, թե ինչ հնարքով, Բորիկը մի ձի գտավ, իր աներձագ Գագիկի հետ վերադարձավ: Շարժադ այսօրին մի կերպ տեղավորեցին ձիու վրա, մեկը ձիու կապը բռնեց, մյուսը տատիկին էր բռնած պահում: Վերջապես սհազին հեռացան կրակոցներից, հասան մի քիչ ապահով տեղ, որտեղ ժողովուրդը կանգ էր առել հանգրստանալու: Քարավանի մի ծայրը դեռ չէր երևում, իսկ մյուսն սկսում է առաջ շարժվել: Բորիկը ձիւն հանձնում է տիրոջը, տատիկին բողմում, նորից գնում օգնություն որոնելու: Հանդիպում է Շահեն Սևդրյանին: Շահենը հանձնարարում է մի տանկիստի, որ Շարժադ այսօրին հասցնի Հաթերը:

Շարժադ այսօրին հասցնում են Հաթերը, թողնում գյուղամիջում, իսկ հարապատները դեռ տեղ չէին հասել: Երկու օր այդպես նստած, աչքը ճանապարհին, սպասում էր: Վերջապես երևում է Վասիլիսան՝ երեխաների հետ: Բոլորն ուրախանում են իրար գտնելու համար: Մի անձա-

նոր կին հաց ու պանիր էր տվել Շարժադ այսօրին, իսկ այսօր չէր կերել, գոզնոցի ծայրին կապած պահել էր, տվեց երեխաներին... Այսօր պատվիրում է Վասիլիսային, թե՛ դու մի կերպ տար երեխաներին, հասցրե՛ր Հայաստան, իսկ ես կապանեմ Բորիկին: Ո՛Ւ սպասում է: Երկար փնտրելուց հետո Բորիկը գտնում է նրան: Փարվում են իրար, ուրախանում: Բորիկը պատվիրում է, որ այսօր ճամպարի քարին նստած տպափ, մինչև ինքը գնա, մի մեքենա ճարի, որ տեղափոխի Ստեփանակերտ: Մի քանի ժամ հետո Բորիկը մեքենայով գալիս է, այսօրին չի գտնում: Երկու օր փնտրում է նրան: Պարզվում է, որ իրենց գյուղխորհրդի նախագահը հանդիպել է այդ ծեր կնոջը՝ մեծակ նստած քարի վրա, ճանապարհի կողքին, խղճացել է, նստեցրել մի մեքենայի մեջ, տեղափոխել Ստեփանակերտ: Ռադիոյով հայտարարություններ են անում, վերջապես հարազատներն իրար գտնում են:

Տեղափոխվեցին Երևան, իսկ այնտեղից հարազատները քաժանվեցին տարբեր տեղերի վրա՝ ապաստան գտնելու, իրենց գոյությունը պահպանելու համար: Վասիլիսան երեխաների ու եղբոր հետ գնացին Ռուսաստան, Բորիկները նույնպես Ռուսաստան գնացին, Սարատով: Շարժադ այսօր մնաց Երևանում, Լուսիկ աղ-

ջրկա տանը: Ջաղաքի կյանքին դժվար էր հարմարվում. ամորթսած կինը քաշվում էր նույնիսկ իր աղջկա որդիներից: Շուտով բոլորը հարմարվեցին իրար: Նոր տեղում էլ նրան շրջապատեցին սիրով, փոքրիկները նրան ջերմորեն «պոնյո քաթո» էին ասում: Մինչև տատը չօրհներ, սեղան չէին նստում:

...Շարժադ տատին Երևանում մի քանի տարի ապրեց ապահով ու հոգին ավանդեց: Նրան պատվով հողին հանձնեցին: Հիմա նա գերեզման ունի, վրան էլ քար է գցված: Իսկ քանի՞ քանիսը մնացին անգերեզման՝ գյուղերում, անտառներում: Ահա գյուղ եմ այս տողերը և ուզում եմ համագյուղացիների անունից շնորհակալություն հայտնել Բորիկին և բոլոր նրանց, ովքեր օգնեցին, այդ տարիքն առած կնոջը դուրս բերեցին այն դժոխքից:

Հարազատներն այսօր ցրված են աշխարհով մեկ, բայց հանգիստ խղճով և չեթ՛մ ու բարի հուշերով պահպանում են Շարժադ այսօրի հիշատակը:

ՆԵԼԼԵ ՄԱԳՆԵՆ

Նոյ. կողմից: Միանում ենք ամառ ջերմ խոսքերին: Որքա՞ն բնութագրական է Շարժադ այսօրի կերպարը մեր այսօրի համար, որոնցից շատերը, ավա՛ղ, մնացին անգերեզման:

## ԱՅՍՊԻՍԻ ՀԱԿԱՏԱԳՐԵՐ

Վերին Շենի ծանր օրերին այնտեղ ապաստան գտած մի գետաշենցի կին կար, Փիրուզյան անունով (Գետաշենն արդեն կործանվել էր): Ավանային խորհրդի նախագահը այդ Փիրուզյան տեղավորեց Սաթենիկի մոտ ու պատվիրեց. «Կույր կին է, կյանամեծ, նրա թոշակն էլ կստանաս, այդպես միասին յուր կգնար»:

Ավա՛ղ, շրջափակման պայմաններում Փիրուզյան ոչ մի անգամ չկարողացավ թոշակ ստանալ: Իսկ երբ կործանվեց Վերին Շենը, հարևանները խորհուրդ տվեցին Փիրուզյանին, որ փախչի, գոնե ինքը փրկվի: Նա զարմացավ՝ «Գյուղտուխն ինձ աթափշուր արել, բա էս խեղճին ո՞նց թողնեմ մեծակ...»: Ո՛Ւ մնացին երկուսն էլ: Նրանց ճակատագիրը մնաց անհայտ, անանց ցավ ու մթմոտն էլ հարազատների սրտում:

(Նյութը քաղված է ընկերացողների նամակներից):



Քո չունեցած գերեզմանի  
 Մի բուռ սուրբ հողին մեռնեմ,  
 Որիչի տանը ապրած  
 Վերջին օրերիդ մեռնեմ:  
 Թներ առնեմ ու սլանամ,  
 Մի կերպ հասնեմ Շահումյան,  
 Տեսնեմ տունդ և իմանամ  
 Որտեղ ունես գերեզման:  
 Ճրագ վառեմ, ծաղիկ դնեմ,  
 Նստեմ ու խոր սրտանց լամ:  
 Սիրտս ճեղքեմ, բառեր գտնեմ,  
 Բարի մարդկանց վիշտս բացեմ:  
 Ախ, թո բարի դեմքը տեսնեմ  
 Ո՞ր ճերմակած վարսերը թո,  
 Թեկուզ վերջին անգամ տեսնեմ  
 Շուշանի պես մատները թո,  
 Հոգուս խորքում կրակ դարձած  
 Այրում ես ինձ, աքա ջան,  
 Քո կարոտից մի բուռ դարձած  
 Զեզ եմ ուզում, աքա ջան,  
 Ավելի է խորունկ դարձել,  
 Ախ, թո հանդեպ իմ սերը,  
 Այդ են անխոս վկայում  
 Իմ արծաթած մազերը:  
 Թե թո հանդեպ սխալ ունեմ,  
 Դու ինձ ներիր, աքա ջան,  
 Առանց այն էլ հանգիստ չունեմ,  
 Գիշեր-ցերեկ տանջվում եմ,  
 ...Ինչ էլ լիներ, դու ինձ կյանքում  
 Չէիր թողնի ու փախչի ...  
 Ի՛նչ կլինի՝ դու արթնանաս,  
 Որ հասկանաս ինձ չեն ների,  
 Մեռնեմ ես թո մեր սուրբ հողին  
 Հարժանացած մարմնին,  
 Այս տողերը կարդացողի  
 Արցունքոտված աչքերին...

ՆԵԼԼԷ ՍՈՒՂՅԱՆ, Սարապովի մարզ

Նվիրում եմ իմ այն հայրենակիցներին, որոնք 1992 թ. հունիսի 13-ին մնացին Ներքին Շենոն գերության մեջ

Այս գիշեր ես երազ տեսա՝  
 Գյոգթափայի, Յուդակերի բարձունքներից  
 Գյոգթուլաղի անտառներով, խաչին ձորով  
 Իմ հայրենի գյուղն եմ գնում:

Սև ջուր կոչվող գետն եմ անցնում,  
 Զերծի բանուկ արահետով գյուղ եմ մտնում:  
 Թեկուզ գյուղում թուրքն է իշխում,  
 Փողոցներում ժամապահներ չեն երևում:

Մտռնում եմ երկհարկանի հյուրանոցին,  
 Ծանոթ մարդկանց եմ նկատում:  
 Բարևում եմ Գրիգորյան Հարությունին և Ղանիելյան մեր Մովսեսին.  
 Առաջվա պես մաքուր հագնված զրուցում են մեղմ իրար հետ:

Կներեք ինձ, շտապում եմ,  
 Սիրտս արագ է խփում,  
 Չէ՛ որ երկար բաժանումից  
 Հայրենի տուն եմ գնում:

Դեղատան մոտ, ծառի ստվերում,  
 Աչքը ճամփին, Մայիս քեռին է Ամիրյան.  
 Սպասում է Ղարազարյան Գրիգորին,  
 Որ անցյալն ու նախնիներին մեկ-մեկ հիշեն:

Ահա և մեր ընկուզենին ու աղբյուրը քջջան,  
 Հափարի տակ, փայտյա փոքրիկ նստարանին  
 Մանկությունից ինձ լավ ծանոթ  
 Իմ սիրելի հարևաններն են նստած:

Տեսնում եմ ես՝ Ղարազիդանց Մուքեյլ քեռուն  
 Եվ Վալոդին մեր Նալբանդանց,  
 Իսկ Խիդիրանց Բենիկ քեռին  
 Մի քիչ թեթված ջուր է խմում մեր աղբյուրից:

Վեր է կենում Մուքեյլ քեռին, ուրախացած  
 Փաթաթվում է, երեխի պես լաց է լինում.

— Ձեկեր Վովիկ, այս որտեղի՞ց հայտնվեցիր:  
Փրկեցեք մեզ, խնդրում եմ, այս անօրեն շուն-թուրքերից:

Հետո ասում է կամաց՝ ո՞ւմ ես տեսել դու մերոնցից:  
— Տեսել եմ ես տղաներիդ, աղջկադ էլ, քո էլզային:  
Ծառայում եմք քրոջդ տղա հովիկի հետ մենք միասին:  
Քիչ համբերեք, շուտով, շուտով մենք գյուղ կգանք:

Բակ եմ մտնում, շուրջս նայում,  
Ավտոմատս ծառից կախում,  
Հայրական տուն եմ մտնում.  
Կարծես ոչինչ չի էլ փոխվել, առաջվանն է մնացել:

Շատ մոտիկից ինչ-որ ձայներ եմ լսում:  
Մտնելում եմ և, ո՞վ գարմանք, տեսնում եմ ես  
Վեյան Վարդանն ու Դավաքյան  
Արշակ քեռին են կանգնած.  
Ողջագուրվում, հեռանում եմ,  
Ժամանակը շատ է կարճ:

Իսկ քիչ հետո պատերազմում զոհվածների  
Հուշարձանի մոտ եմ ես:  
Տխուր-մուրթ շվարել եմ  
Շիրիմի մոտ իմ գանգրահեր Արսենի:

Համբերեցեք, իմ քաջ Ներսես ու Չևորգ,  
Աշոտ, Արտուշ և Կարո,  
Ստյոպա, Կամո և Արտյոմ,  
Շուտով կգանք, հուշարձան էլ կունենաք:

Ձևտ հայկական սովորության  
Թաշկինակով մի քիչ հող եմ վերցնում,  
Իջնում եմ ցած, կամուրջն անցնում,  
Նորից անտառ եմ մտնում:

Լուսաբացն էլ շուտով կգա,  
Քնաթաթախ ժամապահները կարթնանան:  
Շտապում եմ շուտ հեռանալ  
Գերեվարված, ծաղկափթիթ իմ գյուղից:

Բխրքերծի բարձր ձորի գագաթին  
Վերջին անգամ կազնում եմ ու հետ նայում.  
Դառնությանմբ եմ ես բաժանվում  
Պապենական իմ հայրենի օջախից:

Հույս ունենք դեռ, մենք չենք ջարդվել.  
Գուցե Աստված թեքվի մեր կողմը մի քիչ,  
Այնժամ կգանք, հայրենի գյուղ,  
Գերությունից քեզ կազատենք,  
Նորից ազատ կշնչես:

ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Մոսկվա

## «ՆԵՐԻՐ ԻՆՁ, ՍԱԹԵՆԻԿ ԲԻԲ...»

Մութը դեռ չէր ընկել, որ հանդիպեցի բռնի տեղահանված ժողովրդի տանջահար քարավանին: Իրար ձեն տալով, իրար օգնելով, ցեխի միջով, անձրևի տակ սարնիվեր մի կերպ բարձրանում էինք: Մի պահ անհանգիստ ձայներ լավեցին, թե դիմացի լանջին ինչ-որ մարդիկ են նկատվում, երևի թուրքեր են: Տագնապը պատեց բոլորիս՝ մի՞թե մեր վերջը եկավ: Քիչ հետո իմացանք, որ հայ նախրապաններ են. ուրախությունից սկսեցինք արտասվել...

Քարեկամ, հարևան, հարազատ մեծ մասն իրար կորցրել էին, խառը շարժվում էին առաջ: Մեզ հետ գնացողները Վերին Շենից ու Գյուլիստանից էին: Ես մի կերպ օգնելով, համարյա շաքակած տանում էի իմ ազիին՝ հորեղբորս կնոջը: Մոտիկից մի տնրոց լսեցի: Կիսամութի մեջ նայեցի, տեսա՝ Կիզողանց Սաթենիկ բիբն է. ընկել էր ցեխի մեջ, չէր կարողանում բարձրանալ: Չեռքս մեկնեցի, չկարողացավ կանգնել: Ի՞նչ անեմ, տեր Աստված: Հորեղբորս կնոջը մի կերպ եմ տանում, սրա՞ն ինչպես տանեմ: Մի կերպ ոտքի կանգնեցրի, շալս փռեցի մի ծառի տակ, իրեն նստեցրի ծառին թիկն տված. ասացի՝ աղջիկներիցդ մեկին կգտնեմ, կասեմ, մի հնար կանեն: Ավա՛ղ, ոչ մեկին չգտա, և մինչև օրս խիղճս տանջում է ինձ: Տեսնես ի՞նչ եղավ այդ կինը՝ քերեցի՞ն, թե՞ մնաց:

Ներիր ինձ, Սաթենիկ բիբ... Քանի տարի է անցել, չեմ կարողանում մոռանալ ցեխտոված, օգնություն խնդրող այդ կնոջը: Աստված իմ, թող Սաթենիկի մեղքը ծանրանա թուրքերի խղճին, որ մեզ այդ վիճակին հասցրին:

ԼԵՆԱ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ, Երևան

## ...ԻՍԿ ԵՐԱԶՆԵՐԸ ՀԱՆԳԻՍՏ ՉԵՆ ՏԱԼԻՍ

Հնչեց հեռախոսի զանգը, և լսվեց Արուսի հուզված, արցունքախառն ձայնը. «Երազիս մեջ գյուղ էինք գնում: Նույն ժամոթ ճանապարհն էր մույն աչգիների միջով: Ամպոտ եղանակ էր, անձրև, ինչպես որ մանկության օրերից հիշում եմ, երբ այսպի մոտ էի մնում...»

Այցելեցի Շուրա արային (որ հողին հանձնվեց օտար երկրում, գերեզմանն էլ չեմ տեսել): Շատ ուրախացավ արքան, մի փունջ ուրց տվեց (խոտը) և մանա, ասաց՝ մեր գյուղինն է, կտանես, ձեզ մոտ կցանես, որ միշտ հիշեք գյուղը: Հետո էլ թե՛ այցի կզմաս այսան-ապան գերեզմանին, ծաղիկներ կտանես, բայց պապային չասես, քեֆը խարաբ



չանի: Հարցրեց՝ գերեզմանի տեղը հիշո՞ւմ ես: Չարմացա՝ ո՞նց չեմ հիշում: Ո՞ր գնացի դեպի գերեզմանոց: Թեթև, ուղղակի վազելով գնում էի սարալանջն ի վեր...

Արթնացել եմ ու չեմ կարողանում լացս գտել: Ամբողջ գիշեր լացել եմ: Մի կերպ համբերել եմ, որ լուսանա, նոր վանգեմ...»:

Մի պահ դադար առավ, հետո հանգիստ ձայնով շարունակեց. «Պատմեցի, մի քիչ բեթևացա...»:

**Խմբ. կողմից:** Տարբեր տարիքի, տարբեր կրթության ու ժամանակի տեղ կին, թե տղամարդ, տարբեր քաղաքներից ու գյուղերից մեզ են դիմում այսպիսի հուզված նամակներով, հեռախոսազանգներով: Մովորաբար պատասխանում ենք նամակով: Ներողամիտ եղեք, բոլորը չենք հրապարակում: Ի՞նչ կարող ենք ասել, միայն այսքանը. հիշեցեք, որ միայն ձեր հարազատների գերեզմանը չէ, որ մնացել է գերի Հահուդյանում: Միայն ձեր աջան չէ, որ հողին է հանձնվել օտար երկրում: Երբ կուզենաք ժողիկներ դնել նրանց գերեզմանին, նայեցեք ձեր շուրջը, այնքան կարիքավոր այա-ապա, աջա կա, կարելիվոյն չափ օգնեցեք նրանց, կթեքլանաք:

## ԴԱՌԸ ԵՎ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

...Գյուղից դուրս էինք եկել, հասել Նապատ: Լուր եկավ, թե՛ փայտեք անտառը: Այդպես էլ թողեցինք ամեն ինչ գետնին փռած, հեռացանք: Գետն անցնելու ժամանակ հենց ջրի մեջ պայթեց գրադը: Տղաս վատ զգաց. սիրտը թուլացավ, ոտքերը թուլացան: Մի կերպ օգնեցինք, գետն անցկացրինք, մի ծառի տակ պառկեցրինք: Մեզ մոտեցավ Զիրուն Մարգուշը, հարցրեց՝ ի՞նչ է պատահել: Պատմեցինք: Ասաց՝ սրտի դեղ ունեմ: Տվեց տղայիս, խմեց, մի քիչ հանգստացավ: Փորձեցինք առաջ գնալ, բայց տղաս դժվար էր շարժվում: Հեռվից մեզ տեսնում էր Ղաթուլանց Զրիստափորի տղա Խաչիկը: Առաջ վազեց, հարցրեց, թե ինչ է պատահել: Նրան էլ պատմեցինք: Շալակեց տղայիս ու տարավ, ամտառի մեջ վրան ուներ, պառկեցրեց այնտեղ, մի բաժակ քեյ տվեց, ու կամաց-կամաց շարունակեցինք ճանապարհը: Շատ շնորհակալ եմ Մարգուշից էլ, Խաչիկից էլ, թող Աստված էլ նրանց նեղ օրին օգնի:

...Ճանապարհին մոտակայքում նորից տրաքեց գրադը: Թռռներս արդեն իմամում էին. հենց որ երկնքում կայծակի նման կեծիճ-կեծիճ էր անում, պառկում էին գետնին, գլուխները ձեռքերով ծածկում, հետո էր տրաքում գրադը...

Ժողովրդից շատ հետ մնացինք: Գնում էինք՝ հետքերին նայելով: Հասանք մի վարար գետի: Կամուրջ չկար: Մեր Ռաֆիկը ձեռքի փոքր կացին ուներ. ճյուղեր կտղուտեց, հարձարեցրեց, իրար օգնելով մի կերպ գետն անցանք: Անտառի մեջ հանդիպեց մեզ նման հետ մնացած մի ջահել կին՝ քարտուր ձեռքին, վեց տարեկան աղջիկն էլ կողքը կանգնած լացում էր ու ասում՝ ի՞նչ անեմ, մի կերպ ել, բարո՞ւրը տանեմ, թե՞ քեզ: Մոտեցա լացող աղջկան, ձեռքի բռնեցի, ասացի՝ տեսնո՞ւմ ես, թռնիկա քեզինի փոքր է, բայց ձեռքիցս բռնած գալիս է սուսուփուս, դո՛ւ էլ ձեռքիցս բռնիր, գնանք, ձեր մեղքը թորքին աչքը քոռացնի... Էդպես գնացինք ահագին տեղ, բայց հետո իրար կորցրինք: Էլ չտեսանք նրանց:

Հասանք մի տեղ, որտեղից լաֆետով երեխաներին ու ծերերին տանում էին Հաթերք: Մութ գիշեր էր: Վերջին լաֆետն արդեն գնացել էր: Վարար անձրև էր գալիս. ոչ թե պառկելու, մի տեղ նստելու հնար էլ չկար: Մի ծառի տակ կանգնած սպասեցինք,

մինչև որ առավոտյան լաֆետը եկավ, երեխաներին տարավ, իսկ մենք ոտքով գնացինք: Ճանապարհն այնքան երկար էր թվում, կարծես թե ոտքով Ամերիկա էինք գնում: Հասանք Հաթերք, թռնիկիս գտանք: Մի բարի մարդ տարավ իր գորանջի տուն (իրենց տունը լիքն էր շահույնյանցիներով):

Հաջորդ օրը լուր հասավ, թե թուրքերը մոտենում են Հաթերքին: Հեռացանք, մի կերպ հասանք Ստեփանակերտ: Երեք օր մնացինք գրադից փված մի դպրոցի շենքում, այնտեղից էլ գնացինք Երևան: Մեկ տարի մնացինք, հեռացանք Ռուսաստան: Ապրում ենք մի գյուղում, որտեղ ուրիշ ոչ մի հայ չկա, մեկը չկա, որին դարդերդ պատմես: Ամբողջ տարին կարոտով սպասում ենք, մինչև որ թռռներս ամռանն արձակուրդ գան, մեր դեմքին էլ մի քիչ ժպիտ երևա...

### ՇՈՒԲԱ ՔԱՐԱՅԱՆ. Լիպիկի մարդ

**Խմբ. կողմից:** Գարգելի Շուրա Բաբայան, Ղաթուլանց Զրիստափորի տղա Խաչիկը (Խաչատուր), ցավոք, արդեն չկա: Այս էջում տպագրված է նրա աղջիկ Նունի նամակը: Չեր սրտի խոսքը կարող եք գրել նրան:

## «ԻՄ ԳՈՀԱՐ ԱՅԱՆ»

Փոքրամարմին, ժպտերես, բարի ու երեխայի պես միամիտ կին էր իմ Գոհար այան: Չեմ էլ կարողանում ողորմի տալ. մնաց գյուղում, անհայտ: Եկել էր Երևան, Մասիս, երեխաներին, բռնեիրն տեսել և հետո ստիպեց, որ անպայման իրեն գյուղ տանեն. ամենածանր օրերն էին, վերտալյուտն էլ հազվադեպ էր լինում: Գնաց ու մնաց...

Ինչպե՞ս էր սիրում ինձ: Միշտ ձեռքի մեջ պինդ պահած մի քաղցր բան կուներս և աննկատ կոնքեր բռնա մեջ: Ես էլ իրեն էի շատ սիրում: Երբ տեսնում էի, որ ատամներ չունի, սիրտս մղկետում էր, ասում էի. «Այա, վար մծամամ, կոքներ քիցիլ եմ տլական»: Երբ տեսնում էի, որ չուտերը մաշվել են, ասում էի. «Այա, վար մծամամ, քվետի թագա չուտ եմ պիրիլական»: Մեծացա, տեղափոխվեցի քաղաք: Շատ տարիներ անցան, բայց, ափսո՛ս, անկատար մնացին իմ խոստումները: Գոհար այան 90 տարեկանում մնաց Ղաթաշինարում: Գոնե չկարողացա իմ լացով վերջին հրաժեշտը տալ... Ամեն հիշելով միայն լուռ ու դառն արցունքներս են հոսում: Իմ ամենամ Գոհար այա, երե չկաս արդեն, թող լույս դառնա հոգիդ...

### ԼՅՈՒԲԱ ՂԵՎՈՆԴՅԱՆ

## ՏԱՆՋՎԱԾ ՄԱՅՐԻԿԻՍ

Եվուղ, թխող, հյուրասեր կին էր մայրս՝ Դանիելյան Հռոռմսիմը (Հուսի քիթը): Շատերն են ճաշակել նրա պատրաստած անուշահամ կերակուրները: Բոլորը նրան բախտավոր մայր էին համարում. 6 տղա ուներ, 6-ն էլ լավ աշխատանքի: Բայց կարճ տևեց այդ բախտավորությունը: Սկսվեց Հայրենական պատերազմը, և 6-ն էլ ռազմաճակատ մեկնեցին՝ 4-ը հրամանատար, 2-ը՝ շարքային: Կարճ ժամանակում մայրս կորցրեց 3 հրամանատար որդիներին՝ Շամվոնին, Վաղդյային և Կույային: Պատերազմից հետո

եկամ իբր թե խաղաղ տարիները մորս համար մրմուռով լի եղան: Ցավն ավելի խորացավ 1965-ին, երբ մահացավ նաև ավագ որդին՝ Ռուբենը, 59 տարեկան հասակում: ...1969 թ. մահացավ մայրս, 86 տարեկանում: Վերջին պահին ինձ դեպի իրեն քաշեց, ծոցից հանեց մի ծրար. ներսում՝ երեք գոհված որդիների նկարները, և պատվիրեց. «Ինձ վրա որ քար գցեք, տղաներիս պատկերը վրան քաշել կտաք, տակն էլ կդրեք՝ «Հիշատակ Կոլյայից», որ նրա անունը անհետ չկորչի»: Նա ջահել գոհվեց, չհասցրեց նույնիսկ ամուսնանալ:

Մորս մահից շատ շանցած, վախճանվեց մորս օջախի որդի Գարեգինը, և մեկ տարի անց երկուսի քարը միասին գցեցինք ու կատարեցինք մորս պատվերը: Բայց ճակատագրի դաժան հարվածները շարունակվեցին. 4 տարի հետո էլ հողին հանձնեցինք 24-ամյա որդուս՝ Վովային, և 6-րդ եղբորս՝ Թևոսին: Մորս օջախը տեղափոխվեց գերեզմանատուն... Հիմա, գրկված հայրենի հողից ու հարազատ օջախից, հենավոր Ամերիկայում երանի եմ տալիս այն օրերին, երբ իմ հարազատների ու թանկագին հարևանների հետ ամեն ազիվ օր այցի էի գնում գերեզմանոց: Այդքան դժբախտություններից հետո էլ 1992 թ. մարտին մեր սեփական հողամասում աշխատելու ժամանակ ունեցանք մի քանի օր անուսինս՝ պատերազմի վետերան՝ Շմավոն Դիվանյանը:

Մինչև հիմա հույս ունեի, որ կվերադառնանք մեր հողերը, նորից այցի կգնանք մեր սուրբ շիրմներին, քայց վերջերս բերեցին, մեզ մոտ ցույց տվեցին աղբջեղանցիների կողմից գրավված ու ավերված Շահումյանը պատկերող մի կասետ: Նայելուց հետո վատ զգացի. իմ անմահ Շահումյանն անասող երկիքը էր դարձել, մոռալ ամպերն էին թափառում նրա երկնքում: Ամբողջ աշխարհում ցրված իմ շահումյանցիներ, ինչ էլ լինի, մեր հույսը չպիտի կորենք, Շահումյանը կապատվի: Մենք էթ շտենանք էլ, մեր գավակներն ու թոսները կտեսնեն: Դրա համար պետք է նրանց դաստիարակենք առողջ մարմնով, արթուն մտքով ու ազնիվ հոգով:

**ՈՍԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ. ԱՄՆ. Մակրանենատ**

Խմբ. կողմից: Հողվածը նվիրում ենք բոլոր որդեկորույս մայրերին և հրապարակում ենք որպես հույսի ու հավատի կոչ՝ ուղղված մեր հայրենակիցներին: Իր կորուստների սուրբ հիշատակին Ոսկի Դանիելյանն ուղարկել է 50 դոլար՝ որպես աջակցություն «Օջախի գրքի» ստեղծմանը:

**ԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ՝ ՄԵՐ ՆՈՐ ՀՐԶԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ռուսաստանի Նովոուգոնսկ քաղաքից Էրիկա Դանիելյանը թերթում գրել էր, որ ուզում է նորություններ իմանալ մեր նոր ստեղծված շրջանի մասին: Նախ ասեմ, որ այնքան էլ նոր չէ: Այս նոր շրջանը շատ մոտ է մեր կողմերին: Օղը, ջուրը, սարից բխող աղբյուրները, գետը, սարերը, ձորերը մերին շատ նման են, եկեք, հավաքվենք այստեղ, այստեղից էլ կգնանք կիսաններ մեր Զարահունցը: Այնտեղից էլ մեր գյուղամեջը, մեր հուշարձանը, մեր սուրբ գերեզմանները:

Նոր շրջանը 1994 թ. է ստեղծվել: Այս նոր շրջանի ասիանների մեջ մտնում են և՛ մեր բուն հայրենի շրջանը, և՛ նրան կից որոշ տարածքներ. որտեղ հավաքվում, համախմբված ձևով վերաբնակություն են հաստատում մեր հայրենակիցները՝ Ականաբերդից (մախկին Ռեմոնոլու) մինչև Քարվաճառ (որին թուրքերը Զեքաջար էին ասում):

Շրջանում արդեն 12 գործող համայնք կա՝ իրենց գյուղապետարանով, դպրոցով: Բնակելի տներ են կառուցվում նաև նորաստեղծ Ղարաչինար և Մանաշիղ գյուղերում, որոնք նույնպես շուտով կբնակեցվեն, կավելանա գործող համայնքների թիվը:

Թանկագին Էրիկա, իմ ընկերուհի Նունիկի և իմ ընկեր Սուրենի աղջիկ, քեզ երևի ավելի շատ տեղեկություններ կհետաքրքրեն Վերին Շենի հետ կապված: Մեր գյուղի անունը այստեղ կենդանացնում ենք: Վերին Շեն անունով գյուղ է կառուցվում: Մեծ բլով վերինշենացիներ կան այստեղ. շատերը հենց մեր Թռածին կիրոխ թաղից՝ Այդինյան Ռուբինն ու Էլզան՝ իրենց երկու տղայի հետ, այստեղ են մեր ընկեր Միրուսին և իր ամուսին Ռանտիկը, այստեղ է մեր ջոկատի հրամանատար Նովիկ Գյուլումյանը՝ իր ընտանիքով, Ռեգեբը, Գոհարը, Ասյան, Գիշոն՝ իրենց գերդաստանով, մեր թաղից Փեդոն, Էլոն՝ ընտանիքով, Սերոժը, Զիրոն, Մարտիկը, Նայոն, Չատին Կամոն ընտանիքով, Դակլաղ Կոլին, Բոչարովին Միշիկը, Ազունց Էդիկը, Գոհարը:

**ԼՈՒՍԻԿ ԶԻՒՆԿԱՐՅԱՆ. ԼՂ. Քարվաճառ**

**ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԵՆ**

Խմբագրության ուղարկած այբբենարաններն ստացել ենք: Դավիթ թոռնիկս կամայ-կամայ գրում, կարդում է հայերեն: Նստում, սովորեցնում են և ուրախանում: Մյուս թոռներս՝ Մյուզաննան, Սասունը, Անդրանիկը, մի թիչ հեռու են ինձմից, նրանք էլ քիչ-քիչ սովորում են, արդեն կարողանում են հայերեն գրել իրենց անունը, ազգանունը:

**ՌԱՅԻՍԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ. Մոսկվա**

**ԳԱՐՆԱՆ ՀՈՒՅՁԵՐ**

*Մեր կամենդանր Չոյա Պավլովնան հանդիպեց ու հարցրեց. «Ну, как Вы?» Ասացի. «Легче умереть, чем такая жизнь»: Ասաց. «Зачем умереть, скоро весна!» Պարասիխանեցի. «У нас больше нет весны, наша весна осталась там, на нашей Родине»: Ասացի ու էլ չկարողացա շարունակել. արթաավելով միայն մեր րուն ու սկսեցի գրել.*

Գարունը կգա, հավքերը կգան, իմ տանջված սրտին էլ գարուն չկա: Գարունը կգա ծաղիկների հետ, իմ ծաղիկները կորել են անհետ: Գարունը կգա, իմ այգու միջին Նորից կբացվեն վարդ-մանուշակը, Նորից կծաղկի իմ փշատենիս, Ա՛խ, բաց չեմ անի իմ պատուհանը Ո՛ր էլ չեմ շնչի նրանց բուրմունքը: Երկար կսպասես մեր ծաղիկները իրենց տերերին,



Շատ սպասելուց ցողերի տեղը արցունք կլցվի,  
 Կարմիր-կապույտի, սպիտակի տեղը  
 Սևեր կհագնեն մեր ծաղիկները, կթռչեն-կորչեն ...  
 Նրանք կկորչեն այնտեղ, մեր գյուղում,  
 Իսկ մենք էլ այստեղ, օտարի հողում ...  
 Իմ խեղճ ու գերված դրախտի այգի,  
 Թուրքի ոտքի տակ տրորված այգի,  
 Հավերժ կմնանք մենք իրար կարոտ:  
 Բայց լավ իմացիր, երբ որ կփչի քնքույշ մի քամի,  
 Որ ամռան շոգին քեզ քիչ հով անի,  
 Երբ տերևներդ մեղմ կսվսվան,  
 Իսկ քամին շուրջդ պտույտներ կանի,  
 Մեռած կլինեմ ես, թե կենդանի,  
 Դու լավ իմացիր, իմ հոգին է այդ,  
 Որ գլխիդ վերև պտույտներ անում,  
 Բայց, ախ, ցած իջնել չի կարենում ....

*ՔՆԱՐԻԿ ԲԱԼՅԱՆ. Սարառով*



Լուսանկարում արշավ դեպի Մոսկի գագար, 1962 թ., հուլիսին: Չախից երրորդը (վերևում) շրջանային թերթի նախկին աշխատակից, տաղանդավոր բանաստեղծ և լրագրող Վլադիմիր Ավագյանն է, որն անջնջելի հետք թողեց շրջանի հոգևոր կյանքում (ավա՛ղ, կյանքն ընդհատվեց ողբերգական ձևով երիտասարդ հասակում):

## ԵՐԱՆԻ

Երանի թևեր ունենայի,  
 Թռչե՛ի, Մանաշիդ հասնե՛ի,  
 Մեր գերեզմաններին այցի գնայի,  
 Վերջին համբույրս քարերին տայի:

Մեր ձեռքով կառուցած տունը տեսնե՛ի,  
 Ծնկաչոք, լացով դռնից ներս մտնե՛ի,  
 Համբույրներով տան պատերը ողողե՛ի,  
 Կյանքիս մայրամուտին կարոտս առնե՛ի:

*Ռ.ԻՄԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. Կրասնոդար*

## ՍՊԱՍՈՒՄ

Մնացել եմ հեռու մթնում  
 Մեր հայրենի հողն ու ջուրը,  
 Անտառների կանաչ գույնը,  
 Մռավ սարի մաքուր ձյունը,  
 Այգիների առավոտվա սառը շաղը,  
 Թոնիրներից ու տներից ելնող ծուխը,  
 Երեկոյան գյուղը մտնող  
 Գառ-ոչխարի անուշ ձայնը:  
 Չորացել եմ, վերացել եմ ու էլ չկան  
 Մեր պապերի ձեռքով տնկված,  
 Մրգով բեռնված այգիները,  
 Գյուղամիջյան մեծ ծառերը,  
 Անուշահամ սև խաղողը,  
 Գինով լցված տակառները,  
 Մեր տատերի ձեռքով սարքված  
 Տեսակ-տեսակ ուտեստները,  
 Մեր գյուղերի ջահելները,  
 Համով-հոտով խոսողները,  
 Վարող, ցանող մշակները,  
 Գինի-օղի սարքողները:  
 Երազ դարձան աղաթները,  
 Հարսանիքներն ու տոները,  
 Դիու-գուռնի քաղցր ձայնը,  
 Պապ-տատերի ծիծաղ-պարը,  
 Մեր գյուղերը, մեր տները,  
 Բարձր խոսող մեր պապերը,  
 Հարևանի լավը ուզող,  
 Միշտ ժպտերես մեր տատերը:

Սպասում են ամառ-ձմեռ  
Օտար բառեր արդեն լսող,  
Առանց ծաղկի ու խնամքի,  
Անտեր դարձած շիրիմները,  
Արծիվները ու հավքերը,  
Մռավ սարի ու Զյափազի  
Լանջից բխող, գյուղեր հասնող  
Սառը գետ ու աղբյուրները...  
Հազարներով մի ժողովուրդ,  
Դառն արցունքը աչքին կպած,  
Չի համբերում, վռագում է՝  
Տեսնի օջախն իր կարոտած...

*ՌՌԲԵՐՏ ԱՎԱԳԹԱՆ. Երևան*

## ԻՆՁ ԻՆՁ ՄՆԱՑ

Տարիքն էսպես ոլոր մոլոր անցավ, գնաց,  
Չարդ տանեմ, հոգուդ մեռնեմ, ցավդ տանեմ,  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Կյանքս արդեն կամաց-կամաց վերջին հասավ,  
Արծիվ դարձավ, թռավ, գնաց, ցավդ տանեմ,  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Հայրս, մայրս, տատս, պապս, իմ անցյալս  
Չերեզմանում թուրքի ձեռքին գերի մնաց,  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Ազգ, բարեկամ, հայ ժողովուրդ, փախավ, գնաց,  
Չփախչողն էլ թուրքի ձեռքին տանջամահով գերի մնաց:  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Հայրենիքս, հարևանս, միջավայրս, ցավդ տանեմ,  
Թուրքի ձեռքին գերի մնաց:  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Բաղս-բախսան, տունս-տեղս, աշխատանքս  
Թուրքի ձեռքին գերի մնաց, ցավդ տանեմ:  
Պատմիր տեսնեմ՝ էս աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

Վիրավորը թուրքի ձեռքում անբույժ մնաց,  
Նրա ձեռքով սպանվածն էլ գերեզմանի հասրաթ մնաց:  
Ցավդ տանեմ, հոգուդ մեռնեմ, պատմիր տեսնեմ՝  
էս անիրավ, կեղծ աշխարհքում ինձ ի՞նչ մնաց:

*ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՐԹԱՆ («Նկարչի կաշո»)  
Պյատիգորսկ*

## ԿԱՐՈՏԱԽՏ

Կեսգիշերային խավարի միջում  
Չնայած ցուրտ է, բայց ես չեմ մրսում:  
Անգին իմ լեռներ ու Մռավա սար,  
Ձեր շուրջը ապրած իմ ժողովրդի  
Բարի գործերն ու խոսքերն եմ հիշում,  
Սիրտս թմրում է, տեղից վեր թռչում ...  
«Մռավի ղողանջ» թերթերը շուրջս  
Նայում են, ժպտում, հետս զրուցում,  
Պատմում ու պատմում ...

Կա՛ր արդյոք երկիր այս մուլորակում,  
Մի վայր, մի անկյուն,  
Որ դաժան բախտի չար ուղիներում,  
Ամեն մի ծայրում ապաստան գտած  
Իմ շահումյանցիք

Սրտի թրթիռով ձեզ չեն սպասում:  
Գիտե՛ք, թե արդյոք քանի՛-քանի՛սը  
Մահվան անկողնում, որպես սուրբ Նշխար,  
Իմ Մռավա սար, այդ քո ղողանջն են  
Գրկում, համբուրում ...

Իսկ քո էջերին՝ դեղնած, խունացած,  
Նոր արցունքներ են միշտ ավելանում:  
Կարոտ անվանենք մենք արցունքներն այդ  
Ո՛ր զգացումը՝ մեզ համար գուցե առաջ քիչ ծանոթ  
Մի բառով կոչենք՝ տանջող *կարոտախտ*:  
Քանի՛-քանի՛սը կրակից փախան Մազե կամուրջով,  
Մահվան աչքերին ինչքան նայեցին, բայց չմահացան ...

Իսկ հիմա, ահա՛, «Ղողանջը Մռավի» կարոտախտն է,  
Որ տանում է նրանց, շատ ու շատերին,  
Ու «Ղողանջի» մեջ՝ «Ղողանջ կրոստյան» ...  
Իմ շատ սիրելի, օ՛ր, անգին մարդիկ,  
Սպասե՛ք, ապրե՛ք ...

Եկեք հավատանք, որ ինչքան երկար լինի ձմեռը,  
Փարունը, մեկ է, մի օր գալու է:  
«Մռավի ղողանջներ» հրաշք բալասան,  
Շատերի համար այս կյանքին կապող  
Միակ դեղ, դարման,  
Ղողանջիր միշտ էլ, հասիր բոլորին,  
Մինչև որ տեսնենք ...

*ՎԱՐՅԱ ԽԱՉԱՏՐԹԱՆ. Երևան*



# ՈՐՏԵՂ ԵՍ, ԱՐՏԱԿ ...

... Շրջանի անենածանր օրերին մեզ հետ մեր դաժան ճակատագիրն էր կիսում բոլորիս համար շատ սիրելի դարձած բժիշկ Արտակը (թող մերի, ազգամուկը մոռացել եմ): Իր երիտասարդ տարիքին անհամապատասխան զուսպ, գիտակ ու բարի խորհրդալուու: 9-ամյա տղային՝ Մինասի գլխին ուռուցք էր առաջացել, վերք դարձել, իսկ նա չէր ուզում մույնիսկ, որ բժշկի տամենք: Բժիշկ Արտակն այնպես համոզեց երեխային, հանգստացրեց: Հետո էլ վիրահատեց և մոտ մեկ ամիս անձամբ էր վիրակապում, մտերմիկ գրուցում: Նրանք այնպես էին մտերմացել, որ փոքրիկ Մինասս ամեն տեղ ասում էր՝ բժիշկ Արտակն իմ ընկերն է: Իսկ երբ տեսնում էր բժշկին ֆիզալական հագուստով, հիանում էր, ասում էր՝ մամ, որ մեծամամ, ես էլ եմ Արտակի նման դառնալու: Տուն վերադառնալուց հետո քրոջն ու եղբորը ժամերով պատմում էր, թե բժշկի հետ ինչ են խոսել, ինչպես են խաղացել: Բացի այդ, ինչ լավ բան կար, ուզում էր տալ Արտակին: Մի անգամ էլ իր փոքրիկ խաղալիք տանկը, որը շատ էր սիրում, վերցրեց, ասաց՝ տանելու եմ տան բժշկին: Մենք ծիծաղեցինք, իսկ երեխան համառոտ, թե՛ չէ, էս տանկը տալու եմ Արտակին:

Այդ տանկի վրա մանր տառերով գրեցինք՝ «Հաղթամակի թախման», ասացինք՝ դե, որ շատ ես ուզում, տալ, տուր իրեն: Մի փոքրիկ էլ ուտանավոր գրեցի, երեխային սովորեցրի, որ արտասանի:

Հիշո՞ւմ ես, Արտակ, ինչպես էր հուզված արտասանում Մինասը: Դու էլ հուզվեցիր, աչքերդ լցվեցին: Վերցրիր տանկը և երդվելու նման լրջորեն ասացիր՝ անպայման կհաղթեմք, մեզ մի տանկ էլ ավելացավ: Ասացիր և աճուր սեղմեցիր երեխային ձեռքը: Մինչև հիմա էլ երբ որևէ տեղ ձեռքսեղմում եմ տեսնում, տասը տարի առաջվա այդ պահն եմ հիշում. դու՝ բոյով-բուսաթով, վճռական ու անվեհեր, և իմ երեխան՝ գունատ ու նիհար, գլուխը փաթաթած ... Հիմա, փառք Աստծո, երեխաս ինքն էլ թեզ նման բոյով-բուսաթով է և քո լավագույն գծերից, որ այնպես տպավորվել էին նրա մեջ, Աստված նրան էլ է տվել:

Շնորհակալություն, թանկագին Արտակ, որդուս բուժելու և վսեմ օրինակ ծառայելու համար: Միշտ հիշում եմ քեզ: Քո անունը կրկնակի թանկ է մեզ համար, որովհետև եղբայրս էլ, որ այդ անունն էր կրում, ավտովթարից գոհվել է 1990 թ.: Համոզված եմք, որ կարճագանձես այս նամակին: Համոզված եմք, որ այն թախման տանկի հետ նորանոր հաղթությունների ես հասնում կյանքում: Կուզենայինք իմանալ քո հասցեն ...

**ՆԱՐԳԻԶ ՇԱԽՅԱՆ**  
*Կրամնոդարի երկրամաս, ք. Արմավիր*

Խնք. կողմից: Գարգելի Լարգիզ և Մինաս, այս նամակը նորից տակնուվրա արեց մեր հոգին: Կարելի է անվերջ ու անվերջ պատասխան գրել, բայց ... Խորին ցավով միայն մեկ սուրբ բառով գրում եմք բժիշկ Արտակի հասցեն՝ «Եռաբլուր» ... Շահումյանի շրջանի անկումից հետո Արտակ Վլադիմիրի Խաչատրյանը մտավ պարտիզանական ջոկատի մեջ, անձնուրաց կերպով կռվեց որպես ազատամարտիկ, անձնագրոր ծառայեց որպես բժիշկ և ... 1993 թ. ապրիլի 17-ին գոհվեց հանուն հայ հողի ազատագրման: Պատմական արցախյան այն տարածքները, որտեղ վարչական նոր սահմաններով Շահումյանի նոր շրջան է կառուցվում, ազատագրվել են Արտակի և նրա ընկերների արյան գնով: Եվ վերածնվող հայ հողի հետ հավիտյան կապի նրանց անունը:

# ՄԵՐ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ

Այսօրվա իմաստով ազգամուկը, որ անպայման պետք է կրի պետությունից յուրաքանչյուր քաղաքացի, հայերիս մոտ չհավորվել է 19-րդ դարում, զանգվածային չեղով՝ դարի վերջերից: Սկզբում ազնվական բարձր խավի, խաշոք բուրժուազիայի, առևտրա-վաճառականական դասի ներկայացուցիչները, մշակույթի գործիչները, հեգրո, ասպիճանաբար, հասարակության մյուս խավերն են «չեղք բերել» ազգամուկ: Եվրոպական երկրներում այդ պրոցեսն ընթացել է դրամից քիչ ավելի վաղ, մյուս ժողովուրդների մոտ՝ շատ ավելի ուշ՝ ընդհուպ մինչև վերջին պատմաճակները: Ասենք, որ որոշ ժողովուրդներ հնում մույնիսկ հստակ անվանում չուներին, դազախները, օրինակ, խորհրդային կանգերից առաջ կիրգիզներ էին կոչվում: «Աղբբեջանցի» բառը հորինվել է 1930 թվից հետո, իսկ դրանից առաջ այդ փարսաձքի մահմեդական բնակչությունը, կազմված էթնիկական փարբեր զանգվածներից, անվանվում էր թաթ, թաթար, պարսկական թուրք և այլ չևերով, որովհետև չէր ներկայացնում մեկ էթնոս: Ասպիճանաբար նրանց մեջ իշխող դարձավ թուրքալեզու փարբը, և հանրապետության անունով բոլորն սկսեցին կոչվել աղբբեջանցիներ: Այդ ժողովուրդն ինքն իրեն ուղղակի «մուսուլման» է ասում մինչև հիմա:

Ազգանվան հասարակական բովանդակությունը շատ ավելի ծավալուն է, քան անվանը: Նորածնին անվանակոչելը կապված է միայն նրա ծնողների (երբեմն նաև մերձավորների) հետ: Ընդ որում, չափափաս դառնալուց հետո անհատը կարող է փոխել իր անունը, պաշտոնապես ընդունել այլ ավելի բարեհունչ կամ պարզապես իրեն դուր եկած անուն: Ազգանունն այդպես չի կարող ըմբռնվել, նրանում արտահայտվում է փոխյալ անհատի արյունակցական կապն իր գոհմակիցների ու նախնիների հետ: Նույնիսկ այն բացատրիկ դեպքերում, երբ այնուայն պարճառներով միևնույն փոհմից ճյուղավորվում է նոր ազգանուն հող, պատկի կամ մեկ ուրիշ հարավապի (նախնու) անունով, անպայման հաշվի է առնվում փոխյալ անհատի հասարակական դիրքը, ճանաչումը: Այդ է պարճառը, որ մույնիսկ բացահայտ անբարեխուհի ազգամուկը եզակի դեպքերում է փոխվում:

\* В. А. Николов, Имя и общество, Москва, 1974, с. 93.

Մեր ժողովրդի մոտ հնում ընդունված է եղել անվան հետ նշել փոհմանունը՝ այն էլ միայն բարձր իշխանավորներից: Անվան հետ հաճախ նշվել է, թե ում որդին է, մաս՝ հոր հայրը, փրկողը, արհեստը, զբաղմունքը՝ մայած թե փվալ մարդը ինչ դիրք էր գրավում հասարակության մեջ: Ցածր խավի համար նշվում էր միայն անունը, հաճախ աղճատված չևով, նույնիսկ միայն մականունը: Կանանց համար այդ էլ չէր լինում: Մեզանում ամուսինն էլ չէր կնոջ անունը փալիս, այլ ասում էր՝ մեր կնեկը, են հարսը կամ կանչում էր՝ ախճի, Շփվեանց՝ աղջիկ կամ՝ Մայիլին աղջիկ և այլն (դա կապված էր նաև նահապետական սովորությունների, նույնիսկ որոշ հավատալիքների հետ): Խորհրդային կարգերի ժամանակ, երբ կինն սկսել է մասնակցել հասարակական կյանքին, դպրոցը, աշխատանքը, ընկերությունը և այլն սփայել են, որ պաշտոնապես գործածվի անուն-ազգանուն-հայրանունը, բայց կենցաղում այն դեռ չէր ամրացել: Ի դեպ, հարս բառը մեր բարբառում դարձել է ազի: Նույն փամ հարսներից իրարից ջոկելու համար ասել են՝ մեծ ազի, կուճուր ազի, չմայած այդ «կուճուր ազին» կարող էր 70–80 փարեկան լինել:

Ուշագրավ է, որ հնում իրենցից ավելի բարձր դասի ներկայացուցչին, մանավանդ թագավորին կամ կայսրին դիմելիս, չէր նշվում դիմողի փոհմանունը, անունն էլ հաճախ նվաստ չևով էր գրվում: Ռուսաստանում խոշոր բոյարը, որից հպարտակները սարսափում էին, ցարին դիմում էր, օրինակ՝ «քո խոլուպ Վասկա» ողորմելի չևով: Գյուլիստանի փառավոր մելիք Եսային 1723 թ. Պետրոս Առաջինին գրած նամակում իր մասին նշում է՝ «Ես ծառայից ծառա Եսայիս»: Իսկ նույն մելիքի հեռավոր շառավիղի մասին հայրենի գյուղում, ընդհակառակը, փառավոր չևով գրվել է. «Այս է փուպան Բեգլար բեգին, որ է որդի մելիք Փրիդոնին, թոռն քաջ մելիք Բեգլարին, հայոց իշխան Ղարաբաղին, փիրապետող Գուլուստանին»:

Անհատի անվանման չևերը հնում միջոց են եղել ցույց փալու նրա դիրքը հասարակության մեջ, նրա արմատները, ուժը և այլն: Իսկ այժմ ազգանունը պարտադիր է յուրաքանչյուր կոնկրետ անհատին ճանաչելու, հասարակության կյանքը լիարժեք կազմակերպելու համար: Պետության մեջ յուրաքանչյուրը կրում է պաշտոնապես ճանաչված ազգանուն, անուն և հայրանուն: Այնուամենայնիվ, առօրյայում որոշ մարդկանց միայն անունով են դիմում, ոմանց՝ ազգանունով, ոմանց էլ՝ անուն-հայրանունով, մայած, թե շրջապատին ինչպես է ընդունում, գնահատում նրան: Նույն այդ պատճառով որոշ մարդկանց նույնիսկ անունով չեն դիմում, այլ ըղունված մականունով կամ անվան աղճատված (կրճատված) չևով:

Քաղաքացու անվանման եռասփիճան չևը (ազգանուն, անուն, հայրա-

նուն), որ ընդունված է Հայաստանում, ներկայումս բնորոշ է աշխարհի երկրների թերևս մեծ մասին: Առանձին երկրներում, որպես պաշտոնապես ճանաչված է բազմակնությունը, հայրանունից բացի փաստաթղթերի մեջ նշվում է նաև մոր անունը: Որոշ ժողովուրդների մոտ էլ, որպեսզի հնում փոհմանվան գաղափար չի եղել, այլ ճանաչվել է միայն հոր անունը, զանգվածային անձնագրավորման ընթացքում հայրանունը դարձվել է ազգանվան հիմք, և մարդիկ կրում էին միայն ազգանուն և անուն (միջինասիական ժողովուրդները): Հայաստանի Հանրապետությունում նոր անձնագիր ընդունելու ժամանակ փորձ արվեց հրաժարվել հայրանունը նշելուց, բայց դա լայն դժգոհություն առաջ բերեց, և հայրանունը շարունակվեց նշվել:

Արժե հիշել, որ զանգվածային անձնագրավորման ժամանակ երբեմն նույն գերդաստանի եղբայրների անունները հիմք են դարձել իրենց զավակների ազգանունների համար: Այդ չևով նույն գերդաստանի ճյուղերն իրարից որոշ իմաստով հեռացել են, բայց համագյուղացիները շարունակել են բոլորին կոչել նախկին փոհմանունով: Այսպես, Մանաշիդում Իրիցանը դարձել են Գալստյաններ և Առստանյաններ: Որպես կանոն ազգանվան հիմք է դառնում փղամարդու անունը: Միայն եզակի դեպքերում է կնոջ անունը ազգանվան հիմք դարձել. երբ այդ կինը աչքի է ընկել իր բարձր արժանիքներով կամ վաղուց զրկված է եղել ամուսնուց, զավակները նրա անունով են ճանաչվել: Օրինակ՝ Մարյանյաններ, Հասմիկյաններ, Թարմինյաններ և այլն:

Արժե նշել նաև այսպիսի հանգամանք: Հոռեկում, օրինակ, Գյուլիստանի մելիքների 19-րդ դարի փոհմական գերեզմանոցում կարելի է կարդալ՝ «գնդապետ Ծամիրխան Փրիդոնեան մելիք Բեգլարեան ի ցեղեն փիրապետ մելիքաց Գյուլիստանի»: Տվյալ դեպքում ո՛չ Փրիդոնեանը, ո՛չ էլ Բեգլարեանը ազգանուն չեն, զրվածը սուսկ նշանակում է, որ Ծամիրխանը Փրիդոնի որդին էր, մա էլ՝ Բեգլարի որդին: Հնում հայրանունը նշվում էր «յան» վերջավորությամբ կամ պարզապես «որդի Փրիդոնի» չևով: Իսկ ահա 20-րդ դարի սկզբներից պահպանված մի արձանագրության մեջ նշված Սոլոմոն բեգ Մելիք-Բեգլարեան որդի մելիք Հովսեփի թոռն մելիք Փրիդոնի... անվանվան մեջ Մելիք-Բեգլարեանն ազգանուն է:

Մեր լեռնաշխարհի կյանքի մասին ուշագրավ նյութ են փալիս Ծահույանի գյուղերում փարածված ազգանունները: Որպես կանոն, ազգանվան համար հիմք է ծառայում նախնիներից մեկի անունը՝ վերջից ավելացնելով յան (ենց, ունց, անց) մասնիկը. աչքի ընկած մեկի անունով կոչում են նրա ժառանգներին՝ Սաքի (Սարգիս) Մաքունց, Պողոս Պողոսանց և այլն: Մեզանում փարածված են հին հայկական ու ավերաբանական անունները և դրանցից կազմված ազգանունները՝ Առաքելյան, Վարդանյան, Մնացական-



յան, Արրահամյան, Պեպրոսյան, Հարությունյան, Սարգսյան, Պողոսյան, Սիմոնյան, Սովսիսյան և այլն:

Շար հաճախ ազգանունը կազմվում է որևէ արհեստի անվանումից, որը բնորոշ է լինում փվյալ փոհմի համար: Արհեստը սովորաբար անցել է հորից որդի, և այդ փոհմն էլ համազրուդայիների կողմից անվանվել է այդպես՝ *Նալբանդանք, Տերունք, Ղլեչունք, Պրոսրանք* (քրուս բառից), *Չարգարանք* և այլն: Մեր գյուղերի գերեզմանոցներում կան բազմաթիվ հուշարձաններ՝ փարբեր արհեստների հիշատակումով: Ներքին Շենի հին գերեզմանոցում կարելի է կարդալ այսպիսի արձանագրություններ՝

ա) «Այս է փապան դալբաբ Հարությունի որդի Ղազարին թվ. ՌՄԳ (1848)»:

բ) «Այս է փապան ոսփա Սարքիսին, որ է որդի Ներսեսանք Սահակին փ. 1873 թ.» (այս «ուսփա Սարքիսը» Ներքին Շենում և շրջակա գյուղերում հայտնի բրուս է եղել):

գ) «Այս է փապան Արրահամին, որ է որդի Նալբանդանք Սուսանին...»:

դ) Հին Պարիսի գերեզմանոցում «Այս է փապան փերգիկ (դերձակ) ...-ի» և այլն:

Տարբեր գյուղերում կան *Նալբանդաններ, մալբանդը պայտագործն է*: Կան *Դալլաքյաններ՝ դալլաքը վարսավիրն է*, որը հնում նաև որոշ բժշկություն է արել: Կան *Ղլեչյաններ (ղլեչի կաթասներ կլայեկող)*: Կան *Գողյաններ (քուրդ զգելու արհեստը)*: *Մեղրյաններ*՝ ինքնին հասկանալի է, որ մեղվաբուծության հետ է կապված: *Չարգարյաններ. զարգարը արծաթագործ, ոսկերչի վարպետն էր*: *Բաղմանյաններ՝ այգեգործության* հետ է կապված, *Սառայյաններ՝ սառայ անվանում էին անասունների առուվաճառքով զբաղվողներին*: Կան *Բոյախյաններ (Բոյախունք)*, որը կապված է ներկարարի արհեստի հետ: Սեզ մոտ կա սակավ հանդիպող ազգանուն՝ *Չախմասագյան* (ճիշտ չևը կլիներ *Չախմախասագյան*): 16–18-րդ դարերում մեր լեռնաշխարհում ամենակարևոր արհեստներից է եղել *չախմախով (կայծքարով) հրաքան սարքելը* («սազ անելը»), որովհետև ընդերքը հարուստ է զանազան մեքուղներով: Առաք էր նաև վառողը, իսկ զենքի պահանջը մեծ է եղել: Նույնիսկ կան փեղեկություններ այն մասին, որ Պեպրոս Առաջինի ժամանակներից սկսած մեր մեղքները որոշ չափով վեճք են մատակարարել ռուսական բանակին: Բայց հետագայում չախմախով հրաքանները գործածությունից դուրս են եկել, արհեստը վերացել է, դրա համար էլ այդ ազգանունը հազվագյուտ է դարձել:

Ազգանունների մի խումբ կապված է փիփղոսի, պաշտոնի հետ: Դրանցից են՝ *Բեզունց (Բեզյան, Բայունց)*, այսպես կոչում են *բեկական փոհմի*

*չառավիղներին, Բոխյան (քոխան գյուղապետն էր), Գգիրյան (զգիր, կափարածու), Աերին Շենում կա նաև Կզրիսաբունց*: Կա *Դիվանյան (դիվանը դատարան, վերադաս մարմին էր նշանակում)*: Ղարաչինարում կա *Վեքիլյան (վեքիլը որևէ բարձրաստիճան իշխանավորի պատվիրակն էր կամ վրափակված անչը)*: Ներքին Շենում կա *Բաբուրյան (քաբուրը գյուղերում հողաչափություն կատարողն էր)*:

Տարածված են հարկապես *եկեղեցական պաշտոնների հետ կապված* ազգանունները՝ *Եպիսկոպոսյան, Տերունք* կամ *Տերյան* (սովորաբար այդպես էր կոչվում փերպերի փոհմը), *Երիցյան* կամ *Իրիցանք*: Կա նաև *Շամհարանք (ժամհարը եկեղեցու զանգերը խփողն է)*: Պաշտոնից է ծագել նաև *Յուզբաշյան* ազգանունը (*յուզբաշի՝ հարյուրապետ*): Իսկ ահա *Մեյլիքյան* ազգանունը ոչ թե պաշտոնից, այլ հատուկ անունից է ստեղծվել, որն իր հերթին *մեյլքի պաշտոնի* (փիփղոսի) հետ է կապված: Մեյլիքական փոհմի ժառանգները գրվում են այս չևով՝ *Մեյլք-Բեզլարյան, Մեյլք-Օհանջանյան, Մեյլք-Եզանյան* և այլն:

*Ազգանունների մի մասը պարզապես մականուն է եղել*: Օրինակ՝ *Ճաղարյան (կապույտ աչքեր ունեցողին ճաղար են ասում), Խաթայաններ (խաթա անվանում են վրանգ, փորձյանք բերող մարդուն)*: Կան *Ղարագաղյաններ՝ դարա (սև) գյաղա անվանումից*, որը հավանաբար եղել է մականուն:

Սեզանում հանդիպում են *Բաղայան, Հայրյան*, (նաև՝ *Հայրիկյան*), *Պապիկյան*: Դրանք կարող են կազմված լինել հետևյալ ճանապարհով: Ավանդաբար հոր (երբեմն նաև այլ հարազատի) մահից հետո, երբ ծնվում է զավակ, նրան անվանում են *Բաղալ (բեղալ, փոխարեն)*, այսինքն՝ *համզույսյանի փոխարինող*: Նույն չևով՝ հոր մահից հետո ծնվածին՝ Հայրիկ: Բայց դա կարող է լինել նաև անուն, երբ, ասենք, Պապիկ անունով մեկի փղան հոր պատվին իր նորածնին անվանակոչում է Պապիկ:

Մեր շրջանում փարածված են *Սիմյան, Վելյան, Խիդիրյան, Բլանանք, Չիրքիմյան* և այլ ազգանուններ, որոնք չեն հանդիպում այլ շրջաններում: Բոլորի ստույգ բացատրությունը դժվար է գտնել: *Սիմ-ը* կարող է *Գերասիմ* կամ նման այլ *անձնանունի վերջին մասից կազմված լինել* (մեր բարբառում *սիմ-ը բարակ լար է նշանակում*, բայց դժվարանում ենք որևէ կապ տեսնել այդ իմաստի հետ): Բոլոր դեպքերում եղել է *Սիմի* անուն, որով կոչվել են *Սիմյանները*: *Վելյան* ազգանունը կարող է կապվել *Առավելյան հին հայկական մախարարական փոհմի* անվան հետ: Ինչպես հայտնի է, որոշ բարդ անձնանուններ երբեմն կիսվում են, առանձին-առանձին գործածվում, օրինակ, *Ասրվածաբուր* անվան վերջին մասն առանձնացվել, դարձել է առանձին

անուն՝ *Ճարտար* (այդպետից էլ՝ *Ճարտարյաններ*), *Հովսեփը Սեփի* (այսպե-  
ղից՝ *Սեփյաններ*), նույն շնով *Մնացական* անունից՝ *Յական*, *Խաչապուր* ա-  
նունից՝ *Չապուր* և այլն: Նույն ճանապարհով *Առավելյան* բողոքականության կա-  
րող էր առաջանալ *Վելյան*, քանի որ *դ*-ն մեր լեզվում հնչյունափոխվում,  
դառնում է *բ*:

Ճերարքերի պատմություն ունի *Քլանանք* բողոքականությունը: Ինչպես հայփո-  
նի է, ուշ միջնադարում մեր լեռնաշխարհը մտնում էր Պարփավ-Բարդաշի  
պարսկական բեկլերբեկության կազմի մեջ: Այդ պատճառով Գյուլիստանի  
մեկիբության փարածքը կոչվել է նաև Պարփավի երկիր, որը շափ ավելի  
լայն սահմաններ է ունեցել, քան հեթազայի Շահումյանի շրջանը: Այն ունե-  
ցել է և՛ դաշտավայրային, և՛ անփառածածկ լեռնային փարածքներ: Այս վեր-  
ջին մասը կոչվել է նաև *Բարդա-բոլանի*, որովհետև *բոլը* մեր բարբառում  
*անփառ է նշանակում*, ուրեմն՝ *անփառային Բարդա*: (Ճերարքեր է, որ  
խորհրդային փարիներին էլ Շահումյանը կոչվում էր՝ Շահումյանի գյուղա-  
կան շրջան՝ Բարվի համանուն շրջանից փարբերելու համար, մի կարճ ժա-  
մանակ էլ կոչվեց Շահումյանի լեռնային շրջան): Քանի որ լեռնային փա-  
րածքի կենտրոնը, իշխանավորների նստավայրը Գյուլիստանն էր, վերջի-  
նիս ներկայացուցիչները կարող էին կոչվել *Քոլանի*, *Քլանանք* (այս անու-  
նով բռնի ենեց միայն Գյուլիստանում կա): Այս բողոքականությունը կարող է կապ-  
ված լինել նաև *քլան* (*քլան*, *կողպեք*, *փական*) պատրաստելու արհեստի  
հետ: Կարծում ենք, այսպիսի ծագումը փարփանակ չպետք է թվա, որովհետև  
ազգանունները երբեմն նույնիսկ շափ գաղթական ճանապարհով են  
գոյացել բնակչության զանգվածային անցնազրավորման ժամանակ: Քա-  
նի որ մարդիկ չեն ունեցել ազգանվան գաղափար, երբ փորձել են պարզել  
մարդու ով լինելը՝ ազգանուն գրելու համար, ճանաչված մեկը կողքից ասել է՝  
*մեր յանից է* (մեր կողմից), գրել են *Մրյան*: Նույն Մրյաններից մեկի գավա-  
կին անցնազրի փառու ժամանակ *բ*-ի պողը կարճ է գրվել, դարձել է *Մոյան*:  
Այդպես անհերթ շնով առաջացել են Մրյան և Մոյան ազգանունները:  
Այսօր *Վելյանների*, *Խիդիրյանների*, *Սիմյանների*, *Քլանանք* և այլ և այլ  
գավակներ ապաստան են գտել աշխարհի փարբեր կողմերում՝ ԼՂՀ-ի գյու-  
ղերից մինչև Սիբիրի խորքերը և հեռավոր Ամերիկա՝ իրենց հետ աշխարհով  
մեկ սփռելով մեր անցյալի թանկ վկայությունները:



**Աբովյան** *Աբով անունից, որն Աստվածապով անվան կրճատված ձևն է՝ Աստծո  
հույսով, Աստծուն ապավինած:*

**Աբրահամյան** *Աբրահամ անունից, որը եբրայերեն (հին հրեական լեզվով) նշանա-  
կում է հայր բազմություն:*

**Ադամյան** *Ադամ անունից, եբրայերեն մարդ, տղամարդ, նաև՝ հող, կարմիր:*

**Ազատյան** *Ազատ անունից, հայերեն ազատ բառից:*

**Ազարյան** *Ազարիա անունը եբրայերեն նշանակում է աստվածային օգնություն  
(իսկ ազար բառը վիշտ, նեղություն, վիրավորանք է նշանակում պարսկերեն, որով,  
կարծում ենք, անձնանուն չի կարող ստեղծված լինել):*

**Ազիզյան** *Ազիզ անունից, որ արաբերեն նշանակում է փառավոր, վեհաշուք:*

**Ադրյան** *Ազարյան ազգանվան աղճատված ձևն է (Ազրունց):*

**Աթաբեկյան** *Աթաբեկ անունից, միջնադարում քաղաքի հայր, քաղաքի խնա-  
մակալ պաշտոնից:*

**Արամայան** *Արամես անունից, հունարեն Աֆանասի (անմահ):*

**Արամեսյան** տե՛ս *Արամասյան*:

**Ալավերդյան (Ալլահվերդյան)** *Ալավերդի անունից (Աստվածատուր):*

**Ալեքսանյան (Ալեքյան, Ալեքսանդրյան)** *Ալեքսանդր անունից, հունարեն՝ պաշտ-  
պան, խիզախ, մարդկանց օգնող:*

**Ալեքսանյան (Ալքամյան)** *Ալեք (Ալեքսանդր) անունից՝ Ալեք ամի (Հորեղբայր):* Այս  
տոհմից են ճյուղավորվել Բուզլուխի Ղազարյանները, Հովսեփյանները, Սկր-  
տունյանները, Խաչատրյանները:

**Ախպերջանյանք** *տոհմանուն Ախպերջան անունից, պարսկերեն՝ եղբոր հույի:*

**Ախարոնյան** *Ախարոն անունից, եբրայերեն՝ լեռնաբնակ:*

**Աղիբեկյանք** *տոհմանուն, Աղիբեկ (Աղիբեկ) անունից, պարսկերեն՝ բեկի ուխտ:*

**Աղաբաբյան** *Աղաբաբ անունից, աղա՝ մեծատուն, բաբա՝ հայր (պրաբ):*

**Աղաբեկյան** *Աղաբեկ անունից (աղա և բեկ բառերից):*

**Աղալովանք (Աղալոյանք)** *տոհմանուն Աղալո անունից, որն Աղալար անվան կր-  
ճատված ձևն է (աղա բառի հոգնակին):*

**Աղամալյան** *Աղամալի անունից, աղայի ունեցվածք:*

**Աղայան** *Աղունց տոհմանունից (աղա բառից):*

**Աղաջանյան** *Աղաջան անունից, աղայի հոգյակ (պրաբ):*

**Ամիրջանյանք** *տոհմանուն, ամիր՝ իշխան, հրամայող (պրաբ):*

**Այդինյան** *Այդին անունից, լուսավոր (քրք):*

**Այվազյան** *Այվազ անունից, սպասարկող (պրաբ), խոհանոցի ծառա (քրք):*

**Անդրեսյան** *Անդրես, Անդրիաս (Անդրեյ) անունից, առնական, խիզախ (հուն):*

**Անդրանիկյանք** *տոհմանուն, Անդրանիկ կոչում են ավագ որդուն, նշանակում է  
առաջնեկ, մեծ, երեց, չպետք է շփոթել Անդրոնիկ անվան հետ, տղամարդկանց  
հաղթող (հուն):*

**Անտոնյան** *Անտոն (նաև՝ Անդրոն) անունից, մարտի մեջ մտնող, առաջնորդ, գլխա-  
վոր (լատ):*

**Աշրաֆյանք** *տոհմանուն, Աշրաֆ անունից, ամենափառավոր (պրաբ):*

**Աչիկզոզյան\*** *աշրաբաց (քրք):*

**Առաքելյան** *Առաքել (Ռաքել) անունից, որ նշանակում է ուղարկել:*

\* Մեր հողի համար իր կյանքը գոհած Միսոն Աչիկզոզյանին չենք ուզում առանձնացնել այս  
ցուցակից, այդ ազգանունից մեր շրջանում չկար:



**Առուշանյան Առուշան անունից, լուսավոր, փայլուն (պրակ):**  
**Առուստամյան (Առուստամյան) Առուստամ (Առուսամ, Ռուստամ, Ռուստոմ) անունից**  
(գետ, հեղեղ, ուժգին (պիւ)): **Ասաարյան Ասատուր (Աստվածատուր) անունից:**  
**Ասլունց տոհմանուն Ասլի անունից, ազնիվ (արաբ):**  
**Ասկարյան Ասկյար անունից, զինվոր (արաբ):**  
**Ասրյան Ասրի անունից:**  
**Ավագյան Ավագ անունից:** Հրաշյա Աճառյանը բացատրում է, որ քրիստոնեությունը ընդունումից հետո երբայերեն և հունարեն եկեղեցական անուններն սկսեցին բարգմանվել և գործածվել գուգահեռաբար. հունական Անաստասը բարգմանվեց Հարություն, Ապոստոլը Առաքել, Թեոփրոսը Աստվածատուր, Ստավրը Խաչիկ, երբայերեն Սերը՝ Մխիթար և այլն: Ստեղծվեցին նաև նոր անուններ կապված քրիստոնեական կյանքի բացատրությունների հետ՝ Համբարձում, Գալուստ, Խաչատուր, Սարգսր, Կարսպետ, Սիրտիչ, Ավետիս, Ավագ, Սրբոտիկ և այլն:  
**Ավագիմյան Ավագիմ, Հովակիմ անունից, Աստված հաստատեց, Եհովան (Աստված) հարյավ (եբր):**  
**Ավանեսյան (Հովհաննիսյան) Ավանես (Հովհաննես) անունից, տիրոջ շնորհը, աստվածաշնորհ (հին հր):**  
**Ավետիսյան (Ավետիսյան) Ավետիս (Ավետիք) անունից, բարի լուր:**  
**Արդուխանյան տես Օրդուխանյան:**  
**Արզումանյան Արզուման անունից, փափագող, կարոտ (պրակ):**  
**Արշակյան Արշակ անունից, ափսոս ձիապան (հուն.), արջի փաղաքշական անվանումը (պրակ):**  
**Արտաշեսանք, Արտաշանք տոհմանուն Արտաշես անունից, արդարությունը իշխող (հին պրակ):**  
  
**Բարսեղյան Ժագել է համապատասխան տոհմանունից, բարալի՝ հայր ունեցող (քրք):**  
**Բարսեղյան համապատասխան տոհմանունից, բարա՝ հայր, նաև՝ հարգելի, ազնիվ, պատվական (քրք):**  
**Բարաջանյան Բարաջան անունից, հոր հոգյակ, սիրելի (քրք):**  
**Բարաքոյիսյան համապատասխան տոհմանունից, բարա՝ հայր, հարգելի, պատվական և բոխա (գյուղասպետ) բառերից, կարելի է հասկանալ իբրև պատվական գյուղասպետ, գյուղասպետների հայր:**  
**Բաբոնյան համապատասխան տոհմանունից, բաբոնյի՝ համայնքի կողմից ընտրված մեկը, որը համայնքի անդամների միջև բաժանում էր հողն ըստ խզճի:**  
**Բյազունք տոհմանուն բյազ (բեզ, բեկ) բառից:**  
**Բաղայան Բաղալ անունից, փոխարեն (արաբ), որդին, որը փոխարինում է հորը, ծնվում է նրա (կամ այլ հարազատի) մահից հետո:**  
**Բալաբեկյան Բալաբեկ անունից, փոքր իշխան (քրք):**  
**Բալաղունց տոհմանուն Բալաղա անունից, փոքր աղա (քրք):**  
**Բալասանյան Բալասան անունից, անուշահոտ ծաղիկ, ինչպես և այդ ծաղկից ստացված յուղը (արաբ):**

**Բալայան Բալա անունից, մանուկ, որդի (քրք):** Շրջանում Բալայաններ կաշին Գյուլիստանում: Այդպես գրվել են *Բալա նախապապի* անունով: *Այն տոհմերից մեկն է, որոնք XVIII դ. վերջերին մեխիքի հետ չպաղրեցին, մնացին, պահպանեցին գյուղը, մինչև որ գաղթածներն էլ վերադարձան:*  
**Բալլուվանք տոհմանուն Բալլու անունից, նշանավոր, հայտնի, նաև՝ մեկը ունեցող (քրք):**  
**Բալյան համապատասխան տոհմանունից (բալ՝ մեղր), կապված մեղվապահության հետ:**  
**Բախշունք տոհմանուն Բախշի անունից, կրճատված Խուրաբախշից, աստվածատուր (պրակ):**  
**Բաղդասարյան Բաղդասար անունից, պահիր արքայի կյանքը (ասոր):**  
**Բաղունց տոհմանուն, բաղ ունեցող, գուցե նաև՝ Բաղի անունից:**  
**Բաղյան Բաղունց տոհմանունից, բերև՝ Բաղի անունից:**  
**Բալունց համապատասխան տոհմանունից, բայ (բեկ, բեյ) բառերից:**  
**Բաշարաբանք տոհմանուն, բաշարաբ՝ ափետիս (արաբ):**  
**Բաշարբյան տես Բաշարաբանք:**  
**Բարխուդարանք տոհմանուն Բարխուդար անունից, բախտավոր (պրակ):**  
**Բարսեղյան Բարսեղ (Պարսեղ) անունից, արքա, բազավոր (հուն.):**  
**Բեգիյան (Բեգյան, Բեկյան) Բեգի անունից, իշխան (քրք):**  
**Բագյան Բոզունք տոհմանունից, որը կապված է այդ տոհմի ճարդական բնորոշ գույնի հետ (գունատվածություն նման):** Կար Սնասին Շենում: Բարսեղյան դարձնելու նպատակով ոճանք գրվում են Բագյան  
**Բոյախշունք տոհմանուն արհեստի անունից, ներկարար (քրք):**  
**Բուղաղյան Բուղաղ անունից, բարունակ (քրք):**  
**Բուղղանանք տոհմանուն Բուղղան (Բոզղան) անունից, աստվածատուր (ռուս.):**  
**Բուշունք տոհմանուն բուշ բառից:**  
  
**Գալստյան Գալուստ (Կյալուստ) անունից, ակնարկվում է փրկչի գալը:**  
**Գասպարյան (Կասպարյան, Կասպարով) Գասպար անունից:**  
**Գարունք տոհմանուն Գարի (Գարեգին) անունից:**  
**Գվիրյան Կիզիրանք տոհմանունից, որը ծագում է համապատասխան պաշտոնի անունից, նույն տոհմի որոշ ճյուղեր գրվում են Կիզիրյան, իսկ մի ճյուղը՝ Գիզիրյան:**  
**Գզողյան (Կիզողանք) համապատասխան տոհմանունից, արհեստի անունից (բուրդ գզող):**  
**Գյանջունք տոհմանուն, Գանձակից՝ Գյանջայից եկած:**  
**Գյոժգյան Գյոժգի անունից: Վերին Շենում աչքի ընկած Գյոժգի պապ է եղել, որի հետ է կապված Ղարազյոյի մոտ գտնվող «Գյոժգին քար» տեղանունը:**  
**Գյորգյան Գյորգի (Գեորգի) անունից:**  
**Գյորգունք տոհմանուն Գեորգի անունից, տես Գեորգյան:**  
**Գյուլումյան տոհմանուն (ճաղկի անունից):**  
**Կյուրքունք տոհմանուն, Վրաստանից՝ Գյուրջստանից եկած, ակնարկվում է XVIII դ. վերջերին մեր տեղահանված բնակչության վերադարձը XIX դ. սկզբներին:**

**Գրիգորյան** Գրիգոր անունից, առույգ, զգոն (հուն.):  
**Գաղտնիչանք** տոհմանուն, գրվում են Բաղմանյան (Ներքին Շենուն):  
**Գուդունք** տոհմանուն, գրվում են Ավանեսյաններ:  
**Գուրգունք** տոհմանուն, գրվում են Հարությունյան (Գյուլիստան):  
**Գևորգյան** Գևորգ անունից, երկրագործ, հողագործ (հուն.):

**Դագյան, Դադո, Դադի** Թադեսու անունից, կար միայն էրբեջում: Տես **Թևոսյան**:  
**Դալաքյան** արհեստի անունից, վարսավիր, սովորաբար նաև որոշ բժշկություն էր կատարում:  
**Դանիելյան** Դանիել անունից, աստվածային դատավոր (**եբր.**, **ասոր.**):  
**Դավթյան** Դավիթ անունից, սիրեցյալ (**եբր.**):  
**Դիվանյան** համապատասխան տոհմանունից, դատարան, վերին ատյան:

**Եղիգարյան** Եղիգար անունից, հիշատակ (**սրսկ.**):  
**Եթարանք (Յթարանք)** տոհմանուն իգական անունից, հերիք, բավական (**թրք.**):  
**Եղիազարյան** Եղիազար անունից, կազմված է Աստված և օգնություն բառերից (**եբր.**):  
**Եղյան** Եղիա անունից, Աստված (**եբր.**):  
**Եսայան** Եսայի անունից, ազատել, փրկել (**եբր.**):  
**Երիցյան (Իրիցանք)** երեց բառից, ավագ, անդրանիկ որդի, բայց ազգանվան հիմքում ընկած է հոգևոր պաշտոնը՝ քահանա: Իրիցանք տոհմանուն հայտնի է տարբեր գյուղերում, որոնք գրվում են տարբեր ազգանուններով, Գյուլիստանում՝ Մովսիսյան, Սանաշիդում՝ Առստամյան և այլն:

**Զարգարյան** զարգար (ոսկերիչ) արհեստի անունից:  
**Զաքարյան (Չախարյան)** Զաքար անունից, աստվածային հիշատակ (**եբր.**):  
**Զինավորյան** Զինավոր անունից, սուրբ Սարգսի վերադիրն է, զենք կրող:  
**Զիլփունք** տոհմանուն Զիլփի անունից, խոպուպիք (**սրսկ.**), ունի վարանների իմաստը:  
**Զոհրաբյան** Զոհրաբ անունից, կարմրափայլ (**սրսկ.**):

**Թևոսյան** Թևոս (Թադևոս) անունից, գովք (**հին հր.**):  
**Թալիշանք** Թալիշ հատուկ անունից, նշանակում է անհավատ, կռապաշտ: Կա նաև Թալիշ գյուղից ծագած լինելը մատնանշող տոհմանուն՝ անսովոր հնչյունափոխումով՝ Թրշեցունց:  
**Թաթունց** տոհմանուն, ձեռքի բար, որից կան նաև Թաթիկ, Թաթուլ անուններ:  
**Թամամյան** Թամամ անունից, ամբողջական, կատարյալ (**արաբ.**):  
**Թամրազունց** տոհմանուն, Գյուլիստանում՝ մելիք Թամրազի անունից  
**Թարխանյան** Թարխան անունից, բարխաններ՝ ազատ գյուղացիներ, որոնք պարտավոր էին զենք կրել, զինվոր լինել մելիքի, խանի մոտ Վրաստանին ենթակա շրջաններում: Կարծում ենք, այս անունը ծագում է պաշտոն մատնանշող բառից, բարխան՝ բարձր աստիճանավոր Պարսկաստանում, արաբների մոտ՝ վեզիրից բարձր պաշտոնյա:  
**Թուրանք** տոհմանուն՝ կապված թուր բառի հետ (բաջ, կտրիճ իմաստով):

*նախնիները ժառանգաբար եղել են դարդա (ուտիկանապետ): Հետագայում պարսկերենի ազդեցության տակ տարածում է ստացել Ղահրաման (կտրիճ, բաջ (սրսկ.)) անունը, և այս նույն տոհմը կոչվել է Ղահրամանանք:*  
**Թունասանք** տոհմանուն Թունաս անունից, երկվորյակ (**հին հր.**):

**Ժամհարանք** տոհմանուն ժամհար բառից: Այդպիսի միայն մեկ տոհմ կար Ներքին Շենուն: Եկվոր մի միայնակ երիտասարդ գյուղի եկեղեցու ժամհարն էր, զանգերը խփողը: Ռեմ տանը նա ապրում էր, նրանց կոչեցին Ժմհարանք, բայց գրվում են Սանթրոսյան:  
**Ժեշտունք** տոհմանուն ժեշտ (թիրեղ) բառից, կապված բիթեղագործության հետ, գրվում են Արրահամյան (գուցե նաև այլ ազգանունով):

**Իբրիզանց** տոհմանուն, բերև իբրիս (սատանա, չար ոգի) մականունից:  
**Իսրայելյան** Իսրայել անունից (Աստված և կռվել բառերից՝ աստվածամարտ (**եբր.**)):

**Լալայան** Լալա անունից, խնամակալ, դաստիարակ (**սրսկ.**): Կարծում ենք՝ կապ չունի Լալա (կակաչ) կանացի անվան հետ:  
**Լաչինանք** տոհմանուն Լաչին անունից, բազե (բարաբ):

**Խալափյան** Խալափի (Խալաֆ) անունից, անուշահոտ ուռենի (**արաբ.**):  
**Խալիլանք** տոհմանուն Խալիլ անունից, բարեկամ (**արաբ.**):  
**Խանկարյան** Խանկար անունից, խսն բառի հոգնակին, ինչպես որ կա Բեզլար, Աղալար:  
**Խաչատրյան** Խաչատուր անունից (տես **Ավագյան** ազգանվան բացատրությունը):  
**Խիդիրյան** Խղըր (Խտըր) անունից, արաբական մի մարգարեի անունից:  
**Խոյունք** տոհմանուն: Երջանում այդպիսի միայն 1 տոհմ կար, Գյուլիստանում, գրվում էին Եսայան:  
**Խուլանանք** տոհմանուն Խուդի (Խուդան) անունից, աստվածային (**սրսկ.**):

**Ճատուրյան** Ճատուր անունից, Աստվածատուր անվան կրճատ ձևը: Այս տոհմը Ներքին Շենուն ճյուղավորվել է Ղահրամանյաններից: Վերջիններիս նահապետներից մեկը Թիֆլիսից իր հետ բերել է մի որբ, անօրևան տղայի՝ Ճատուրին, որդեգրել, իր երեք որդիների հետ հավասար բաժին տվել, նրա սերունդներին էլ Ճատուրյաններ են կոչել, որպեսզի այդ անունը ամենտ չկորչի:

**Կարապետյան** Կարապետ անունից, առաջնորդող, ճանապարհ բացող, տես **Ավագյան** ազգանվան բացատրությունը:  
**Կիզիրանք** տոհմանուն զգիր բառից, գյուղական տանուտերի մոտ աշխատող պաշտոնյա:  
**Կիզիրյան** համապատասխան տոհմանունից:



**Կիզովյանք** տոհմանուն, բուրդ գգելու արհեստից, տե՛ս **Գզույան**:  
**Կիզրիսաբունք** տոհմանուն, գգիր Մաքի՝ Սարգիս:  
**Կոսյան** Կոսունց տոհմանունից, որն էլ իր հերթին բերևս Կոսի անունից է ծագել, Կիրակոս անվան երկրորդ մասից, ինչպես որ մեր կողմերում կատարվում էր, Խաչատուր անունից՝ Չատուր, աստվածատուր անունից՝ Ծատուր, Մնացական անունից՝ Յական, Արսվերդի անունից՝ Վերդի, Ալեքսանդր անունից՝ Մանթրի և այլն: Երջանում Կոսյաններ կային միայն Գյուլիստանում:  
**Կրպեյան**՝ Կարապետ (Կրպե) անունից: Տե՛ս **Ավագյան**:

**Հախյան** Հախունց տոհմանունից, հախ՝ վճար, գին, նաև՝ արդարություն, իրավունք (արաբ):

**Հախվերմազանց** տոհմանուն, վճարը շտվող, հայտնի էր միայն Ներքին Շենում: Գրվում են Վելյան: Այդպես կոչել են դաշտում վարձով աշխատողների «հախկր» շտանելու պատճառով:

**Հակոբյան** Հակոբ անունից, խաբերա (հր):

**Համբարձումյան** Համբարձում անունից, կապված Քրիստոսի համբարձվելու հետ:

**Համզումք** տոհմանուն Համզա անունից, ախորժակ, վստիչաշտություն (արաբ):

**Հայրապետյան** Հայրապետ անունից, կարողիկոս, վարդապետ:

**Հայրյան** Հայրունց տոհմանունից, որը Հայր, Հայրի, Հայրիկ կամ Հայրանուն անունից է: Ըահումյանում տարածված է Հայրիկ ձևը, որից կարող էր այն ծագել: Երևիսային հոր անունով կոչելուց բացի երբեմն կոչել են նաև ուղղակի Հայրանուն, որի կրճատված ձևերից են Հայրան, Հերան, Խերան անունները և դրանցից կազմված ազգանունները: Ներքին Շենի Հայրյանների մի ճյուղը կոչվում է Պետրոսյան: Տե՛ս նաև **Միմյան**:

**Հարությունյան** Հարություն անունից, ակնարկվում է Քրիստոսի հարություն առնելը:

**Հմայալյան** Հմայակ անունից, օրինյալ (հին արաբ):

**Հովակիմյան** Հովակիմ անունից: Ըահումյանում տարածված է հիմնականում Ավագիմ (Ավագիմյան) ձևով: Տե՛ս **Ավագիմյան**:

**Հովասափյան** Հովասափ անունից, տեր դատավոր (հր): Գյուլիստանի հնագույն տոհմերից է, հնում կոչվել են Սաղաթեյաններ, հետագայում, երբ գյուղի միակն լքահանան գրվում էր Կորյուն քահանա Հովասափյան, այսինքն՝ Հովասափի որդի, համատարած ազգանուններ մտցնելու ընթացքում այդ հայրանունը դարձել է ազգանուն:

**Հովհաննիսյան** Հովհաննես անունից, տիրոջ շնորհ, աստվածաշնորհ (հր), որը Ըահումյանում տարածված է Հանես, Ավանես, Վանես, նաև Օհան ձևերով, սակայն որպես ազգանվան հիմք վերցրվել է ուղիղ (գրական) ձևը:

**Հովսեփյան** Հովսեփ անունից, ավելաճալ, աճել արմատից, նաև՝ աստվածաբնակ (հր): Ըահումյանում տարածված են Օսեփ, Սեփի ձևերը, որից՝ Օսեփյան, Օսիպյան, Սեփյան:

**Ղարույան** Ղարույանց տոհմանունից, ընդունել, համաձայնել (արաբ):  
**Ղազարյան** Ղազար անունից, փրկիչ Աստված (հր):  
**Ղահրամանյան** Ղահրաման անունից, քաջ, կտրիճ (արաբ): Այս տոհմի մի ճյուղը, Հակոբ քահանայից սկսած, գրվել է Խաչատուրյան՝ Հակոբի հոր՝ դպիր Խաչատուրի անունով: Նա գրվում էր Հակոբ քահանա դպիր Խաչատուրյան Ղահրամանյանց, Խաչատուրյանը հայրանունն էր, Ղահրամանյանց՝ տոհմի անունը: Երբ սկսեցին համատարած բոլորին ազգանուններով նշել, հայրանունը դարձրին ազգանուն, իսկ տոհմանունը մի կողմ բողմվեց:  
**Ղարախանանց** Ղարախան անունից, մեծ (սև) խան:  
**Ղարագոզյան** Ղարագոզա մականունից, սև սղա, մեծ խան (արաբ):  
**Ղարիբյան** Ղարիբանք տոհմանունից, Ղարիբ հատուկ անունից, պանդուխտ, աստանդատական (արաբ):  
**Ղարսունք** տոհմանուն, անձնագրավորման ժամանակ դարձել են Վարդանյաններ: Այդ անունով տոհմ հայտնի է Մանաշիրում:  
**Ղաշանգանք** տոհմանուն, զաշանգ (գեղեցիկ) բառից: Այդպես կոչել են Հակոբ պապին (Ղաշանգ Ակուփ):  
**Ղեշյան** Ղեշունց տոհմանունից, կապված կայեկելու արհեստի հետ (ղեշի):  
**Ղուլյան** Ղուլունց տոհմանունից: Նույն ազգանունը կրող երկու տարբեր տոհմեր կան՝ Դալլար Ղուլունց և Միրման Ղուլունց, որոնց նախապապերը եղել են եղբայրներ: Կարծում ենք, Ղուլի անունը Ալլահուլլի անվան կրճատ ձևն է, Աստու ժառա (արաբ):  
**Ղուկասյան** Ղուկաս անունից, հարություն կամ լուսավոր (հուն):  
**Ղևունդյան** Ղևունդ (Ղևանդ) անունից, առյուծ (լազ):

**Ճիվիկանք** տոհմանուն, Ջավահիր (Ջավիկ, Ծիվիկ) անունից, գոհար բառից:  
**Ճղսզանանք** տոհմանուն, ջրաղացական (ճղասպան) բառից:

**Մաղաբանք** տոհմանուն Մաղաբ անունից, օգնություն, նաև՝ Աստվածային պարգև (հր):

**Մաթևոսյան** Մաթևոս անունից, աստվածատուր պարգև (հուն), որը Ըահումյանում տարածված է Մաթոս ձևով:

**Մակարյան (Մակաջան)** Սկառանք տոհմանունից, Մակար անունից, երջանիկ (հուն):

**Մակյան** դժվարանում ենք ծագումն ստույգ նշել, շրջանում կար Մակի անուն, որը բերես Մակար անվան կրճատ ձևն է: Երջանում Մակյաններ կային միայն Գյուլիստանում:

**Մաղաբելունց** տոհմանուն Սաղաբիա (Մաղաբել) անունից, հրեշտակ (հր):

**Մամիկոնյան** Մամիկոն անունից, հին ձևը՝ Մամկոն, որին չինական ծագում է վերագրվում, ըստ Հր. Աճառյանի մասերի իշխան:

**Մայիլանք** տոհմանուն, Մայիլ անունից, հիացած, սիրահարված (արաբ):

**Մանվելյան** Մանվել (Էմանուիլ) անունից, Աստված մեզ հետ է (հին հր):

**Մարգարյան** Մարգար անունից, մարգարե բառից:

**Մարյանյան** Մարիանանք տոհմանունից, Մարիամ (Մարիամ) անունից:

\* Այս ազգանունի Ըահումյանում չկար, սակայն չենք ուզում այդ հոդի համար իր կյանքը գուհած Թարուլ Կրպեյանին առանձնացնել շահումյանցիներից:

**Մարտիրոսյան Մարտիրոս (Մարդիրոս) անունից, հայերեն բառից, ռուսական միջազգայրում ռմանք դարձել են Մարտիրոսով, Մոսկվայում նույնիսկ Մարտյասով:**

**Մարության Մարութա անձնանունից, տերություն (ասոր.):**

**Մեծյունյան Մեծյուն անունից, խնձր (արաբ.):** Կա նաև այդ անվան կրճատ ձևը՝ **Մեծի, որից Մեծունց** ազգանունը:

**Մեծունց տն՝ Մեծյունյան:**

**Մելիքյան Մելիք անունից, բազավոր (արաբ.), հայերենում՝ իշխան, տանուտեր:** Նախախորհրդային շրջանում մելիքական տոհմերի զավակները կրում էին **Մելիք մասնիկով տոհմանուն Մելիք-Բեգլարյան, Մելիք-Արովյան** և այլն: Խորհրդողային տարիներին այդ մասնիկից հրաժարվեցին շատերը, որովհետև մելիքները համարվում էին շահագործողներ և այդ կարգերի թշնամի: Դրան հակառակ, ձևավորվեցին խորհրդային կարգերին բնորոշ ազգանուններ, օրինակ՝ ռանգ-պար մասնիկով կազմված. **հայտնի է Ռանգպար-Չաքարյան** ազգանուն:

**Մելյան Մելիք անվան կրճատ ձևից Մելի անունից:** Այս ազգանունը հանդիպում է նաև Շամշադինի, Գիլջանի, Կարմիրի կողմերում, որտեղ կան XVIII դ. վերջերին Գյուլիստանի մելիքությունից արտագաղթած բնակիչներ:

**Մելքոնյան տն՝ Մելքունյան (երկու ձևն էլ հանդիպում է նույն տոհմի մեջ):**

**Մելքունյան Մելքուն (Մելքոն) անունից, թագավոր (եբր.):**

**Մեխակյան Մեխակ (ժողով) անունից:**

**Մեհրաբյան Մեհրաբ անունից, արեգակ և ջուր բառերից, արևափայլ (պրսկ.):**

**Մեղրյան Մեղրի անունից, որը կապվում է մեզ մոտ աթաբաթված մեղվաբուծության հետ: Երջանում Մեղրյաններ կային միայն Գյուլիստանում: Այդպես գրվել են Մեղրի նախապապի՝ հայտնի Միրոս Մեղրիի անունով: Գյուղի այն տոհմերից է, որոնք XVIII դ. վերջերին չգաղթեցին մելիքի հետ, մնացին, պահեցին գյուղը, մինչև որ գաղթածներն էլ վերադարձան:**

**Մեջունյան տն Մեժունյան:**

**Մինասյան Մինաս անունից, որը, ըստ Հր. Աճառյանի, եգիպտական ծագում ունի (կապ չունի հունարեն կամ լատիներեն լուսին բառի հետ):**

**Միրաբյան Միրաբանք տոհմանունից, ջրաբաշխի պաշտոնից:**

**Միրզաբեկյան Միրզաբեկ անունից, միրզա՝ ազնվական, իշխանացն, և բեկ բառերից (պրսկ.):**

**Միրզաջանյան Միրզաջան անունից, Միրզայի հոգի (պրսկ.):**

**Միքայելյան Միքայել անունից, նշանակում է՝ ով է որպես Աստված (եբր.):**

**Մխիթարյան Մխիթար անունից, հայերեն, սփոփանք:**

**Մկրտչյան Մկրտիչ անունից, ակնարկվում է Հովհաննես Մկրտիչը, որի անվան այդ վերադիրը հետագայում դարձել է առանձին անուն: Հայտնի է նաև Միկիչ, Մակիչ ձևերով:**

**Մկրտումյան Մակրտում (մկրտել) հազվադեպ անունից:**

**Մնացականյան Մնացական անունից, երկար կյանք ունենալ, որը տարածված է հատկապես Ցական կրճատ ձևով:**

**Մոսյան Մոսունց տոհմանունից, որն էլ իր հերթին Մոսի, Մովսես անունից է, ջրից հանված (եգիպտ.):**

**Մովսեսյան Մովսես անունից, ջրից հանված (հին հր.):**

**Մոսվյան Մոսվ անձնանունից, որը Մոսվ սարի անունից է, ըստ Հր. Աճառյանի՝ մառ (մշուշ, մրուրյուն) բառից է ծագել: Այս բացատրությունը համոզիչ է թվում, որովհետև այդ բարձր լեռը հաճախ է մառով (ըստ մեր խոսվածքի՝ մառավ, մոսվ) պատած, մշուշապատ լինում:**

**Մուրադյան Մուրադ անունից, փափագ, ցանկություն (արաբ.):**

**Նարաբյան նարաբ՝ սառնաշաքար, բյուրեղաշաքար: Հավանաբար կապված է այդպիսի շաքար պատրաստելու արհեստի հետ: Հնարավոր է նաև, որ առաջացած լինի Նարաբ հատուկ անունից:**

**Նազարյան Նազար անունից, նալվածք, հայացք (պրսկ.), նաև՝ Աստծոն նվիրված, հին հրեերեն, նաև՝ պահպանել, կարծում ենք, ծագած կարող է լինել արաբերեն արմատից, քանի որ ավելի վաղ շրջանից հայտնի չէ այդպիսի անուն:**

**Նալբանդյան Նալբանդ, պայտար (պրսկ) արհեստի անունից:**

**Նահապետյան Նահապետ անունից, հայերեն նահապետ բառից:**

**Նասիբյան Նասիբ անունից, բախտ, վիճակ (արաբ.):**

**Նավասարդյան Նավասարդ անունից, որն էլ հայկական Նավասարդ անվան անունից է (Նոր տարի):**

**Նարզիգանք տոհմանուն ծաղկի անունից (հուն.), գույցե նաև՝ Նարզիգ կանացի անունից:**

**Նարինանյան Նարինան անունից, սառը միտք ունեցող, նաև քաջասիրտ (պրսկ.):**

**Ներսեսյան, Ներսիսյան Ներսես անունից, պահպանելիք են Ներսես, լատիներեն ձևը՝ Ներսես, արու, արական և խոսք, պատգամ բառերից: Կա նաև Նեսունց նույն անունից:**

**Նիգարյան Նիգարանք տոհմանունից, որն էլ իր հերթին Նիգար բառից է, նկար, պատկեր (պրսկ.). այդպիսի անուն մեր կողմերում չի հանդիպում, հնարավոր է՝ ծագել է նկարելու արհեստից:**

**Շախյան, Շախիյան Շախի, շահ, արքա (պրսկ) անունից:**

**Շահունյան Շահուն անունից, իմ շահ, իմ արքա:**

**Շամիրանք տոհմանուն, Շամիր (Շահամիր) անունից, որը կազմված է շահ (պրսկ) և ամիր, իշխան (արաբ) բառերից:**

**Շատվերյան տոհմանուն հայերեն շատվոր (շատունք) բառից, այդպես կոչվում էին բազմանդամ, խոշոր գերդաստանները: Այլ վայրերում գործածվում է նաև Շատվորյան ձևը:**

**Շելունց (նաև՝ Շելունց) դժվարանում ենք բացատրել:**

**Շիրինյան Շիրին անունից, բաղբ, անուշ (պրսկ.):**

**Շմալունյան Շմալուն անունից, Միմնոն, Միմոն (եբր.) անվան ասորական ձևը, նշանակում է Աստված լսեց:**

**Շուղունց տոհմանուն, Շողակար (Շուղի, Շողո, Շողիկ) անունից, շողից կաթած, այսինքն՝ արևի շողից ծնված: Տարածում է ստացել հատկապես Վաղարշապատում (Էջմիածնում) կառուցված համանուն տաճարի կապակցությամբ:**



**Ոսկանյան** Ռսկան անունից, հայերեն ոսկի բառից. այլ տեղերում *Օսկի, Օսկան, Օսկանյան*:

**Չալյան** Չալունք տոհմանունից, որն էլ ծագել է բերես Չալ մականունից, խաժ աչբեր ունեցող:

**Չախկալանք** տոհմանուն, այդպես կոչվել են չախկալ (կապտավուն) աչքեր ունենալու պատճառով (Չախկալ Թյունի պապից սկսած):

**Չախմասազյան** համապատասխան տոհմանունից, չախմաս սազ անող (չախմասով հրացան պատրաստող):

**Չանգունք** տոհմանուն, դժվարանուն ենք բացատրել:

**Չփղաղանք** տոհմանուն, Չփղաղ (մերկ, լրիվ ունեզորկ) մականունից. հայտնի են այս մականունից ծագած Չփղախյան, Չպղաղյան, Չփղաղյան և այլ ձևեր: Ծագումով Էրզրումից, այդ տոհմի մի ճյուղը Մոսկվայում գրվում է *Գոլիկով (նույն մականվան տուներեն բարձրանությունից)*:

**Չիլինգարյան** արհեստի անունից, փականագործ, նաև՝ գինագործ:

**Չիրքինյան** Չիրքին մականունից, տղեղ (բրբ):

**Չուբանանք** տոհմանուն չորան բառից, հովիվ (բրբ):

**Պապիկյան** Պապիկ անունից, պապ բառի փաղաքշական ձևը:

**Պառազյան** Պառազյան ազգանվան տարատեսակն է:

**Պատվականյան** Պատվական անունից, պատվական բառից:

**Պետրոսյան** Պետրոս անունից, քար (հուն). Ներքին Շենի Պետրոսյանները նախկինում կոչվել են Տեր-Հովհաննիսյաններ, գյուղի ծխական քահանա տեր Պետրոսից հետո սկսել են կոչվել Տեր-Պետրոսյաններ: Տեր մասնիկը վերացվել է խորհրդային տարիներին:

**Պիլունք** հազվադեպ տոհմանուն, դժվարանուն ենք բացատրել. հազիվ թե պէլ (կերտահայր) կամ պրել (խենթ), կամ պյուլ (խնորագունդ) բառերից մեկի հետ կապվի:

**Պղնձբեղանք** տոհմանուն, այդպես կոչվել են պղնձագույն մազեր ունենալու պատճառով (Վերին Շենում):

**Պողոսյան** Պողոս անունից, լատիներենից փոխառյալ հունական անուն, փոքր, սակավ:

**Պուսլյան** դժվարանուն ենք բացատրել: Շրջանում կար միայն Բուզլոխյան: Ասում են Փեռեզ տեղանունից է, որտեղից եկել են նախնիները (Արևմտյան Հայաստան): Ռուսերեն տառադարձությանը **Փեռեզը** գրվել է **Պառազ**, նույնությամբ անցել հայերենին: Կարծում ենք, կարող է ծագած լինել նաև արհեստի անունից, փառազ է կոչվում ոչխար խաղելու մկրատը, էտելու, պայտելու գործիքը:

**Պուսլանք** տոհմանուն պատավ բառից:

**Չալավանք (Չալալանք)** տոհմանուն Չալալ անունից, փառք, վեհություն (պարս):

**Չահանգիրանք** Չահանգիր անունից, աշխարհակալ (պարս): Նույն արմատից՝ նաև Չհան, Չհանյան:

**Չաղազյանյան** տես **Ճղազյանանք**:

**Չանալյան** Չանալ անունից, գեղեցկություն (պարս):  
**Չանունց** Չանիկ, Չանո անունից, հոգի, հոգյակ, նաև մարմին, ուժ, կյանք (պարս):  
**Չավաղյան** Չավաղ անունից, ազնվական, առատածեռն (պարս):  
**Չիվանչիրանք** տոհմանուն Չիվանչիր անունից, երիտասարդ աչյուռ (պարս):  
**Չիանյան** տես **Չահանգիրյան**:

**Ռաշիդյան** Ռաշիդ անունից, չափահաս, խելահաս (պարս), կովկասում ստացել է քաջ իմաստը:

**Ռաֆայելյան** Ռաֆայել անունից, Աստու բժշկություն (եբր):

**Սալախյան** Սալախ անունից, բարեպաշտություն, խաղաղություն, բարեկամ (պարս): Հանդիպում է նաև Սալախյան ձևով առաջերեկի ազդեցությանը: Շրջանում այս ազգանունը կա Հայ Պարսիսում:

**Սահակյան** Սահակ անունից:

**Սաղաթեղյան** Սաղաթել անունից, խնդրել, աղերսել (եբր):

**Սաղունք** տոհմանուն սաղի բառից (պույց և Սաղի անունից), մատուցակ (պարս):

**Սանամյան** Սանամ կանացի անունից, պաշտամունք, ամենասիրած բանը, կուռք, տիրուհի (պարս):

**Սանդրոսյան, Սանբրոսյան** Սանդրոս, Սանբրի անունից, Ալեքսանդր անվան երկրորդ մասից:

**Սառաջյան** սառաջ արհեստի անունից, մեր կողմերում՝ անասունների վաճառքով զբաղվող:

**Սարգսյան** Սարգիս անունից (սարս), լատիներեն Սերգիոս, հռոմեական հաստիկ անունից, որը նշանակում է բերես բալուր, գերասպառիզ:

**Սաքամարունք** տոհմանուն Սաքան (Սարի, Սարգիս) և Սարի անուններից: Սաքանը խոզապահ է եղել, իսկ Սարի անունով կինը նրա հետ միասին խոզ էր պահում, որը շատ անսովոր էր, դրա համար էլ մնացել է որպես տոհմանուն: Մի մասը գրվում է Չիրքինյան ազգանունով, մյուսները դժվարանուն ենք ստել:

**Սաքանանք (Սքանանք)** տոհմանուն Սաքան (Սարի, Սարգիս) անունից, գրվում են հիմնականում Աբրահամյան:

**Սաքունց** Սարի (Սարգիս) անունից, տև՝ս **Սարգսյան**:

**Սաֆարյան** դժվարանուն ենք բացատրել, Սաֆար անուն մեզ չի հանդիպել, իսկ այդ բառը նշանակում է ճամփորդ (պարս), ինչպես նաև՝ գինվորական: Հնարավոր է, որ հենց այս վերջին իմաստից էլ տոհմանուն և ազգանուն է առաջացել:

**Սեղրակյան** Սեղրակ անունից, երբայական Սեթ (ժառանգ տալ) անվան հունարեն տառադարձված ձևն է:

**Սեյրանյան** Սեյրան անունից, զբոսանք, պտույտ (պրոկ, պարս):

**Սեփունք** տոհմանուն, կրում են Սեփյան ազգանունը, Սեփի (Հովսեփ) անունից, Գյուլիստանի հանրահայտ Սեփի Հովսեփի շատավիղներն են, Հարամ յուզրաչու տոհմից, տոհմի մի մասը Հիրամանք է կոչվում:

**Սիմյան** հնարավոր է՝ Գեորգիան անվան երկրորդ մասից ծագած լինի, ինչպես որ հաճախ է կատարվում մեր կողմերում, տես **Կուսյան**: XVIII դ. վերջերին Գյուլիստանի մեջիքի հետ արտագաղթած բնակիչների հիմնական մասը վերադարձավ XIX դ. սկզբներին: Սիմի, Հայրի, Տանիել եղբայրները հաստատվեցին Ներքին

*Շենուձ, որոնց անունով հետագայում կոչվեցին գյուղի Միմյանները, Հայրյանները, Դանիելյանները:*

**Միմոնյան** *Միմոն անունից, տե՛ս Շնափոնյան:*

**Սողոմոնյան** *Սողոմոն (Սուղի) անունից, կատարյալ, ամբողջական (եբր.):*

**Սվենյան** *Այս ազգանունից կար միայն Վերին Շենուձ: Մի ճյուղը Երևան տեղափոխվելուց հետո դարձել է Սևանյան: Հնարավոր է, որ հենց Սևան անունից էլ ծագել է Սվենյան ազգանունը: Մեր գյուղերից հենց միայն Վերին Շենուձ է գործածական եղել Սևան անունը:*

**Ստեփանյան** *Ստեփան անունից, պսակ (հուն):*

**Սուլումանք** *տոհմանուն, կար միայն Սանասին Շենուձ:*

**Սուղյան** *տե՛ս Սողոմոնյան:*

**Վահանյան** *Վահան անունից, Վահագն անվան կրճատ ձևից կամ հայերեն վահան բառից:*

**Վանեսյան** *Վանես (Հովհաննես) անունից, տե՛ս Հովհաննիսյան:*

**Վաչագանանք (Վաճականանք)** *տոհմանուն Վաչագան անունից, ճագուկ, տղա, (պահլավերեն): ՌԻշագրավ է, որ այս անունը մեր կողմերում հնչում է կ-ով, ինչպես որ պահպանվել է հենց մեր կողմերում ստեղծված V-VI դդ. գրավոր աղբյուրներում: Այս կարգի փյուստերը ևս մի անգամ վկայում են, որ մեր բնակչությունը բազում դարեր արմատահան չի եղել, տեղաբնիկ է:*

**Վարդգեսանք** *տոհմանուն Վարդգես անունից, վարդագույն մազեր ունեցող, ոսկեհեր, հայերեն:*

**Վելիխանյան** *Վելիխան անունից, կազմված վելի (վալի, տեր, սրաք) և խան (պրսկ) բառերից:*

**Վելյան** *հնարավոր է Առավելյան հին հայկական տոհմանվան 2-րդ մասն է (դ-ն դառնում է ղ). գուցե նաև կազմված է Վելի, Վալի անունից, տեր (սրաք), սակայն այդպիսի անձնանուն մեր կողմերում չի հանդիպում:*

**Վերդյան** *Վերդի անունից, Ալլահվերդի անվան երկրորդ մասն է: Տե՛ս Կուսյան:*

**Տարայան** *Կար Բուզլուխում: Դժվարանում ենք բացատրել:*

**Տեր-Պետրոսյան** *Տեր մասնիկով ազգանունները կրում էին հոգևորականներն ու նրանց ընտանիքի անդամները, սակայն խորհրդային իշխանության օրոք դրանք համարյա իսպառ վերացան մեր կողմերում: Ներքին Շենի Տեր-Կարապետյանները դարձան Կարապետյաններ, Տեր-Պետրոսյանները՝ Պետրոսյաններ, Վերին շենի Տեր-Մարտիրոսյանները՝ Մարտիրոսյաններ, Էրբեջի Տեր-Դանիելյանները՝ Դանիելյաններ, Տեր-Մարգարյանները՝ Մարգարյաններ և այլն:*

**Տափրունց** *տոհմանուն, կրում են Առուշանյան ազգանունը: Կարծում ենք, որ տափեր (հողամասեր, դաշտեր) բառից է, կնշանակե՝ շատ տափեր (հողեր) ունեցող:*

**Տերունց** *տոհմանուն, կրում են հիմնականում Անանյան ազգանունը:*

**Տիհարանց** *տոհմանուն տիհար բառից, որը դժվարանում ենք ստույգ բացատրել (գուցե տեր հայր բառերից): Այդ բառով մի քանի տեղանուններ են հայտնի շրջանում, օրինակ՝ Տիմգի տիհար:*

**Տիտերանց (Տերտերանց)** *տոհմանուն, հիմնականում կրում են Նալբանդյան ազգանունը:*

**Տոնյան Տոնի (Անտոն) անունից. մարտի մեջ մտնող (լատ): Հանդիպում է նաև Տոնոյան ձևով (Էրբեջում):**

**Քամալյան** *Քամալ անունից, գիտակցություն, կամք, կատարելություն (սրաք):*

**Քարամյան** *Քարամ անունից, վեհանձնություն, շնորհ, գութ (սրաք):*

**Քյոխյան** *հանդիպում է նաև Քոխյան, Քեոխյան, Քեխոյան ձևերով: Քյուխանք տոհմանունից, քյոխա, գյուղապետ բառից:*

**Քյոչունք** *տոհմանուն, կար Վերին Շենուձ, Ներքին Շենուձ և այլուր: Կարծում ենք՝ ծագել է դոչ՝ խոչ բառից, թուրքական հնչողությամբ՝ քոչ: Դոչ մականուն տրվում էր անվախ, քաջ մարդուն: Մեր գյուղերում երիտասարդ մայրերին օրհնում էին՝ դոչ տղաներ ունենալ (Գանձակում երկար տարիներ ճանաչված էր Դոչ Արամը, որը թուրքական թաղամասի սարսափն էր): Նույն բառը, սակայն՝ թուրքական հնչողությամբ՝ քոչ, դոչ-ի եակառակ իմաստն ունի մեր խոսվածքի մեջ (ինչպես որ թուրքերեն այլևայլ բառեր):*

**Քոչարյան** *կարծում ենք՝ ծագել է Քյոչունց տոհմանունից:*

**Օհանյան Օհան (Հովհաննես) անունից: Տե՛ս Հովհաննիսյան:**

**Օհանջանյան** *Օհանջան անունից, կազմված Օհան և ջան, հոգի (պրսկ) բառերից:*

**Օրդուխանյան** *նույն տոհմի մի մասը գրվում է Արդուխանյան, Օրդուխան (Արդուխան) անունից, կազմված օրդու, բանակ (թրք) և խան բառերից:*



## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Դեղաբույսերով հարուստ մեր գյուղերում կային շնորհաշատ մարդիկ, որոնք բույսերով ու ծաղիկներով զանազան հիվանդություններ էին բուժում: Շատ գյուղերում կային սնխչիներ, այսպես կոչված «չոփ հանողներ», «վախ հավաքողներ» և այլն: Մի շարք հիվանդություններ բուժվում էին փարբեր աղբյուրների ջրերով: Բուժիչ էին Էրբեջի մոտ գտնվող Չիքի աղբյուրի, ինչպես նաև Հին Խրիսափորի չորում գտնվող Չիքի աղբյուրի ջուրը և ցեխը: Բուզլուխի մոտ կար Սլյուկնաձով անունով լճակ, որտեղ փզրուկներ էին աճում (սլյուկնը), որոնցով բուժում էր կատարվում: Թերևս բոլոր փեղերում, հափկապես երեխաների համար, մի յուրաքանչյուր չարիք էր գործնուկը: Չնայած ցավ չէր պատճառում, բայց փհած փեսքի պատճառով ուզում էին արագ ազատվել գործունակից. ամուր կապում էին, խոր կտրում էին, ինչ-որ դեղեր քսում: Նույնիսկ փորձում էին վառել, բայց ոչինչ այնպիսի արդյունք չէր փայխ, ինչպես որ մի շարք հնարամիտ այսաների «դեղամիջոցները»:

Իշխիլավ կոչվող բույսի վրա շան կղկղանք էին դնում, բույսը վառում: Սպիտակ, թանձր ծուխ էր բարձրանում: Այդ ծխի վրա պահում էին գորտնուկը մի քանի րոպե, մինչև որ ծխի դարչնագույն հեփքը գորտնուկի վրա մնա: Դրանից հեփո 2-3 օրվա ընթացքում գորտնուկն ինքնիրեն «փշրվում», անհետանում էր:

Գյուղերում կային «չոփ հանողներ», որոնք հեռացնում էին երեխաների շնչափողում կամ քթանցքում մնացած «չոփը»: Այդպիսի շնորհքով օժտված էին Ներքին Շենում Շուղի նանն ու Խորիշ (Խորիշահ) բիբը, Մնասին Շենում՝ Շուղան Ղազարյանը, Գյուլիստանում՝ Գյուլի Մակյանը և ուրիշներ: Գյուլիստանցի Հովսեփ Բալայանը բուժում-կարգավորում էր ջարդվածքներ ու հողախախտումները:

Հայրնի են բուժման շատ արտասովոր, բայց արդյունավետ եղանակներ: Մնասինչենացի Մուխանը, օրինակ, որը ճանաչված էր որպես ափամ հեռացնող, կարողանում էր նաև բուժել «քողմս» կոչվող ծանր հիվանդությունը, որը կապված էր արյան շրջանառության խանգարման հետ: Հիվան-

դի ճակատին նա երեք փեղից ամելիով կտրվածք էր բացում: Հեփո վերցնում էր «հարսան» ճուրղ (հավի շատ փոքր ճուրղ), մեջքերից ճղում երկու մասի, բացվածքով դնում կտրվածքների վրա: «Կեղտոտ» արյունը դրա միջոցով դուրս էր հանվում, արյան շրջանառությունը կարգավորվում էր, հիվանդն ապաքինվում էր:



Լեռնաշխարհի գյուղերի բնակչությունն աչքի էր ընկնում երկարակեցությամբ: Ընդ որում, տարեցների նկատմամբ հատուկ հարգանք և հոգատարություն կար ոչ միայն ընտանիքներում, այլև հասարակության մեջ, որի վկայությունն է այս լուսանկարը: Մաթեմատիկայի ճանաչված ուսուցիչ Բենիկ Խաչատրյանը (վերևի շարքում, կենտրոնում), որը երկար տարիներ եղել է ժողկրթբաժնի վարիչ, դպրոցի տնօրեն, 1968 թ. հունվարի 1-ին դպրոց է հրավիրել մի խումբ երկարակյացների՝ նրանց նկատմամբ մանկավարժների վերաբերմունքն արտահայտելու նպատակով, և հենց դպրոցի աստիճանների վրա լուսանկարվել են:

Բուզլուխեցի Մովսես Ղազարյանը պատմում է, որ լվածաղիկ կոչվող բույսից ավել էին պատրաստում, փունը դրանով ավլում, և լուն վերանում էր: Իսկ ցրթնի կոչվող մշտադալար թփի ճյուղերը եթե դնում էին փանը կամ մառանում, մկներն էին վերանում: Այսպիսի բազմաթիվ օրինակներ կան, որոնք բոլորը շարադրել անհնարին է:

Ուշադրության արժանի են ոչ միայն ժողովրդական բժշկությունը, այլև շրջանի հին բժիշկների աշխատանքի մեթոդներն ու հնարամտությունը: Մընասինչենացի Թևոս Եսայանը պատմում է ուշագրավ մի դեպք 20-րդ դարի առաջին փասնամյակներում մեծ հռչակ չեղք բերած բժիշկ Սպեփանի մա-



սին, որին ժողովուրդը Բոզունյ դոխտուր էր ասում (նրանց փոխանունով): Մի անգամ նրա մոտ պարավիրակներ են գալիս Եվլախի մի բեկի կողմից, հայրնում, որ բեկի կինը չիույ ընկել է, երկու ոտքն էլ կոնքերից փռելից դուրս են ընկել, չի կարողանում շարժվել: Հարցնում են՝ կարո՞ղ է բժիշկը փռելը գցել ոտքերը, բայց այնպես, որ բեկի կնոջը չեռքով նույնիսկ չդիպչի: Բժիշկը համաձայնում է: Ղարաղը (չին) կապում է ախոռում, երեք օր օրական մեկ դույլ գարի ուրեցնում, բայց ջուր չի փալիս: Հեփո բերում են բեկի կնոջը: Ձին հանում է գոմից, բեկի կնոջը նստեցնել փալիս չիու վրա: Նրան ուղեկցողներն այդպես էլ կապարում են: Հեփո բժիշկը կարգադրում է, որ այդ կնոջ ոտքերն ամուր կապեն սավանով, չիու փոքի փակով: Դրանից հեփո պարավիրում է, որ չին փանեն ամվի մոտ: Մոտենալով առվին, չին սկսում է անհագորեն ջուր խմել, փորն սկսում է նկարելիորեն ուռչել՝ ասփճանաբար չզելով վրան մսփած կնոջ ոտքերը: Քիչ հեփո չըջըջոց է լսվում: Ոտքերն իրենք-իրենց փռվել են ընկնում: Բժիշկը կապերն արչակել է փալիս, կինն առանց օգնության չիույ ցած է իջնում:



Ինչպե՞ս գրել նրանց մասին. այդպես էլ միշտ դժվար պիտի լինի մեզ համար: Հայաբնիցի Դալունց (Ասրյան) Ջունին (կենտրոնում) 1992 թ., երբ կործանվեց շրջանը, 90-ն անց էր արդեն, կինը՝ Ելեն ալան, վաղուց արդեն 80-ն անց էր: Կարողացան հասնել մինչև Վերին Շեն (ավելի ճիշտ՝ հասցիին), որից հետո ճանապարհը շատ էր «դիք», չկարողացան շարունակել: Մնացին հայրենի հողում, ճակատագիրը՝ անհայտ:

Ջունի ապալի ձախ կողմում Մարիամ նան է, ծագումով էրբեցի, որ Հայ Պարսիսում ապրեց մինչև 95 տարեկանը ...

Լուսանկարը հրապարակվում է ի հիշատակ բոլոր նրանց, ովքեր մնացին այնտեղ՝ հայրենի գյուղում կամ բռնի տեղահանության դաժան ճանապարհին, և ... անհայտ մնաց նրանց ճակատագիրը:

## ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Հայ ժողովրդի ազգային ավանդույթները, աշխատանքի, հանգստի, կենցաղի կազմակերպման, կյանքի էական զանազան խնդիրների իրականացման շնորհ, եղանակները մեր լեռնաշխարհում չեռք են բերել որոշակի նրբերանգներ ու առանձնահատկություններ, փոխանցվել սերնդեսերունդ, շարունակվել երկար դարեր: Դրանք միջոց են հանդիսացել ազգային լավագույն հատկանիշների պահպանման ու զարգացման, նպաստել են ներքին կապերի ամրապնդմանը, մարդկանց համախմբմանն ու համագործակցությանը, փոխադարձ օգնությանը, բարոյական անաղարտության, հայրենասիրության, աշխատասիրության, բարության ու ազնվության արմատավորմանը աճող սերնդի հոգում: Մինչևիտրիդային շրջանում այդ ամենը կազմակերպվում ու կարգավորվում էր եկեղեցու կողմից: Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից բացահայտ պայքար սկսվեց եկեղեցու դեմ:

Շրջանի ու գյուղերի բույժիկ ղեկավարներից շատերը ժողովրդին արգելում էին կատարել իրենց դարավոր ծիսական արարողությունները եկեղեցում կամ փերփերի միջոցով, վճարել եկեղեցու փութերը, նվիրատվություն անել եկեղեցուն կամ հոգևորականներին: Վերջիններիս համար այնպիսի պայմաններ էին ստեղծում, որ նրանք չկարողանան կամ չհամարչակվեն կատարել իրենց պարտականությունները: Այս ամենի պարտառով ազգային հին ավանդույթների ու սովորույթների մի մասը վերացավ, մյուսները չկափոխվեցին, փոխեցին դրսևորման ու իրականացման եղանակները, ինչպես նաև բնույթը: Դրանց զուգահեռ չկափոխվեցին նաև միանգամայն նոր սովորույթներ: Մեր հնարավորության սահմաններում ներկայացնում ենք դրանցից ամենախիմնականներն ու էականները:

Սկսենք *ամուսնության* հարցից: Մինչևիտրիդային ժամանակներում (մինչև 1920-ական թվականների սկիզբը) հարսի համար հորանց փնից վարագույր էին փանում, փեսայի փան մի անկյունում կապում, այդ անկյունն առանձնացնում հարսի համար: Դա լինում էր սպիտակ, ժանեկազարդ գործվածք, որը փանողին հատուկ նվերներ էին փրվում փեսայի փանը: Վարա-

գույրի հեղինակը թախտ էր լինում կամ այնտեղ հարսի համար, երբեմն պարզապես գեղունի կարգեր էին փռում, վրան նստում: Հարսանիքին մասնակցող հասունացած աղջիկները հարսի հետ միասին վարագույրի հեղինակ էին դիտում հանդիսությունը: Ընդ որում, դեռևս հորանց փանը զգուշացնում էին հարսին, որ նստելու ժամանակ ուշադիր լինի, որովհետև երբեմն կարակի համար մազե պարան էին դնում հարսի համար նախաբեռված փեղում, որպեսզի պարզեն՝ արդյոք, նա նստելուց առաջ փակը կարագի՞, թե՞ կընկնի ծիծաղելի վիճակի մեջ՝ նստելով կոշի պարանի վրա:

Հարսանիքի հաջորդ օրը կիսուրը իլիկ էր փայլա հաղիմ, որ մանի, և քայապրում էր. «Լավ մանիք, թելը շուր-շուր չկտրվի, ումբրդ էլ (կյանքդ) այդ թելի նման երկար չգվի»: Դրա համար աղջիկներն ամուսնամալուց առաջ պետք է սովորեին մանել ու գործել: Դժվար էր հարկապես կազ (մեքաքսաթել) մանելը, որը սովորաբար շուր-շուր կտրվում էր մանելու ժամանակ: Հարսը յոթ շաբաթ պետք է դուրս չգար վարագույրի հեղինակ: Այնտեղ նա ամբողջ օրը մանում էր, գործում կամ պահում փան փոքր երեխային (եթե, իհարկե, լինում էր): Վարագույրի հեղինակ այդ յոթ շաբաթվա ընթացքում դուրս էր գալիս միայն վաղ առավոտյան, այնքան շուր, որ ոչ ամեցիները, ոչ հարեկանները չբեռնեին. ավում էր բակը, ջուր բերում աղբյուրից (կամ գեպից), նորից առանձնանում վարագույրի հեղինակ:

Երբ փունը պարվարժան հյուր էր գալիս, հարսին ասում էին՝ գնա, ներկայացիր հյուրին: Նա գնում էր (իհարկե, երեսը ծածկած), չեռով բարևում և աջը համբուրում: Նորահարսը պետք է նաև լվանար հյուրի ոտքերը: Ընդունված կարգի համաձայն, պետք է լվանար նախ չախ ոտքը, հետո աջը, վերջում էլ համբուրեր ոտքերը, նախ՝ աջը, հետո՝ չախը:

Մինչև 1940-1950-ական, նույնիսկ 1960-ական թվականները հիմնականում ծնողներն էին ընտրություն անում զավակների համար, ինչպես որ ընդունված է եղել ավանդաբար: 1920-ական թվականներից սկսած խորհրդային իշխանությունները ամուսնա-ընտանեկան հարցերը եկեղեցուց վերցրին իրեն չեռքը՝ դրանք կարգավորելով քաղաքացիական օրենքով: Արգելվեց վաղ ամուսնությունը: Ըստ աստիճանված կարգի ամուսնությունները, ինչպես նաև նորածնները եկեղեցու փոխարեն պետք է գրանցվեին նորաստեղծ խորհրդային մարմիններում: Դա երկար ժամանակ դժվար էր արմատավորվում: Երբեմն անչափահաս աղջիկներին ամուսնացնում էին՝ հանելով դպրոցից, որի հետ կապված լինում էին փիսք շար միջադեպներ: Ըստ հաճախ մարդիկ իրենց նորածններին չէին գրանցում, որովհետև դեռևս այնպիսի ավանդույթ չէր չկավորվել: Եկեղեցիները փակված էին, կնույն չէր կարարվում: Իսկ ծնունդը գրանցելու գործնական անհրաժեշտություն չէր լինում: Ըստերը երկար ուշացումով էին գրանցում երեխաներին, որի

պարագանով երբեմն փաստաթղթերի մեջ խառնում էին մեծ ու փոքր երեխաների անունները: Անունների հարցում էլ շփոթ առաջացավ: Քանի որ այդ հարցը համվել էր եկեղեցու իրավասությունից, խորհրդային նորաստեղծ մարմիններն ըստ էության հեռացան նաև հայկական, ավանդական, ավերարանական անուններից: Լայնորեն փարածվեցին ռուսական ու հորինված նոր անունները: Գործածությունից դուրս եկան հին, գեղեցիկ ու բարեհուն շար անուններ (Սարմազ, Մագադաթ, Չարդարիկ և այլն), նուսպվեցին անվանակոչության ու կնունքի հետ կապված սովորույթները:

Եվ այսպես, հնում ծնողներն էին հարսնացու ընտրում փողայի համար: Կար այսպես կոչված «օրոտոցը խազելու» սովորույթ: Դեռևս օրոտոցում գրմվող աղջկա ծնողներին որևէ մեկը կարող էր ասել, որ այդ աղջկան հարս է փանելու իր այսինչ փողայի համար, որը նույնպես դեռ շար փոքր էր լինում: Դա կարող էր ասվել աղջկա կամ փողայի փանը, ոչ պաշտոնական հայտարարությամբ. նույնիսկ կիսակատար: Եթե այդ մտադրությունը հետո էլ խորացվում, կրկնվում էր և համաձայնությամբ էր ընդունվում աղջկա ծնողների կողմից, համարվում էր «օրոտոցը խազած», այսինքն՝ նշան արած: Կողմերի միջև ջերմ, բարիդրացիական հարաբերություններ էին սկիզբ առնում այդ հողի վրա, շարունակվում փարիներ, մինչև որ երեխաները կնեծանային և նշանի ու հարսանիքի արարողություններ կլինեին: Պարտախում էին նաև, որ փարիների ընթացքում այդ հարաբերություններն աստիճանաբար մարում էին, մոռացվում էր «օրոտոցը խազելու» մասին: Նայած, թե ինչից էր ծագում դա և ինչպես էր ընթանում, կարող էր կողմերի միջև թշնամանք առաջանալ այդ հողի վրա, կարող էր նաև անկապ անցնել:

Չափահաս փողայի համար ընտրություն կարարում էին ծնողները, մասնակից դարձնելով նաև այդ ընտանիքի ամենամոտ ու շար հարգված մարդուն: Մովորաբար հենց վերջինս էր գնում աղջկա ծնողներին առաջարկ անելու: Որպես կանոն իրենց հետ փանում էին քաղցրավենիք և ուրունքներով զարդարված շշով օղի: Պարտախում էր նաև, որ հասունացած փղան հավանում էր որևէ աղջկա և այս կամ այն չեռով արտահայտում էր իր զգայունությունը, բայց այնպես, որ ուրիշները չնկատեին, որովհետև դա քայսասար կազդեր աղջկա (նաև ծնողների) հեղինակության վրա: Հետո արդեն ծնողները գնում էին (կամ հարազատներ էին ուղարկում) փղայի հավանած աղջկան ուզելու: Տարածված չեռից մեկն այն էր, որ փղան աղջկա փան կրիկից թաքուն ներս էր գցում քաղցրավենիք կամ չիր: Տարբեր գյուղերում մեր կողմից գրի առնված գրույցների մեջ պահպանվել է այսպիսի հեղաբորրական փաստ: Փիշիկանց Մայիկի աղջիկը՝ Սարալը, խոր ծերությամբ



փարիքում հիշում էր, թե ինչպես մի անգամ, երբ ինքը, հագիվ 10 փարեկան, հեռու այգուց գտն էր վերադառնում, զգայ, որ չափարի մյուս կողմից մեկը քայլում է իրեն գուգահեռ: Անհանգստությունից քայլերն արագացրեց, քայց զգայ, որ նա էլ է արագացնում: Սկսեց վազել, զգայ, որ նա էլ է վազում: Հե- փո չափարի հակառակ կողմից մի փունջ մանուշակ նեփվեց իր ոտքերի փակ: Չհամարչակվեց վերցնել: Շիկնեց, արագացրեց վազը: Հեփո երկրորդ, եր- րորդ փնջերը նեփվեցին: Հեփո էլ փարքեր առիթներով երբ նկատեց իրեն ուղղված սևեռուն հայացքը, ճանաչեց, հասկացավ, թե ով է եղել մանուշակ- ներ «նվիրողը»: Սերգին: Անմոռանալի դեպք է կատարվում նաև նրանց հար- սանիքից հեփո: Սովորաբար նորասպանների համար առաջին օրերին վա- րագույրով առանցճացնում էին փան մի անկյունը:

Նորասպաններին ժամանակավոր փեղ էին հարկացնում թոնրափանը, հարդանոցում, փանը կից որևէ շինության մեջ՝ մայած իրենց հնարավորու- թյանը և փարվա եղանակին: Սերգիի ու Մարտի համար փեղ էին առանց- ճացրել խոշոր անասնաշենքի ընդարչակ ախոռում: Գիշերվա կեսին նրանք զգային, որ գոմեշներից մեկը վափ վիճակում է, գեփոնին փոված փնչացնում է: Կանչեցին փնեցիներին: Հավաքվեցին ճրագներով, փեսան, որ գոմեշն ու- ռել, փքվել է: Մինչև լույս փանջվեց անասունը, չգիտեին ինչ անել: Առավոտ- յան շուր եկավ նաև Մարտի հայրը՝ Մայիրը: Նա անընդհատ կրկնում էր. «Տեր Աստված, այս գոմեշը չսարկի, որ չասեն, թե երեխայիս ոտքը խերով չէր»:

Եվ այսպես, հավատարիք կար, որ եթե հարսի գալուց հեփո ընփանիքի գործերը լավ էին գնում, ուրեմն՝ հարսի ոտքը խերով է: Դա որոշակի ջերմ մթնոլորտ էր ստեղծում հարսի շուրջը: Հիշյալ դեպքը բարեբախտաբար լավ ավարտ է ունենում: Երբ ճարահատյալ փորչում են մոդթել փքված, փանջ- վող գոմեշը, հենց ծակում են կոկորդը, ուժգին փշշոցով գոլորշի է դուրս գա- լիս, կենդանին ցարկում, փեղից վեր է կենում: Հեփո վերքը լավանում է, քայց կոկորդի անցքը չի փակվում: Երբ ջուր էր խմում, մի մասը կոկորդից դուրս էր թափվում: Այդ չեով գոմեշն ապրեց մի քանի փարի, քայց արդեն ծանր բեռի փակ չէին գցում, մի փեսակ սիրում ու հարուկ խնամք էին փածում այդ կենդանու նկատմամբ: Իսկ նորասպանները երկար ու խաղաղ կյանք ապ- րեցին, մեծացնելով 5 փղա և 4 աղջիկ:

Հարսանիքներին հարուկ շուք էին փալիս մակառները, որոնք ընփրվում էին փղայի բարեկամների կողմից, նախօրոք պայմանավորված քանակով երիտասարդ փղամարդիկ: Որպես կանոն մակառները չիով էին գնում, հը- րայաններով զինված, մանավանդ եթե հարսը պեփք է բերվել ուրիշ գյու- ղից: Հանապարհին բազմիցս կազմակերպված չեով հրայանագություն էր լինում, մանավանդ հարսի փանը մոտենալիս: Ցավոք, թեկուզ եզակի, քայց

եղել է նաև այդպիսի անգոույշ կրակոցի գոհ: Մակառներին գլխավորում էր մակառբաշին, որը հարգված և ազդեցիկ փղամարդ պիտի լիներ, կարողա- նար հեփել, որ անգոույշ ու անփեղի հրայանագություն չլինի, որևէ մեկը կարգ չխախտի, շափ չխմի, կոխվ կամ իրարամուտ չառաջանա:

Սեղանի շուրջը խոսում էր միայն թամադան, որը, սակայն, կարողանում էր բոլորի մտքերն արտահայտել, խոսքը համեմել խրատական ու չափա- վոր զվարճալի գոույցներով: Նա պիտի և՛ բարեմաղթանք հղեր նորասպակ- ներին, և՛ հիշեր երկու կողմի ծնողներին, նախնիներին, հիմնական բարեկամ- ներին՝ ճյուղ առ ճյուղ, ըստ արժանիքների և հարկապես այդ հողի համար զեղվածներին: Թամադան ունենում էր փեղակալներ՝ երգի գծով, պարի գծով, ուտայի գծով: Մի փեղակալ լինում էր խնամիների կողմից, որպեսզի ներկա- յայցնի, ծանոթացնի իրենց կողմի խնամիներին: Թամադայի ամեն ելույթից հեփո մակառբաշին փեղից բարչքամալով՝ հրահանգում էր՝ ո՛ւռ-ո՛ւռ, ամփ- ջապես բոլոր մակառները, նաև մյուս հարսանքավորները, միաբերան գո- չում էին երեք անգամ՝ ո՛ւռ-ոռա՛, ո՛ւռ-ոռա՛, ո՛ւռ-ոռա՛: Դա մի յուրահատուկ հմայք էր փալիս հարսանիքին, որի հեփ չի կարող համեմալվել ոչ մի նվազ, ոչ մի երգ կամ պար, որովհետև դա կարծես համընդհանուր ուրախության միաս- նական արտահայտություն էր: Գոչյունի հեփ մակառբաշին չեռքով մի փե- սակ չափ էր փալիս ու ոգևորում:

Իսկ ի՛նչ անկրկնելի գեղեցկություն էին փալիս փունփուխները: Տղայի բարեկամները փայտե հարուկ հարսարանքի վրա ամրացնում էին ընփր մրգեր, քաղցրավենիք, իսկ ամենաբարչք մասում՝ խաշած հավ, երբեմն էլ կրուցիկ՝ սիգարետ կամ կոնֆետ: Մակառները մի-մի հար փունփուխ էին փանում աղջկա փուն: Հանապարհին փորչ էր արվում նրանց չեռքից խլե- լու փունփուխը կամ աննկապ թոցնելու (գողանալու) վրայի հավը կամ գոմե մի խնչոր կամ փանչ պոկել: Մակառների պարտականությունն էր անխա- թար փեքքով փեղ հասցնել փունփուխները և շարել աղջկա փանը (կամ բակում) բացված սեղանի երկայնքով:

Հարսանիքի թափորն ունենում էր իր մատուցակը: Երիտասարդներից մեկը զինով լի խոշոր սափորը (կամ կուլա, կամ «չեթվեռ»՝ 3 լիտրանոց շիշ) և բաժակը չեռքին գնում էր հարսանքավորների հեփ մինչև աղջկա փուն: Հանապարհին նրան մոտենում էին հանդիսականներ կամ անցորդներ, ա- սում. «Աստված շնորհավոր անի»: Մատուցակը շնորհակալություն էր հայտ- նում, մի բաժակ զինի հյուրասիրում, ինքն էլ հեփը խմում: Նա պեփք է իրեն այնպես պահեր, որ շնորհավորողները գոհ միային, քայց ինքը չհարբեր:

Հարսանիքի հեփ կապված բազմաթիվ արարողություններ կային, ո- րոնց հեփ որոշակի սովորույթներ էին պահպանվում, որոնց իմաստն այն



եր, որ հարևանները, բարեկամները մասնակից դառնան, կիսեն ուրախությունը, թերևս որոշ չափով նաև նյութական հոգսերը: Հիշենք մի քանի օրինակ: Հարսնացուի համար երբ հագուստ կամ գործվածք պեպք է գնեին, կին բարեկամների մասնակցությամբ էր կատարվում: Կար «ճոթը չևելու» արարողություն: Երբ դերձակը փուն էր հրավիրվում, որպեսզի հարսնացուի համար հագուստ չևի, հավաքվում էին հարևաններն ու մերձավորները և շնորհավորում՝ փող կամ նվեր դնելով սեղանին: Նրանց համար թեթև սեղան էր գցվում: Եթե նույնիսկ հագուստ չէին կարում, այլ բոլորը պատրաստ էին գնում, միննույն է. «ճոթը չևելու» արարողությունը կատարվում էր. հավաքվում էին, փեսանու գնումները և շնորհավորում:



Գյուղական հարսանիք՝ փունփուլներով:

Կատարվում էր «հացը խաշ անելու» արարողություն: Հարսանիքի հացը թխելու համար երբ պեպք է այլուրը մաղեին, հացը «խաշ դնեին»՝ խմորը թթվելու համար, հավաքվում էին հարևանուհիներն ու բարեկամուհիները, փաշտի լայնուր եզրին փող (կամ նվեր) էին դնում: Հեքոն էլ թեթև սեղան էին բացում, շնորհավորում, մինչև որ խմորը կթթվեր, որից հետո օգնում էին հացը թխելու: Նույն շնով, բայց փղամարդկանց մասնակցությամբ, կատարվում էր «միսը մորթելու» արարողությունը: Երեկոյան կողմը հավաքվում

էին, հնչում էր գուռնան, ուրբի վրա կամ թեթև սեղանի շուրջը շնորհավորում էին, պարում, հեքոն մորթում մսապու անասունը: Խնամիների միջև նախնական պայմանավորվածության համաձայն մսի մի մասը կամ որևէ անասուն՝ խոյ, դանա (մեծ հորթ) և այլն, կարմիր ժապավեններով զարդարված փարվում էր աղջկա փուն, որպեսզի այն ընդունվում էր հանդիսավորությամբ, և բերողներին նվերներ էին փրվում:

Երկու կողմերի բակերում և ամբողջ գյուղամիջյան ճանապարհի փարբեր փեղերում հարսանքավորները կանգ էին առնում, նվազը հնչում էր, պարում, ուրախանում էին, խմբված երեխաների համար որևէ բարձր փեղից բռերով ընկույզ ու կոնֆետներ էին նետվում, «շորոշ էին փալխա»: Աշխույժ հրմշտոց էր սկսվում հավաքելու համար. ամեն երեխայի համար հպարտություն էր, եթե նա կարողանում էր շափ ընկույզ կամ կոնֆետ չեռք գցել, մանավանդ՝ օղի մեջ բռնել:

Աղջկա փնից սովորաբար վերադառնում էին երեկոյան և հանդեսը շարունակում փողայի փանն ամբողջ գիշերը: Հարսանքավորների ճանապարհը և հարսանքափան բակը լուսավորվում էր մաշալլաներով. չյութով, մագուրով, նավթով կամ չեթով թաթախված ու փաթաթված լաթերը ամրացվում էին երկար չողի ծայրին ու վառում: Վառվելու ժամանակ հաճախ կըրակ էր թափվում մաշալլայից, ուստի այդ գործը վստահվում էր շափ պատասխանաբար երիտասարդներին: Որպեսզի կրակը երկար վառվի, վառելանյութով թաթախված լաթերն ամրացնում էին խոշոր անասունի գանգոսկրի մեջ ու նրա շուրջը: Մաշալլա պատրաստելն ու բռնելը մի յուրահատուկ շնորհք էր պահանջում:

Հարսանքափեղը, որպես կանոն, ուրբիքներից բաժին էր ուղարկում գյուղի կամ թաղամասի կարիքավոր ընտանիքներին: Բաժին էր ուղարկվում նաև, հատկապես որևէ ընտանիք կամ հազվագյուտ միրգ, քաղցրավենիք, ուրբիք, հարգանք վայելող կամ անկողնային հիվանդ կամ շափ ծեր համագյուղացուն:

1950-ական թվականներից հարսանիքների հեք կապված ավանդույթները որոշ փոփոխության ենթարկվեցին՝ կապված կյանքի նոր պայմանների հեք: Չափահաս փղա ունեցող ծնողները, ինչպես նաև հարազատները միշտ «աչքի փակով» հեքում էին գյուղի հասունացած աղջիկներին: Քըննում էին, թե ինչ ընտանիքից է փվյալ աղջիկը: Ծնողների հեղինակությունը, պայմանները և այլ հանգամանքներ նկատի ունենալով, եթե դրականորեն էին փրամադրվում, այդ մասին փեղյակ էին պահում փղային: Վերջինիս համաձայնությունն սրանալուց հեքոն գնում էին առաջարկ անելու՝ «աղջիկ ուզելու»: Եթե աղջկա ծնողները համաձայնում են, ապա շնորհավորում էին

հյուրերի բերած խմիչքով: Եթե պատահում էր, որ աղջկա ծնողները միայն հարգանքի համար սեղանին հաս էին դնում, հյուրերը չէին օգտվում սեղանից մինչև դրական պատասխան չստանալ: Բացասական պատասխանի դեպքում ոչինչ չէին ուտում, չէին խմում:

Խոսք առնելուց, այսինքն՝ աղջկա ծնողների համաչայնությունն սպանալուց հետո կողմերը պայմանավորվում էին նշանդրեքի մասին, որոշում օրը, հյուրերի քանակը և այլն: Նշանդրեքի ժամանակ, սեղան նստելուց հետո փեսայուն, ապա ծնողները, հետո մյուս հյուրերը հարսին մվիրում էին ոսկեղեն: Այնուհետև մեկը սկսում էր շարքերի մոտով կամ սկուտեղեն են փոխանցում սեղանի վրայով, և յուրաքանչյուրը դրան կամ այլ մվեր էր դնում սկուտեղի մեջ: Հյուրերից շարքերը մվերի խոնջաներ են բերում: Նշանդրեքի սեղանի գեղեկությունը աղջկա բարեկամների բերած խոնջաներն էին լինում, որոնք շարվում էին սեղանին՝ ընտիր մրգերով, քաղցրավենիքով ու խմիչքով: Խնջույքի վերջում փանդերերը հյուրերից յուրաքանչյուրին մվեր էին փայլա, հնում դա լինում էր մեկական գույգ գուլպա, հետո ման վերնաշապիկ էին մվիրում, որոշ չափով հաշվի առնելով մահ հյուրի փված մվերի արժեքը: Նշանդրեքի հաջորդ օրը աղջկա ծնողները հյուր էին կանչում փղայի հարագափներին, խոնջաները հանդիսավոր բացում, մեկամեկ ցույց փայլա սրբալված մվերները, համապատասխան մվերներ փայլա այդ խոնջաները պարաստողներին, ուղարկողներին: Հյուրերին (սովորաբար լինում էին ընտանիքի մեծերը, որոնք չեն մասնակցել նշանդրեքին) փրվում էին մվերներ, որպես կանոն, փղամարդկանց՝ գուլպա, կանանց՝ գոգնոց կամ գըլխաշոր: Տղայի հարագափներն իրենց հերթին պեղք է հերթով հյուր կանչելին նոր նշանվածներին և մվերներ փայլին:

Աշնանամուտին սկսվում էր այսպես կոչված «հղի կտրելու» շրջանը: Տղայի հարագափները գնում են հարսնացուի ծնողների մոտ, պայմանավորվում հարսանիքի օրվա, հրավիրվելիք հյուրերի քանակի, փղայի կողմից փրվելիք մսի և զինու չափի մասին: Որպես կանոն, փղայի կողմը քանի հյուր (մակառ) որ պիտի ուղարկեր, ամեն մեկի հաշվով մեկ լիտր զինի, կես կիլոգրամ միս և ըստ հայեցողության օղի պիտի ուղարկեր աղջկա փուն: «Հղի կտրելուց» հետո պեղք է դադարեր փեսայի այցելությունն աղջկա փուն: Երկու կողմը միմյանց հաս էին ուղարկում. փղայի կողմից կենք քանակությամբ էր հաս փարվում, իսկ աղջկա կողմից՝ գույգ: Մասցում փանում էին մոտ փասնիկն գրարեկան պատանիներ, իսկ հասը՝ դեռահաս աղջիկներ, որպես կանոն դրանք լինում էին երկու կողմի հարգված բարեկամների երեխաներ, որոնց մվերներով հետ էին ճանապարհում:

Հարսանիքի ժամանակ աղջկա փունը բացված սեղանին առաջինը ճաշ էին մատուցում մակառքաշուն՝ փակ ափսեներով: Նա պեղք է փող դներ

ափսեի վրա, հետո բացեր ճաշը: Միայն դրանից հետո մյուս հյուրերը կարող էին սկսել իրենց ճաշն ուտել: Սկզբում բերվում էր 3 խոնջա՝ փեսային, քավորին (պելին) և մակառքաշուն: Երանք պեղք է փող փայլին, հետո վերջնեին խոնջան: Հարսը փնից դուրս հանելու ժամանակ դուռը փակում էին, երբեմն՝ դռան դիմաց կանգնելով: Երբեմն էլ դռան երկու կողմից երկու երիտասարդներ էին կանգնում, թրերով խաչաչև փակելով ելքը: Փեսան ու քավորը (պելը) պեղք է փող փայլին, որ թույլ փրվեր հարսին փանել: Փող էր փրվում մահ հարսի շորը հազցնողին: Տղայի փուն հասնելում պես նրա ուրբերի մոտ ոչխար էր մորթվում, իսկ հարսնացուն փուն մտնելուց առաջ նրա ուրբի առաջ շրջված ափսե էր դրվում. նա պեղք է ուրբով խփեր, ջարդեր, մտներ ներս:

«Օսկապ կապելու» արարողությունը երկու կողմում էլ կատարվում էր: Երբ հարսանքավորները հասնում էին աղջկա փուն բակը, փեսային և քավորին եռանկյունաչև ծավված թանկարժեք թաշկինակ էին մվիրում, դա համարվում էր «օսկապ կապել»: Առաջին «օսկապ էր կապում» աղջկա փուն ազապ աղջիկը (եթե մի քանիսն էին՝ մեծը), ծավված թաշկինակները դնելով փեսայի և քավորի գրպանը: Հաջորդներն արդեն թաշկինակը կարող էին դնել պարզապես նրանց թևին: Երկրորդ կատարվում էր մահ վերադառնալուց հետո, փղայի փուն բակում, որտեղ օսկապ էր կապվում մահ հարսին, նրա թևի վրա դնելով «ճոթ»՝ զգեստապու կտոր (գործվածք): Օսկապ կապելուց հետո փրվում էին մահ այլ մվերներ:

1970–1980-ական թվականներին, երբ ժողովրդի նյութական պայմանները բավական բարելավվել էին, հարսանիքներին մի քանի հարյուր հոգի էին մասնակցում: Ծարքերով երկար սեղաններ էին դրվում բակերում: Ամեն գյուղ, նույնիսկ խոշոր գյուղերի ամեն թաղամաս, իր համար սպասք էր չեղք բերել և պատրաստել մեծ թվով սեղաններ ու նստարաններ՝ մեծ միջոցառումների համար: Այդպիսի մեծ հարսանիքին թամադան միկրոֆոնով հայտարարում էր, թե ով ինչ մվեր փվեց նորաստակներին: Մի առանցին աշխուժություն էր մտցնում «շոքոշը»՝ պարողներին փրվող փողը: Թղթադրամը դրվում էր պարողի մարմնի արանքում, որը հետո փրվում էր երաժիշտներին: Հնուն «շոքոշը» թղթադրամը մտցվում էր նվագողի գլխարկի փակ, ճակատամասում, որ լավ երևա: Հեփագայում, երբ սկսել էին շափ փող «շոքոշ» փաղ, թղթադրամը մտցվում էր դիտլու գրպանը: Հետո էլ սովորություն դարձավ պարողներին փայլը, նրանք էլ հանչում էին երաժիշտներին:

Կար հավաքալիք, որ հարսանիքները (եթե գյուղում նույն օրը երկուս էր), պեղք է ճանապարհին չհանդիպեն միմյանց: Եթե հանդիպում էին, և, բնականաբար, մեկը զիջում էր ճանապարհը, որ մյուսն անցնի, զիջողը, իբր, բախտավոր չէր լինում: Դրա համար կողմերն իրար հետ նախապես պայ-



մանավորվում էին, որ հանդիպում չլինի: Կարծում ենք, բուն պարճառը կարող էր այն լինել, որ հարսանքավորների երկու մեծ խմբերի հանդիպումը, որտեղ շարքերը գինովցած էին լինում, անախորժ միջադեպերի վրանգ էր պարունակում:

Հարսանիքին հաջորդում էր «հավվան», որը փանում էին աղջկա հարսագարներն ու բաեկամները: Հարսանիքի հաջորդ օրը մեծ ափսեի մեջ պարաստված հավվայի երեսին շարում էին մեքադադրամներ: Հավվայի հետ փանում էին չիր ու չամիչ, խմորեղեն, խաշած հավ կամ սագ, մրգեր, խմիչք: Աղջկա մոր ուղարկած հավվայի ափսեն մնում էր որպես նվեր, իսկ մյուսներինը վերադարձվում էր: Որոշ գյուղերում հավվա փանում էր միայն աղջկա մայրը:

Խորհրդային իշխանության վերջին փասնամյակներում, թերևս 1960-ական թվականներից, երբ համարյա բոլոր գյուղերում հուշարձաններ կային՝ նվիրված Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին, աստիճանաբար ավանդույթ դարձավ հարսանքավորների ուղեկցությամբ նորաստակների այցը հուշարձաններ:



Ղարաշինար: Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձան: Բարի ավանդույթ էր դարձել նորաստակների այցը զոհվածների հուշարձան:

Չնայած վերացված էր կնունքը, չէր լինում անվանակոչության արարողություն, այնուամենայնիվ յուրաքանչյուր երեխայի, մանավանդ առաջնեկի **ծննդյան** առիթով մեծ կամ փոքր հանդիսություն կազմակերպվում էր: Ծննդափանը գգնվելու օրերին ընկերուհիները, բարեկամուհիները անպայման համապատասխան ուրվելիքներով ու նվերներով այցի էին գնում ծընրնդկանին, հաճախ նույնիսկ «խոնչա» (ուրվելիքներով ու խմիչքով սկուփեղ) էին փանում բուժանչնակազմի համար: Երեխա ծնվելու առիթով սովորաբար նրա պատվին ծառ էին փնկում այգում: Հաճախ էլ, երբ երեխայի հետ գնում էին որևէ բարեկամի կամ ընկերոջ փուն, փանաբերը երեխային մափնայույց էր անում որևէ ծառ և ասում՝ այս ծառը քոնն է. սովորաբար երկար փարիներ այդ երեխային վերցրած գալիս էին այդ ծառի բերքը բաղելու կամ երեխան ինքն էր գալիս, քաղում, երբեմն էլ, հատկապես եթե դա նույն գյուղում չէր, բերքը քաղում, ուղարկում էին: Երիտասարդ ընկանիքին (հայրական փնից նոր առանչնացված) ամեն երեխա ծնվելու կամ այլ առիթով բարեկամները հաճախ նվիրում էին «դմզղապու» (ցեղը շարունակելու, բազմացնելու համար)՝ էգ ոչխար կամ գառ, հորթ և այլն:

Աթելզմի փիրապետության պայմաններում, հասկանալի է, վերացված էր խաղողօրհները, սակայն **խաղողաբաղը** դարձյալ հանդիսավոր չեղավ կատարվում: Քանի որ գյուղերում համարյա բոլորը խաղողի այգիներ ունեին, բերքն էլ համարյա միաժամանակ էր հասունանում, բարեկամները համաչայնեցնում էին իրար հետ, թե ով երբ պիտի խաղողը քաղի: Այգու փերը, որպես կանոն, նախօրյակին «բղաքաղի»՝ խաղողաբաղի հրավեր էր ուղարկում բարեկամներին: Բղաքաղի գնում էին սովորաբար կանայք ու երեխաները՝ նվերներով, որպես կանոն փանում էին զինի, խաշած հավ, այլ ուրվելիքներ: Ոչ մեծ, բայց գեղեցիկ և ուրախ արարողություն էր «խաղողը կոխ փաղը» (ճգմելը)՝ բոբիկ ուրբերով, ինչպես նաև զինին քամելը: Տարվա այդ շրջանում բակերում, մոտակա գետափին շարվում էին խոշոր փակառներ ու հնչաններ, լցվում ջրով, այդպես պահվում մի քանի օր, որպեսզի «փոզեն», այսինքն՝ խոնավությունից ընդլայնվեն, բոլոր ճեղքերը փակվեն:

Բազմաթիվ բարի սովորույթներ էին կապված **նոր փուն կառուցելու** հետ: Նախ՝ փեղը որոշելուց, հիմքերի փեղը նշելուց հետո այնքեղ նստում, բաժակ են բարչապանում, հիմնվելիք շենքն օրհնում: Շենքի հիմքում, որպես կանոն, դրամ էր դրվում, որ բարեկեցություն լինի: Ըստ ընդունված կարգի թե՛ հարևանները, թե՛ բարեկամները հերթով պետք է գային, օգնեին շինարարությանը: Տանքերը, նախօրոք փեղեկանալով, թե ովքեր են ուզում գալ, օգնել, որոշակի հերթ էր սահմանում: Օգնելուց բացի, կար «պափը շնորհավոր անելու» սովորույթ. թե՛ եկողները, թե՛ նույնիսկ պարահական անցորդները պետք է պափի վրա դրամ դնեին, ասելով՝ «Աստված շնորհավոր

անի»։ Դրամի փոխարեն բարեկամները երբեմն վարպետի համար գուլպա էին որպես նվեր դնում պատի վրա։

Հափուկ սովորություններ կային՝ կապված **անասուն մորթելու** հետ։ Իհարկե, դա միայն փղամարդկանց գործն էր, մույնիսկ հավ մորթելն արգելված էր կնոջը։ Գյուղում համարյա բոլորն անասուններ ունեին, հատկապես խոզեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ։ Մորթել և միսը մշակել կարող էր թերևս ամեն փղամարդ՝ ցածր փարիքից սկսած, սակայն դա կափարվում էր հիմնականում փվյալ գյուղում, թաղամասում կամ գոհմուն ճանաչված մեկի կողմից։ Որպես կանոն, հավաքվում էին մերձավորները, մորթողը մորթում ու միսը մշակում էր, մյուսները նրա շուրջը հավաքված գրույում կամ օգնում էին, հեղա միասին սեղան նստում։ Մսից անպայման բաժին էր ուղարկվում կարիքավոր հարևանին ու բարեկամին։

Հափուկ արարողություն էր կապված խոզ մորթելու հետ։ Մեծ քանակությամբ խոզ էին պահում։ Աշնանն սկսում էին մորթել, հիմնականում մինչև Նոր փարին։ Մսի վաճառքի մեծ մասը կափարվում էր ապառիկ կամ փոխ էին փանում, որպեսզի իրենք էլ մորթեն, փոխը վերադարձնեն։ Մեկը միսը կփրկում ու կշռում էր, մյուսը թուղթ ու գոլի վերցրած գրում էր, թե ում ինչքան փրվեց և ինչ պայմանով։ Հաճախ փաները նույնիսկ չէր խառնվում, նա միայն սեղան պատրաստելով էր զբաղվում, որպեսզի վերջում միասին սեղան նստեն։ Հեփարքի գոյծություն էր մանավանդ խոզ խանչելը։ Բակում կրակ էին վառում, խոշոր քարեր շարում շուրջը, մորթած խոզը դնում վրան, մի քիչ խանչում, հեփո մաքրում, եռացած ջրով լվանում, շրջում մյուս կողմի վրա, նորից խանչում, քերում, մաքրում, լվանում։ Կանայք անընդհատ եռայրած ջուր էին հասցնում, փղամարդիկ «խանչում» էին, մինչև որ կաշին լավ մաքրվի ու փափկի։ Հեփո նեղ ու երկար շերտերով կփրկում էին կաշին ու վայելում, սովորաբար հենց կրակի շուրջը, օղիով կամ գինիով։ Նոր ժամանակներով խոզը «խանչելը» հեշտացել էր բենզոլիով կրակվառիչների միջոցով, բայց դարձյալ պահպանում էր գրավչությունը թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար։

Խոզը մորթելու օրը բարեկամները մինչև գիշերվա կեսը քեֆ էին անում, իսկ կրակի վրա եփում էր կորկոփը՝ խոզի ճարպոփ մսերից։ Այն պատրաստ էր լինում առավոտյան, դարձյալ հավաքվում ու վայելում էին մերձավորներով։ Խոզի գլխամսերից սաղիսոն էին պատրաստում չնեովա համար, որը բավական աշխատարար ու մեծ հմություն պահանջող գործ էր, կափարվում էր դարձյալ բարեկամների համարեղ ջանքերով։ Մեծ արարողություն էր կապված «յուղը հալելու»՝ ճարպը հալելու հետ։ Խոզը մաշկելուց անմիջապես հեփո երկար ու նեղ շերտերով առանձնացվում էր ճարպը։ Ընդ որում հաճախ, դեռ միսը մշակելը չավարտված, հենց փեղում մեկը կրակի վրա

խոռվում էր ճարպի նեղ շերտեր, ինչպես նաև փայծաղը, և վայելում էին հենց ուրքի վրա։ Հաջորդ օրը փղամարդիկ փաշտի մեջ մանր կփրկում էին ճարպը, կանայք հալում էին։ Չհաված մանր կփորները՝ «խուզուզուցը», առանձնացվում էր. նրանով որոշ ճաշարեսակներ և հասարակ խմորեղեն էին պատրաստում։ Պեքը է ասել, որ հափուկ նշանակություն էր փրկում փոքամասի ճարպին, որը բուժիչ էր համարվում, գործածվում էր սովորաբար որշաքի հետ խառնած։

Քանի որ աշնանն էին սկսում խոզերը մորթուել, գինին էլ առափ էր լինում, իսկ դրսի գյուղափոփեսական աշխատանքները՝ ավարտված, մինչև գարուն խնջույքներ ու հավաքություններ էին լինում։ Կար այսպիսի գեղեցիկ սովորույթ։ Երբ մի քանի ընկերներ հանդիպում էին փողոցում, ում փունն ավելի մոտ է, թեքվում էին այնտեղ։ Մտնելուն պես հյուրերից մեկը ներսից դռանը փականը ծածկում էր («չանգալը գցում էր»)։ Այդ նշանակում էր, որ հյուրերը բավարարվելու են փանը եղածով, լրացուցիչ ներություն չպիտի կրեն փաներերը։ Դրա համար էլ, որպես կանոն, ճաշելուց հեփո փաների կինները օղու շիշն ու գինու սափորը, հաց, պանիր, թթու և այլն դնում էին սեղանին, մաքուր սփռուցով ծածկում, որպեսզի եթե փան փղամարդը հյուրերի հետ գա, մի բան պատրաստ լինի սեղանի վրա։ Հեփո արդեն կարող էին սեղանը հարստացնել ըստ հնարավորության և ըստ հանգամանքների։

Եկեղեցիների փակումից հեփո կրոնական ծիսակատարությունները վերացել էին, բայց **գափկի** միշտ մշվում էր. հավաքվում էին ուխտավայրերում, նախաձ չու, այլ ուրեիքներ ու գինի փանում. խնջույք կազմակերպում, սակայն՝ միայն երեխաներն ու պատանիները։ Խորհրդային փարիներին բնակչության մի մասը անհավար դարձավ, իսկ հավատարայրներն էլ խուսափում էին բացահայտորեն ուխտավայր գնալուց քացի մեծահասակ կանանցից։ Կարող է փարօրինակ թվալ գափկին երեխաների գինի օգտագործելը, սակայն շահունյանցիների համար անսովոր ոչինչ չկար, երեխաները փոքր փարիքից գինի էին խմում, իհարկե, քիչ քանակությամբ։ Բոլորը գինի էին ունենում ամբողջ փարին և միշտ օգտագործում էին ճաշին, մասնակից դարձնելով նաև երեխաներին, բայց հարբեցող, ներկայիս ըմբռնմամբ՝ ալկոհոլիկ, ոչ մի գյուղում չկար։ Ամեն գյուղում, իհարկե, կային մեկերկու հոգի, որոնք համեմատաբար մի քիչ ավելի հակում ունեին գինու նրկատմամբ, սակայն նրանք բոլորն էլ լավ աշխատող մարդիկ էին և երբեք հակահասարակական որևէ արարք թույլ չէին փարիս։ Երբքինչեմացի հանրահայտ խմող Մթովանց Կոլին, օրինակ, առավոտից երեկո Լիպրի ժայռերից քար էր քանդում. գյուղի փների մեծ մասը նրա քանդած քարով էր շարվել։ Մյուս հայրնի խմողը՝ Առստամանց Նազարը, և՛ բարեխիղճ հողագործ էր, և՛ կոշկակար։ Ընդ որում, բրեզնեփից էժանագին, բայց դիմացկուն



կոշիկ էր կարում և միշտ գնորդի խաթրով էր վճարը վերցնում: Նույնը կարելի է ասել մյուս գյուղերի ճանաչված խմորների մասին: Մնում է միայն ավելացնել, որ մեր շրջանի գյուղերում հիմնականում մուշկեթի գինի էին խմում, որը սեղանի թույլ գինի էր, իսկ օրի խմում էին միայն առավոտյան, նախաճաշից առաջ, մեկ բաժակ, այն էլ միջին փարիքից սկսած:

Եկեղեցական միայն մեկ արարողություն խորհրդային իշխանությունները չկարողացան արմատախիլ անել: Հունվարի 6-ին, իհարկե, գաղփմի, բայց միշտ մարդաշատ, կատարվում էր «**խաչը ջուրը գցելու**» արարողությունը: Դժվարանում ենք մանրամասն նկարագրել, բայց հայրնի է, որ գիշերը որոշակի փեղում հավաքվում էին մեծ թվով հավաքացյալներ: Հիմնական արարողությունը կատարվում էր գետում, լուսադեմին:

Բազմաթիվ սովորույթներ կային՝ կապված ծանր **աշխատանքները համարել կատարելու** հետ: Այդպես էր կատարվում հերկը, չմեռվա համար ցախի ու վառելափայտի կուրակումը: Խաղողը քաղելու նախ օրյակին կամ այդ օրվա առավոտյան մի քանի մերձավորներով զբաղվում էին «բանդաղ (կախան) անելով». խաղողի ընփր ողկույզները ուռնու ճյուղերով կապում, երկար շարանի չևով կախում էին մառանում: Նույն չևով հավաքվում խնձորը, փանջը խախալ էին անում, այսինքն՝ կապում էին թելերով, պահում չմեռվա համար: Միասին էր կատարվում նաև լոբու «չորուկը պղծելը», սովորաբար մասնակից դարձնելով հարևանների ու բարեկամների երեխաներին:



Խորհրդային տարիներին ձևավորվեց ամուսնության հետ կապված նոր ավանդույթ՝ կոմերիտական հարսանիքը: Այսատանքում, հասարակական կյանքում աչքի ընկած երիտասարդ տղաների ու աղջիկների հարսանիքը կազմակերպվում էր տվյալ կոլեկտիվի, գյուղի կամ շրջանի կոմերիտական կազմակերպության կողմից, որի մեջ մտնում էին տվյալ գույգերը: Լուսանկարում՝ կոմերիտական առաջին հարսանիքը Շահումյանի շրջկենտրոնում, 1981 թ. նոյեմբերի 15-ին:



Խորհրդային տարիներին շրջանի գյուղերում ձևավորվեցին նոր ավանդույթներ, որոնցից մեկը «ոսկե հարսանիքի» հանդիսությունն էր: Այս լուսանկարում պատկերված է Մամոն և Մարգար Լալայանների «ոսկե հարսանիքը» (Էրբեց, 1987 թ.): Կեդաբայա հարսի (կենտրոնում) կողքին քավորակին է:

Ուշագրավ սովորույթ էր **բանակ ճանապարհելու արարողությունը**: Մեր լեռնաշխարհի բնակչությունը բացառիկ հարգանք էր փածում հայրենիքի զինվորի նկատմամբ: Պարահական չէ, որ երբ փղա էր ծնվում, մեր գյուղերում այսպես էին օրհնում՝ «Մեծանա, բանակ գնա...»: Ավաղ, շաբաթը բանակից չէին վերադառնում, իրենց կյանքը զոհում էին հանուն հայրենիքի: Նրանց անունը սրբորեն հիշվում էր, նշվում բոլոր հանդիսությունների ժամանակ, նրանց պարվին հուշարձաններ էին կառուցվում, որոնք ուխտավայր էին դառնում: Հնագույն ժամանակների զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարերով սրբավայրեր կան թերևս բոլոր գյուղերում, որոնց ժողովուրդը «նահափակ» էր ասում: Հայրենական պատերազմի զոհերի հուշարձաններ կային բոլոր գյուղերում, որտեղ ամփոփվեցին նաև արցախյան պատերազմի զոհերի աճյունները: Չնայած կորուստներին, մարդիկ միշտ հպարտությամբ էին որդի ճանապարհում բանակ, և հանդիսություններ էին լինում այդ առիթով: Եթե նույն գյուղից միաժամանակ մի քանի հոգի էին զորակոչվում, ծնողները հերթ էին սահմանում, թե ում փանը երբ պիտի հավաքվեն, հանդիսություն կազմակերպեն: Հավաքվում էին երբեմն 2-3 հար-



յոր մարդ՝ նվերներով (որպես կանոն՝ ուրելիք և խմիչք, իսկ նոր ժամանակներում՝ փող, որի համար հափուկ ցուցակ էր կազմվում): Սեղանների շուքը այս դեպքում էլ լինում էր խոնջան, որ բերում էին բարեկամները, հարևանները, փողայի ընկերների ծնողները: Ուղեկցվում էր երաժշտությամբ, երգով, պարով:



Բանակ ճանապարհելու անմոռաց պահ ...

Մեծ իրադարձություն էին **ավարտական քննությունները**: 1920-ական թվականներից, երբ բացվեցին միջնակարգ դպրոցներ, գյուղերի կյանքում մեծ իրադարձություն էին դպրոցի ավարտական քննությունները: Շրջանավարտների ծնողներն ու բարեկամները քննության օրը ուսուցիչների համար խոնջա էին փանում՝ փվյալ գյուղին բնորոշ ուրելիքներով ու խմիչքներով: Տվյալ օրվա քննությունից հետո ուսուցչական կուլեկտիվը դպրոցի ղեկավարների գլխավորությամբ, սեղան էին նստում, վայելում խոնջաները: Դրա հետ կապված մի զվարճալի դեպք է հայտնի: Հիմնականում 1930-ական թվականներից սկսած, փարածում ստացավ որևէ մեկի հասցեին շրջկոմին անստորագիր բողոքագիր՝ չարախոսություն, «կյառուզա», «մափերի-ալ» գրելը: Ղարաչինարի միջնակարգ դպրոցից մեկը «մափերիալ» է գրում շրջանի ղեկավարությանը, թե՛ փնօրեն Օհան Աղաջանյանը «խոնջալիզա-սիալով է գրադվում»: Ընկեր Օհանին կանչում են շրջկոմ, հայտնում այդ

մասին, զգուշացնում, որ շափ չբարվեն խնջույքներով, բայց այդ հորինված բառի վրա բոլորը մի լավ ծիծաղում են: Ընկեր Օհանը վերադառնում է Ղարաչինար, հենց գյուղամիջում հանդիպում այդ «կյառուզնիկին», մի լավ «նախշում» ասելով. «Ա՛՛ շան փղա, էր խոնջալիզասիալի թամադան փյու չե՞ս ինում»:



Գյուղերի կյանքում մեծ իրադարձություն էր դպրոցների ամեն մի բողոքի մըր, որը, որպես կանոն, «անմահացվում» էր լուսանկարով ...

Շրջանի բարձրագույն կրթությամբ առաջին մասնագետներից էր Մանաչիդից Ալեքսան Մնացականյանը: Երևանում ինստիտուտն ավարտելուց հետո նա նշանակվեց Շամշադինի Պառավար գյուղի դպրոցի տնօրեն, հետո մասնակցեց հայրենական մեծ պատերազմին, բարձր պարգևների արժանացավ, երկու անգամ վիրավորվեց: Չորսրդվելուց հետո վերադարձավ Մանաչիդ, տարբեր ղեկավար աշխատանքներ կատարեց: Գյուղի դպրոցում միջնակարգ կրթություն էին ստանում նաև հարևան Էրբեջի և Բուզլուխի յոթնամյակների շրջանավարտները, մինչև որ այդ գյուղերի դպրոցները նույնպես դարձան միջնակարգ:

Լուսանկարում՝ Մանաչիդի միջնակարգ դպրոցի 1958-1959 ուս. տարվա շրջանավարտները՝ մի խումբ մանկավարժների հետ, կենտրոնում՝ դպրոցի տնօրեն Ա. Մնացականյանը: Ալեքսան Մնացականյանից հետո դպրոցի տնօրեններ դարձան նրա նախկին սաները՝ Գրիշա Հարությունյանը, Աղվան Գալստյանը և ուրիշներ:





Շահումյան ավան: Խորհրդային Միության հերոս Գարեգին Բալայանի կիսանդրին նրա անունը կրող պուրակում: Գպրոցական շատ հանգիստություններ այստեղ էին անցկացվում:

Հին ավանդույթի համաձայն յուրաքանչյուր տունի հաջորդ օրը մարդիկ այցի էին գնում հանգուցյալների շիրիմներին: Խորհրդային տարիներին ավանդույթ դարձավ մայիսի 2-ին գերեզմաններ գնալը: Այդպիսի մի պահ է պատկերված այս լուսանկարում Վերին Շենի գերեզմանոցից:



Քոլոր ժամանակներում հայրենի հողի համար զոհվածները սրբույթյամբ են հիշվել ժողովրդի կողմից: Թերևս բոլոր գյուղերում նրանց հիշատակին ստեղծվել են Նահատակ և այլ անուններով ուխտավայրեր: Շրջանի գյուղերը մեծ թվով գոհեր տվեցին հատկապես 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Նրանց հիշատակին կառուցվեցին նոր հուշարձաններ, որոնք նույնպես դարձան ուխտավայրեր: Համաժողովրդական տոների, զանազան հանդիսությունների և այլ առիթներով մարդիկ այցի էին գնում, ծաղիկներ դնում, զոհվածների հուշարձանին: Լուսանկարում՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը Բուզուխում:



Անեն գյուղ ունեն միս վաճառելու հատուկ տեղ և մշակված կարգ: Մեկը միսը կտրտում և վաճառում էր, մեկին էլ բուլոջ ու մատիս վերցրած գրում էր, թե ով ըսանի կիրոզրան գնեց կանխիկ փողով, ով «փոխ» տարավ, ով պարզապես պարտքով տարավ, որպեսզի աշխատավարձ ստանալուց հետո վճարի:





Մինչև 1960-ական թվականները գյուղերում գուլպայի, տաք հագուստի, ձեռնոցի, գլխաշորի և այլ պահանջմունքներ բավարարվում էին սեփական միջոցներով: Բրդից, ինչպես նաև բամբակից, թել էին մանում ճախարակով և գործում ձեռքով:

Սանդերքով բուրգ գգելը տատիկների «մենաշնորհն» էր: Ահա այսպես բուրգը գգում էին, նուրբ ու փափուկ մալանչներ պատրաստում, որից հետո ճախարակով թել էին ստանում:



Գորգ գործելը այաների կարևոր, հաճախ շատ հաճելի հոգսերից է եղել: Գորգ ու կարպետ են գործել հասունացող աղջիկների հաճար և հենց նրանց սովորեցրել այդ արհեստը: Գործել են նաև ջվալ, մեղաք՝ անձամբ հոգալով իրենց տնտեսության կարիքները: Իսկ առավել շնորհաշատ գործողները հաճախ նաև պատվերով են գործել՝ լրացուցիչ եկամուտ բերելով իրենց ընտանիքին:



... Այսպես էին հագնվում մեր այաները: Բուզովսեցի Յական Հովհաննիսյանի մայրը՝ լուսանկարված 20-րդ դարի սկզբներին:

Շատ սովորույթներ ու ավանդույթներ հաճախ բանդակվել են հուշարձանների վրա, որոնց ուսումնասիրությունը կարող է հետաքրքիր շատ իրողություններ բացահայտել մեր նախնիների կյանքից:







Մանաշիգի դպրոցականները շաբաթօրյակի ժամանակ, Բինին տակ տեղամասում, 1962 թ.:



Հանրային տնտեսությունը բավարար եկամուտ չէր ապահովում գյուղացիների համար, որի պատճառով աշխատուժի մեծ արտահոսք էր ապահովվում: Շատերը մեկնում էին Ռուսաստան, Ղազախստան, նույնիսկ հարևան ադրբեջանական շրջաններ՝ այսպես կոչված սեզոնային աշխատանքի: Տեղերում պակասում էր աշխատուժը, որի հետ կապված անցանկալի ավանդույթ դարձան շաբաթօրյակները: Շրջանի բոլոր հիմնարկ-ձեռնարկություններին, նույնիսկ դպրոցներին անվճար խոտ հնձելու և հավաքելու, խաղողի այգիներ մշակելու, կարտոֆիլի և այլ բերք հավաքելու և այլ առաջադրանքներ էին տրվում (դա նաև լրացուցիչ «եկամտի» աղբյուր էր առանձին ղեկավարների համար):

Լուսանկարում շրջանային բերքի խմբագրության աշխատողները Վերին Շենում կարտոֆիլի բերքը հավաքելու ժամանակ, 1975 թ.:



Խորհրդային տարիներին ձևավորված նոր սովորույթներից մեկը կապված էր այսպես կոչված հեղափոխական տոների օրերին (մայիսի 1-ին և նոյեմբերի 7-ին) շքերթ կազմակերպելու հետ: Տոնականորեն զարդարվում էին գյուղերն ու ավանները: Բոլոր գյուղերից դրոշներով ու լուսնոցներով պատվիրակություններ էին ժամանում շրջկենտրոն, անցնում կենտրոնական փողոցով, վերջում էլ վարչական շենքի առջևով, որտեղ կանգնած էին լինում շրջանի ղեկավարները և արտադրության առաջավորները:

Լուսանկարում՝ Գյուլիստանի պատվիրակությունը մայիսամեկյան շքերթի ժամանակ: Առաջին շարքում ձախից՝ Վարդգես Հովասափյանը: Շուրջ քսան տարի նա ղեկավարել է գյուղը, նախ՝ որպես գյուղխորհրդի նախագահ, հետո, մոտ 15 տարի, որպես կոլտնտեսության վարչության նախագահ: Նրա ղեկավարությամբ բարեկարգվել են գյուղի փողոցները, բարեկարգ տներ են կառուցվել, ջուր է անցկացվել տները: Պարտքեր ունեցող կոլտնտեսությունը նրա օրոք դարձել է միլիոնատեր:





Աշխատանքային կոլեկտիվներից շատերը դարձել էին մի մեծ ընտանիք, որտեղ միասին էին անցկացնում բոլոր հանդիսությունները, նշում ընկերների հորեկյանները (ինչպես որ այս լուսանկարում, Լարաշինարում), և սեղանը դառնում էր մարդկանց համախմբելու, արժանիքներ գնահատելու, բարի ավանդույթները շարունակելու կարևոր միջոց:



Գպրոցներում բարի ավանդույթ էր դարձել տարեվերջին ուսուցիչների հետ լուսանկարվելը: (Լուսանկարը Մնասին Շենի դպրոցից է):

հատի վառ դառն լուրջությամբ, մտախառնությամբ, ինչպես իր անհատական կյանքում, այնպես էլ հասարակական կյանքում, որտեղ նա համարում էր իր անհատական կյանքը հասարակական կյանքի հետ կապելու և հասարակական կյանքը իր անհատական կյանքի հետ կապելու միջոցով:

## ԲԵՐՔԱՀԱՎԱՔ՝ ԿԼՈՐ ՏԱՐԻՆ

Լեռնաշխարհի հարուստ բնությունը, դաշտերն ու անտառները, գետերը ասպրուտի անսպառ աղբյուր էին բանակչության համար: Վաղ գարնանից սկսվում էր զանազան օգտակար բույսերի հավաքումը՝ սիբոդ, շուշան, կյուրնյուզուկ, պեքի, ծինեփակ և այլն: Այդ բույսերը քաղելու էին գնում թահամասերով՝ կանայք, երեխաները, պատանիները: Պեքին, կյուրնյուզուկ, ծինեփակ քաղելու գնում էին ավելի հաճախ փղամարդիկ, որովհետև դրանք աճում էին հաճախ դժվար մատչելի (անտառոտ) և վտանգավոր (օջառատ) տեղերում: Մի աննկարագրելի արարողություն էր դա: Երեկոյան պայմանավորվում և վաղ առավոտյան իրար չեն փայլով հավաքվում, մեծ խմբերով գնում, մինչև կեսօր, երբեմն մինչև երեկո քաղում էին, բնության գրկում բույրը միասին ճաշի մատուցում: Վերադառնալուց հետո էլ ամբողջ գիշեր փնտրում հավաքված մաքրում (հնդրում) էին բերածը, տեսակավորում, թթու դնելուց թթու դնում, չորացնելուց փռում չորանալու, եփելուց՝ եփում:

Ամռան ամենահաճելի խմբային զբաղմունքներից էր չուկ որսալը: Ընկերներով հավաքվում, գնում էին գետերի չկնառատ տեղերը: Խմբի մեջ աշխատանքի բաժանում էր լինում՝ ոմանք «խորխոթ» էին փայխ, քարերի փակերից չկները դուրս քշում, մյուսները բռնում էին: Հեղաքրքիր էր նաև «քթոց սարելը»... ուռենու և այլ մատղաշ շիվերից հափուկ կողովներ էին գործում, տեղավորում չկնառատ տեղերում. չուկը դրանց մեջ հավաքվում էր, դուրս գալու տեղ չէր գտնում: Բռնած չուկը, շատ լինել, թե քիչ, առիթ էր դառնում ընկերների ու բարեկամների մեծ խնջույքի, չհաշված, որ հենց գետափին վայելելն ինքը մեծագույն հաճույք էր:

Օգոստոսից սկսվում էր անտառների հոնի, շլորի, փանջի ու խնչորի բերքահավաքը, որը կատարվում էր դարչյալ մեծ խմբերով: Հոնը չորացնում էին (նաև շլորը) չմեռվա համար, փանջն ու խնչորը լցնում էին խոփի կամ ծղոփի վրա, պահում չմեռվա համար և անընդհատ փնտրում, հաճմանը ջոկում էին, ուրում: Տանջը նաև թթու էին դնում: Հաճարի բերքը հավաքում էին ընտանիքներով: Հայրը կամ չափահաս տղաներից մեկը բարչրանում



էր, հաճարի ծառի ճյուղերը թափահարում, իսկ փոքրերը ծառի տակ փռած պահում էին թթի շալը, հաճարը հավաքում: Ամբողջ չմռանը դա երեխաների համար հաճելի և սննդարար ուտելիք էր, իսկ տարիկները որոշ թխվածքներ էին թխում հաճարով, չքավոր ըմփամիքներում նույնիսկ ճաշ էին պատրաստում՝ յուղի փոխարեն հաճար օգտագործելով: Կային անտառային հարվածներ, որպեսզի մեծ չափով ընկույզ էր լինում: Դրանք համեմատաբար հեռու էին լինում բնակավայրերից, և ընկույզ հավաքելու գնում էին հիմնականում տղամարդիկ, չիերով կամ էշերով:

Խոր չմռանը, երբ անտառում չյուն էր նստած լինում, գնում էին զկեռ հավաքելու: Ծառերի վրա տերև չէր լինում, այլ միայն հասած զկեռ, թափ էին տալիս ու հավաքում չյունի վրայից:

Անտառները լիքն էին որսով՝ նապաստակ, աղվես, արջ, եղնիկ, քարայծ, կզաքիս: Գայլի որս չէր լինում, այլ պարզապես ոչնչացնում էին գայլերին, որպես վասապուների, մաշկում, կաշին հանջնում պետուռքանը, սպանում որոշակի վճար: Իսկ «չմեռնապիմը» տարիներին, երբ գյուղերի ու ֆերմաների շրջակայքում սկսում էին հաճախակի հայտնվել գայլեր, կազմակերպվում էր նրանց ոչնչացումը:

Որսի գնում էին խմբերով: Ամեն գյուղում կային ճանաչված որսորդներ: Որսը որպես կանոն հավասար բաժանում էին խմբի անդամների միջև, անկախ նրանից, թե ով ինչ կամ քանի հատ է սպանել: Տուն բերելուց հետո էլ որսի մասի բաժին էր տրվում հարևաններին ու բարեկամներին: Որսի մյուս տեսակը, որ թակարդներով էր կատարվում, անհատական բնույթ ուներ: Մակայն այս դեպքում էլ, ինչպես որ խմբային որսի ժամանակ, երբ դաշտում կամ անտառում որսի միսը մշակելու ժամանակ որևէ մեկը պատահաբար գալիս, հանդիպում էր, նրան նույնպես հավասար բաժին էր տրվում:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՑ



Հայկական խոհանոցի բոլոր հիմնական ճաշատեսակներն ու ուտեստները տարածված են եղել նաև Ծախումյանի շրջանի գյուղերում, բայց ունեցել են պարբերական որոշ առաջնահատկություններ: Որոշ ճաշատեսակներ էլ տարածված են եղել առավելապես մեր գյուղերում: Դժվար է ստույգ որոշել, թե ինչն է հատուկ միայն մեր գյուղերին, կարծում ենք, դա այնքան էլ էական չէ: Ստորև կներկայացնենք մեր գյուղերի ազգագրական պատկերը արտապտոյղ և քիչ տարածված մի շարք ճաշատեսակներ ու ուտեստներ, որոնք կամ արդեն մոռացվել են, կամ մոռացման վտանգի տակ են:

**ԿՈՆՉՈՒ:** Քիչ չորացած թոնրի հացը մանր կտրտվում է: Հետո պատրաստվում է տխտած, ավելացվում չորս և աղ, եփելու ժամանակ ավելացվում է համեմունք, տաքդեղ և այլուրից պատրաստած խյուս: Մի քիչ եռացվում է, որպեսզի այրահամը անցնի, հետո ավելացվում է նախօրոք մանր կտրտված հացը: Հինգ բույս եռալուց հետո ավելացվում է մեկ կամ երկու հարած ջու: Ուտելու ժամանակ ափսեի մեջ կարելի է ավելացնել մեկ նաշի զղալ գինու քացախ՝ յուղայնությունը թեթևացնելու, համելի թթվաշունքուն տալու նպատակով:

Որոշ տներում կոնչոլը պատրաստում էին կամ կրեկի դարչած, կամ հնացած հացից:

**ՇՓՈԹ:** Այլուրը պեղր է աստիճանաբար լուծել սառը ջրի մեջ՝ նախօրոք լցնելով աղ, հետո անընդհատ խառնել, որպեսզի կոլոիդներ չառաջանան և չկպչեն կաթասյի պատերին: Որոշ ժամանակ եփելուց հետո սրացված մածուցիկ (ոչ պիկո) զանգվածը տաք վիճակում լցվում է ափսեների մեջ: Հետո ափսեի կենտրոնական մասում խմորազանգվածի մեջ փոս է արվում, մեջը լցվում որշաք կամ մեղր: Գդալով քիչ-քիչ վերցնում են խմորազանգվածից, քաթախում, որշաքի կամ մեղրի մեջ և ուտում: Որոշ գյուղերում շիտթը պատրաստում են

մասն իսպառույթի հյուսիսից կամ մասնատից՝ ջրի փոխարեն: Այդպիսի շփոթի մեջ արդեն դոշաք կամ մեղր չի լցվում: Այդպիսի խմորագանգվածին խառնվում է մանր կրրորած ընկույզի միջուկ:

**ԽԱՇԻԼ ՓՈՒՆԻՆՉՈՎ:** Բուլած և երկանքով աղացած ցորենի ալյուրը՝ փոխինչը, մաղում են, առանձնացնում մանրը և խոշորը: Խոշորն ասորիճանաբար լցվում է առը ջրի մեջ (որի մեջ նախապես աղ է լուծված լինում), խառնըվում, եռացվում է 15-20 րոպե: Դրանից հետո ավելացվում է մաղվածքի մանր, ալյանման մասը ու խառնվում, նորից մի քանի րոպե եռացվում և փաք վիճակում լցվում, արհեստները: Ուրեկուց առաջ իաշիկ կենդրոնում, գոյալով փոս է արվում, մեջը լցվում, հալած յուղ: Խաշիկ շուրջը (շրջանագծով) լցվում է քան կամ քանչը մածնաջուր: Ուրեկու կարգն այսպես է. պետք է գոյալով վերցնել իաշիկը, քաքախել յուղի մեջ, հետո քաքախել քանի կամ մածնաջրի մեջ և ուրեկ:

Խաշիկ ուրեկու քարեկիրք չեն այն է, որ յուղը, քանը և խմորագանգվածը միասին վերջանան, այսինքն՝ պետք է համաչափ ուրեկ: Հնում, երբեմն նույն ամանից միաժամանակ մի քանի հոգի էին ուրում, որի պարճառով ուրեկու քարեկիրք չեն պահպանել միջոց չէր հաջողվում: Հայրենի են դրա հետ կապված զվարճալի պարմություններ:

Ասում են, մի անգամ նորափեսան Հյուր է եկած լինում: Տանտիկինն առնուհանդերձ և փեսայի համար նույն ամանում խաշիկ է լցնում, և աներ ու փեսա սկսում են ուտել: Փեսան մի քիչ երկչոտ է լինում, իսկ գործանչն ուզում է, որ հպած յուղը հոսի դեպի նրա կողմը. դեպով յուղի փոսիկից հետք է քացում դեպի փեսայի կողմը և առում. «Փեսա ջան, շուտ-շուտ արի, որ ճանապարհս պ հասնեմ քացվի»: Աները նկատում է, որ յուղն ամբողջությամբ հոսեց փեսայի կողմը, ինքն էլ գոյալով խառնում է թանը, խաշիկն ու յուղը (որպեսզի երկուսին հավասար հասնի) և առում. «է՛, այ կնիկ, դժվար ա, է՛, դժվար, խառնիրսաթիշ տարի ա»:

**ԽԱՇԻԼ ԿՈՐԿՈՏՈՎ:** Մաղը ջրի մեջ լուծվում է աղը, լցվում խոշոր կրկուր, եռացվում մոտ 20-25 րոպե: Կրկուրը լավ եփվելուց հետո քիչ չափով ավելացվում է մաղով անցկացված ալյանման փոշուց: Հետո պարրասարվում է սոխառած: Կրկուրով իաշիկը փաք վիճակում լցվում է արհեստի մեջ, մեջուրեղը գոյալով փոս արվում, սոխառածը լցնում մեջը: Գոյալով վերցնում են իաշիկից, քաքախում սոխառածի մեջ, ուրում:

**ՀՅՈՒՆՈՒԹԹՈՆ (ՏԱՔԼԱԹԹՈՆ):** Հոնի (կամ քթու դամբուլի) չիրը եփում են այնքան, որ փափկի: Հետո չեռքով փրորում են, կորիզներն առանձնացնում: Մրացված հեղուկ զանգվածին ավելացնում են մի քիչ ալյուր՝ անընդհատ խառնելով, որպեսզի խմորագանգիկներ չառաջանան, ավելացնում ալյուր կամ մանր չափար և եռացնում: Ուրեկու ժամանակ արհեստի մեջ ըստ նաշակի ավել-

ացվում է դոշաք (կամ շաքարաջուր), որպեսզի շար քթու չլինի: Որպես կանոն ուրեկու ժամանակ արհեստի մեջ առարորեն հաց են բրդում, դա և՛ կշրացնում է և մեղմացնում է բրդությունը:

Հյունութքոն մրսածի դեղ է, քրորելու լավ միջոց:

**ԿԱՐԿԱԾ (ԳԳՈՒՄ):** Կարկածը սովորաբար եփում են հաց քիտու օրը, ուշ աշնանն ու ջնտանը: Դդումի կոթի մասը կլոր կրրում, վերցնում են, ներսը մաքրում, գոյալով, հաճում ենքներն ու փափուկ մասը: Ներսը շերտ առ շերտ լցնում են ընկույզի միջուկ, սև ալորի չիր (առանց կորիզի), կրրորած սոխ և յոր հոն: Հետո ծածկում են իր խկ «կափարիչով» (կրրված պոչամասով): Հայր քիտուց հետո քոնրի մեջ առար շեղք է մնում, (շիկացած ամոխների՝ մեծ կույր): Ըղնված դդումը դրվում է այդ շեղքի մեջ, քոնրի քերակը փակվում: Առավորյան արդեն ընկրի ուրեկիքը պարրասար է լինում: Ավելի լավ է լինում, երե դդումը շեղքի մեջ է դրվում, քուցե քավալով: Կարկած համախափի չեն եփում, ուստի եփելու դեպքում սովորաբար հյուր են կանչում, մոտիկ քարեկամներին կամ հարևաններին, միասին ճաշակում:

**ԿԱՐԿԱԾԻ ՇԻՒԱ:** Դդումը դնում են փաք վառարանի վրա, շուր-շուր շերտում, շուտումոտ փախի, որպեսզի քուր կողմերը դառնան կիսափորոված: Հետո կրրորում են, հեռացնում կեղևը և ներսի մածուցիկ մասն ու կորիզները: Կարկածի մեջ մեկ քաժակ ջրին ավելացնում են մաքրած և մանրացրած ընկույզ և սոխ: Սոխը փափկելուն պես ավելացնում են սև ալորի (ալյուրիարի) չիր ու շոքացրած հոն, հետո ավելացնում մանր կրրորած դդումը: 10-20 րոպե եռացնելուց հետո շիլան պարրասար է լինում: Երբ դդումը քաղցրահամ չի լինում, շիլան եփելու ժամանակ ավելացնում են մի քանի կրոր շաքար: Ուրում են երկու չեռքով երկու կրոր հաց բոնած, շիլան մեկով մյուսի վրա քսելով:

**ԿԵՃԱՆՍԱԸ:** Եգիպտացորենի հարիկները ջրի մեջ մի քանի ժամ քրջոց դնելուց հետո եփում են այնքան, որ դառնա կիսաեփ, որից հետո ավելացնում են նախօրոք քրջոց դրված լոբու հարիկ և կրկուր (փինզով ձեծած ցորեն): Երբ այդ խառնուրդը որոշ ժամանակ եփում է, ավելացվում է մանր կրրորած ընկույզի միջուկ: Դրա շնորհիվ կիճախաշը դառնում է յուղալի և հաճելի կարմրավուն, ուրեկու ժամանակ էլ դորեկան իրթիրթոց է լինում: Որովհետև կիճախաշը եփելը երկար է րկում, սովորաբար երեկոյան սկսում են, մինչև ուշ գիշեր պարրասարում, առավորյան ճաշակում:

**ԼՈՐՈՎ ՃԱՇ ԵՎ ՅԱՆԻՒ:** Հարիկ լոբին եփում են, ջուրը քանում, հարիկների մի մասն առանձնացնում: Առանձնացված հարիկներին սոխ է կրրորում և օգրագործվում որպես խորիկի՝ յախի: Լոբու մյուս մասին ավել-



լացվում է մանր կորկոյր և ընկույզի կտրտված միջուկ, եփվում ինչպես ջրայի ճաշ: Այն կոչվում է նաև չալ ճաշ, որովհետև սովորաբար պատրաստում են չալ լորուց:

**ՓԹԲՈՒ:** Պայտերագնակիս ու հեղուկներագնակիս ծանր փարթիկներին փարածված ճաշարեսակ էր փթթոկը: Կրան ունեցողները պատրաստում էին ջրի հեղ խառնած կաթով (1:1 հարաբերությամբ), չունեողները՝ ջրով: Եռացվում էր ջրով խառնած կաթը կամ միայն ջուրը, այնուհետև լցվում էր սոխառածի վրա: Առանձին բասի մեջ լցված ալյուրի վրա կաթիկներով մի քիչ ջուր են ցողում, բուր մատով և ցուցամատով վերցնում կիսախմոր ալյուրակաղիկը, մանր փաթիկների նման լցնում եռացող հեղուկի մեջ, ավելացնում համեմունք, եփում 15-20 րոպե: Ռեփելյու ժամանակ կարելի է ափսեի մեջ ավելացնել (ըստ ճաշակի) մեկ թեյի գդալ գինու քացախ:

**ՔԻԼԻՆՉՅՈՒՆ:** Չորաբանը թրջոց են դնում փաթ ջրի մեջ 4-5 ժամ: Հեղոք քանում են, սկսում շեռքի ամոլով հարել՝ քիչ-քիչ ավելացնելով փաթ ջուր, մինչև որ գնդիկները լրիվ հալվեն: Մտացված բանը եռացնում են, մեջը մանր կըրորում, թոնրի շոր հաց, եռացնում 5-10 րոպե: Ռեփելյուց առաջ ափսեների մեջ ըստ ճաշակի (և ըստ հնարավորության) ավելացվում է յուղ և մի քիչ սխորոք:

**ՉՈՐԱԹԱՆ:** Գյուղերում փանրիտուհիները համախ չորաբան էին պատրաստում, պահում որպես պաշար, օգտագործում բան (կաթ) չունեցած ժամանակ: Չորաբանը պատրաստվում է այսպես: Խնցուր բանը լցնում են փուպակի (քսակի, ավելի սրույզ՝ քնքսակի) մեջ, կահում, որ ջրաքամով: Հեղոք մի քիչ ալյուր են ավելացնում, խառնում, փրորում, այնքան, որ սպացվի համաստ խմորաչե զանգված: Այդ զանգվածից շեռքով վերցնում են մեկ ճաշի գդալի չափով, մի բանի անգամ մի շեռքից մյուսն անցկացնելով դարչնում, բրգաչև գնդիկ, շարում հացի խոնչայի (կամ սինու՝ սկուրեղի) վրա, չորացնում սրվերում, որպեսզի հեղոք դրանից բան սրանան:

**ԽՈՒՆՈՒՓ:** Խոզի կամ բադի, սագի, ինչպես նաև հավի միսը կորրեկուց և վանալուց հեղոք լրիվ չքամած, մի քիչ ջրով լցնել կաթասի մեջ, եփել: Կիսակի վիճակում ավելացնել սև աալորի (ալյուրիարի) չիբ (առանց կորիզի), 5 րոպե եփելուց հետո ավելացնել մեծ քանակությամբ կորրած սոխ, եփել 10-15 րոպե: Կրակից վերցնելուց 2-3 րոպե առաջ լցնել համեմունք և մաքրած նոսն հարիկներ:

**ԿՈՐԿՈՏ:** Խոզի մսի յուղոք կորրեկերը, հիմնականում գլխամսից, լցնել սառը ջրի մեջ, ավելացնել կորկոյր՝ տինգով ծեծած ցորեն: Եփել ամբողջ գիշերը: Լուսադեմին պատրաս է լինում: Ճաշակում են առավոտյան, սովորաբար

բարեկամներով ու հարևաններով: Կորկոյրը եփում են և վառարանի վրա, և՛ թոնրի մեջ: Թոնրի մեջ եփելու համար կաթասի ու կափարիչի արանքը խնորում են, հերմիտիկորեն փակում, երկկոյան իջեցնում, թոնրի մեջ, դնում շեռքի վրա, թոնրի բերանը փակում: Թողնում մինչև առավոտ:

**ՓԼԱԿ:** Եռացած ջրի (խսկ ով կարող է՝ կաթի) մեջ լցնել քրինչ այնքան, որ հարիկներն ազատ լողան հեղուկի մեջ: Եփել թեյի (կիսակի), քամել փլավ-քամիչով, վրան լցնել սառը ջուր: Կաթասի մեջ յուղ դնել, վրան լցնել հարած ջու: Լավ փաթացած յուղի վրա սարիճանաբար լցնել քրինչի զանգվածը և յուղի մեջ փմկացրած չամիչ (չերս առ չերս): Վերջում վրան ավելացնել յուղ կամ վրան շարել կաթագի բարակ շերտեր, կաթասն դնել թույլ օջախի վրա: Սովորաբար կաթասի բերանը փակում են սրիչով, հեղոք ծածկում կափարիչով (խոնավությունը կլանելու համար): Մաքրուցելու ժամանակ սկզբից լցվում է քրինչը, հեղոք փակի չվաշեղով ծածկվում ափսե:

**ԽՍԵԼԱՄԱ:** Գառան կամ ույի կորրած միսը լվանալուց հետո քիչ ջրով լցվում է կաթասի մեջ, ավելացվում մեկ քաժակ սպիտակ գինի կամ գարեջուր, համապատասխան չափով աղ, պղպեղ, փակվում է կափարիչով, եփվում թույլ կրակի վրա: Ամռանը խաշլամա պատրաստվում է այլ ձևով: Տափակ շերտերով կորրվում է պոմիդոր, շարվում կաթասի մեջ, աղ ցանկում, հեղոք վրան շարվում է կորրած միս, աղ ցանկում, հեղոք՝ մաքրած, բարակ շերտերով կորրած կարպոֆի, նորից աղ ցանկում: Սովորաբար ամեն շերտի հետ մի բանի կրոր դնակ է դրվում: Յուրաքանչյուր շերտի վրա կարելի է շաղ րալ մանր կորրած համեն: Այդ ձևով երեքական շերտ կարելի է ավելացնել՝ նախած պահանջին: Կաթասն փակվում է, դրվում, թույլ կրակի վրա, շուրջ մեկ ժամ եփվում: Ո՛չ համախակի կափարիչը բարձրացնել է պեպք, ո՛չ խառնել:

Փորձված խոհարարն արդեն իսկ հուրից զգում է, որ խաշլաման պատրաստ է: Երբ կափարիչը բարձրացնելուց հետո նկատում են, որ վերևի կարպոֆիլը եփած է, կարելի է կաթասն վերցնել կրակից: Ինչպես որ շերտ-շերտ, համաչափ լցված է կաթասի մեջ, այդպես էլ համաչափ, այսինքն՝ ամեն ինչից հավասարապես, լցվում է ափսեների մեջ: Կաթասի մեջ գոյացած յուղայի ու համելի թթվաշուքյուն ունեցող հեղուկը սովորաբար խմում են քաժակով, փաթ վիճակում, հեղոք վաշելու, խաշլաման:

**ՎՅՈՒԼՈՒԿԻ (ՅՎԵԼՈՒԿԻ) ՃՍԸ:** Աղետամոքսային փրակրի խանգարումների ժամանակ անփոխարինելի միջոց է վյուլուկի (ավելուկի) ճաշը: Չորացած ավելուկը թրջում են փաթ ջրում, վանում, լցնում եռացող ջրի մեջ, եփում մինչև որ փափկի փերկների պոչը: Հեղոք եփվածը հանում են, ծեծելով կորրում, մանրացնում: Սովորաբար կորրում են փշրքիով՝ խմորի փաշորը

քերելու մեարադե քերիչով, փայրե խոնչայի վրա: Օգտագործում են երկու շնու: Առաջին՝ սոխառածին ավելացվում է կրրրած ավելուկը, խառնվում, մի քանի րուպե եփվում, մատրցվում, որպես կանոն սփարրով: Երկրորդ՝ պարրաարվում է ապուր: Եփած ավելուկի հեղուկը եռացվում է, ավելացվում մանր կրրրած ընկույզի միջուկ, կիսատի չոր հոն, սև սալորի չիր, և բոլորը միասին եփվում է 5-10 րուպե: Հեյր ավելացվում է այլորի թույլ խյուս, եռացվում, ավելացվում կրրրած ավելուկը և մանր կրրրած թոնրի հաց, եփվում է 5-10 րուպե: Ապուրը պարրասար է:

**ԿԱՐՏՈՏԻԼԻ ՃԱՇ (ԿԱՐՏՈՂԱՆԱՇՈՒ):** Սոխառածին ավելացվում է մանր կրրրած կարրոֆիլ, մի քիչ րասպակվում շոգու մեջ, հեյր ավելացվում է ջուր և աղ, կծու սիրողները՝ նաև պղպեղ: Եփելու ժամանակ ավելացվում է այլորից պարրասարած թույլ խյուս, համեմունք, վերջում՝ հարած ջու: Եփել թույլ կրակի վրա: Ուրելու ժամանակ ըսր նաշակի ավելացնել գինու քացախ:

**ԵՐԲԵՋ (ԿԾՈՏՈՂ ՊԵՆՋԱՐ):** Օգտագործվում է մարդաշ ժամանակ: Սոխառածին ավելցվում է մեկ բաժակ ջուր, եռուակ ժամանակ ավելացվում է աղ (որպեսզի կանաչ գույնը պահպանվի) և լվացված եղինջը (կծուրող պենջարը): Վերջում ավելացվում է այլորի խյուսը, իսկ եփելուց հեյր, կրակի վրայից վերցնելուց 2-3 րուպե առաջ՝ րրորած ջու: Ո՛հրում են մարներով ու մանր հացի կրրներով:

**ՄՈՒՌԻ:** Հացի խմորից մի գունդ պահում են, լավ թթվացնում, րրորում ջրի մեջ, լցնում պուլիկի մեջ: Հեյր ավելացնում են առանձին-առանձին եփած ցորեն և չոր հոն: Փակ պահում են մի քանի օր, մինչև որ հեղուկի մակերեսին փրփուր առաջանա: Հեղուկից վերցնում են, եռացնում, մեյը լցնում կրրրած հաց: Մրացվում է շար թթու և դառը նաշ: Իսկ պուլիկի մեջ ավելացնում են եռացրած ջուր (նորից պարրասարելու համար):

**ՊՅԱՎԱՐՃ (ԿԱԹԵՆՉՈՒՆՑ):** Մայիսի ամսի րոնակաև սեղանին բուրբ գյուղերում պաղարճ (քաղարջ) էին դնում: Կարթի հեյր խառնում են կարագ, ջու, սողա, դարչին, վանիլին և լավ խառնում, խմորը հունցում այդ հեղուկով: Հեյր խմորը քացում են կլոր հացի շնու: Մեծ ջանասիրությամբ է նախշվում պաղարճի երեսը: Սովորաբար քառանյուղ պարառաքաղով րրամազձով համաշափ գծեր են քաշվում, հեյր դրանք միացվում են հարվող զիզագներով, հեյր պարառաքաղի ծայրով ծակորելով որոշակի րեսք րախի: Թիելուց առաջ երեսին հարած ջու է քսվում: Որպես կանոն րան յուրաքանչյուր անդամի համար առանձին պաղարճ է թիվում, իսկ րան ու քարեկամների երեխաների համար՝ ըսր րարիքի շափսերը փոքրացնելով, երբեմն նաև երեխայի անվան առաջին րառը վրան գծած:

**ԿՐԿԵՆԻ:** Չմեովա աղունն աղալու ժամանակ ջրադացում անպայման պիտք է կրկենի թիվեր (ընդ որում, ասում էին՝ «կրկենի անել», ոչ թե թիել): Ըոր աղացված այլորից շրտապ խմոր էին անում, ընկույզը ցարդում, մեյը յարում: Թխում էին մոխիրի մեջ, մեղմ կրակով: Ամսանորի րոնակաև սեղանի համար կրկենին րանն էր պարրասարվում, վառարանի վրա և մեյը մի չոր հոն կամ մեարադադրում էր դրվում: Տան գլխավորը հավարում էր բոլոր րնեցիներին և սկսում կրկենին կրրելի՝ յուրաքանչյուրի համար անվանակաև մեկակաև կրոր, այդ թվում ունեցած ամբողջ անասունների, ինչպես նաև մեղուների սնունով: Ըսր հավարայիքի, ուն որ քաժին հասնելը չոր հոնը (կամ մեարադադրամը)՝ «դովաթը», այդ րարին նրա համար հաջողակ (եկամարաբեր) էր լինելու: Թիվածքը քաժանողը կրրելուց առաջ հայրարարում էր, թե հերթակաև կրորն ուն անունով է լինելու: Եթե կրրելու ժամանակ դանակը դիպչեր «դովաթին», ուրեմն հաջողությունն ամբողջ ընրանիքի համար էր լինելու: Ասում էին՝ «դովաթն այսինչի գլխունը դուրս եկավ», այսինքն՝ նրան քաժին հասավ:

**ՓՈՒՆՉԱԿՈՒՍԱ:** Աշնանը չմեովա համար պաշար պարրասարելու ժամանակ փոխինջ են պարրասարում՝ բոված ցորենն աղալով: Մաղված փոխինչի ալրանման մասից պարրասարվում է փոխնչակլուլակ: Դոշաքը (քարմուզ) լուծվում է զու ջրի մեջ, լցվում մաղած փոխինչի վրա, գրալով լավ խառնրվում, մինչև որ րիվ շաղախվի: Տան րաթը կամ մայրը այդ զանգվածից վերցնում, չեղրով գնդիկներ է պարրասարում բոի մեջ, րեղնուրեղը քաժանում երեխաներին: Դոշաքի փոխարեն կարող են օգտագործել նաև մեղրաջուր, մուրաբայի հյուր, շաքարաջուր:

Փոխնչակլուլակը լավ միջոց է փոքահարիների դեմ (և ընդհանրապես փոխինջը):

**ՄԱԳԻՍՈՆ:** Խոզի գլուխը եփում են ոչ շար: Առանձին եփում են նաև րուավարի փափուկ միս: Դրանք կրրում են մանր մասերի, ավելացնում րրորած սփարր, պղպեղ, աղ: Լավ խառնելուց հեյր զանգվածը լցվում է անլվա կրավից կարված րուպրակի մեջ, դրվում մի հարթ քարի վրա և վրան դրվում է մի ծանր, հարթ քար: Տուպրակը մի քանի րեղից թիզով ծակում են: Ավելի հանախ րուպրակի փոխարեն օգտագործվում է քորթիկ: Քորթիկը անասունի սրամոքսն է՝ հարուկ մաքրված, մշակված՝ սաղիսոն պարրասարելու համար: Ըոր երկու շաքաթ հեյր սաղիսոնը պարրասար է լինում: Այն կարող է երկար պահվել ուրելու համար: Ո՛հրելու ժամանակ մի փոքր մաս կրրում են քարակ յրրերով, մուրավորապես երչիկի նման, մնացածը փարարում, նորից պահում:



**ՓԻՓԵՐՏ (ՓԻՐՓԵՏ):** Կաթսայի մեջ լցվում է 0,5-1 լիտր ջուր, ավելացվում է կրրորած սոխ: Մի քիչ եռալուց հետո ավելացվում է մաքրած և մանր կրրորած կարբոնֆիլ: Կարբոնֆիլը կիսատի դառնալուց հետո ավելացվում է մաքուր լվացված փիփերորը: Եթե կոթերը երկար են լինում, նախապես մի քիչ կրրորվում, մանրացվում է: Եփում են այնքան, մինչև որ կոթերը լավ փափկեն: Ուրեղուց առաջ ավելացվում է քացախ և սխորոք՝ ըստ ճաշակի: Ի տարբերություն այլ շրջանների, Շահումյանի գյուղերում փիփերորը եփում են առանց յուղի:

**ՀԱՍԾԱԾ (ԹԱՆԱՎ, ՄՂԱՍ):** Վերցնում են խնոցու թան կամ փրորած ու ջրի մեջ լուծված քամած մածուն կամ սովորական մածուն: Ավելացնում են 1-2 գրալ այլուր: Նախօրոք եփում են բրինձը կամ կորկոլորը (մանր ձավար), թողնում, որ մի քիչ հովանա, որից հետո վրան լցնում են թանը, մի թանի կրոր հաց, ինչպես նաև ուրց (խոռը) և դաղ՝ ըստ ճաշակի, բայց ոչ շար և անընդհար խառնում: մինչև եռալը, որպեսզի շատի: 5-10 բույե եռալուց հետո այն պարրաստ է լինում: Աղը լցվում է ըստ ճաշակի: Նախօրոք պարրաստած հացի փրթուշը (բրդում) լցնում են ափսեները, վրան լցնում հոածածը:

**ԹԼԱՇԱԾ ԿԲՏՈՂԱԻ (ԿԱՐՏՈՖԻԼ) ԵՎ ՆՄԱՆ ԲԱՆԵՐ:** Շահումյանի շրջանի գյուղերում, ամենատարածված և ամենահասարակ, բայց սիրված ուրեղիքներից էր թլաշած կրրուպլին (կարբոնֆիլը), հիմնականում՝ աշնանն ու ձմռանը, երբ երեկոները վառարանն անընդհար տաք է լինում: Թլաշելու համար ընտրում են խոշոր կարբոնֆիլներ, կրրորում, բարակ շերտերով, աղ ցանում, շարում, լավ տաքացած վառարանի երեսին, փնեցիներով հավաքվում, շուրջը: Մի երեսը 2-3 բույե խորովվելուց հետո շրջում են մյուս երեսը, 1-2 բույեից այն էլ է խորովվում: Սովորաբար կարբոնֆիլի հետ միասին շարվում և խորովվում էր նաև մեջրեղից կիսված միջին չափի գլուխ սոխ, որը լավ միջոց էր հագի դեմ: Հավաքում են վառարանից, շարում, նորերը: Մի կողմից ուրում են, մյուս կողմից նորը պարրաստում: Սովորաբար հետը նաև մուշկեթի գինի են խմում: Այդ ամենն ընթանում է աշխույժ գրույցներով ու կարակներով, մանավանդ փոքր երեխաներ ունեցող բազմանդամ, ընտանիքներում: Ավարելուց հետո, երբ արդեն բոլորը հագեցած և աշխույժ կարակներից հոգնած են լինում, որպես կանոն տարիկը կամ պապիկը տեղավորվում է թախարի (կամ բազմոցի) վրա, շուրջը հավաքում, փոքրիկներին և հանգիստ սկսում, որևէ հեքիաթ կամ հին պարմություն:

Կարբոնֆիլը նաև խորովում էին, մանավանդ ջրադացում և օդի թորելու ժամանակ՝ շեղքի մի անկյունում, տաք մոխրի մեջ և վաշելում: մուշկեթի գինով, ինչպես նաև թարմ, օդին համարեելիս: Կարբոնֆիլի պարրաստման ամենահասարակ, բայց թերևս ամենագրավիչ եղանակն այն էր, որ բերքահավաքի ժա-

մանակ թարմ կարբոնֆիլը հենց դաշտում եփվում էր մեղադե դուլի մեջ, որը վաշելում էին տաք-տաք, աշխարողների մեծ խմբերով: Որպես կանոն, այդպիսի «ճաշից» առաջ մի-մի բաժակ օդի էին խմում, հաճախ ոչ թե բաժակներով, այլ մեջը փորված կարբոնֆիլով: Նույն տեսակի «բաժակով» նաև գինի էին խմում, որը սովորաբար չեռք էր բերվում փոխանակությամբ՝ նոր հանված կարբոնֆիլից մի թանի դուլ ուղարկելով մուսակա գլուխը:



Շրջանի տնտեսության եկամտաբեր ճյուղերից մեկը կարտոֆիլի մշակությունն էր, որը վարգացած էր հատկապես Վերին Շենում և Գյուլիստանում: Կարտոֆիլը, որը շատ հաճախ փոխարինում է հացին, ծանր տարիներին պարզապես փրկել է ոչ միայն շրջանի, այլև հեռավոր շատ գյուղերի բնակիչներին: Վարդգես Հովասափյանը (լուսանկարում՝ ձախից երկրորդը) 1970-ական թվականների սկզբներից մինչև 1989 թ. գլխավորել է Գյուլիստանի կոլտնտեսությունը: Կարտոֆիլի ցանքատարածությունները նրա օրոք 30-40 հեկտարից հասան 220 հեկտարի, հեկտարի միջին բերքատվությունը 5-ից հասավ 9 ցենտների, որն անջրդի պայմաններում բարձր ցուցանիշ էր:

**ԿՈՐԿՈՏ (ՉԱՎԱՐ):** Կորկուրի մի տեսակը կոչվում է **հումի կորկուր:** Այն սրացվում է ցորենը երկատրով աղալուց հետո: Աղացածը խախալով (խոշոր անցքերով մատ) մատում են, ավելի ճիշտ խխալում են: Խոշոր կորկուրն օգտագործում են խաշիլ եփելու համար, մանրը՝ ապուրի համար: Մյուս տեսակը **թակած կորկուրն է:** Մաքրած ցորենը թրջում են տաք ջրով, որպեսզի թեփը շուր հանվի, որից հետո այն ձեծում (թակում) էին հարուկ գործիքով՝ փինգով, որից լինում էր ամեն գլուղում, երբեմն՝ մի թանի հար: Վերին Շենում, օրինակ, հայրնի էին Դալունց փինգը, Սուրունց, Բիլլիվանց, Սուսին Սուլբանին փինգերը: Ինչպես որ ջրադացներում, նույն շուով էլ փինգ ունեցողների մուր մարդիկ աշնանամուրին հերքագրվում էին՝ իրենց կորկուրը ձեծելու (թակելու) համար, որի դիմաց փրթոջը մի աման (ջամ) կորկուր էր տրվում: Ի դեպ, այդ ամանը մեղադե ջամ էր, որը պահվում էր հենց փինգի մուր: Կորկուր ձեծողներն իրենց



գործն ավարտելուց հետո այդ ամսանը լցնում, շորով ծածկում, թողնում էին փրկագի մուր՝ պարհանում。(որմնախորշ):

Ծեծած կորկուրը փռում էին քակում, արևի տակ չորացնում, իսկ երեկոյան հավաքելուց հետո «քամի փայխ», որպեսզի թեփը հեռացվի: Նրա մի մասը կորկուր եփելու համար, իսկ մնացած մասն աղում էին՝ այլ ճաշարեսակների համար:

**ՉՄԵՌՎԱ ԱԳՈՒՆ (ԾԻՄԻՌՆԱԳՈՒՄ):** Լեռնային գյուղերի ցորենը հիմնականում կարմրավուն էր և մրուր, այն կոչվում էր սարի ցորեն և լավ լվանալուց, մաքրելուց հետո էին օգտագործում: Նախալեռնային գյուղերում կար ցորենի լավ տեսակ՝ գարդա: Լեռնային գյուղերի փղամարդկանցից շարերը զնում էին ցածրադիր գյուղերում «հնչավարչի», այսինքն՝ հունչ անելու, որի դիմաց որպես վարչ լավորակ ցորեն էին բերում: Կորկուրն ու փոխինչը միայն աղյուսի ցորենից էին պարրաստում: Չմեծվա աղունն աղալուց առաջ ցորենը լվանում էին, փռում, չորացնում, հետո փանում ջրաղաց: Եթե լավ չէր չորացված լինում, ջրաղացը «խմորակալում» էր ջրաղացգլանն սրիպված պիրի վերևի քարը մի կողմ քաշեր, քարերի ատամները մաքրեր: Ցորենը չափվում էր գլանաչև փայտե մեծ ամանով (մեջը դուրս փված կոճղ), որը կոթ էր կոչվում և չափի միավոր էր, ասում էին՝ այսքան կոթ ցորեն: Մեկ կոթը հավասար էր կես խոնի, որը նույնպես չափի միավոր էր:



Ահա այսպիսի վիթխարի քարե անիվներ էին պատրաստում Քարվաճառում, որոնցով մեր լեռնաշխարհի գյուղերում ջրաղաց էին պատրաստում, ձիթանք (սրանոց): Աղբեջանին բռնակցվելուց հետո այս քարերը շիսսան իրենց նպատակին:

Այլուրը ջրաղացից փեղափոխում էին պարկերով, որոնք հնում, պարրաստվում էին լավ մշակված նուրբ կաշվից: Ցորենի (նաև կարտոֆիլի) փեղափոխությունը կատարվում էր ջվալներով, այն գործում էին կարպետի նման, ծալում, երկու եզրերն ամուր կարում, պարկի չև փայխ: Բերանին մի քանի կանթ էր պարրաստվում, որոնց միջով անց էր կացվում սմբեփան՝ բարակ, նուրբ պարան, որը չգելով ամրացնում, փակում էին ջվալի բերանը: Համարյա նույն չեով էին պարրաստում նաև խուրջինը, որը երկու իրար միացված փոքրիկ ջվալներ էր հիշեցնում՝ ուսին գցելու, զանազան քաներ փեղափոխելու համար: Լինում էր փոքր, նուրբ խուրջին, լինում էր նաև ավելի մեծը՝ իշխիտուրջին՝ էշով կամ չիով որևէ բան փեղափոխելու համար: Լավ ծրքանյուր (չիրք, շնորք) ունեցող կանաչք, ինչպես ասում էին՝ «ծրքերավ կնանիքը», ջվալի, խուրջինի, ինչպես նաև նույն չեով գործված մափռաչի (օժիրի փեղաշորը պահելու մեծ պարկ) կողքերը շրեշում էին, որպեսզի շուր չմաշվեն:

Ընդունված ճաշարեսակներից որոշ չափով փարբերվում էին դաշտում կամ անփառում, որսի կամ չկնորսության փեղում պարրաստածները: Ոչ փրնային պայմանները թելադորում էին ճաշերի պարրաստման նոր եղանակներ, մարդկանց դարչնում հնարամիտ: ՌՒշագրավ է, օրինակ, ծնեբեկի (ծնեփակ) պարրաստումը դաշտում: ՌՒռենու մափղաշ ճյուղերը «մաշկում» են, այսինքն՝ կեղևը հանում, այդ կեղևի մե փաթաթում մաքրած, աղ ցանած ծնեբեկը, շիկապած ածուխներով (պողերով) ու փաք մոխիրով ծածկում, խորովում: ՌՒռենում էր անկրկնելի համ:

**ՉԵԹ:** Որոշ ուտելիքներ (ճաշարեսակ, խմորեղեն և այլն) պարրաստում էին փեղի սրանոցում՝ չիթհանքում սրայած չեթով: Այդ հարմարանքը սրանոց էր կոչվում, որովհետև հիմնականում սրեկից էին չեթ սրանում (ինչպես նաև չիթափու այլ բույսերից՝ բունջուրից, չիգիթից՝ բամբակի սերմից): Սրանոց ոչ բոլոր գյուղերն ունեին, որովհետև այն սարքերը շատ ավելի դժվար էր, քան ջրաղացը, քանի որ շատ ավելի խոշոր քար էր պահանջվում:

Սրանոցի (ինչպես նաև ջրաղացի) քարը բերում էին Քարվաճառից, որից էլ ծագել էր արցախյան այդ բնակավայրի անունը (խորհրդային փարիներին աղավաղվելով դարձել էր Քերաջար): Ծառեր էին կտրում, իրար միացնում, «սուրան» (քարշակ) պարրաստում, վիթխարի քարե անիվը դնում վրան, գոմեշներ, եզներ լծում, քարշ փալով բերում (երբեմն դա փռում էր մի քանի շաբաթ):

Գյուլիստանում սրանոց էր սարքել Ավագ Հովասափյանը, Վերին Ծենում՝ Պղնձեբեղանց (Հակոբյան) Հակոբը և ուրիշներ: Սրանոցներից օգտվում էին ոչ միայն համագյուղացիները, այլև հարևան, նույնիսկ Ղարաբաղի հեռավոր



գյուղերի բնակիչները: Հերագայում սրամուցները կոլտնտեսություններին զգալի եկամուտ էին բերում՝ մշակելով ոչ միայն իրենց, այլև այլ գյուղերի հումքը: Կոլտնտեսությունները աշխօրին նույնիսկ չեթ էին բաժանում: Սրամուցները գործել են մինչև 1950-ական թվականները:

Առանձին ճաշեր, ինչպես նաև խմորեղեն, երբեմն պատրաստում էին ոչ թե չեթով, այլ հաճարի կամ ընկույզի ծեծած միջուկով, որի շնորհիվ ուտելիքն ավելի համեղ էր լինում (շրջանի գյուղերն ու անտառները հարուստ էին հաճարի ծառերով, կային նաև ընկուզենիներ):

## ՄՐՑՈՒՄՆԵՐ, ԽԱՂԵՐ

Լեռնաշխարհի գյուղերում թե՛ մրցումների, թե՛ խաղերի\* մեծ մասը ռազմական բնույթ ունեին, այս կամ այն չևով ծառայում էին ինքնապաշտպանության հմտությունների զարգացմանը: Անենաառնականն ու գրավիչը թերևս հրաչգության մրցումներն էին, հեծելավազքը, չհավարժությունները: Դրանք կազմակերպվում էին ժողովրդական զանազան հանդիսությունների ժամանակ: Հրաչգության ժամանակ մրցողները ժողովրդից մի քիչ առանցնանում էին անվտանգության համար: Որոշակի հեռավորության վրա չող էր ցցվում գեղմի մեջ, ծայրին ամրացվում սովորաբար խաշած չու: Նշանակվում էր նաև մրցանակ հաղթողի համար՝ ու կամ գառ, խոյ (դոշ), արջառ, մայած թե ովքեր էին մասնակցում մրցմանը՝ պատամիներ՞ր, կանա՞յք, թե՞՞ փղամարդիկ: Որպես կանոն մրցանակը «վայելում» էին բոլորը միասին, հաղթողին մնում էր միայն հարգանքն ու պատիվը: Հաղթող պատանուն, մանավանդ կանանց մրցումներում հաղթող նորահարսին նաև լրացուցիչ պարգևներ էին փրվում ծնողների ու հարազատների կողմից:

Բոլոր ընտանիքները պետք է անպայման հրացան ունենային, փղամարդկանցից շարերը՝ նաև ավրճանակ (մատուցեր, «պատարաքիչ»): Ավրճանակ էին ունենում նաև կանայք՝ «հինգփրաքիչ»: Ձին նույնպես յուրաքանչյուր ընտանիքի համար պարտադիր էր. շարերը մի քանի, անցյալում ոմանք նույնիսկ փասնյակ չիեր էին պահում: Հեծելավազքից բացի կազմակերպվում էին նաև գրավիչ խաղեր. շարերը ցուցադրում էին իրենց հմտությունը՝ չին բշելու ժամանակ պտրվելով, անցնելով փորի փակով կամ բարչրանալով, կանգնելով թամբի վրա:

Շար էության մարտական բնույթ ուներ նաև լախորի խաղը, որը հիշեցնում էր ամրացի պաշարում: Խաղացողները բաժանվում էին 2 խմբի, վիճակ գցում, թե ով է լինելու հարչակվողը, որը գրմվում էր գեղմի վրա գծված մեծ շրջանագծից դուրս, զինված կաշվե գոտիներով: Ներսում գրմվում էր հա-

\* Սեղ չի նաչողվել մկարտրի բոլոր խաղերը և խաղերի բոլոր կանոնները, լնդ որում, տարբեր գյուղերում պատրաստված տարանոմականություններ. Սիլով կրնողները լրագրոցի տեղեկությունները.

կառակորդ խումբը՝ անգեմ: Հարչակվողները գոտիներով հարվածում էին ներսում գտնվողներին կամ ցավում և ուրբով հարվածում նրանց, սակայն այնպես, որ հակառակորդը չկարողանար շրջանագծի ներսում գտնվելու պահին կոխել նրանց ուրբը կամ խլել գոտին: Օրինակաւ էր համարվում մասայն, որ մի ուրբը պահելով շրջանագծի ներսում, մյուսով կոխեին դրսում գտնվող հակառակորդի ուրբը: Երբեմն էլ ներսում գտնվողներից մի համարչակը դուրս էր վագում, հարվածների ենթարկվելով, ինքն իր հերթին ուրբով հարվածներ էր հասցնում հակառակորդին, խուճաւ ստեղծում, որից օգտվելով՝ ընկերներից մեկը կարողանում էր կոխել հակառակորդի ուրբը, հաղթել: Եթե ներսում գտնվողները կարողանում էին գոտի խլել հարչակվողներից, ապա այդ գոտիով հարվածում էին դրսում գտնվողներին: Ներսում գտնվողները՝ պաշարվածները, շրջանագծի կենտրոնական մասում մեջք մեջքի առած էին կանգնում լավ պաշարանվելու համար, բայց կարող էին մաս ուրբով հարվածել դրսում գտնվողներին, սակայն մյուս ուրբը չպետք է դուրս գար շրջանագծից: Պաշարվածները ում ուրբը կոխեին, մա պարսկում, խաղից դուրս էր գալիս: Երբ հարչակվող թիմի անդամները բոլորը հերթով պարսկում էին, թիմերը փոխում էին իրենց փեղերը:

Լախտի խաղում էին սովորաբար չմեան արևոտ օրերին ու գարնանամուտին, բակերում, պարանիներն ու երիտասարդները: Շաբերը կրակի վրա թեթևակի խանչում էի գոտու ծայրը, որպեսզի հարվածն ուժգին լիներ: Արգելվում էր հարվածել ճարմանդի կողմով: Լախտու թիմերը կազմվում էին մաս ըստ թաղամասերի, հավասար թվով:

Սարսական խաղերից թերևս ամենամարտականը *նեպ ու աղեղով* խաղ-մրցումներն էին: Տղաների այդ խաղը շար վարանգավոր էր, որովհետև համարյա իսկական մարտական բնույթ ուներ, և հաճախ արգելվում էր մեծերի կողմից: Սակայն հմայա այդ խաղը վերացնել հնարավոր չէր նույնիսկ խորհրդային փարիներին, երբ փարածում էին ստացել բազմաթիվ մոր ու անվրանգ խաղեր (Ֆուտբոլ, փոլեյոլ և այլն): Եթե լախտի խաղը ֆիզիկական ուժի, դիմացկունության ու ճկունության մրցում էր, ապա նեպ ու աղեղը կապված էր դիպուկ մշամառության և համարչակության հետ: Աղեղը պարաստում էին հոնի, ճապկի և այլ ամուր փայտերից: Նույն փայտից, բայց ավելի բարակ և ուղիղ ճյուղերից նեպն էին պարաստում, որի ծայրը կրակի վրա մի քիչ խանչում էին ամրության համար (երբեմն էլ մեխ կամ այլ սուր մեքաղ էին ամրացնում՝ թռչում որսալու համար): Որպես աղեղը չգող լար սովորաբար օգտագործում էին փուկ՝ կաշվից պարաստած թել: Խաղացողները բաժանվում էին երկու խմբի, որոշակի փարածության վրա դիրքեր զբաղեցնում և սկսում միմյանց նեպահարել: Ռիմ որ դիպչում էր

նեպը, մա խաղից դուրս էր գալիս, հաճախ վազվզում, իրար հեքապնդում էին գյուղամիջյան ճամապարհներով ու այգիների միջով: Հաղթում էր այն թիմը, որը կարողանում էր հակառակորդի բոլոր գիմվորներին «ոչնչացնել» կամ հալածել այնպես, որ խաղից դուրս գան, դիմադրություն ցույց չդան:

Սարսական խաղեր էին *«լուրես բոնելը»*, *դարանդուրին*: *Ոչկոտիին* (*պահնորոցին*) և դարանդուրին որոշ չափով մասն էին իրար, բայց առաջինը խաղում էին ցերեկը կամ երեկոյան ժամերին, իսկ դարանդուրին՝ գիշերը: Դարան էին մտնում ամենավրանգավոր ու դժվարամարչելի փեղերում (զերեզմանոց և այլն): Հակառակորդը պետք է որոներ դարան մտածներին, փնտրեր ամենամուրթ ու սարսափազդու փեղերում, բայց ինքը չբռնվեր դարանակալողների կողմից՝ ծուղակը չընկներ:

*Չիլինգի* խաղը խաղում էն հիմնականում գարնանն ու ամռանը: Խաղում էին մահակով ու համարյա նույն մահակի հասարությունն ունեցող 5-10 սանրիներարանոց փայտիկով, որը կոչվում էր չիլինգ: Մահակը պարաստում էին հոնի, ճապկի, հացի ծառերի ճյուղերից կամ այլ ամուր փայտից: Չիլինգը նույնպես ամուր փայտից էր լինում. գերադասելի էր, որ այն լինի հմարավորին չափ կարճ, հաստոր, նույնիսկ ոստոր, որպեսզի շար դիմացկուն լինի. այդպիսի չիլինգը, որ կոչվում էր *դոզակ*, ավելի ուժեղ էր թռչում և բոնելը դժվար էր լինում: Կարող էին խաղալ երկու հոգով, ինչպես մաս երկու խմբերով, երկու- կամ երեքական ընկերներով: Մի կողմը հարչակողական, մյուսը պաշարանական դիրք էր գրավում: Փոքրիկ փոս էր փորվում թասի շուրջ (մի բռաչափ), որը կոչվում էր հյոբան: Հարչակվողները կանգնում էին այդպեղ և սկսում:

Խաղը երկու փուլ ուներ՝ թոխմախ և զարկը: Սկզբում թոխմախ հարվածն էր կատարվում: Մահակի ծայրը բռնում էին, ծայրը միայն աննշան չափով դուրս պահած բռնից: Հենց այդ մասում դնում էին չիլինգը, կտրուկ օդ նետում ու մահակով հարվածում, հեքո մահակը դնում փոսի վրա: Հակառակորդը այդ չիլինգը պիտի վերցներ, դրանով հարվածեր մահակին: Եթե չէր կարողանում, մյուսը հարվածը կրկնում էր, որից հետո կանգնում էին հյոբանի մոտ, մահակը չեքին: Պաշարանավորը վերցնում, նետում էր չիլինգը դեպի հյոբանը: Եթե չէր կարողանում ներսը գցել, խաղը նորից շարունակվում էր: Հետո արդեն մի չեքով օդ են նետում չիլինգը, մյուսով մահակով ուժգին հարվածում: Այդպիսի հարվածը կոչվում էր զարկը. որն ավելի ուժգին էր ստացվում: Հակառակորդը պիտի չիլինգը վերցներ, դեպի հյոբանը նետեր: Եթե այն ընկնում է հյոբանի մեջ կամ մոտիկ է ընկնում, մեկ մահակի հեքավորությամբ, ուրեմն հաղթել է: Հարվածողը կարող է մահակով պաշարանել հյոբանը, որպեսզի չիլինգը մոտիկ չընկնի, բայց գեպին ընկ-



նեյույ հեպո իրավունք չունի չեռք փալու: Եթե պաշտպանվողը կարողանում է օդի մեջ բռնել չիլինգը չեռքով կամ գլխարկով կամ իր մահակով օդի մեջ հարվածել թռչող չիլինգին, ուրեմն, հաղթել է, խաղաչողները փոխում են իրենց տեղերը: Եթե 2- կամ 3-ական հոգույ բաղկացած խմբեր են մրցում, ուրեմն պետք է 2-3-ն էլ հերթով խաղից դուրս գան:

Եթե հարվածելու ժամանակ հարչակվողի մահակը չի կպչում չիլինգին (վրիպում է), մա համարվում է պարտված: Եթե զարկը շափ երկար է փակում և պաշտպանվողները չեն կարողանում հաղթել, չանջրանում են չիլինգի հեփկի վազելուց, նրանց մասին ասում են՝ «լպռել» են (այսինքն՝ ճապաղել, թուլացել, թռչել են): Իսկ եթե չանջրույթից թողնում, հեռանում են խաղադաշտից, հարչակվող (հարվածող) կողմը նրանց ծաղրում է՝ հեփկներից գոռում՝ «լպռել են, լպռռ...»: Եթե խմբերից մեկում մի խաղաչող պակաս ունի, ասում են՝ «մի փորո ճյուր օնի», այսինքն՝ մեկ լրացուցիչ հարվածի իրավունք ունի, որը կարող է շարունակվել մինչև «կտրվելը»՝ վրիպելը: Եթե հարվածողը կարողանում է օդի մեջ մահակով հեփ մղել պաշտպանվողի չեռքով նետված չիլինգը, սփանում է մեկ լրացուցիչ հարվածի իրավունք՝ «փորո ճյուր»: Կարելի է շահել մի քանի «փորո ճյուր» և ավելի շափ հարվածներ կատարել: Ընդ որում, «փորո ճյուր» ընդունված էր մաս այլ խաղերի ժամանակ, որպես լրացուցիչ խաղի իրավունք:

Վաղ զարմանը, երբ օրերն սկսում էին տաքանալ, չյունից ազատված, չոր ու արևկող փեղեքում պատանիներն ու երիտասարդները խաղում էին «բաբադյուշումի»: Խաղաչողներն այս դեպքում մույնպես երկու խմբի են բաժանվում, վիճակ գցում, թե ով պետք է «հարչակվող» կողմը լինի: «Պաշտպանվող» խմբից ամենադինպակունը մեջքը հենում է որևէ ծառի, սյունի կամ պարի, ուղիղ կանգնում: Սյունները շարվում են մեջքից կռայած, հորիզոնական դիրք ընդունած, իրար կպած, ուղիղ շարք կազմած, որը միացած է չինում կանգնած ընկերոջը: Ստացվում է մի կենդանի ու բարձր, երկար «նրսփարան»: Հակառակորդ խմբի ամդամները վազքով գալիս, ցատկում են հերթով, նստում այս «նստարանին»: Պետք է այնպես ճարակորեն ցատկեն ու ամուր իրար կառչեն, որ բոլորը փեղավորվեն: Եթե մեկն ընկնում է վրայից, կամ կախվում մյուսներից, քայքայ փոքր կպչում է գեփմին, համարվում են պարտված, և դերերը փոխվում են:

Տարածված խաղ էր մաս «մոզի-մոզի»: Այս խաղի համար մի քիչ երկար. ընդարչակ փեղ է պահանջվում: Խաղաչողներից մի քանիսը իրարից 2-3 քայլ հեռավորությամբ մեջքից կռայած դիրք են ընդունում, մյուսները հերթով ցատկում են նրանց բոլորի մեջքի վրայով, շարքի վերջում էլ իրենք կռանում: Հեփո կռայածները հերթով արագ ուղղվում, միանում են ցատ-

կողմերի շարքին, ու այդպես անվերջ շարունակվում է խաղը: Կար մաս այս խաղի մեկ այլ փարափեսակ, որը խաղում էին գլխարկներով: Խաղաչողներից մեկը մեջքից կռանում է հորիզոնական դիրքով, մյուսները հերթով վազում, ցատկում, գլխարկը դնում են կռայած ընկերոջ մեջքին ու վրայով թռչում, ասելով. «Այ հավալա-հավալա, մեկ փափախ դրեցի ու թռա»: Երկրորդը մույն չնով թռչում է, իր գլխարկը դնելով մյուսի գլխարկի վրա ու ասում. «Այ հավալա-հավալա, երկու փափախ դրեցի ու թռա»: Ո՛խ այդպես՝ երրորդը, չորրորդը և այլն: Ով որ գլխարկը (կամ գլխարկները) գցում է գեփմին, պարտվում, հիմա էլ ինքն է կռայած դիրք ընդունում: Այս խաղերի մեկ այլ փարափեսակը՝ «փամիկը», խաղում էին չափածո գվարճալի մտքեր ասելով: Ընդունված սյուժե կար, ամեն թռչողը մեկ «բանաստեղծական» փող էր ասում, երբեմն էլ իր կողմից հորինելով նոր բառեր, փողեր:

Աշխույժ էին ամցնում մամականը չնեռային խաղերը, որոնցից մեկը չնագնդին էր՝ «ծյունուկուլուլակի»: Որպես կանոն, չնագնդի խաղում էին փարքեր թաղամասերի կամ փարքեր դասարանների երեխաները միմյանց հեփ: Հակառակ դիրքեր գրավելով միմյանց դեմադեմ, որոշ հեռավորության վրա, կողմերն սկսում էին միմյանց հարվածներ փեղալ չնագնդերով, մինչև որ մի կողմի ճմշման փակ մյուսը նահանջեր ու փախչեր՝ չհասցնելով անհրաժեշտ քանակով ու պինդ սեղմած չնագնդեր պատրաստել: Փախչողին մի քիչ հեփապնդում էին, հեփո սկսում հեփկներից «դի անել»՝ ծաղրական գոռոց հանել: Արգելվում էր չնագնդի մեջ սառույցի կտոր կամ քար դնել՝ ուժգին հարվածելու նպատակով: Այդպես վարվողին խաղից դուրս էին անում, երբեմն դրամից հեփո էլ ոչ ոք չէր ուզում նրա հեփ խաղալ:

Գյուղական բոլոր երեխաներն ու պատանիները սահնակներ էին ունենում, շափերը հենց իրենց չեռքով, ոմանք՝ հնուր վարպետների կողմից պատրաստված: Սահնակի վրա գառան մոլթի էին ամրացնում՝ փափուկ լինելու համար, կողքերից փայտե «արգելակներ» էին ամրացնում՝ սահնակի ընթացքը կարգավորելու համար: Սահնակի «կողերի» փակից երկաթե չողեր էին ամրացնում լավ սահելու համար: Հատուկ «եղթուղիներ» կային, որտեղով անցնում էին սահնակավորները: Երբեմն փարքեր թաղամասերից սահողների շարքը գալիս, միանում էր մի ընդհանուր ճամպարիի. միասին շարունակվում: Երբ մասնակիցների թիվը շափ մեծ էր լինում, երբեմն փարքեր թաղամասերից չգվող շարքերը գալիս, բախվում էին միմյանց, թափվում իրար գլխի:

Սահնակով սղալը զանգվածային բնույթ էր ստանում երեկոյան, երբ փողոցների հիմնական անցուղարչը դադարում էր: Ո՛խ ժամերին մանուկներին ու պատանիներին փոխարինելու էին գալիս երիտասարդները:

րըն ու միջին փարիքի փղամարդիկ՝ քռիչաներով: Դա խոշոր սահնակ էր, որով չմռանը ցախ, վառելափայտ և այլ ծանրություններ էին փեղափոխում: Գյուղամիջում և խաչմերուկների մոտ հավաքվում էին փարեցները, հեփուում այդ խաղերին, որի շնորհիվ, գտնվելով մեծերի հսկողության ներքո, թյուրիմացություններն ու բախումները կռվի չէին վերածվում: Տարեց հանդիսականներն իրենք էլ հաճախ վարակվում էին սահողների ոգևորությունից, մոփիկ բակերից բերում էին փայտե ասփիճաններ, փեղավորվում վրան մեծ խմբերով և սահում:

Տարածված էին նաև չմուշկները, որոնք պարասպվում էին ամուր փայփից, թելերով ամրացվում ուրքերին: Փայտե չմուշկների փակից սովորաբար թիթեղյա նեղ ժապավեն կամ հասար մերսաղայար էին ամրացնում՝ լավ սահելու համար:



Տարեցները միշտ ուշիուշով հետևում են, որ խաղերը կռվի չվերածվեն, կանոնները ճիշտ պաշտպանվեն, խրախուսում, ոգևորում են խաղացողներին: Երբեմն էլ, չկարողանալով գտնել իրենց ոգևորությունը, մեծերն իրենք էլ մասնակից են դառնում նույնիսկ մանկական խաղերին (ինչպես որ պատկերված է այս լուսանկարի մեջ), և դա դաստիարակչական կարևոր դեր է ունենում:



Վերին Շենի Կլապաներ թաղի տղաները՝ 1971 թ.:

Լեոնաշխարհի գեղեցիկ բնության ամեն մի անկյունը իր անկրկնելի հմայքն ուներ և հանգստի սիրված վայր էր: Իսկ երիտասարդության հանգիստն առանց նշանառության մրցումների դժվար էր պատկերացնել: Լուսանկարում՝ Վերին Շենի Կլապաներ թաղի տղաները՝ 1971 թ.: Խորովածից առաջ նշանառության մրցություն է:



Հին ու իմաստուն խաղը՝ շախմատը, նոր ժամանակներում է բափանցել մեր գյուղերը, բայց ձեռք է բերել լայն մասսայականություն՝ խաղում էին ուսուցիչ քնանասնապահ, թշակատու քն դպրոցական, բոլորը: Շախմատ խաղում էին նույնիսկ դասամիջոցներին, ինչպես որ պատկերված է այս լուսանկարում (Վերին Շեն):



## ԱՐՅՈՒՆՔՈՏ ԺՊԻՏՆԵՐ

Կապակասեր, ուրախ մարդիկ էին մեր գյուղերի բնակիչները: Ամեն գյուղ իր հայրնի զվարճախոսն ուներ, որոնցից շատերը ճանաչված էին ամբողջ շրջանում: Ներքին Շենից հայրնի են Մարունց Գրիգորն ու Արշակ վարժապետը, Վերին Շենից՝ Քաչալ Խաչին, Ծահնագ բիրը, Բեղը, Հայ Պարխից՝ Ակուփ դային, Ղարաչինարից՝ Կիզիրանց Պավլին ու ընկեր Գարեգինը, Մնասին Շենից՝ Չքարանց Մակիչը, Գյուլխարանից՝ Վահան դային, Խըրխափորից՝ Նիգարանց Թյունին, Սանաշիդից՝ Պարոտանց Թյունին և շատ ուրիշներ: Նրանց մասին զվարճալի շատ պատմություններ կյանքի խորհմաստ դասեր էին պարունակում և փարածվում էին բերնեքերան ու սերունդներումը: Այսօր այդ ամենը հիշվում է, հնչում աշխարհի գանազան կողմերում, արյունքախառը ժպիտներ պարզելով շահումյանցիներին՝ կորսված ցավ, անդարձանելի կարտա և ... նույնպես դառնում են հայրենակիցներին իրար հետ միավորելու, սեփական արմարները ճանաչելու և հիշելու կարևոր միջոց:

Այդ պատմությունների մի մասը մեր կողմից հրատարակվել է «Մռավի դողանջներ» թերթում, շատերը մեզ են ուղարկվել սույն գիրքը պատրաստելու կապակցությամբ: Նույն պատմությունը հաճախ ուղարկվել է փարբեր մարդկանց կողմից, ունեցել է առանցիկ փարբերակներ, ուստի հնարավոր չէ նշել, թե որը ով է ուղարկել: Այդպես էլ վարվել ենք, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ դրանք շրջանում հանրահայտ պատմություններ են: Նյութերը ենթարկվել են ամերածեշտ խմբագրման: Մեր երախտագիտությունն ենք հայտնում *Գերասիմ Վարդանյանին* (Ռոստով), *Քնարիկ Բայլանին* (Սարաբով), *Վիկտոր Պերրոսյանին*, *Ռայխա Դակիեյանին* (Մոսկվա), *Աշոտ Աղաջանյանին* (Վոլգոգրադ), *Աիդա Երիզրյանին* (Իրկուպսկ), *Գրեդա Չարգարյանին*, *Բենիկ Հակոբյանին*, *Հայկազ Ջանունցին* (Երևան), *Լուսիկ Չիլինգարյանին* (Քարվաճառ), *Ռիմա Ալեքսանյանին* (Կրասնոդար), *Վարդյա Ղուլյանին* (Լոռի, Նոր Խաչակապ), *Արևիկ Վերդյանին* (Կալինինգրադ), *Մարոս Գաբարյանին* (Դազախստան), *Նազար Բարաջանյանին* (Կրասնոդար), *Հանկեր Աղաջանյանին*, *Ալո և Նազիկ Հակոբյաններին*, *Մլավիկ Ղարախանյանին*, *Պերրոս Մողոյանին* (Երևան), *Ռազմիկ Պերրոսյանին*, *Լուսյա Մակարյանին* (Վորոնեժ), *Գրիշա Մարտիրոսյանին* (Երշով) և հայ-

ցում ենք բոլոր նրանց ներողամտությունը, ում ամուսն այսպեղ չկարողացանք հիշատակել:

Նյութերը հրատարակվում են առանց հստակ հերթականության կամ խմբավորման, նկատի ունենալով, որ իրական կյանքում էլ, երբ շահումյանցիները բռնում են զվարճախոսությունների ծայրը, իրար են հաջորդում փարբեր գյուղերում, փարբեր ժամանակներում ու բազմազան թեմաներով հորինված պատմությունները՝ առանց հստակ հերթականության:



Հայրունց Պետրոսը արտը հնձում է, հասկը բերում կալը, որ թակեն: Տղային՝ Բալասին, ուղարկում է տեր Մովսեսի հետևից, որ կանչի, գա կարն օրհնելու: Բալասը գնում տեսնում է, որ քահանան հյուրեր ունի, բերանը բացում է, որ հոր խնդրանքը հայտնի, քահանան ձեռքով նշան է անում, որ նա նստի սեղանի մոտ: Բալասը նստում է հյուրերի կողքին, սկսում է աչքը տեսածը ուսել: Մի երկու բաժակ էլ որ խմում է, գալու նպատակը մոռանում է: Պետրոսը Բալասի հետևից մի քանի հոգի է ուղարկում, նրանք էլ նույն ձևով գնում ու չեն վերադառնում, դրանից հետո Ներքին Շենում մեկին որ տեղ էին ուղարկում, ուշանում էր, ասում էին՝ Հայրունց Բալասն է՝ «բինյալին կալ չկա»:



Հայրենական պատերազմից առաջ Գաղթուտում կոլտնտեսության նախագահ էր Սանդուխտ Ավագյանը: Նրա ամուսին Չատին սայլապան էր: Մի անգամ նրա եղները տրորում են ծխախոտի դաշտը: Սանդուխտը կարգադրում է հաշվապահին, որ նրա հինգ աշխօրը կտրի: Հաշվապահը, որ Սանդուխտի եղբայրն էր՝ Լևանը, ասում է՝ «Ախճի, համոթ ա քեզ, էն մարդին բիյաբուռ չանես»: Սանդուխտն ասում է՝ «Ա՛ տղա, հե՛յ, գյուղում ե՞ս հինչ կա, սալխտի օրենքին դեմ ե՞ս...»: Իսկ Չատին քթի տակ ասում է՝ «Բյուզյունս նախադու մեր եմ լիցիցնական, հա՛...»: Ասում են՝ այդ դեպքի մասին իմացել են ամբողջ Ազրբեջանում, իսկ երբ Կալինինը ժամանել էր Բաբու, տեղեկացել էր այդ մասին և գովել Սանդուխտին:



Առաջներում միլիցիան ձիով էր հասեղ-հնտեղ գնում: Պրսեցի Արշակ Առուշանյանը միլիցիոներ էր: Օգտվելով այդ հանգամանքից՝ միլիցիայի պետը նրա հորն ասում է. «Հանես դայի, մեր ձիերի համար մի սայլ խոտ կբերես, քայց, ոչլենչ, թող էնքան էլ վաժնի չլինի»: «Աչքիս վրա, — ասում է Հանեսը: — Էնպիսի խոտ բերեմ, որ ձիանը խոտին նայեն, ես՝ տախին»:



Ապրունց Ապրեսը խանութում նավթ էր վաճառում: Մի երեխա մի աման վերցրած գալիս է, ասում. «Ապրես դայի, այան մխրեկ նոթ ա օզել»:

Ապրեսն ասում է. «Լավ, քե մատաղ, եփած տամ, թա՞ հում»: Երեխան ասում է. «Գյուղում չեմ, քինամ այան հրցնեմ...»:



**Մ**երին Ենեով անցնելիս թուրքի քոչից մի հերինջ են գողանում: Բողոքը պրիստավին է հասնում, նա մտածում է, որ «Տրտիլի» արածը կլինի: Եարծվում է ուղիղ գեպի նրանց տուն: Տեղեկանալով այդ մասին, «Տրտիլը» հերինջը մորթում է, տեղավորում դադաղի մեջ, տանում, դնում եկեղեցում: Հարևաններն ու հարազատները հավաքվում են նրանց տանը, սպասելով, թե ինչ կկատարվի: Պրիստավը դալիս, հարցնում է, թե ժողովուրդն ինչու է հավաքվել, ասում են. «Հանգուցյալ կա»: Հարցնում է. «Բա ո՞ր է»: Ասում են. «Եկեղեցում ենք պահում մենք, մինչև որ տերտերը գա, աղոթի»:

Պրիստավը հարգանքի համար ժողովրդի հետ միասին դնում է եկեղեցի, որտեղ դրված էր փակ դադաղը: Տեր Խորենն «աղոթում» է.

Պյան եմ ասում, ըսկացեք,  
Հյաքին պյաց ա, ծսկեցեք,  
Տերը քինյա՛ խըրըվեցեք, լիփեցեք,  
Տերտերին փայն էլ ղրկեցեք...



**1930**-ական թվականներին Ղարաչինարում Լևոն Բաղմանյանը երիտասարդների ուժերով ակումբ էր սարքել, որտեղ համերգներն ու ներկայացումներն էին կազմակերպում, փորձեր էին անում ամեն օր: Լևոն դայուն խմաց են տալիս, որ թատերական խմբի անդամներից Ղարանց Սաշոկը թաքուն գնացել է որսի, երկու կիտար սպանել, միսը ծախել, բայց ընկերներին չի տվել: Ներկայացման ժամանակ քյոթիվայի դերակատար Լևոն դային պիտի ծեծեր ծառայի դերակատար Սաշոկին: Փորձերի ժամանակ սուտ-սուտ խփում էր նրա մեջքին, իսկ ներկայացման ժամանակ, երբ դահլիճը լիքը ժողովուրդ էր (չատերն իրենց տնից աթոռ էին բերում, նստում), Լևոն դային մի լավ ծեծում է Սաշոկին: Սաշոկը տնքալով վարմացած ասում է. «Ա շան տղա, էդ հի՛նչ ես անում, մեջքս կտրեցիր»: Լևոն դային կամաց ասում է. «Սրանա ետը կիտարին մեք մենակ չօտես»:



**Պ**ոխմաչարը Ղարաչինարի ամենալավ թաղամասերից էր: Մի վարանանային արևոտ օր Դոշունց Ակուժի դայու գեկավարությամբ փողոցում միլ էին տալում (ծածկի գերան): Հարևաններով հավաքված նայում ու զրուցում էին Պատի ապան (Վարդանյան Պատվականը), Թուխանանց Քյուքան դային և ուրիշներ: Պատի ապոր շունը շվաքում մրախած էր: Քյուքան դային թաքուն կացնով խփում է, շան պոչը կտրում: Եունը կոնձկոնձալով փախչում է: Պատի ապան վարմացած նայում է, թե ինչ պատահեց: Քյուքան դային ասում է. «Պատվական, քինա շանը պոռուչին ճյուղ տիր, հենց ա վախեց» (սովորաբար վախեցածին անմիջապես մի քիչ ջուր են խմեցնում՝ պոռուչին ջուր են դնում):



**Ք**առերան քաղաքից գյուղ է գնում՝ ծնողների մոտ: Մայրը բակում չարչարվում է, որ կրակ վառի: Աղջիկը հորը գիտողություն է անում. «Ա հեր, ինչու՞ չես դադ առնում, բա էսպիսի կնկանը էսպես կպահես... Սա քեզ չի սազում է, Բրեժնեկին ա սազում»: Հայրը զայրանում է. «Աղջի, այ տուն քանդող, դու էլ Բեթոյին ես սազում, չէ՞...»:



**Մ**ասունց Լաչին դային իր տղա Յաշային գոռով տանում էր դպրոց, իսկ նա փախչում էր: Ասում էր՝ եթե շկուր լավ բան ա, ինչու այան ու ապան չեն գնում: Մի օր էլ Հայրը Յաշայի ձեռքից պինդ բռնած դպրոց էր տանում, մի բակում մի դրբբո էին մորթում, որը բարձր մկկում էր: Յաշան ասում է. «Չահրումար, ինչ ես մկկում, քեզ էլ հո շկուր չե՞ն տանում»:



**Մ**աղաթի տղա Մուրադը ամռանը մի քանի օրով գյուղ է գալիս հանգրստանալու: Ամեն առավոտ աքլորն սկսում է երկար կանչել («Մի ժամ ծուզրուզու ա անում»): Մի առավոտ Մաղաթը մոտենում է տառին ու ասում. «Այա, էդ վերցակը մորթի, մի քիչ հանգստանա՛մ... Առ էս տաք բուրբին, ես դրա ծախսը կքաշեմ»: Տառն ասում է. «Այան քե մատաղ, վերցակին ծախսը դու կարաս քաշես, բա հավերին հոգար ես հու՞նց կքաշեմ»:



**Ղ**արաչինարցի Ռուբենի կինն ասում է. «Այ Ռուբեն, հինչը անում եմ, էս անտեր հինդուշկան թոխը չի նստում»: Ռուբենը խորհուրդ է տալիս. «Հինդուշկան խտաի, ծյուվանուցը կլիսավը շոռ տու»: Մի ժամ հետո կինը գալիս է, ասում. «Խորհուրդդ կատարել եմ, քյոմագ չի անում»: Ռուբենն ասում է. «Քինյա, մխրեկ արարուր էվելացրու»:



**Հ**այ Պարիսի զվարճասեր մարդկանցից էր Հանեսանց (Առուշանյան) Ակուժը, որը երկար տարիներ անտառապահ է եղել: Հարևանի տղան ամուսնանում է. էրքեջից մի աղջիկ է ուզում: Ակուժի դային գնում է շնորհավորելու: Հարսին որ տեսնում, ասում է. «Շան տղու լախուտ, տյա պյա՞ն ա, որ տյուրըբլ ես, քինացել ես նիհանց շինին աչլը հանել, պիրել»:



**Մ**րխափորի կոլխոզի նախագահը մի անգրապես կին էր, որին չգիտես ինչու Մինա դայի էին ասում: Երջխորհրդի նախագահ Մարտիրոս



Առուշանովը գալիս է Թրխափոր, որ այդ կնոջն աշխատանքից ազատի, մի գրագետ երիտասարդի նախադաճ դարձնի: Մինա դային չի համաձայնում, ասում է՝ դա ձեր դործը չի, ժողովը կորոշի... Հաշվետու ժողով են անցկացնում: Մինա դային ոգևորված խոսում է մեկ տարվա կատարած աշխատանքի մասին: Խոզաբուծութան անդրադարձնալով՝ նա ասում է. «Այ ժողովուրդ, Լենինն ասել ամիսը արուծութունը դա եղի ֆարքիկա յա»: Առուշանովը տեղից սաստում է. «Ախճի, սաստ կորի, Լենինը՝ տճենց դալաթ չի ըրել»: Մինա դային խկուլն կառչում է այդ բառից. «Դե լավ. դու Լենինին դալաթ ասեցիր, չէ՞, էսա կո՞նամ, ույկո՞նում կասեմ»: Առուշանովը վախից ստիպված այդ կնոջը թողնում է իր պաշտոնին:



Պվանանց Գարսաը շոֆեր էր: Կուզովում ահագին մարդ էր նստեցնում, ներքին Շենից տանում Դարաչինար: Տեղ հասնելուց հետո ամեն մեկը հանում, 20 կոպեկ էր տալիս (վարձը): Հերթը հասնում է Գյուլի քիբին: Հանում է, որ փողը տա, Գարսաը նեղացած ձևով ասում է. «Պա, Գյուլի բիր, համութ չի՞, հարեան մարդ ես, տու էլ ե՞ս փող տալիս: Կարիք չկա: Իրիկունը բախան կղարկեմ, մի լիտր արագ կտաս, կխմեմ»:



Պաուսնց Միրզան ու թյունուց Մելիքը մանկութան ընկերներ էին: Մելիքը գնում է Գանձակ, արհեստ սովորում, ամուսնանում, կնոջ հետ (որը շատ կարճահասակ էր) միասին վերադառնում գյուղ: Միրզան հանդիպում է, ասում. «Ա Մելի, դա ի՞նչ աղջիկ ա, որ ուղե է ես»: Մելիքն ասում է. «Միրզա, դու քո՞ աչքերով ես նայում, հայա մի ի՞մ աչքերով նայի, կիմանաս ոնցն ա»:



Պարաջանը, տարիքն առած, հիվանդ պառկած էր: Ասում էին՝ արդեն մարդ չի ճանաչում: Իսախանը գնում է տեսության ու հարցնում է.  
— Բարաջան, ինձ ճանաչո՞ւմ ես:  
— Ձե՛, Իսախան, չէ...



Հարեանը բակից կանչում է.  
— Ժաննա՛, Ժաննա՛...  
Ժաննայի ամուսինը դուրս է գալիս բակին, ասում՝ հի՞նչ ա...  
— Ա՛, դու Ժաննա ե՞ս...  
Ամուսինը տուն է մտնում, Ժաննան է դուրս գալիս, ասում՝ հի՞նչ ա...  
Հարեանն ասում է՝  
— Մարթա տանն ա՞, ասա ի՞ջնի, նարդի խաղանք:

Մի երեխա ուշացած ներս է մտնում դասարան: Ընկեր Ազատը նկատողութուն է անում՝ բոլ ա, էլի, ամեն օր հենց դու՞ պիտի ուշանաս, պա քեզ ճակատ չունե՞ս... Աշակերտն այլևս չի համբերում, ասում է՝ ընկեր, նաղըլն ա՞, նաղըլ. յա ասա նստի, յա ասա՛ դուրս եկ, կորի:



Մի բռնազաղթածներից մեկը Ռուսաստանում հաճախ է խորոված անում: Հարեանները բողոքում են թաղային միլիցիային, թե՛ էս մարդիկ իրենց փախստական են համարում, բայց ամեն օր խորոված են անում, մեր արտոթակն էլ գրգռում: Միլիցիոները գալիս, այդ բռնազաղթածին հայտնում է բողոքը: Նա էլ ասում է՝ փախստական մարդ եմք, դադան չունենք, պագ չունենք, որ սուպ եփենք: Խորովածով մի կերպ յուր ենք դնում: Միլիցիոներն ազդված գալիս, Հարեաններին ամոթանք է տալիս. թե՛ էն խեղճ մարդիկ ճաշ եփելու հար էլ չունեն, հաղիվ խորովածով յուր են դնում, ի՞նչ եք բողոքում...



Մերին Շենի և Պարիսի բնակիչներին միջև իրար ձեռ առնելու, ծաղրելու, խրարով զվարճանալու մի յուրատեսակ մրցում կար: Խորհրդային իշխանութունները, մանավանդ հետպատերազմյան տարիներին, ինչպես հայտնի է, բազմաթիվ հարկեր էին հավաքում: Ոչ ոք չէր կարող հրաժարվել: Նույնիսկ դժոճհիլու համար մարդկանց աքսորում էին: Եվ ահա մի անգամ կատակով Վերին Շենից գանդում են Պարիսի գյուղատվետ, հարցնում՝ խլուպոզի (ձնծաղիկ) պլանը կատարե՞լ եք: Գյուղատվետից դարձացած հարցնում են.

— Ի՞նչ խլուպոզի պլան...  
— Վահ, ձեր տունը շինվի, բա չգիտե՞ք, ամեն ընտանիք պիտի մի տուպրակ խլուպոզ հանձնի մթերման գրասենյակին:  
Առավոտ ձեզին պարխեցիները, մի-մի խլուպոզհանի սրած, տուպրակները վերցրած, շարժվում են դեպի դաշտ: Լուրը հասնում է շրջանի ղեկավարներին: Մեծ աղմուկ է բարձրանում: Մի կերպ բացատրում են, որ կատակ է եղել: Բազմաթիվ մարդիկ գնում են շրջկենտրոն, ղեկավարությանը համոզում, որ երկու գյուղերն իրար հետ միշտ այդպես կատակում են: Մի կերպ ներում են այդ մարդուն, փրկում աքսորից:



Պյունին մի քթոց վերցրած գալիս է գյուղամեջ, որպեսզի շրջկենտրոն մեկնի, հետո նկատում է, որ բան է մոռացել տանը: Չորս կողմը նայում է, քթոցը գնում Լենինի արձանի ոտքերի մոտ, ասում.  
— Մենակ քեզ եմ դավերյա անում:

Գնում է տուն, վերադառնում, տեսնում է՝ քթոցը չկա: Նայում է հավաքված մարդկանց ու ասում արձանին.

—Բա սրանց մեջ հալա մարդ կմնա՞...



**Մ**եր գյուղերում մի սովորութուն կար. մայիսի 2-ին բոլորը գնում էին գերեզմանոց: Եստերը վճարում էին երաժիշտներին, որ իրենց հանգուցյալի գերեզմանի վրա նվագեն: Այդպիսի մի օր մանաշիջի մի կին հանդիմանում է տղային.

—Տեսնում ես, մեր էն հարեան Սիմոնի գերեզմանին մի ժամ ա մուզիկա են ածում:

—Է, ածում են, ածեն, այ մամ, Սիմոն դային քառ էր, չես հիշում: Էդ մուզիկան որ տեղ հասնի, էլի մեր պապան ա լսելու,—բացատրում է տղան:



**Մ**որեքտը նոր վերաբերու է աւնում, տանը փորձում է, տեսնում է, որ մի քիչ երկար է: Կնոջ հետ միասին որոշում են տանել գերձակի մոտ՝ կարճացնելու: Այդպես էլ անում են: Դերձակը մի ջահել, սիրուն կին էր: Գալիս են տուն, Ռորեքտը նրան չի կարողանում մոռանալ: Մի քանի օրից հետո ասում է՝

—Ձէ, այս վերաբերուն ո՞նց որ էլի երկար է, պիտի տանեմ կարճացնելու:

Տանում է, բայց... կինն էլ հետն է գնում: Այդպես մի քանի անգամ տանում, կարճացնում են: Վերաբերուն հասնում է գոտկատեղին, բայց Ռորեքտն էլի նույնն է կրկնում.

—Էս վերաբերուն աչքիս մի քիչ երկար է երևում...

Կինն ասում է.

—Այ տղա, էդ վերաբերուն որ մինչև կունատակդ էլ հասցնես, մեկ է, հետդ գալու եմ դերձակի մոտ:



**Գ**յուղում սովորութուն կար, որ ջահել հարսները փահլեանի (լարախաղաց) լարի տակով անցնեն, երեխա ունենան: Մի անգամ փահլեան էր եկել, Միրզանց բաղում տեղ էին սարքել, լարը կապել: Երբ փահլեանն սկսեց խաղալ, ծաղրածուին ցույց տվեցին, թե որ հարսներն են ուզում լարի տակով անցնել: Ծաղրածուն վազեց, հարսներից մեկին շալակեց, բերեց, իսկ մյուսն իր ոտքով եկավ, որ անցնի լարի տակով: Փահլեանն ինչ-որ բան ուզեց ասել, շփոթվեց, ձեռքի փայտն ընկավ, կպավ այդ հարսին, քիչ մնաց, որ ինքն էլ ընկնի, մի կերպ իրեն պահեց...

Դրանից հետո այդ հարսի անունը դրին Փահլեանի լարի տակով անցած:



**Ա**ռնիկը Մոսկվայում գնում էր Ռայայեյնց տուն: Մեարոյի մոտ տեսնում է մի տղա՝ երկար մազերով, երկար բեղերով, երկար մորուքով:

Նայում է նրան ու հայերեն ասում. «Ը՛, պատկերդ կորվի... մրջից բռնես՝ տուռ-նրկի տա...»: Տղան անսպասելիորեն հայերեն ասում է. «Պա վար վեր ինգնես, շնաստակ ինե՞ս...»: Սեղճ Նունիկն ամոթից մնում է սառած, լեզուն կապ ընկած:



**Մ**ելյան Գրիշիկն ու Արրահամյան ժողովը գնում են Գյոբան կայարան՝ պիտուր բերելու: Գնացին ուշանում է: Ցուրտ օր է լինում: Գրիշիկն ասում է հատեղ մի ծանոթ թուրք ունենք, գնանք նրանց տուն, մի քիչ տաքանանք: Գնում են, տեսնում՝ տանը միայն երեխան է: Գրիշիկը հարցնում է՝ աթան հանը՞ (հայրդ որտե՞ղ է): Երեխան ասում է՝ ուսմամբ գեղի՞ք (գնացել է էն աշխարհը): Գրիշիկը հարցնում է՝ հավա՞ր գյալաջաղ (բա ե՞րբ է գալու)...



**Մ**ոլխուզի ժողովում նախագահը զայրանում է՝ այ թյունի, տղադ ինչու՞ է խոպան գնացել, մեր գործերը թողել: Սրբափորի զվարճախոս թյունին ասում է՝ գնացել ա աշխատի, բերի, որ մենք ուտենք, որ մենք էլ աշխատենք՝ դուք ուտեք...



**Մ**ոլխուզի ժողովում թատերական ներկայացում պիտի լիներ: Ժողովուրդը նստած սպասում էր, մինչև որ բեմը կարգավորեն: Թյունին նայում է Ակուսի կողքը նստած կնոջը՝ նախշունին՝ սիրուն, գեղեցիկ, գրավիչ: Հետո էլ շրջվում, նայում է կողքին նստած իր կնոջը՝ ահ, նիհար, տգեղ, ու ախ քաշելով ասում է՝ այ ծուռ Աստված, որ նա կա, սրան ինչու՞ ես ստեղծել...



**Մ**արաչինարցի ուսուցիչ Ջալիի հոգու հետ խաղալու համար աշակերտները հարցնում են. «Ընկեր Ջալի, ինչքան ես ստանում»: «50 մանեթ», պատասխանում է: Նրանք զարմանում են՝ «Վա՛, էդ ինչու՞ էդքան խրեկ ես ստանում»: Ջալին ասում է. «Խրեկ եմ ստանում է, որ դասի ժամանակ Ղրմբատա ծյորերան եմ պատմում...»:



**Մ**րյանանց Թևոսը կանգնում է բալկոնում, նայում ցածով հոսող գետին, որը փոքրիկ լճակ է կազմում կամրջի մոտ՝ Հայտնի Գյուղագյուղը, և նորից հոսում առաջ: Երկար նայում է ու երանությամբ ասում. —Էս Գյուղագյուղը գինի լինեք, միջի քարերը՝ սողան...



**Պ**րսեցի դհուլի Մադաթը էշին նստած գնում է Վերին Ենն՝ հարսանիքի: Ղյուղում մի երեխա հանդիպում է, ասում. «Ա՛ դայ, էդ ո՞ւր ես



գնում»։ Մնադաթն ասում է. «Զեր գյուղում մի Հարսանիք կա, գնում եմ շխլեմ»։ Երկուսն ասում է. «Շլալոդ ես՝ փափախիդ շլալի...»։ Մնադաթը, որի փափախըն իրոք Հին էր, ազդվում է, որ այդ փոքր երեխան իրեն, ինչպես ասում են, «քյազսու եկավ»։ Իսկ երեխան ոգևորված շարունակում է գրույցը։

—Որտեղացի՞ ես, — Հարցնում է նա։

—Ես պրսեցի եմ, ամա տակինս՝ վերինշենացի ա, — ինքնագուհ պատասխանում է Մնադաթը։



... Ասում են՝ վերինշենացի մի մարդ գնացել, Ռուս Պարխից ճագարներ է առել, բերել տուն։ Հետո նկատել է, որ ոչինչ ընկած են։ Եամպուլյնով լուրացրել է, ականջներից կախել պարանից, որ չորանան...

Մի տան այժմ են մորթում, կինը այժի ոտքերն ու գլուխը տանում, գետու մաքրում-լվանում է խաչ եփելու համար։ Անդգուշությունից հանկարծ ջուրը տանում է այժի ոտքերն ու գլուխը։ Կինն սկսում է հետևից կանչել՝ չիբի-չիբի...



Գրիգորն ու Հմայակն իրար հետ միշտ կատակներ էին անում։ Մի անգամ Գրիգորը գնում է վարսավիր նիկոլի մոտ, ասում, որ մի քիչ հետո Հմայակը գալու է մազերը խուզելու, պայմանավորվում են «խաղ խալալ» նրա հետ։ Որոշ ժամանակ անց Գրիգորը նորից գնում է վարսավիրանոց, տեսնում է՝ նիկոլը Հմայակին նստեցրած, մազերը խուզում է։ Ասում է՝ նիկոլ, մի քիչ փող չե՞ս տա պարտքով։ Նիկոլն ասում է՝ փողը որտեղի՞ց ա, փողի համար չոն եմ խոզում... (Երբ ասում են՝ «չոն ա խոզում», նշանակում է՝ տեղը շատ նեղ է, սուղ պայմանների մեջ է)։



1991թ. սեպտեմբերի 2-ն էր։ Ընդունվում էր Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Եահուճյանի շրջանի (ներառյալ Գետաշենի ենթաշրջանը) բոլոր մակարդակի պատգամավորների նորաշրջանի կողմից Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակագրերը։ Մարզիորհրդի նախագահ Լեոնարդ Պետրոսյանը հայտարարում է.

—Զայնը տրվում է Եահուճյանի շրջանի պատվիրակության ղեկավար Փոքր Եահենին (այդպես էին անվանում Հովասափյանին՝ Եահեն Մեղրյանից տարբերելու համար, որը նրանից մեծ էր. նրան էլ Մեծ Եահեն էին ասում)։

Ամբիոնին մոտենում է մի վիթխարի աղամբար։ Ներկաներն ականայից ծիծաղում են։

—Էս որ փոքրն ա, դրանց մեծն ի՞նչ կլինի, — լսվում է տարբեր կողմերից։



Ղարաչինարցի ընկեր Օհանը հիվանդ էր։ Տղաները Երևանից տանելով 4-5 արկղ արտասահմանյան զարեջուր, այլ ընտիր խմիչքներ, ուտելիքներ, որոնք այն տարիներին խանութներում չէին ճարվում։ Գյուղի ընկերներն էլ են հավաքվում։ Եարթ-կիրակի լավ քեֆ են անում, տարածի հետ միասին պաղվալում եղած գինի-արաղն էլ խմում են ու... ճանապարհվում։ Վերջին պահին ընկեր Օհանն անկողնուց վեր է կենում, գլուխը փաթաթած, մատների ծայրով մի շիջ բռնած դուրս է գալիս բակ ու կանչում. «Տղերք, էս մեկը մնացել է...»։



Հեռուստացույց նորոգող Կիմիկը հաճախ կատակ էր անում իր հարեան Մարտինի փոքր տղայի հետ, սիրաշահում նրան, որ իր մեքենան վանա։ «Մաշինս վար ծնի, ճտը քեզ եմ տլական», ասում էր նա։ Տարիներ անցան։ Ո՛չ գյուղը մնաց, ո՛չ նախկին հարեանությունը։ Մարտինն իր ընտանիքով Ամերիկայում է ապրում, բայց տղան չի մոռանում Հին Հարեանի «խոստումը»։ Նա հարցուփորձով դտնում է նախկին հարեանի տեղը, զանգում Ռուսաստան, ասում. «Կիմիկ ձյաճյա, դու քանի տարի ինձ խոստացար, բայց քո մաշինը չմնաց։ Հիմա մեր մաշինը ծնել ա, եկ ճտը քեզ տամ»։



Մոխոխ ճաշը պատրաստում են թթվի ջրով ու ցորենով և շատ թթու է լինում։ Մի անգամ մի թուրք հյուր է գալիս ներքինշենացի Պողոսին, սրանք էլ մոխոխ են եփած լինում։ Դե, ճանապարհ եկած, հոգնած ու սոված մարդ։ Մի կյուշ լցնում են, գնում առաջը։ Նա էլ մի բոլբոլ հաց է բրզում, որ կշտանա։ Հենց մի գդալ քերանն է տանում, մնում է փշաքաղած, քարացած, բայց, ոնց որ ասում են՝ նամուսի պատճառով մի կերպ ուտում է մինչև վերջ ու դուրս պրծնում տնից։ Գյուղի ծայրին՝ Բալունց դորբի մոտ տեսնում է մի մարդ շանը կապած ծեծում է։ Հարցնում է՝ ինչու՞ ես ծեծում։ Նա ասում է՝ բակի հավերն ուտում ա։ Այ մարդ, ասում է հյուրը, կստակի, մեղքի տակ կընկես, ավելի լավ է տար Պողոսի մոտ, թող մի աման մոխոխ տա էդ շանը, համ շունը կազատվի, համ դու, համ էլ հախիրը...



Գրիգորն ու իր եղբայր Օհանյանը միս էին վաճառում Կիրովաբաղում։ Մի երիտասարդ մոտենում, հարցնում՝ ինչի՞ միս է։ Ասում են՝ խոզի։ Նա նորից է հարցնի տալիս՝ քանի՞ ամսական խոզ է, ասում են՝ վից։ Ինչո՞վ եք մեծացրել։ ասում են՝ կոմբիկորմով։ Էնքան բան է հարցնում, որ էդ մարդկանց դահլեն գնում է։ Վերջում ասում է՝ դե, լավ, մի 250 դրամ քաշեցեք։ Գրիգորն ասում է. «Բաջողլի, երևում ա՝ հրանքայան օնես, հա՞»։

Մերին Եննի զվարճախոսներից էր Եաննազ բիրը: Հաճախ նրան կանգնեցնում էին փողոցում, խոսեցնում, զվարճանում, իսկ նա ասում էր. «Էս խոսքերը գրեցեք, որ երբ ես չլինեմ, էլի հիշեք»: Վաղուց արդեն չկա Եաննազ բիրը, բայց նրա խոսքերից շատերը հիշվում են:

♦♦♦

Շահնազ բիրը գնում է կոլտնտեսության նախագահի մոտ, որ խնդրի՝ իր համար վառելափայտ բերին: Մտնում է գրասենյակ, տեսնում է ընկեր Համոն վառարանի մոտ կանգնած, խողովակները երկու ձեռքով գրկած:  
— Հը՞, Եաննազ բիր, ի՞նչ ես ուզում,— հարցնում է Համոն:  
— Որ քեզ տեսա, մեղքս եկար, ոչինչ չեմ ուզում,— ասում է Եաննազը:

♦♦♦

Շուրան Եաննազից ընկույզ է վերցնում, տանում Մինգեչաուր վաճառում, վերագտնում, բայց փողը չի տալիս, ձգձգում է: Մի անգամ էլ Եաննազը գնում է փողի հետևից, Շուրան նորից հետաձգում է: Եաննազը շրջվում է, որ գնա, կախիչից վերցնում է Եուրայի գլխարկը, գնում թևի տակ, ասում. «Կգնամ գյուղամեջ, կասեմ՝ ընկույզս փոխել եմ այս գլխարկի հետ»: Եուրան ծիծաղելով բերում, փողը տալիս է:

♦♦♦

Շահնազին հարցնում են. «Ինչու՞ ես բաժանվել հարսիցը»: Եաննազն ասում է. «Նեմեցի պլենն ազատվել ա, ես իրավունք չունեմ՝ ազատ ապրելու»:

⊙ ⊙ ⊙

Մուր աշուղ էր Բախչին: Երջում էր գյուղերում, երգում, հետաքրքիր զրույցներ անում: Եվ սովորութուն ուներ՝ հարցին հարցով էր պատասխանում: Մի անգամ Ղարաչինարի Թոխմաչար թաղամասում բոլորը հավաքված նրան էին լսում: Բուբերթը հարցրեց՝ «Ա՛ դայ, երբեք ունե՞ս»: Ասաց՝ «Քանիսը օնեմ, լսի տղեք են»: Բուբերթը զարմացավ՝ «Բա ասում ես՝ քո՞ն եմ...»: Բախչին ասաց՝ «Ա շան տղա, Կալչակը Մուսին կոչուր փանառավ ա զընո՞ւմ...» (Կալչակը Բուբերթի հայրն էր, Մոնան՝ մայրը):

⊙ ⊙ ⊙

Մի ձմեռնապենդ տարի գյուղացու խոտը վերջանում է: Մի օր նա կովը հանում է գոմից, որ տանի, ջուր տա, քաղցած անասունը բակի հանգած օջախի մոտ սկսում է կրծել մի խնձղակոթի չոր փայտը: Գյուղացին այդ խնձղակոթը վերցնում, դնում է գրպանը: Գարունը բացվելուն պես ամեն առավոտ նա գրպանից հանում է խնձղակոթը, նայում ու տնից դուրս գալիս: Խնձղակոթից կակուղ ինչ որ հանդիպում է, ամեն ինչ հավաքում, բերում, կուտակում է տանը՝ ձմեռվա համար:

⊙ ⊙ ⊙

Մերքինչենացի Վելուսց Սաշան ու Հայրուսց Ղուկասը ձիով Տեշաից Ղարաչինարի միջով անցնելիս հանդիպում է Ավանյան Ղուկասը: Ասում է էս սելավը ու՞ր եք գնում, ամոթ է, եկեք մեր տուն, սելը կկտրի, էլի կգնաք: Գնում են նրանց տուն, տեսնում են ի՞նչ տուն, մի փոքր պապկալ է: Եվարած հյուրերը հարցնում են էս ձիերը որտե՞ղ կապենք: Տանտերն ասում է՝ լեզվիցս...

⊙ ⊙ ⊙

Շրջանի նախկին դեկավարը Երևանում տաքսի է նստում և նկատում, որ ցուցանակի վրա գրված է՝ «վարորդ Եվուսց»: Ոգևորված հարցնում է՝ տղա ջան, ո՞ւս հազվադեպ ազգանուն է, որտեղի՞ց ես: Վարորդն ասում է՝ Եանուժյանից: Նա նորից հարցնում է՝ ձեր շրջանի հի՞ն աշկոմի քարտուղարն էր լավը, թե՞ նորը: Վարորդը մի թունդ «նախշում» է երկուսին էլ («մեկին՝ առավոտը, մյուսինը՝ իրիկունը»): Այլևս ծպտուն չի հանում նախկին դեկավարը, տեղ հասնելուց հետո էլ մի տասանոց է դնում նստարանին ու սուսուփուս իջնում:

— Սպասիր, մանրդ քեզ տամ,— ասում է վարորդը:  
— Մի քիչ առաջ տվեցիր...

⊙ ⊙ ⊙

Մրշակ վարժապետը հայտնի էր իր կատակներով: Մի անգամ աշակերտները որոշում են խաղ խաղալ նրա հետ: Առաջին ժամին բոլորը դասարանից դուրս են գալիս, թաքնվում: Վարժապետը ներս է մտնում, տեսնում՝ ոչ ոք չկա, հետ գնում է ուսուցչանոց: Տնօրենն ասում է՝ էդ ինչու՞ չես դասի գնացել: Վարժապետն ասում է՝ աշակերտ չկա: Տնօրենը զարմացած վեր է կենում, միասին գնում են, տեսնում՝ դասարանը լիքը: Տնօրենը բարևում է ու հարցնում է՞ր որտե՞ղ էիք: Աշակերտներն անմեղ ձեռնալով ասում են՝ բոլորս նստած էինք, վարժապետը ներս մտավ, առանց բարեկու սուսուփուս հետ գնաց... Վարժապետն ասում է՝ հա՞, հալբաթ աշկիս տհենց ա երևացել...

⊙ ⊙ ⊙

Պատերազմի տարիներին ո՞չլիւր տարածված էր, իսկ պատերազմից հետո վերացավ: Սիրանուշն ուրախ սրտով ամուսնուն ասում է. «Այ Գրիգոր, էս հոջիլը լավ եր եկավ կխններաս»: Գրիգորն ասում է. «Կլխումս հի՞նչ կա, վար հոջիլը կենա: Դամյա տափու՞մը հեյվան կկենա՞»:

⊙ ⊙ ⊙

Մուխանը խոպանից նամակ է գրում կնոջը. «Նախշուն ջան, ոտքիս չափան ուղարկիր, ուզում եմ ինձ համար կոշիկ գնել»:



Համալուրացիներից մեկն առավոտյան հանգիպում է Սիմոնին ու  
ասում:

—Արի գնանք, մարդս մի բաժակ օղի խմենք:  
Սիմոնն ասում է.

—Աղա, էդ ի՞նչ գեղեցիկ նախադասութիւնն ասացիր, մեջը համ ենթակա  
կա, համ էլ ստորոգյալ:

Գարեգինը դեղձը կորիզով է ուտում: Տեսնողներից մեկը վարմացած  
հարցնում է.

—Գարեգին, դեղձի կորիզը չես հանո՞ւմ...

—Կորիզը որ հանեմ, աակին հի՞նչ կմնա,—պատասխանում է Գարեգինը:

Մի երաշա տարի Գարեգինն ինքն իրեն դժգոհ խոսում է.

—Էս ի՞նչ անանք գյուղ ա, էս ի՞նչ աննամուս ղեկավարութիւնն ա, ամբողջ  
ամառը մի բուռ անձրև չեկալ...

Պարտիզանական վրանի մեջ ամեն մեկը լուռ իր գործով է զբաղված:  
Հակոբը (որ ուսերեն լավ չգիտեր) ուսերեն ինչ-որ թղթեր է թեր-  
թում ու վարմացած բացականչում.

—Տղերք, ուսերենն էս ի՞նչ տեսակ լեզու է, անուսն փոքրատառ են գրել:

—Որտե՞ղ է, ի՞նչ է պատահել,—հետաքրքրվում են ընկերները:

—Ահա, գրած է okop,—ցույց է տալիս Հակոբը:

—Միայն անուսն էն փոքրատառ գրել, ազգանունդ էլ է փոքրատառ,—ա-  
սում է Սաշան,—ահա траншея...

Չարաչինարցի Ուրին ձմռանն առավոտից երեկս ընկերների հետ  
Հարդի էր խաղում գյուղամիջում: Մի անգամ էլ հիվանդանում է ու  
մի քանի օր չի կարողանում տնից դուրս գալ: Երբ մենակութունից շատ  
նեղվում է, շորերով պինդ փաթաթվում է, դուրս գալիս գյուղամեջ, իրենց  
հավաքատեղին: Ընկերները սովորականի նման նարդի էին խաղում, նրան  
տեսնելով՝ վարմացած հարցնում են. «Էդ ինչո՞ւ ես էդպես փաթաթվել, քանի օր  
էլ չես երևում...»: «Տղերք, հիվանդ մեռնում եմ, եկել եմ, որ ինձանով զիրավ  
հրնցընեք», ասում է Ուրին:

Ներքինչենացի Սիմոն դային մտնում է փախստականների կոմիտե,  
խնդրում, որ «Մուսալի դողանջներից» մի համար էլ իրեն տան: Լյուր-  
վիզը հեռվից նկատում է ու կանչում. «Չտար, նրան թերթ չտաք, անցյալ օրը  
նա մեր թերթը գրել էր գետնին, վրան նստել... Սիմոնն արդարանում է. «Տղերք,  
էն Ասավածը, չեմ իմացել, ուրիշ թերթերի արանքում է եղել...»:

Ծիրինը երիտասարդներին գլխին հավաքած զվարճալի պատմութիւն-  
ներ էր անում.

—Գնացել էի հանգստանալու. Ան ծովում ինձ համար արիային լողանում  
էի, մեկ էլ տեսա՝ մի ակուլա է գալիս: Դե, հո գիտեք՝ ես ինչ լողորդ եմ, բայց էդ  
անանք ակուլան արագ մոտենում էր: Տեսա հնար չկա՝ բարձրացա մի ծառ...

—Ծիրին դայի, բա ծովի մեջ ծառը որտեղի՞ց էր,—հարցնում են հավաք-  
վածները:

—Է՛, քեզ մատաղ, ակուլան որ հետևեցդ է ընկնում, էլ չես հարցնում՝  
որտեղի՞ց է...

Մամիկն անտառից (պարտիզանական ջոկատից) գալիս է Երևան,  
տրամվայ նստում, որ գնա Յ-րդ դյուղ: Կիևյան փողոցի վերջում  
արամվայը շարունակում է ուղիղ գնալ: Մամիկը վարմացած ձեն է տալիս.

—Ախպեր, էդ ո՞ւր ես գնում, պիտի աջ թեքվես...

—Ընկեր ջան, աջով գիծ չկա, չեմ կարող,—պատասխանում է վարորդը:

—Մամիկը որ ասի, Ապարան էլ կգնաս, ո՞նց թե գիծ չկա...—հստորում է  
Մամիկը:

Մերին Շենի փառավոր ժամանակներն էին: Գյուղի ջոկատն ամուր  
կանգնած էր թուրքերի դեմ: Արտասահմանից եկած լրագրողը  
մոտենում է Ջանունց Մամիկին ու հարցնում.

—Այդքան լավ գիտված ու մեծաթիվ թշնամուն ինչպե՞ս եք գիմանում,  
ինչո՞վ եք կռվում:

—Եղանով, կացնով, ինչով պատահի,—Հպարտ պատասխանում է Մամիկը,  
որի ուսից ավտոմատ էր կախված...

Ներկա կանանցից մեկը բացատրում է պատճառը.

—Պոստի տանելու ժամանակ միշտ հարցեր են տալիս՝ բա ինչո՞վ պիտի  
կռվենք, ասում էին՝ եղանով, կացնով, ինչով ուզում եք, կռվեցեք՝ գյուղը պիտի  
պահենք: Այդպես էլ տպավորվել է Մամիկի մոտ...

Գլուխտանում ժողովրդի տավարը հերթով պահում էին հենց իրենք՝ տերերը: Մի անգամ վաղ առավոտյան մի երեխա մտածելում է գլուխամիջում հավաքված տղամարդկանց ու հարցնում.

—Տավարած Ռափոն ո՞վ ա...

—Էս անտեր գլուխում տասը տարի շկոլ գնացի, ոչ մեկը չասաց շկոլնիկ Ռափո: Հիմա երկու անգամ տավարի օջերեդ եմ գնացել, ասում են՝ տավարած— դժգոհում է Ռափոն:

Երեանի Սիլիկյան թաղամասի մոտ գտնվող այսպես կոչված՝ փախստա- Աղանների գլուխ գնացող ավտորուսի մեջ գրուցում են: Մեկն ասում է.

—Մեր շենը աչքիս ըսաշան քինում չի: Սաղ օրը մաքուրն էսա էնտեղ եմ մեր տանը, մեր փողոցում, մեր դպրոցում... Էստեղ որ փախստական են ասում, կլիսի թուփուր վեր ա կենում, մեր լեզվով էլ որ խոսում եմ, տեղացիները խըչկոտում են... Մի խրխափորցի կա, նա էլ է միշտ միայն մեր լեզվով խոսում: Մի անգամ ավտորուսի մեջ գրտողութուն են արել, թե ինչու ժողովրդի մեջ գրական լեզվով չի խոսում: Ասել էր՝ էն լիքը-բոլ շենան մենակ մի լյուզի եմ պիրել, էդ էլ օգում եք էստեղ կորցնե՞մ...

Ռուբենը գնում է իր քույր Մարալի տուն: Խոզը մորթում են: Տղամարդիկ գրտում հապճեպ կրակ են վառում, ընդունված ձևով մի երկու կտոր միս խորովում, մի բաժակ օղիով համտես անում: Ռուբենը կտրում է մորթած խոզի լեզուն, դա էլ խորովում: Խոզի գլուխը մաքրելու ժամանակ Մարալը նկատում է ու զարմացած բացականչում. «Վա՛յ, խոզին լյուզին կա՛ վեջ...»:

—Ախճի, դու հողա տհենց միամիտ ե՞ս,—ասում է Ռուբենը:—Ի՜նչ խոզին լյուզի կինի՞, պա խէ՞ են ասում անլյուզի հեյվան...

Մունի տեղահանված շահումյանցին Երեանում դաս է սովորեցնում առաջին դասարանցի երեխային: Գրված է մեկ տառ, մտքը նկարած այդ տառով սկսվող որևէ բան: Մայր ու տղա սկսում են վիճել, մայրն ստիպված դանդում է իր «փորձառու» ծանոթին.

—Ախճի, էս ըրիսին տյասին ծեռին կրակն եմ ինզել, կիրած ա Բ, կողքին նկարած բուլլի: Տհենց էլ ասում եմ, էս լակտը փորը ճղում ա, թա՛ մեր գոսատուն տհենց չի ասել...

—Ախճի, երեխան ճիշտ է ասում, գրական լեզվով բուլլի չէ, բա՞դ են ասում:  
—Վո՛ւյ, հա՛... Պա էս մինը՝ տեմբուլ ա նկարած, ամա կողքին, «ս» ա գրած:  
—Տհենց պան չի ինիլ, կարող ա՞ սխալ են գրել...—պատասխանում է «փոր-ձառու» ընկերուհին:

Այսօր ամեն մի շահումյանցու ծանոթ է անգլիացի բարոնուհի Կոքսի ա- նունը, բայց արցախյան շարժումը երբ նոր էր սկսվել, շահումյանցի- ները միայն քարածուխի մասին գիտեին, որ կոքս էլ է լինում: Առաջին անգամ երբ բարոնուհին այցելում է Ղարաբաղ, Շահումյանի շրջագործկոմի նախագահ Շահեն Մեղրյանը Երեանում է լինում: Նա կապվում է համապատասխան ըն- կերների հետ, պայմանավորվում, որ Կոքսին Շահումյան էլ տանեն: Ջանգում է շրջան, ղեկավարներից մեկին պատվիրում. «Կոքսը հասել է Ղարաբաղ, շտապ մեքենա վերցրեք, գնացեք, Ստեփանակերտից բերեք Շահումյան»:

Այդ ընկերն իսկույն երեք հատ «Կամազ» քեռնատար է վերցնում, հասնում Ստեփանակերտ, հանդիպում ղեկավարներին, ասում է. «Եկել ենք կոքսի համար, Շահենն է ա- սել»: Իսկ նրանք, «Կամազները» տեսնելով, մի լավ զվարճանում են:

Վովան շրիեփած մտնում է հիվանդանոց, թե՛ ըխճը կեք, ձեղ մատաղ, մի զարմանում են, թե.

—Շատ բան ենք տեսել, բայց որ փեսան զօքանչի համար այդքան անհան- գրտանա, լսած էլ չենք...

—Վա՛, ի՞նչ եք ասում, 120 մանիթ թոշակ ա ստանում, բա ես կթողա՞մ, որ նա մեռնի,—ասում է Վովան:

Զարմիկին գլուխում միամիտ էին ասում, բոլորն էլ կատակում էին Զհարը, հոգու հետ խաղում: Իսկ նա բոլորին հանգիստ ու «միամիտ» էլ պատասխանում էր: Մի անգամ գլուզի ջահելները հավաքված գրուցում էին ակումբի առաջ: Թուխպ ու ցուրտ օր էր: Տեսնում են՝ Հեռվից Զարմիկը գալիս է՝ փաթաթված, կուչ եկած, երեսն էլ ուռած: Հարցնում են.

—Ի՞նչ է պատահել, ո՞ւր ես գնում:

—Ատամս ցավում է, գնում եմ դուքնոյի մոտ:

—Այ տղա, երեսդ ուռած վիճակում դուքնոյը ոչինչ չի կարող անել,—բա- ցատրում է մեկը:—Ավելի լավ է դու իմ խորհուրդը լսիր: Իմ ատամը որ ցավում է, իրեսս քսում եմ մեր կնկա իրիսին, ցավն անցնում է. դու էլ էդպես արա...

—Լավ ես ասում, բայց էս թուխպավը քո կնկանը որտե՞ղ գտնեմ,—ասում է Զարմիկը:

Ղարաչինարցի Ղարիբանց Ռաքելը մեռել էր: Հավաքված տարեց կա- շայք բարձրաձայն լաց էին լինում ու հիշում իրենց հանգուցյալնե- րին: Մեկը լացի մեջ ասում է Ռաքել, մեր մարդին կասես, որ երեխեքին յուր եմ տարել, իրենց նպատակին հասցրել: Մյուսան ասում է՝ մեր մարդին չասես, որ կարկուտը բերքը լսիս տարել ա: Ու այդպես ամեն մեկն իր լացի հետ մի բան ասում է: Հայտնի զվարճախոս Կալչակն ասում է.



Այ կենսիք, Ռաքելը մթկաքոռ ա, Հերիքը նիրա կլիտումը խելք չի թողել, մինչև հինգերեսուարանը հսնելը լոխ մըտան քիցլական ա, մասը թել կապեցեք, վար մըտան քիցի վեչ... (Սովորությունն կար, մասին թել էին կապում, որ չմոռանան ինչ որ կարեւոր բան):



Յուրտ, կիրակի օր էր: Տնեցիները կուչ էին եկել տեղաշորի մեջ: Հանկարծ դուռն զանգը հնչում է: Ոչ ոք չի ուզում վեր կենալ, դուռը բացել: Վերջապես Իրան է տեղից վեր կենում, կրեխաների վրա ջղայնանալով հագնվում, դնում, դուռը բացում: Տեսնում է բարոն է:

— Է՛, այ մամ, որ իմանայի դու ես, այսքան չէի հագնվի,—ասում է Իրան ծիծաղելով: Տնեցիներն էլ են բոլորը ծիծաղում, որ Իրան իզուր է այսքան չարչարվել: Իսկ բարոն, որ վատ է լսում, չի հասկանում, թե ինչու են ծիծաղում: Իրան նորից ու նորից բացատրում է.

— Այ մամ, էսպես-էսպես էր, ցուրտ է, կիրակի: Հանկարծ դուռն զանգը խփեցին, ոչ ոք չէր ուզում տեղից վեր կենալ: Էս էլ չգիտեի, թե ով կլինի, իզուր էսքան հագնվեցի...

— Հա՛, բա ո՞վ եկավ,—հարցնում է բարոն:



Մտկվայի ինստիտուտներից մեկում քննության լարված սահ է: Մեկը տոմս քաշել, պատասխանն է որոնում, մյուսն իր հերթին է սպասում և այլն: Հանկարծ միջանցքում լսվում է բջջային հեռախոսի ծվվոցը: Աղջիկը պայուսակից հանում է հեռախոսը, ցածրաձայն, բայց դժգոհ վրա տալիս.

— Ձանգ տալու վայտ ա՞, խուսուցնիլ միք, օրիշ հանգի շողված եմ, էն սրվեմիճիճիճ\* չարագալկան կորել ա...

Շուրջը գտնվողները վարմացած նայում են, թե այդ ինչ լեզվով է խոսում, իսկ մեկն ուրախացած մոտենում է, ասում.

— Դու էլ ե՞ս Շահումյանից...



Պակաս տարիներ էին: Մայրը բաժակները թեյ է լցնում, իր բաժակի մեջ երեք կտոր շաքար դրում, երեխայի բաժակի մեջ՝ մեկ կտոր: Հենց որ մայրը շրջվում է, գնում հաց բերելու, երեխան բաժակները փոխում է ու «անմեղ» գեմքով խառնում թեյը: Մայրն էլ իր թեյն է խառնում, խմում ու ինքն իրեն դժգոհում.

— Էս անտեր շաքարն էլ ա ընհամել...

\* Սրվեմիճիճիճ-անծոր:

— Է՛, այ մեր,—ասում է երեխան,—քո բաժակի մեջ երեք կտոր ես գցել, ասում ես՝ անհամ ա, բա ի՞նչ ինչ կլինի, որ մեկ կտոր ես գցել...

— Վ՛ու՛յ, քուսանամ ես, ճիշտ ես ասում: ասում է մայրը ու երկու կտոր շաքար ավելացնում երեխայի բաժակի մեջ:



Կարապետը երկար տարիներ Մանաշիդում ապրելուց հետո որոշում է՝ Լքոջի կիրովաբադ: Գյուղամիջում թյունին Կարապետին կանգնեցնում է ու հանդիմանում:

— Էս գյուղում բոլորի տանը քելխս ես կերել: Հիմա որ քուշում ես, քո քելխսն էնտեղ ո՞վ պիտի ուտի...



Պարաչինաբցի Մանվելի տունը շուկայի մոտ էր: Ընկերներից մեկը խնդրում է՝ հենց որ շուկան խոզ բերեն վաճառքի, ինձ իմաց կտաս: Մանվելն այդպես էլ անում է. մի օր իմաց է տալիս, բնկերը գալիս է, շուկայից մի խոզի ճուտ առնում: Որոշ ժամանակ անց այդ ընկերը Մանվելին հանդիպում է, դժգոհում, թե՛ խոզը լավ չի մեծանում: Մանվելը խորհուրդ է տալիս կոմբիկորմ ավելացնել: Մի քանի օր հետո էլ ընկերը գալիս է, թե՛ խոզը լուծ է կպել: Մանվելը խորհուրդ է տալիս կոմբիկորմի հետ լուծի գեղ տալ խոզին: Մի քանի օր անց ընկերը նորից է գալիս, թե՛ խոզը չի լավանում: Մանվելը զայրանում է.

— Այ ախպեր, ցավդ տանեմ, եկ մի նապրավենի կիրեմ, էդ խոզին տար երևան, յախաս ըզասի (առաջներում սովորաբար բժիշկը «նապրավենի» ուղեգիր էր գրում, ծանր հիվանդին ուղարակում երևան):



Չեռուստացույցի էկրանին բժիշկ է երևում, բերանը սպիտակ շորով ծածկած: 3 տարեկան Դավիթն իր 2 տարեկան եղբայր Վահանին ասում է.

— Վահան, տե՛ս, բզիցկ ա...

Տնեցիները հետաքրքրության համար հարցնում են.

— Դավիթ, բժիշկն ինչո՞ւ է բերանը փակել:

— Որ բացի, ախ՛ բո՛ւ՛...



Արշակ վարժապետը ներքին Շենից ոտքով գնում է Գյուլխտան: Հանապարհին հանդիպում է նուբարը, որը նույնպես Գյուլխտան էր գնում: Երկու ծամ միասին քայլում են անտառի միջով: Երբ մոտենում են գյուղին, Արշակն ասում է.

— Նուբար, անտառը պրծնում ա: Թե մտքիդ մեջ բան կա, հիմա ստա, որ հետո չասես՝ Արշակը վարժապետ էր, բան չհասկացավ...



Այնպիսի անհատներ խողը մորթում է, միսը ծախում: Մարայը գալիս է, որ առնի, միսը վերջացած է լինում: Ռուբենն ասում է՝ խողի գլուխն առ, տար, էժան կտամ: Մարայն առնում է խողի գլուխը, տանում տուն: Մայրը՝ Աննա բիրը, մաքրելու ժամանակ նկատում է, որ լեզուն չկա: Ջղայնացած ասում է՝ աղջի, բա չե՞ս տեսել, որ լեզուն չկա, համով տեղը հենց լեզունն ա... Մարայն իր հերթին ջղայնացած գնում է Ռուբենի մոտ, ասում՝ ա՛ եթեմ, էլ ես պյան գյուղում, թա՛մ էտ ա... Ռուբենը խորամանկորեն հանգրստացնում է նրան՝ ա՛յ Մարալ, բա հենց բերանումդ ասում ես՝ անլեզու հայվան. խողին լեզու կլինի՞: կատակ են արել քեզանով:

—Հա՛, ուրեմն էն քավթառն ինձանով մասխարա ա ըրի՞, —նորից ջղայնանում է Մարայը: —Հիմի գնամ, շան օյինը նրա գլխին գնեմ...



Լեան դային Լարաչինարի շուկայում ձուկ էր վաճառում: Առնող չկար, Լորն էլ տաք էր, որոշում է նիսյա (սպառիկ) տալ, միայն թե շուտ պլըրծնի: Իմանալով, որ նիսյա է տալիս, Կլչակին Բուբերթը գալիս, ասում է՝ հինգ կիլո նիսյա տուր: Լեանը շվարած նայում է Բուբերթին, որովհետև գիտեր, որ նրան տվածը կորած է: Բուբերթը հասկանում է Լեանի միտքը և ծիծաղելով բացատրում է՝

—Ա՛ դայ, արխային կաց, օրիշ պյան չինի, ապան՝ սօր-էքուծ մեռնում ա, կասեմ, անուճառ ցուցակուճը կի կլիրեն, տյու փող չես տալ...

—Ա շան տղա, նիսյա-նիսյա, պա տհենց էլ նիսյա կլինի՞...

(Թաղման կապակցությամբ գյուղացիները ցուցակագրվելով փող էին տալիս):



Գրիգոր դային աշխատանքից հոգնած տուն է գալիս, տեսնում է՝ իր հեղբայր Օհանջանը ընկերներին հավաքած, քեֆ է անում: Ընկերներից մեկը՝ Քրիստափորը, հրաշալի ձայնով, հավեսով երգում է ու հարցնում Գրիգորին:

—Լավ չե՞մ երգ ասում, Գրիգոր:

—Ես ձեր տանը դրանից լավ կասեմ, —պատասխանում է Գրիգորը, որը հայտնի էր «փող աշխատելով», բայց ոչ ուտել-խմելով:



Մորհրդային տարիներին ընդունված կարգ էր՝ տոն օրերին շքերթ և միտինգ էր լինում ամեն գյուղում և անպայման ջերմ, գովաբանական խոսքեր էին ասում բոլոր ղեկավարների, մանավանդ Ստալինի հասցեին: Այդպիսի մի միտինգի ժամանակ զարաչինարցի Մոսուկը Լաչին դային ոգևորված ելույթ է ունենում ժողովրդի առաջ, վերջում էլ բարձրաձայն գոչում՝

«Կեցցե՛ ընկեր Ստալինը, յախ թա չէ ընկեր Վորոշիովը, կարող ա ինքը տանը չինի...»: Գյուղում երկար տարիներ հիշում էին այդ ելույթն ու ծիծաղում:



Այնպիսի անհատներ խողը մորթում է, միսը ծախում: Մարայը գալիս է, որ առնի, միսը վերջացած է լինում: Ռուբենն ասում է՝ խողի գլուխն առ, տար, էժան կտամ: Մարայն առնում է խողի գլուխը, տանում տուն: Մայրը՝ Աննա բիրը, մաքրելու ժամանակ նկատում է, որ լեզուն չկա: Ջղայնացած ասում է՝ աղջի, բա չե՞ս տեսել, որ լեզուն չկա, համով տեղը հենց լեզունն ա... Մարայն իր հերթին ջղայնացած գնում է Ռուբենի մոտ, ասում՝ ա՛ եթեմ, էլ ես պյան գյուղում, թա՛մ էտ ա... Ռուբենը խորամանկորեն հանգրստացնում է նրան՝ ա՛յ Մարալ, բա հենց բերանումդ ասում ես՝ անլեզու հայվան. խողին լեզու կլինի՞: կատակ են արել քեզանով:

—Հա՛, ուրեմն էն քավթառն ինձանով մասխարա ա ըրի՞, —նորից ջղայնանում է Մարայը: —Հիմի գնամ, շան օյինը նրա գլխին գնեմ...



Այնպիսի անհատներ խողը մորթում է, միսը ծախում: Մարայը գալիս է, որ առնի, միսը վերջացած է լինում: Ռուբենն ասում է՝ խողի գլուխն առ, տար, էժան կտամ: Մարայն առնում է խողի գլուխը, տանում տուն: Մայրը՝ Աննա բիրը, մաքրելու ժամանակ նկատում է, որ լեզուն չկա: Ջղայնացած ասում է՝ աղջի, բա չե՞ս տեսել, որ լեզուն չկա, համով տեղը հենց լեզունն ա... Մարայն իր հերթին ջղայնացած գնում է Ռուբենի մոտ, ասում՝ ա՛ եթեմ, էլ ես պյան գյուղում, թա՛մ էտ ա... Ռուբենը խորամանկորեն հանգրստացնում է նրան՝ ա՛յ Մարալ, բա հենց բերանումդ ասում ես՝ անլեզու հայվան. խողին լեզու կլինի՞: կատակ են արել քեզանով:



Այնպիսի անհատներ խողը մորթում է, միսը ծախում: Մարայը գալիս է, որ առնի, միսը վերջացած է լինում: Ռուբենն ասում է՝ խողի գլուխն առ, տար, էժան կտամ: Մարայն առնում է խողի գլուխը, տանում տուն: Մայրը՝ Աննա բիրը, մաքրելու ժամանակ նկատում է, որ լեզուն չկա: Ջղայնացած ասում է՝ աղջի, բա չե՞ս տեսել, որ լեզուն չկա, համով տեղը հենց լեզունն ա... Մարայն իր հերթին ջղայնացած գնում է Ռուբենի մոտ, ասում՝ ա՛ եթեմ, էլ ես պյան գյուղում, թա՛մ էտ ա... Ռուբենը խորամանկորեն հանգրստացնում է նրան՝ ա՛յ Մարալ, բա հենց բերանումդ ասում ես՝ անլեզու հայվան. խողին լեզու կլինի՞: կատակ են արել քեզանով:

—Լավ չե՞մ երգ ասում, Գրիգոր:

—Ես ձեր տանը դրանից լավ կասեմ, —պատասխանում է Գրիգորը, որը հայտնի էր «փող աշխատելով», բայց ոչ ուտել-խմելով:



Այնպիսի անհատներ խողը մորթում է, միսը ծախում: Մարայը գալիս է, որ առնի, միսը վերջացած է լինում: Ռուբենն ասում է՝ խողի գլուխն առ, տար, էժան կտամ: Մարայն առնում է խողի գլուխը, տանում տուն: Մայրը՝ Աննա բիրը, մաքրելու ժամանակ նկատում է, որ լեզուն չկա: Ջղայնացած ասում է՝ աղջի, բա չե՞ս տեսել, որ լեզուն չկա, համով տեղը հենց լեզունն ա... Մարայն իր հերթին ջղայնացած գնում է Ռուբենի մոտ, ասում՝ ա՛ եթեմ, էլ ես պյան գյուղում, թա՛մ էտ ա... Ռուբենը խորամանկորեն հանգրստացնում է նրան՝ ա՛յ Մարալ, բա հենց բերանումդ ասում ես՝ անլեզու հայվան. խողին լեզու կլինի՞: կատակ են արել քեզանով:

—Պա՛, քեզ մատաղ, տա իմ տեղն էր, ես գանխտ էի ըրել, վար ըսեղ վեր ինգնեմ...

—Ա՛ դայ, քոռ չես, տյուռ էլ մխրեկ տենը վեր ինգի, լի՞...





Նարաչինարցի Գևորգյան Վալոդը շրջանի շիննորոգման գրասենյակի կախոն էր, իրենց գյուղացի Արիգն էլ պրարար էր (աշխղեկ): Մի օր Արիգը գալիս է, ասում.

—Ընկեր Գևորգյան, Մանաչիգի գյուղատվետի շենքը վերջացրել եմ, մի տոննա ցեմենտ և 100 կուբիկ էլ ավելացել է, ի՞նչ անեմ:

—Սաղ ինես, հի՛նչ պիտի անես, դիմում կիրի, գործա տյուս եկ, վար կարում չես գործ անես... (Անտեղյակներին տեղեկացնում ենք, որ խորհրդային տարիներին աշխղեկի հիմնական «պարտավորութունն» էր՝ շինանյութի մի մասը վաճառել, փողը կիսել ղեկավարի հետ):



Գրիգոր դային հիվանդացի, անկողին էր ընկել: Ընկերները գալիս են անության: Մեկը հարցնում է.

- Գրիգոր, քանի՞ տարեկան ես:
- Պետք աս վար 80 ինեմ...
- Էվել կինես, Գրիգոր, —ասում է Միրզան:
- Ա՛՛՛ ձեր տոնը շինվի, երկու տարի ասեղին տակին, էդ էլ եք հաշվում, — դժգոհում է Գրիգորը («տեղին տակին» նշանակում է հիվանդ, պառկած):



Պրսեցի Սլահանց Աբրահամը, որ «ինվալիդ» մարդ էր, իրենց հինդիբը (հնդկահասակները) պահելիս է լինում ձորի ափին: Մյուս ափին էլ համապատասխան Սոփին էր իրենց հինդիբը պահում: Աբրահամն ասում է.

- Ախճի, տեսնում չե՞ս, վար էս հինդին մարին շատ աս կոկոացնում, խե՞ջես թողում, վար ծիր հինդին կյա կոչալը...
- Պա ես լիհա աման օր կոկոացնում եմ, խե՞ջես տյուս կյալիս, —ասում է Սոփին:



Հարսզատները հավաքվում են, քննարկում, թե ինչպես պիտի նշեն հանգուցյալ Կալչակի քառասունքը: Ասում են նաև, որ պետք է մինչև քառասունքը «ուշտակա» դրվի գերեզմանի շուրջը: Տղան՝ Բուբերթը, առարկում է.

—Ի՞նչ ուշտակա, ապան վաղր ա՞, դուրս աս գալու, փախչի՞: Ռեշտակա չի պետք...



Մի ամառ շատ անձրև է գալիս, բերքը փչացնում: Ներքին Շենի «կետին դրաղին», ջրաղացի առաջ մարդիկ հավաքված զրուցում էին: Մեխակն ասում է.

—Տեսնաս Աստուծ խե աս մեկ իրա կցնվի, էսքան թուս կյալ կինի՞, վար կյալիս աս...

—Խե՞՞՞ եք գործանում, ասում է ջրաղացյան Հայկազը, —Աստուծին կոչալը արքունյակներսով էլ շոն, էլ կապիկ, ամեն ինչ դարկում են, նա էլ կգնվել աս: Էդ արքունյակները մեկ նման երկու վանանի մարդիկ են սարքում, տեսնաս խե՞՞՞ չեն էդ մասին մտածում...



Շախյան Իսաղը շրջանի ֆինրածնի վարիչն էր: Մի անգամ սախատակիցներին մեկը դժգոհում է.

—Ընկեր Շախյան, զնացիլ ենք էրքեջ՝ նազուկը հավաքենք, տալիս չեն, ասում են՝ օնենք վեջ...

Իսաղը վեր է կենում, ձին նստում, զնում էրքեջ, ժողովրդին հավաքում գյուղամեջ ու «տրվալիբը» անում՝ հայհոյում, ամեն ինչ ասում, էլ տեղ չի թողնում: Բիստունց Չասին հարցնում է.

- Այ ընկեր Շախյան, հի՛նչ աս պրդահել, հի՛նչ ես սզում մըզանա, խե՞՞՞ ես բխարուս անում մեկ:
- Խե՞՞՞ չեք նազուկը տալիս, —հարցնում է Իսաղը:
- Այ դորմի քու անցյալներին, պա մեկ հո՞վ աս տըհնց մի քաղաքավարի բացառել, վար նազուկը տանք: Արխային քինա ուայոն, էքուծ լոխս նազուկը տալիս ենք:



Մերին Շենի «դուքանին ըռաջին» մի քանի մեծահասակներ զրուցում են: Զլավանց Սաբին, Շելունց Ասկյարը, Քյոխանց Քոբորը, Քաչալ Խաչին, Վերդունց Մնակիչը:

- Սաբին հարցնում է.
- Խաչի, խե՞՞՞ չես Լստու ձին հվատում, քեզ հի՛նչ աս ըրել:
- Ծոռ պյան շատ ըրել Աստուծը, —ասում է Խաչին: —Մարդ կա՞ էնքան խելք աս վիել, վար կրգիդներ աս կառավարում, մարդ էլ կա՞ էնքան խելք չի տվել, վար ուրան կիլոխը կարա պահի, ընտանիքը գեկավարի...



Ներքինշենացի ջրաղացյան Տերունց Ապրեսն ուտելուց չէր կշտանում: Հայտնի բրուտ Չախկալ Թյունին նրա համար կավից մի հատուկ մեծ աման է պատրաստում՝ «կյուշ», որի մեջ Ապրեսն գային մածնի բրդուշ էր անում, կիծախաշ էր ուտում և այլն: Գյուլում բոյսրն այդ մասին գիտեին, և եթե մեկի համար մեծ ամանով ճաշ էին լցնում, ասում էր՝ «Ապրեսնին կյուշն ա՞»:



Ներքինշենացի Վելունց Հաթանը հինգ տղա ուներ և մեկ աղջիկ (Հայտնի աղուդ Բախչին նրա մեծ սպան էր): Աղքատ մարդ էր Հա-

Թամը, իսկ տղաները լավ ուտող էին: Բարեկամներից ու Հարեաններից ով Հարսանիք էր անում, Հաթամի Հինգ տղաներին «մական» էին ուղարկում: Հետագայում, երբ սեղանի շուրջը մեկը շատ էր ուտում, ասում էին. «Հենց ա Հիթամին մականներան ինի...»:



Պրսեցի մի աղքատ մարդ «նալուկը» տված չի լինում: Գործը Հասնում է դատարան: Դատավոր Ասատամովը քննում է գործը, ամեն ինչ բացատրում, վերջում կարգում դատավճիռը՝ «պրիզվորը», ինչպես ժողովուրդն էր ասում: «Պրիզվորն» այն էր, որ մեղադրյալը պիտի տուգանք էլ վճարի, պետական Հարկն էլ՝ «նալուկը»: Պրսեցին տեղից վեր է կենում, ասում.

— Ինկեր սուղյա, ռեխը ցեց կալած որոշում ես, վէ՛րդդա եմ տլական. վար ինեք, էնա էն վախալը կըտի լի...»



Աղյեկտիվացման տարիներին շրջանի գյուղերում տարածված էր այս-Ապիտի մի ոտանավոր.

*Ստալին, բեղերտ դալին,  
Մեշկտ տեմ ես ըրել Մուսվա սարին,  
Աշկտ քիցել կալխոզին կալին,  
Պա ես Հո՛ւնց պահեմ իմ բալին...*

Ներքինչենացիք ասում են, թե Տերունց Կյալուստն է գրել, վերինչենացիք ասում են, թե իրենց գյուղից է եղել գրողը և այլն: Մի բան Հաստատ է, որ այդ ոտանավորի պատճառով շատերին են «ժողովրդի թշնամի» համարել ու աքսորել, որոնց թվում նաև Տերունց Կյալուստին:



Խրխափորցի գվարճախոս Թյունին պատերազմի տարիներին գյուղում կոլտնտեսության եզներն էր պահում: Ինչպես է պատահում՝ մի անգամ եզներից մեկը սատկում է: Նախագահը գայրացած ասում է.

— Նիգարանց Թյունի, կալխոզի եզը սպանել ես, չալվարդ հընական եմ:  
— Ինկեր Գարո, յիրան մի թաղա կըրկատան կա, կացի պուկեմ, չալվարը Հինչը օզում ես, ըրա...



Արգարանց Թյունին Խրխափորում մեկ-մեկ հեքիմ էր դառնում. եթե մեկի մեջքը բռնված էր լինում, նա կարողանում էր տեղը գցել: Երջանի ցածրադիր մասում եղած «Տեչտում» աշխատելու ժամանակ մի անգամ նրա մոտ են բերում մեկը բռնված մի անմարդ կին, որ Թյունին բուժի: Թյունին ասում է.

— Մի կարպետ պիրեք:  
Կարպետը բերում են, կնոջը պառկեցնում է, ոտքերը կապում սյունից, ինքը թևատակներից բռնում, ուժեղ ձգում, մեջքը տեղը գցում: Վեր կենալու ժամանակ էլ կնոջ մեջքից մի լավ գրկում է: Կինը զարմացած ասում է.

— Պա է՞ր Հինչ էր, Թյունի դայի:  
— Էդ էլ իմ Հախն էր, քումմատաղ...



Խրխափորցի Թյունին մի անգամ մտնում է կոլտնտեսության գրասենյակ ու նախագահին խնդրում.

— Ինկեր նախագա, մի մաշին ա պետքը:  
— Մաշինը Հինչ ես անում:  
— Բաղումը տոն եմ շինել, օզում եմ վեչա տեղափոխեմ:  
— Ա քեզ թաղեմ, քեզ Հինչ վեչ օնես, վար մաշին դանիտ անես, քու վեչը լոխ քու էշին մեշկին կտղվարի, քինյա էչափտ տար...



Թյունին տան Շուր Հարկը պատելու ժամանակ մի դուշյով ցեխ էր բարձրացնում (մյուս ձեռքը լավ էէր աշխատում): Հարսն ասում է.

— Ապա, ցեխը էրկու վիզբավ տար, վար հավասարակշռուցուն ինի:  
— Մի վիզբավ սերտը հուվանում չի, Հա՞, — ասում է Թյունին:



Գրիգորին մի անգամ ասում են. «Գրիգոր դայի, ըրեում ա խմած ես, պիտի գեվիտ գրեմ: Բինամ մխրեկ էլ իվլեցնեմ»:



Մի ձմեռ Գրիգորը պառկած էր գյուղի հիվանդանոցում: Գլխավոր բժիշկը համայց է կատարում առավոտյան, շրջում է հիվանդասենյակներում, մեկ-մեկ հարցուփորձ անում հիվանդներին: Հասնելով Գրիգորին, հարցնում է.

— Ո՞նց ես, Գրիգոր դայի:  
— Սպասիր, մի բան ասեմ, — ասում է Գրիգորը. — Այ Գարեգին, ասեմք, թե՛ բժշկուցունից բան չես հասկանում. քու գրած բեցեպտը ապտեկը չի էլ վերցնում, բայց դոնե չես էլ լսե՞լ, որ հիվանդի տեղը պիտի տաք լինի:  
— Ճիշտ ես ասում, Գրիգոր դայի, հիմա կկարգադրեմ, փայտ կբերեն, փեջը կվառեն, — պատասխանում է բժիշկը և արագ թողնում, հեռանում, որ նա էլ ուրիշ բան չասի: Մի քիչ հետո հավաքարարը դալիս է, մի ոտքը միջանցքում,



մյուս տաքը հիվանդասենյակում, երկու-երեք կտոր ձյունաթաթախ, սառած փայտ չպրտում ներս, ինքը գնում:

—Ապրես, քե մատաղ, Կրիգոր դային տըքացավ, լիվացավ,—ասում է Գրիգորն ու բուրս գնում հիվանդանոցից:



**Մ**ի աղքատ մարդ գալիս է Գրիգորի մոտ, խնդրում, որ 200 ուռլի փոխ տա: Եվ ամեն կերպ համոզում, վստահեցնում է:

—Գրիգոր, հիմա վուռդ պետք ա, 200 մանեթ տու, արխային կաց, ուավեսր ձեգին պարսքդ տլական եմ:

Գրիգորը դուռը կրտատ է թողնում, դուրս գալիս կաբինետից: Էս մարդը սպասում է՝ Գրիգորը չկա, էս կողմ, էն կողմ նայում, հարցնում է՝ չկա ու չկա: Գնում է սու.ն, առավոտյան նորից է գալիս Գրիգորի մոտ, խնդրում 200 ուռլի պարտք տալ: Գրիգորն ասում է:

—Երեղ ասում իր թա ուավետը պարտքս տլական ես, էլ վէ՞ր տեղա իր տլական, մհեկ քինա, բնդեղա պարտք եր կալ...



**Մ**երին Շենից Հրանուշն ու Պայծառը գալիս են Ներքին շեն, պահեստից մանկապարտեզի համար ձու տանելու: Հարյուր ձու են սանում, հաջորդ օրը հետ գալիս պահեստապետ Գրիգորի մոտ, ասում:

—Այ Գրիգոր դայի, ակսր էրեգի վար հարյուր ձու ենք տարել, հենդը լակ ա իլել:

—Վեչինչ, ձեզ մատաղ, կպատահի: Կարող ա մեջին ճոտ էլ իլած ինի, տիրա հախը օգում չեմ: Էդ հենգը ըրխոցը չտաք, թաքի էն մնացած 95-ը ըրխոցը նահետ օտեք...



**Գ**րիգորը գարեջուր է վաճառում: Լուրը հասնում է միլիցիային, որ նա գավաթները կլեսատ է լցնում: Միլիցիոներներ իսան ու Նիկալը գալիս, Գրիգորին հարցնում են՝ ճի՞շտ է, որ գարեջուրը կրտատ է վաճառում: Գրիգորն ասում է:

—Ա ձեր տոնը շինվի, սուք էլ կ՞ք տհենց ասում, պա տեսնում չե՞ք օջերեգին ճոնդը վէրդեղա հըսնում, հենց լցնիլ պիտեմ, վար լոխճին հերիք անի, չէ՞...

Հետո էլ լցնում, ամեն մեկին մի գավաթ գարեջուր է տալիս, խմում են, ասում է:

—Արխային քինացեք, ձեզ մատաղ, սօր էսա խնլախ դործ ըրիք...



**Գ**րիգորը սովորություն ուներ խաթրապահ ու պատվախնդիր երեւոլ: Մի անգամ սպառկոուպի աշխատակից Աշոտի հետ միասին սպառկոուպի մեքենայով գնում են Կիրովարաղ: Երբ տեղ են հասնում, Աշոտը իջնում, գնում է իր գործին, Գրիգորը հետևից ձեն է տալիս:

—Դու արխային քինա, քե մատաղ, ես քու փողը կտամ...

Մի անգամ էլ Գրիգորի եղբայր Օհանջանը գնում է այդ Աշոտենց տուն: Իրանից մի ուլ առնում, փողը տալիս, գնում տուն, Գրիգորին ասում, որ գնա, ուլը բերի: Գրիգորը գնում, ուլը վերցնում է Աշոտի մոտից ու ասում:

—Հախը տված ա, չէ՞:

—Հա, Օհանջանը տվել ա:

—Թա տվել չի, ես կտամ հախը,—հայարտորեն ասում է Գրիգորը, մի քիչ գնում է, հետո նորից ձեն տալիս, ասում,—Տես, հա, Աշոտ, թա Օհանջանը տվել չի, ես կտամ հուլանը հախը...



**Ա**րշակը հանդիպում է Գրիգորին, հարցնում՝ ո՞նց ես:  
—Ասենք թա՛ փիս եմ, հինչա՞վ կարաս քյոմազ անես...



**Մ**իսակը սպառկոուպի նախագահ էր: Իր մոտ է կանչում ճաշարանի վարիչ Մովսեսին, դիտողություններ անում թերությունների համար: Նա էլ հետը վիճում է: Միսակը ջղայնացած ասում է:

—Ձեռք կտրի, ախմաղին մինը:

Մովսեսը վիրավորված դուրս է գալիս կաբինետից: Միջանցքում հանդիպում է Գրիգորն ու հարցնում:

—Էդ հի՞նչ ա պտահել, մի հանգի էս...

—Պա հի՞նչ կինեմ, ինկեր Միսակն ինձ ախմաղ ասեց:

—Վա՛, պա նա վե՞րդղա ա գյուղում...



**Գ**րիգորը մտնում է սպառկոուպի գրասենյակ, տեսնում է՝ բոլորն անհանգիստ նայում են սեղանին դրված ինչ-որ թղթի: Հարցնում է՝ ի՞նչ է պտահել: Ասում են՝ Բաքվից ստուգող է եկել, այս թղթի մեջ սխալ է գտել, չգիտենք՝ ինչպես ուղղինք: Գրիգորը հանգիստ վերցնում է թուղթը, պցում վառվող վառարանի մեջ, ասում:

—ՏՀենցի թոխտ չի իլել...



Շարափօրյակ է: Մարդիկ կազմակերպված ձևով աշխատում են: Քարտուղարը մոտենում է Գրիգորին, ասում.

—Գրիգոր դայի, տեսնում ե՞մ ժողովուրդը Հինչ լավ գործ ա անում, ամա քու տղա Ռանտիկը լողու ա:

—Նիրա ռեխը Հինչ ա, վար ինձանա լողու ինի,—պատասխանում է Գրիգորը:



Աղաջանանց Իվանը կոշիկ էր նորագում, Գրիգորն էլ կոշիկները միշտ նրա մոտ էր տանում: Նորոգած կոշիկը տանելու ժամանակ երբ Իվանն ասում էր՝ 5 ռուբլի պիտի տաս, Գրիգորը չորսն էր տալիս, եթե Իվանը չորս էր ասում, նա երեք էր տալիս: Մի անգամ վարպետն ասում է.

—Գրիգոր դայի, դու միշտ տՀենց մի մանեթ պակաս ես տալիս, քու տղա Ռանտիկը էվել-էվել խարջում ա:

—Ես վար սՀենց չանեմ, նա կարալ չի նՀենց անի...



Գրիգորը մտնում է սպասկոոպի գրասենյակ՝ մեծ սենյակ է, լիքը աշխատողներ ու Հաճախորդներ, խառնված ամեն մեկը մի գործով. բարեում է, ոչ ոք չի պատասխանում, ինքն իրեն ասում է.

—Հինց ա սօր վխաղնոյ ա, մարդ չկա...



Շրջանի ինքնապաշտպանության ակտիվ մասնակիցներից մեկը, որ Հետո էլ պարտիզանական, շոկատի ղեկավարներից մեկը դարձավ Շուրա Գզիբյանը՝ Ականաբերդի առաջին վերաբնակներից էր: Մի անգամ նկատում է. թե ինչպես իր փոքրիկ աղջիկ Ելենան, մեխը վերցրած, մուրճով խփում, մտցնում է Հատակի տախտակների արանքը: Հարցնում է.

—Ախճի, էդ Հինչ ես անում:

—Մեր տօնը մեխում եմ, վար օրիչ տեղ չի քինա..., պատասխանում է երեխան, որը թերևս հոգնել էր տեղից տեղ տեղափոխվելուց:



Ատակասեր, կենսուրախ Մարգո բարոն 86 տարեկան է: Միանգամից չվիճակը վատացավ: Աղջիկը ընկավ մտահոգությունների մեջ:

—Մամ, սիրտդ ի՞նչ է ուզում,—Հարցրեց Իրան:

—Ձոր լոբի կինի՞, մի աման եփես:

Բարեբախտաբար տանը կար: Իսկույն եփեց, տվեց մորը:

—Ի՛, ախճի, բա սա լոբի ա՞,—սփռոհեց մայրը:—Իսկական լոբի եմ ասում, մեր գյուղի չաղիկ լոբին, էն վար «պապա լոբի» նն ասում:

Իրան Հիչեց, որ վերևի Հարկում դարաբաղցի Հարեան կա, գուցե նա սՀենեա: Եվ իրոք, Հարեանը մի բաժակ ուներ: Բերեց, երեք ժամ պահեց կրակին, մինչև որ եփեց: Մայրը մի քանի Հատիկ կերավ, տրամադրությունը լավացավ:

—Մի բոխճաս պիր, տեսնամ մեջին Հինչ կա:

Իրան բերեց «փախստականի բոխճան», որի մեջ մայրը խնամքով պահում էր վերջին օրվա Համար նոր կոշիկներ, երեսի ծածկոց, Հագուստ և այլն:

—Էս կոշիկը չեխալավացիկ ա. կտաս Ինային: Էն աշխարհում իմ ինչի՞ն ա պետք, սպարտիվկա կհագցնեք, Հերիք ա...

—Այ մեր, սարեվնավանի էս գնալու՞, ինչ է:

Կատակը կատակ մնաց, իսկ Մարգո բարոն նորից լավացավ:



Չարաշինարցի Կալչակին մի գոմեշ գողանալու Համար 10 տարով բանտ էին նստեցնում: Այնտեղից իր եղբայր Սեիդին նամակ է գրում. «Ախպեր, ըստեղ շատ լավ ա, օրական 2 Հետ Հաց են տալիս: Թա կարում ես, մի պյան ըրա, այու էլ եկ ըստեղ»: Եղբոր խորհրդով էր, թե ինչ, բայց որոշ ժամանակ Հետո Սեիդը կոլխոզի դաշտից մի սայլ խոտ է վաճառում, նրան էլ են բանտ նստեցնում:



Մանաչիդի գյուղամիջում Լենինի արձանն էր կանգնեցված, չուրջը՝ մի քանի ծառ: Ժողովուրդը քիչ հեռու հավաքված գրուցում էր: Նրանց մեջ էր նաև կոլխոզի պարտկոմ Մամիկը (կուսակցական կազմակերպության քարտուղարը), որն ազատված աշխատող էր, այսինքն՝ այդ գործի Համար աշխատավարձ էր ստանում: Պարուսանց Թյունին չըջվում է գեպի պարտկոմը և ասում. «Մամիկ, դո՞ւ ինչ ես հպարապ նստել, եր կաց, էս ծառերը ճիրի, Լենինին վեռան էլ պաչի, նիրա պահածն ես»:



Շրջումի առաջին քարտուղարը հեռավոր շրջանից էր, ծնողներն էլ այնտեղ էին ապրում: Հոր մահվան ատիթով շրջանից մի մեծ խուճր պատասխանատու աշխատողներ մեծ քանակությամբ խմիչքով և ուտեխիքով ներկայանում են թաղմանը: Առատ սեղան է դրվում: Տեղացի տարեցիները, զարմացած սեղանի առատությունից, մեկը մյուսին ասում են. «Մի լավ կերեք, խմեցեք, Մուկուչը մեկ էլ ա՞՞ մըռնըլական»:



Զակեր Բենիկը մաթեմատիկայի լավ ուսուցիչ էր: Մի անգամ, չգիտես ինչու, երկար չարչարեց, բայց ամբողջ դասի ընթացքում չկարողացավ խնդիրը լուծել: Աշակերտները մնացել էին լուռ, կարկամած, չգիտեին ինչ



անի: Այդպես էլ զանգը հնչեց, խնդիրը չլուծվեց: Վիճակից դուրս բերելու համար Գուրգենն ասաց. «Ընկեր, վեչինչ, կարող ա տպագրական սխալ կա»: Ընկեր Բենիկը զայրացած ասաց. «ՏՀհնցի պյանը ընկեր Աշոտին կասես»: Դասամիջոցից հետո ընկեր Մարոյի դասն էր: Մարոյի փոխարեն Բենիկը եկավ, նորից կավիճը վերցրեց, խնդիրը լուծեց, գնաց:



**Մ**ի քանի մարդ գնում են կոլխոզի նախագահ Եահուկոնց Գուրգենի մոտ, խնդրում, որ «ավանսով» մի քիչ ցորեն տա, յուր գնան, մինչև որ իրենց բերքը ստանան: Նույն նպատակով նախագահի աշխատասենյակ է մտնում նաև Եահուկոնց բերքը: Գուրգենն զգում է, որ այդ կնոջ սուր խոսքերից չի կարողանալու ազատվել, մերժելու այսպիսի խորամանկ ձև է գտնում: Եահուկոնցը գեռ բերանը չբացած, Գուրգենը դիմում է ներս մտած տղամարդկանց և ասում. «Էս կնկա չափ էլ նամուս չունի՞ք: Մայրացից Եահուկոնցը, նա հալա ոչ մի անգամ ավանս չի ուզել»: Եահուկոնցն ստիպված լուռ է, էլ չի կարողանում ավանս խնդրել, ժպտալով դուրս է գալիս: Դրսում սպասողները որ տեսնում են Եահուկոնցին ժպտալիս, հարցնում են. «Ինչքան ավանս տվեց նախագահը»: «3-4 տղամարդու նամուսի չափ», պատասխանում է Եահուկոնցը:



Եահուկոնցի միևնույն տղային բանակ տանելու ծանուցագիր են բերում: Թուղթը բերողին Եահուկոնցն ասում է. «Ապրեք, իմը կընդլըզանի ա, տարեք, Զիլիին 4 տղոցան մինն էլ ա տանեք վեչ, ստոլին վտնեքան մինը կպկասի»:



**Ռ**այիսան նոր էր հարս եկել Եահուկոնցյան. և՛ բարբառը, և՛ սովորույթներն անծանոթ էին նրան: Մի անգամ Արևհատ այան ասում է. «Ռայիսա, խնձորը բերել ենք պողպալը: Գնա, շոկիր, պոչավորները խախալ արա, խկ անպոչները լցրու արկղի մեջ»: Ռայիսան գնում, խնձորը շոկում է, անպոչները լցնում արկղի մեջ, պոչավորները խախալի մեջ: Հաջորդ օրը կիսուրը մտնում է պողպալը ու զարմացած ասում. «Ռայիսա, այ քեզ մատաղ, բա չեմ ասե՞ր, որ պոչավորները խախալ անես»: Ռայիսան շվարած պատասխանում է. «Արել եմ, այա, հրեն լցրած խախալի մեջ»:

**Մ**ի անգամ էլ, գարնանային տաք օր, վառարանն ուժեղ վառում էր, տանը շատ շոգ էր, Արևհատ այան ասում է. «Ռայիսա, քեզ մատաղ, տյուրը կենջու ըրա»: Ռայիսան վեր է կենում, դուռը բացում: Կիսուրը զարմանում է. «Այ քեզ մատաղ, բա չասացի՞ր կենջու ըրու»: Ռայիսան գնում, դուռը փակում է, հետո միայն բացատրում են, որ կենջու անել, նշանակում կիսարաց անել:



**Մ**երինչենացի Քաչալ Բախչին մի անգամ վրձու մ է կնոջ հետ, փարջը կախրում, գլուխը պատում: Երջանի դեկավար Քոչարովը գալիս է, որ հաշտեցնի: Հարցնում է ինչո՞ւ ես ծեծել: Բախչին հրամայում է, թե՛ չի ծեծել: «Իմ փարջը չի՞, — ասում է նա, — դեպի որ կողմ ուզեցի, կախրեմ, դու նրան ասա, թե ինչի ա գլուխը դեմ արել»:



**Մ**որ դուրս եկած հավի ճախը իրար շատ նման են լինում, տարբերություն համար սովորաբար մեջքը թանաք են քսում: «Սեմուշկա ծախող» Սաթենիկ բիրը մի անգամ հարևանուհու հետ վրդովված բողոքում է մյուս հարևանուհուց՝ Ղազին Կոլիկի կին էլմիրայից, թե՛ նրանց կոխեքը մեր պողպալը քանդում են: Այդ պահին մոտենում է էլմիրան ու ասում. «Սաթենիկ բիր, տհաճեք մեր կոխեքը չեն, մեր կոխոցը մեջքը թանաք քիցած ա»:



**Պ**ատերազմի ծանր տարիներին Հայաստանի տարբեր տեղերից առանձինքն ընտանիքներ բնակվելու էին գալիս մեր շրջան, որտեղ ապրուստ ճարվում էր: Այդպիսի մեկը Վերին Եկնում Հովհաննիսյան Ամիրջանն էր, որին գյուղում Միրիջո էին ասում: Մի անգամ Սաքունց Ղուկասը (Մարավ Ղյուզապը) նկատում է, որ Միրիջոյի կինն ընկել է այգու մեծ փոսը, չի կարողանում դուրս գալ: Օգնում, հանում է, հետո էլ գնում, Միրիջոյին պատմում, որ կնոջը փոսից հանել է.

— Դալաթ ես արել, — ասում է Միրիջոն, — ես նրա տեղը գյուղում չէի՞...



**Տ**անուկը նիկոլը խապանից վերադառնում է և կնոջը փորձելու համար ճամպրուկները թողնում է աստիճանների տակ, դատարկ ձևաքով բարձրանում տուն: Կինը նայում է ու ասում. «Հի՞նչ ես մղակուճը ցեց կցել, կյալիս ե՞ս, եկ»: Նիկոլը ցած է իջնում, ճամպրուկները վերցրած բարձրանում: Տեսնելուս պես կինը բղավում է երեխաների վրա. «Հի՞նչ եք տիչվել, ձեր հերր չորան եկել ա, միներըտ վետերը լվացեք, միներըտ էլ քինացեք, վերցավը մորթեցեք...»



**Պ**արաչինարցի Գարոն ու Մանվելը գնացած են լինում Բաքու: Մի ժամ արանում լավ ուտում-խմում են, հետո դուրս են գալիս, մտնում մի գարնիջատում: Աթոռներ չեն լինում այնտեղ, բոլորը բարձր սեղանների մոտ կանգնած դավաթով գարնիջուր էին խմում, Գարոն ու Մանվելը՝ նույնպես: Մանվելն ուզում է ծխել. սեղանին մոխրաման չի լինում: Ասում է. «Գարո, մի

պեպելնիցա ճարի»: Գարոն «աչքը շոռ է ածոււմ», որ գտնի: Էդ պահին մի կարճահասակ. «ցիլինդրալոր» մարդ է մոտենում կողքի սեղանին, երկու դաւաթ ձեռքին կանգնում սեղանի մոտ, մեջքով դեպի Մանվելը: Մանվելը որ տեսնում է «ցիլինդրի» փոս ընկած տեղը, ասում է. «Գարո, քեզ մատաղ, շոռ մի կյալ, պեպելնիցան ուրան վետավը եկալ»: Ասում է ու մոխիրը թափ տալիս «ցիլինդրի» վրա:



Պարաչինարցի «մանտոմարը» թոռնիկի հետ գնում է ընկերոջ տուն՝ Նոր տարին շնորհավորելու: Սեղանի վրա մի խաչած գոճի է լինում՝ լավ պարզարած, բերանի մեջ էլ մի փունջ կանաչի: Թոռնիկը հարցնում է. «Պապի, էս շոռ ա՞»: Պապիկն ասում է. «Վար կարում չեն՝ օտենք, շան ա էլ բեթար ա»:



Պարաչինարցի Մամիկոնը հաշմանդամ էր, ձեռնափայտով էր ման լզալիս, բնավորությամբ էլ շուտ բռնկվող էր: Մի խումբ ընկերներով մի անգամ քեֆ էին անում: Երբ տրամադրությունները բարձրանում է, Կրիքորն սկսում է երգել: Մամիկոնն ասում է. «Կրիքոր, տա իմ երգն ա, տյու ապիլ մի»: Կրիքորը շարունակում է երգել: Մամիկոնը գայրանում է. «Աբա, քեզ ասում չե՞մ, վար տա իմ երգն ա, տյու ապիլ մի»: Ասելն ու ձեռնափայտով խփելը մեկ է լինում: Կրիքորի գլխից արյունը «չուկլուկու» է տալիս: «Նանձիլ» են անում, գնում վերքի վրա (վառած գործվածքի մոխիրը), փաթաթում ու քեֆը շարունակում ...



Հայրենական պատերազմից առաջ Վերին Ենետու խանութպան էր աշխատում Սաշա Կարախանյանը: Ամեն օր աշխատանքից հետո տուն վերադառնալիս նա իր փոքր աղջկա Արմենի համար կոնֆետ էր բերում: Երեխան արդեն վարժվել էր դրան: Մի անգամ Սաշան մոռանում է, կոնֆետ չի բերում: Երեխային փող է տալիս, ասում. «Գնա Սաքունց Ապրեսի խանութը, քեզ համար կոնֆետ առ»: Երեխան գնում է, փողը տալիս Ապրեսին, կոնֆետ ուզում: Ապրեսը կոնֆետը տալիս է, փողն էլ վերադարձնում, ասում. «Էս մանեթն էլ կտանես, մածուն կառնես, ածես հորդ կլիսին» ... Երեխան այդպես էլ անում է: Տուն գնալու ժամանակ մածուն է առնում, տանում, բոլորի համար անսպասելի ձևով լցնում է հոր գլխին ...



Ռուբենի տղային գյուղխորհրդի նախագահ են նշանակում: Այդ առիթով նա խնջույք է կաղմակերպում, հյուր կանչում շրջկոմի առաջին քարտուղարին, գյուղի սովխոզի տնօրենին, այլ ղեկավարների: Ռուբենը նախօրոք դիտավորյալ յարան (փայտե եղան) վայր է գցում դարպասի մոտ: Հյու-

րերն էլ, տղան էլ, բոլորը «չքոււմ են», յարայի վրայով անցնում: Ռուբենն ինքն իրեն ասում է. «Է՛, հիներյակ մեզ, վար սհենցի ղեկավարներ օնենք: Էսքանին միջին մի մարդ չկար, վար յարան տափան եր օներ, տիներ կյուսին պատնիք»:



Հայ Պարիսի կոլտնտեսությունը մի տարի հացահատիկի առատ բերք չունեցալ և աշխօրին 8 կգ ցորեն բաժանեց: Հաջորդ տարվա գանան մի օր գյուղամիջում (Չինարին տակին) հավաքված մարդիկ խորհրդածում են, թե այդ տարում աշխօրին ինչքան ցորեն կտան: Աբրահամ դային ասում է. «Կալ-խոզը գյուղում չեմ հինչ կտա, ամա մեր Ներոնին բրիգադը աշխօրին 3 կգ սվխառն ա սլանկան. արտը լոխ կարմուր տոպ ա»:



Մի անգամ Ռազմիկը գնում է անանաքույտ Սլավիկի մոտ, ասում՝ կովը ծնում է, պիտի դաս, օգնես: Սլավիկն ասում է՝ պիտի 25 ռուբլի տաս: Դե, Ռազմիկից 25 ռուբլի պոկելն անհնարին էր, և Սլավիկը հարմար ստիթի էր սպասում տեղը հանելու համար: Ձմեռվա մի օր էլ Ռազմիկը նկատում է, որ կովն անհանգիստ շարժումներ է անում, վախեցած վազում է անանաքույտի մոտ, թե՛ կովը աստկում է, պիտի փրկես: Սլավիկը նում, նայում է, ասում՝ մի շիշ օդի բեր: Օդին լցնում է կովի բերանը, գնում: Հաջորդ օրը Ռազմիկը հանդիպում է Սլավիկին, ասում՝ կովը լավացել ա: Սլավիկն ասում է՝ կովը հիվանդ ա եղի՞, որ լավանա: Ռազմիկը վարձանում է՝ ո՞նց թե, բա մի շիշ օդի չէ՞րի՞ր բերանը: Սլավիկն ասում է՝ դիտելի, որ դու մի բաժակ օդի էլ չես հյուրասիրելու, ասացի՝ օդին լցնես կովի բերանը, գոնե նրա փորը կտաքանա:



Գյուղերում բոլոր տոհմերը մականուններ ունեին: Քչալանց տոհմից մեկը ձեռ է առնում Սաշային, թե՛ դուք շիլինգնողներ եք: Դրա պատճառն էլ այն էր, որ նրանցից մեկը հարսանիքի ժամանակ վեր է կացել, ժողովրդին ասել. «Այ ժողովուրդ, շատ չնորհակալ ենք: Դուք եկել եք մեր ուրախությանը, մենք էլ գանք ձեր տխրությանը»: Սաշան ասում է. «Դու էլ նսխտո՞ւմ. ձեր սագի բոլոր տղամարդկանց իթե ձվաքենք, մի տրամ-տրամ անող քեզուլ չի տյառնալ...»:



Երջանում թերևս միակ և հայտնի ծուլը Վահան դային էր, որը ծուլանում էր նույնիսկ տեղից վեր կենալ: Մի անգամ երանությամբ ասում է. «Հիներյակ շոռ կյալը աղաթ չիսի. տափին նստես, տափը տանի ...»: Մի անգամ Վահան դային լսում է, որ իրենց թխականը ճշում, աղմկում, թեկերը թափահարում է: Մուլանում է, որ տեղից վեր կենա, տեսնի՝ ինչ է պատահել: Թխականը շատ է աղմկում: Վահանը վերջապես տեղից վեր է կե-

նում, գնում, տեսնում, որ թխականը ճտերի հետ անցել է չափարի մյուս կողմը, բայց ճտերից մեկը մնացել է չափարի արանքում, չի կարողանում դուրս գալ: Մահավով խփում է թխականին, ասում. «Ձահրումար, հինչ ես սաքառ կիլոխտ քիցի, տնգուղ եմ, տասնհենգը տնես լի...»:

Պահեստապետ Բեգին ճաղատ էր, գլխարկը միշտ գլխին էր պահում, որպեսզի ոչ մեկը «քաչալը» չտեսնի: Մի անգամ պահեստում մեծակ նստած, հայելին ձեռքով բռնած, մյուս ձեռքով գլխին եղած երեք մազը աջ էր տանում, չէր հավանում, հետո ձախ էր տանում, նորից չէր հավանում: Այդ պահին ներս է մտնում Կոլին ու ասում. «Բարի օր, Բեգի»: Բեգին շփոթվում է, որ իրեն գլխարաց տեսնող եղավ, ուզում է գլխարկն արագ գլխին գնի, խտնըվելուց հայելիով է ինքն իր գլխին խփում, հայելին ջարդում:

Ժողովրթբաժնից մեկը գնում է Ղարաջինար՝ դաս լսում: Դասատուն երեխաներին հարց է տալիս՝ կարո՞ղ եք ասել, թե ով է մկների երգվյալ թշնամին: Դոսին Լյուբան ասում է՝ Հայկո գային և մկների թշնամին: Բոլորը ծիծաղում են (Հայկոն սանէպիբկայանում էր աշխատում և մկներին ոչնչացնելու համար դեղ էր գնում գյուղացիների մատաններում):

Մի սուցչուհի Ռայան մի աշակերտուհու դաս է հարցնում: Երեխան, որ իր հարևանն էր, դասը չի իմանում: Ռայան ասում է՝ քառորդդ երկուս ևմ գնելու: Երեխան ասում է. «Ընկեր, վար երկուս տինես, ձեր կորած դագերին տեղը ասիլ չեմ»: Դասատուն ուրախացած հարցնում է. «Վե՞րդեղ են, տեղը ասա, երկուս չեմ տինիլ»: «Էն և Չպունց թախտումը, ըրածում են», ասում է երեխան:

Ներքինչենացի Տափուռնց Միրզան առակախոս և կատակասեր մարդ էր: Նրա խոսքերից շատերը մինչև հիմա էլ, շատ տարիներ անց, հիշվում են: Միրզան ասում էր. «Մարդ չույն տյարտակ տոն չի կյալ: Մի չոփ էլ պիրի, աշխատանք ա»: Նա ասում էր. «Իսանին տրունի շոնն էլ պիրի մխրեկ շորհքին ինի»:

Փիշիկանց Մայիլը մահացել էր: Մեծ թվով ժողովուրդ էր հավաքվել՝ վերջին հրաժեշտը տալու, և ամեն մեկը մի բան էր ասում: Ներս է մտնում Միրզան: Բոլորը լուռ են, տեսնեն՝ նա ինչ կասի: Միրզան ասում է.

«Մայիլ, էտ ինչ՞ նամարդոթին ըրիր, մեկ թուղեցիր, քինացիր: Պա վար այտու կյանք չինամեջը, հո՛ւր նհետ գիլեջա կանենք... Մայիլ, դե, էն ըլխարքումը շատ մարդ ա պըղըլիական, լոխճին կարուես, ամա ասես վեջ, վար ժողովուրդին բաղերը խիլի են, կալխոզ սարքիլ: Իմ այան վըխըլկոտ կենկ ա, տեղնուտեղը սերտը կճաքի»:

Մարունց Գրիգորը աշխատանքի էր գնում: Ճանապարհին հանդիպում են մի քանի բուզուլեցիներ: Գրիգորն ասում է. «Էս հինչ լավ դոնադներ եք, համեցեք քինանք մեր տուն»: Բուզուլեցիներն ասում են. «Ձէ Գրիգոր դայի, մեկիցումը գործ տենեք, կարալ չենք կյանք»: Գրիգորն ասում է. «Այ դորմի ձեր անցյալին: Բյազի շան տղա կա, վար պիրսնիտ կենջալը ասում ես, ետնաս ա ինգնում, կյալիս, էլ կարում չես ըզատվես»:

Հարևանուհիներով պատշգամբում նստած գրուցում են ու սուրճ խմում: Մառի ճյուղին մի կաջաղակ է կանգնում ու կզկչում: Գայանեն դժգոհ տոնով ասում է. «Չոռ, զահրումար, ի՞նչ ես կուռում»: Էմման հանգիստ բացատրում է. «Գայան ջան, այդպես չի կարելի: Կաջաղակը լուր է բերում, պիրի «ա-ջան» ասես, որպեսզի բարի լուր բերի»:

—Ի՞, աղջի՛, բա ինչո՞ւ չես շուտ ասել, ես չեմ իմացել,—նեղանում է Գայանեն ու շարունակում:—Երեկ մի կաջաղակ այդպես կզկչաց, ես էլ չիմանալով «չոռ» ասացի. երկու ժամ չանցած՝ կիտուրս հյուր եկալ ...

Գյուղի անասուններն ու ոչխարները ժողովուրդը հերթով տանում էր իրենց թաղի ոչխարն էր տանում պահելու, հրացանն էլ հետը տանում է որսի համար: Դաշտում ոչխարներն իրար հետ միացնում են, միասին պահում: Ոչխարների արանքում հանկարծ մի նապաստակ է երևում: Նիժդիրը վրա է ընկնում, նապաստակը բռնում, տալիս Դադաչին, որ պահի: Մինչև երեկո Դադաչը նապաստակը ման է ամում պայուսակի մեջ: Երեկոյան տուն գնալու ժամանակ Նիժդիրն ասում է. «Այ Դադաչ, ես որսկան մարդ, ինձ սազում ամ, որ նապաստակը սաղ տանենք տուն: Նապաստակը բաց թող, ես կրակեմ, սպանեմ»: Նապաստակը բաց են թողնում, արագ մտնում է ոչխարների արանքը, փախչում: Նիժդիրը չի կարողանում սպանել, ասում է. «Դադաչ, շենումը պյան չասես, էքուժ ես կիկյամ, էտ լքատրակին էլ սպանեմ, տիրա հորն էլ, պապին էլ»:

Մարյան Երևանում սովորում էր: Ամառային արձակուրդին վերմակը Վիրթաթաթած տանում է, որ գյուղում լվանան: Ավտոբուսի վարորդ Ռա-



Ֆիկն ասում է. «Էդ յորդանին 5 մանեթ պիտի տաս, որ տանեմ»: Ավտորուսի տոմսն էլ 7 ուրբի էր: Վարյան նեղացած գնում, մի Հատ էլ է տոմս առնում, վերմակը դնում նստարանի վրա, իր կողքին: Հրազդանում նոր մարդիկ են բարձրանում ավտորուս, լցվում, շատերը մնում են ոտքի վրա կանգնած: Ռաֆիկն ասում է. «Էդ յորդանը վերցրու ավտորից, թող մարդիկ նստեն»: Վարյան դժգոհ ասում է. «Էս յորդանին տոմս ունի, յորդանին Հասցեին քաղաքավարի խոսա, մարդկանց էլ ինչպես վերցրել ես, այնպես էլ տեղավորիր»:



Մ որ տարի է: Սերժիկն ու իր եղբայրը «ուակետ» են կրակում, ընկնում է ընկեր ՕՀանի չափարի վրա, վառում: Վազում են, որ Հանգցնեն: Ընկեր ՕՀանը տեսնում է, որ տղաները վազելով դեպի իրենց բակն են գալիս, չիմանալով, թե ինչ է պատահել, ուրախացած ներս է հրավիրում տուն, հյուրասիրում ...



Պ ալոցի մոտ ապրող մի աշակերտ շուտ-շուտ վազում էր տուն, ուակելիք ու խմելիք բերում, դասարանում ուտում և խմում էին: Մի անգամ դասին «2» է ստանում, բայց էլի գնում է ուակելիք ու խմոնաղ բերում, բաժակը բարձրացնում ու կատակով ասում. «Աստված դորմի մեր ինկերին»: Այդ պահին ինկերը (դասատուն) ներս է մտնում, լսում է և ասում. «Էնքան կոլա ա կուտրվում կոժին ըռաջին...»:



Շ իրինը շուկա էր գնում: Ծանապարհին Հանդիպում է Գուրգենը, որը շատ հարգված մարդ էր, բայց կակազելով մի կերպ էր խոսում: Ասում է՝ բարիույս, Գուրգեն: Գուրգենն սկսում է չարչարվել, որ պատասխանը տա: Շիրինն ասում է. «Տյու մի Հանգավ Ուրուր ըրա, մինչև ես մտնեմ բազարը, կյամ ...»:



Արշակի մականունը տոկի էր (էլեկտրական), ինքն էլ Բաքվում էր Ապրում: Մի անգամ հյուր է գնում գյուղ, Աեռնդի մոտ: Նրանց ընկերն էր Դաշոն, որն էլ իր հերթին Տոկի Արշակին հյուր է կանչում իրենց տուն և դիտավորյալ իր կնոջն ասում. «Ես Համնչում եմ, տյու կասես՝ Արշակ, մզեսի Բաքվա մի տոկի ությու կղարկես»: Կինը չգիտեր Արշակի մականունը և միամտորեն այդպես էլ ասում է: Արշակը հասկանում է, որ Դաշոյի սարքած խաղն է, ասում է. «Բնարիկ տոկի ություն վերացել ա, մճեկ տոկի Դաշո ա ինում»:



Պ առերազմի տարիներին Սապետը գյուղխորհրդի նախագահ էր: «Կուրյեր» Արտուշին մի ցուցակ է սալիս, որ գնա, տներից գորակո-

չիկներին կանչի: Զինկոմի Հետ նստած, սպասում են, Արտուշը շատ է ուշանում: Երբ գալիս է, Սապետը զայրանում է. «Ա քեզ թաղեմ, վերդե՞ղ ես կորել էսքան վախո»: Արտուշը միամտորեն ասում է. «Հայկազն ասեց՝ մեր դազը ծնում ա, մխրեկ կացի. ծընըցընեմ, նոր կյամ ...»:



Մ աքունց Ապրետը գյուղում գինի էր ծախում: Մի թուրք «դաչնիկ» Վալիս, մի լիտր գինի է ուզում: Ապրետը լցնում է մի 800 գրամանոց չիշ, տալիս նրան: Թուրքը զարմացած ասում է. «Բու լիտր գը» (սա՞ է լիտրը): Ապրետն ասում է. «Լիտրդան բիր ալ բյարի. Խնձրկերթ դը ...» (Լիտրից մի քիչ այն կողմ՝ Խնձրկերթն է): Անտեղյակներին ասենք, որ Լիտրը տեղանուն է. նրանից մի քիչ հեռու էլ Խնձրկերթն է:



Մ արդազարը քաղաքից բերած մի Հարս ուներ: Մի անգամ Հարսին գործով այգի է ուղարկում և ասում. «Տեղեգրեյկաս նըհեաղ կտանես»: Հարսն ասում է. «Ապեր, էդ էշին փաղանը ես Հո՞ւնց տանեմ...»: (Սովորաբար ծանր ու անշնորհ շորին «էշու փալան» էին ասում):



Տ իտիլը մի քիչ «ծերքան կյող» էր: Մի օր ոչ մի տեղից չի կարողանում դոմի մեթ թաքցնում: Հարսնեղը, որ կիսուրից անխոս էին, ձեռով-ոտով մի կերպ հասկացնում են, որ կաթան չկա: Տիտիլը նկատում է ու ասում. «Հի՞նչ եք թեփոն-թեփոն անում, քինացեք էն կյումը շու եկեք, կարող ա ընդեղ ինի»:



Ը նկեր Մեծին հայտնի որսորդ էր: Մի անգամ մի կիտար (եղնիկ) է սպանում, բերում տուն, որ հյուրերին պատիվ տա: Հյուրերը նկատում են, որ «ուռքերը կախ» է: Հարցնում են՝ ինչ է պատահել: Ընկեր Մեծին ասում է. «Էտ անդերը կյուճուր կիտար տյուս եկավ»: Կոլյան ասում է. «Ո՞րն էր հենց կախ ես ըրել, կասես թա տակը քերել ես, յա մի չուճբուլ խոտ ես տվել: Հուճց անկեք, թող մի պատառ էլ կյուճուր ինի...»:



Ա փոն ու Սերժիկը Հանդիպում են: Սերժիկը հարցնում է՝ ո՞նց ես: Ափոն ասում է՝ վատ եմ: Սերժիկն ասում է՝ դե շըջանը քանդվելուց ու փախուստից հետո ո՞վ է լավ: Ափոն ասում է՝ չէ՛, է՛, չէ՛, իմ դարդն օրիշ ա. պա մարթին տանը օխտը հետ դրազը նի կիկյա, կնեկը սաղ կպրծնի՞ ...



Երրտասարդներով երեկոյան քայլում էին: Մի ծեր կին է Հանդիպում, Ամերթիկն ասում է. «Պարի բյուզուեն, այա»: Կինը լավ չի լսում, ասում է. «Լյավ չեմ, քեզ մատաղ, լավ չեմ»: Սերթիկն ասում է. «Դե, լավ ա, լավ ա»: Ծեր կինն ասում է. «Ապրես, տղա ջան, միշտ մեծին տհենց Հարգող ինես»:



Արապետ Գոգոն գնում է Գյուլիստան, մի կոչկամարի «բուզկա» բաշտում, սկսում աշխատել: Ինքն էլ միշտ «Ավորա» էր ծխում: Դպրոցական տղաները Հաճախ կոչիկ կարկատելը առիթ էին դարձնում, գնում նրա մոտ, մի հատ էլ սիգարետ ուզում, ծխում: Գոգոն մի օր ասում է. «Ահենց վար քինաց, 2 ամսանը ետը իմ բուժկուժը շատ շկոլնիկ ա ինական, քանց շկոլումը»:



Պարաբաղցի Արտեմը Լարաչինարում տնփեսա էր: Համեստ մարդ էր, Լուսնեցածն էլ ընդամենը մի քանի հավ էր: Հարևանը «բարիշմազ» մարդ էր, կեռասն էլ հենց որ հասնում էր, շունը «ՋինՋիլով» (շղթայով) կապում էր ծառից, որ երեխաները չուտին: Մի անգամ թաղի տղաները շանը բաց են թողնում, ՋինՋիլն էլ գողանում: Էդ մարդն սկսում է կռվել Արտեմի հետ, թե՛ ՋինՋիլս դու ես գողացել: Արտեմն ասում է՝ այ մարդ, ՋինՋիլդ տանում եմ, հավն՞րս կապեմ, թա՞ կնգանս ...



Բեթոն նավթ էր ծախում Լարաչինարում: Մեկը դուլը վերցրած գալիս է առնելու: Բեթոն ասում է՝ դու ես դուժը (ձագարը) պահի վեդրին միջին, ես լցնեմ, չափեմ, նավթը տամ: Հետո ծիծաղելով նայում է շրջապատի մարդկանց ու ասում. «Այ ժողովուրդ, եթե էս բանը ես պատմեի, կասեիք՝ Բեթոն Հնարել ա»:



Պարաչինարցիներն ասում էին՝ մեր գյուղից ով գնա Գյուլիստան կամ Լթալիչ՝ աղջիկ ուզելու, «ատկազ» չկա: Այդպես մտածելով՝ մի նրբտասարդ իր ընկերների հետ գնում է Գյուլիստան՝ աղջիկ ուզելու, բայց կարգին չի հազնվում, երեսն էլ սափրած չի լինում: Գնում են մեկի տուն, Հայտնում իրենց նպատակը: Տանտերը հարցնում է, թե փեսացուն որն է: Ցույց են տալիս այդ թափթիված, չսափրված երիտասարդին: Տանտերն ասում է. «Պա տիրանա մեր քույրը լիզն ա, լի՞, հի՞նչ եք յիտիրներստ քիցել, պիրել»:



Լնկեր Գարեգինը մի խոզի ճուտ է առնում, բազում բաց թողնում: Հարևանը խոզի շատ ունեք, այն էլ՝ մեծ-մեծ: Էդ ճուտը չափարի էս

կողմից սկսում է ճղճղալ, մյուս կողից էլ հարևանի խոզերն են սկսում ճղճղալ ու չափարը քանդել: Գարեգինը դարմայած սսուժ է հարևանին. «Մերը լիհա ճոտ ա, հասկանում չի, պա քու խոզերն էլ մեծ-մեծ են, համուժ չի՞, վար չափարը քանդում են»:



Լնկեր Գարեգինի մայրն ասում է. «Այ Գարեգին, ամառը կլալիս ա, մենք հալա ոչ մի բան չենք ցանել, հի՞նչ անենք»: Գարեգինն ասում է. «Գնա հարևանին հարցրու, տես սիրտը հինչ ա օգում, էն էլ ցանենք»:



Գարեգինի մայրը դժգոհում է, որ աջից էլ, ձախից էլ երկու հարևանները չափարը հրելով բերում են դեպի իրենց. «Այ Գարեգին, ինչ՞ չես տիհանց մի պյան ասում, համուժ չի՞ տիհանց»: Գարեգինն ասում է. «Այ մէր, մի պյան էլա ըսվական չեմ, թող էնքան կյան, վար մեր հայաթումը իրենք իրալ կոտորեն»:



Դանուժը այլուր է ստացել: Հերթը «Իրար կոտորում է». աղմուկ է, աղաղակ: Պարկիրով առնում, տանում են բոլորը: Ընկեր Գարեգինը, տարիքն առած մարդ, հանգիստ «թամաշա» է անում իրենց բակից: Կինն ասում է. «Այ Գարեգին, քինա մի մեշուկ էլ դու առ, էլի, էս տան տղամարդը դու ես, խանութն էլ մեր տանը կշտին»: Գարեգինը գլխարկն իր գլխից վեցցնում, դնում է կնոջ գլխին, ասում. «Ըհը, մհեկ դու ես տղամարդը»:



Լնկերներով արձակուրդ են եկել: Առավոտյան հանդիպում են իրար, մոտիկը Սերթիկենց տունն է լինում, ասում են՝ մտնենք, բարի լույս սանք: Իրար հետևից բոլորը բակ են մտնում: Սերթիկը բազկոնից ձեն է տալիս. «Իրբազան պենդ ծակեցեք, նանը տյուս չի կյա, կորչի»:



Մեկը քաղաքում հանդիպում է Սերթիկին, ասում՝ լսել ե՞ս ձեր շինացի Գյուլին մեռել ա: Սերթիկն ասում է հա՞, մեռել ա՞՝ վար հի՞նչ ...



Գալյան եռանդուն, աշխատող կին է, իսկ ամուսինն, ընդհակառակը, շատ հանգիստ: Մի անգամ ամուսինը «դինջ-դինջ» ասում է. «Գալյա, տոչնի քու մաման նման ես»: Գալյան ասում է. «Ծն իմ մաման նման եմ է, ամա տյուլ իմ պապան նման չեմ»:



Արիտասարգները Հավաքված ժամանակ էին անցկացնում գարեջրի շուր-  
ձը: Անցնում է Թուսուկն Մահակը, որը տարիքն առած, Հարգված  
մարդ էր: Կանչում են՝ այ Մահակ դայի, եկ պիվա խմի: «Մաղ ինեք, ծեղ մատող,  
պա ինձ կէտիք օն՞մ, վար կյամ», ասում է Մահակը՝ խուսափելով միանալ բարձր  
տրամադրություն ունեցող երիտասարդներին:



Մորհրդային տարիներին խոշոր, ծուռուծուռ խողովակների նման  
բան էր: Բուբերիթը մի մեծ «կուլյոկ» գրկած ասնում է խանութից,  
փողոցում մեկը հարցնում է. «Էդ տանում ես՝ Հի՞նչ անես»: «Նաչիչնիկ եմ չի-  
նական», պատասխանում է Բուբերիթը:



Պաշտում աշխատող մի խումբ տղամարդիկ կեսօրին նստում, իրենց  
Համեստ ուտելիքը գետնին փռում, ուտում են, Հետո պառկում  
Հանգստանալու և զրուցում: Մեկը պատմում է, որ իրենց երբ Հավ են եփում,  
բուրն իրեն են տալիս: Մյուսն ասում է ինձ դոչն են տալիս և այլն: Դուրի շատ  
աղքատ էր ապրում, երևի հազվադեպ էին Հավ մորթում: Ընկերները հարցնում  
են՝ պա քե՞զ հինչն են տալիս: «Կուխկաճաղը», ասում է Դուրին:



Հարեանը գնում է Սեյրանի տուն, ասում. «Սեյրան դայի, ձեր էջը տալ  
չե՞ս քինամ քոլը»: Սեյրանն ասում է. «Էջը ըստեղ չի»: Այդ պահին  
էջը գոմում զրուցում է: Հարեանը զարմացած ասում է. «Պա ասում ես ըստեղ  
չի՞»: Սեյրանն ասում է. «Այ մարդ, ուրեմն տյու ինձ հվատում չես, էն էլին  
զրուցին ես հվատում»:



Պարաչինարցիները սովորություն ունեին, Հավաքվում էին գյուղա-  
Հմիթում, հենց փողոցում կանգնում, զրուցում: Մի վերինչենացի  
կատակով ասում է. «Ինկեր Գարեգին, մեր գյուղում էջերն են տյուս կյալիս  
հղըրցին մեջտեղը, ծիր շենումը՝ մարդիկ, էտ հինչա՞ն ա»: Գարեգինն ասում է.  
«Դե, քեզ մատող, վեր շենումը հինչը ճարվում ա, տյուս ա կյալիս շինամեջը»:



Մաշիկը մի քիչ կակաղելով՝ «ը-ը» ասելով էր խոսում: Դասամիջոցին  
Հանդիպում է ընկեր Բենիկին, ուզում է ինչ-որ բան ասել: Ակում է՝  
«ը-ը, ընկեր Բենիկ, ը-ը»... Ընկեր Բենիկն ասում է. «Մաշիկ, վազում եմ, ես  
ը-ը կանեմ, տյու հինչը ըսական ես, կանուխ ասա»:



Ընկեր Էդիկան դպրոցի բակում կանգնած է լինում: Մտածում է իր  
Աշակերտուհի Վարյան ու ասում. «Ընկեր Էդիկա, բարե»: Մի քիչ  
Հետո գալիս, նորից է բարևում: Մի քիչ Հետո էլ գնում, միջանցքում է բա-  
րևում: Ընկեր Էդիկան կատակով ասում է. «Ախճի՛, հի՞նչ ես բարեկամիչ իլել:  
Օրը մի Հետ բարև կտան»: Աշակերտուհին ասում է. «Ընկեր, պար փոքս բա-  
րևով լիքն ա, ամա մենակ քրզետի ա, ուրիշի օգում չեմ ասեմ...»:



Ընկեր Էդիկան մի աման ձու վերցրած պարզալից գնում է տուն:  
Բակում Հանդիպում է իր փոքր տալը՝ դպրոցական ընկերուհու Հեա:  
Տալն ասում է. «Ընկերուհիս Թուրքերան յաման գյուղում ա»: Էդիկան փոր-  
ձելու համար հարցնում է. «Դե մի ասա՛, յուժուրթան հի՞նչն ա»: Երեխան ասում  
է. «Ընկեր, դե՛ ուրթան բուրդն ա, յուժն էլ կզնանք դպրոց, էնտեղ կասեմ,  
նախա՞ու կարալ չեմ ասեմ ...»:



Մարունը թամարը լավ սնիչի էր: Մի օր մի կին երեխային բերում է,  
թե՛ ձեռքը կտարվել ա: Թամարը բուժում է, լավացնում: Մի երկու  
ամիս Հետո այդ կինը նորից է էջ երեխային բերում, թե՛ էլի ա կտարել ձեռքը:  
Թամարը նորից է բուժում: Երկու ամիս չանցած՝ այդ կինը նորից է երեխային  
բերում՝ ձեռքը կտորած: Թամարը ջղայնացած ասում է. «Ա իրըզզնՀատ, մըկել  
վար եկա՞ր, էն մի ծեռտ էլ ես եմ կուտրելական»:



Մորհրդային տարիներին բոլոր հիմնական Հարցերը շրջվում էր քա-  
տուղարի միջոցով էր լուծվում: Մի բազմազան տրակտորիստ ըը-  
նակարանի կարիք էր զգում, էլին տալիս: Մեկը Հասկացնում է, որ պիտի տա-  
նի, հազար ուրբի տա քարտուղարին, հարցը կլուծվի: Փողը գնում է ծրարի  
մեջ, մտնում քարտուղարի մոտ: Ձեռքերը Հետևին դրած, փողը պինդ բռնած  
սկսում է բացատրել, որ երկար տարիներ բարեխիղճ աշխատում է, վից երեխա  
ունի, բնակարանի հերթն էլ անցել է, բայց չեն տալիս:

—Ես բնակարան բաժանող ե՞մ,—գայրանում է քարտուղարը:—Ձե՛ս Հա-  
կանում, որ բնակարանը դործկոմն է բաժանում:

Երբ գլուխը կախ շրջվում է, որ գնա, քարտուղարը Հետևից նկատում է, որ  
ձեռքի մեջ ծրար կա, կանչում է.

—Այ տղա, Հետևից Հասկացող ես երևում, մի Հե՛տ արի, էդ ի՞նչ ա ձեռքիդ:

—Հազար մանեթ ա, ընկեր Միշան ա ասել, վար քեզ տամ,—պատասխանում  
է տրակտորիստը:

—Հա՛, դե գիր էդ սեղանին, գնա, թղթերդ արխային կտանես գործկոմ,—  
ասում է քարտուղարը:





Լսեցին, որ թղթակից Հայկազ Զանունցին վերահասել են: Որոշեցին զանգել, հարցնել որպիսությունը: Հեռախոսափողը վերցրեց կինը և ասաց՝ քնած ա: Հարցրին, թե երբ կարթնանա, որ գանգեն, ասաց. «Կացի մի շրջընեն»:



Գյուլիստանցի Պավլին խոզի ֆերմայում էր աշխատում: Գնում է կուտնտեսության պահեստ՝ խոզերի ու շների համար կեր ստանալու: Պահեստապետ Սաշան հարցնում է. «Պավլի դայի, կարա՞ս ստորագրես»: «Խե՞ չեմ կարալ, քեզ մատաղ, — ասում է Պավլին: — Անումս կիրիլը գյուղում եմ»: Գրիչը վերցնում է ու նշված տեղում հանգիստ գրում մի խոշոր Պ ամբողջ տեղը լճանում: Սաշան ուզում է թուղթը վերցնել, Պավլին ասում է. «Վազդի մի, քեզ մատաղ, տյու թոխը պենդ փունի, ես լոխ կիրիլական եմ»: Գրում է՝ ա վ է, թղթի վրա տեղ չի մնում, ասում է. «Պահո՞, մի թայը տղվարեց վեչ»:



Քեզը լավ պատ շարող էր: Հարեան նազարի համար տուն էր պատում, ասաց. «Ես խորհուրդ եմ տալիս երկու դուռ թողեք՝ դեմադեմ պատերին»: Տնասերը զարմացավ մի տունը երկու դուռ կունենա՞: Բեզը բացատրեց. «Վերին թաղի Մինասը մեկ դուռ էր թողել, գիտե՞ս ինչ եղավ: Հատակը ներկելու ժամանակ դուռն մոտից սկսել են, գնացել հասել վերին անկյունը. էլ չեն կարողացել դուրս գալ: Մի շաբաթ էր անկյունում նստել են, մինչև որ ներկը չորանա»:



Մի ձմեռ գյուղում շատ խիստ սառնամանիքներ եղան, անասունների կերը շուտ վերջացավ, գյուղացիներից շատերն սկսեցին իրենց կովերը վաճառել: Բեզն իր կովը վաճառեց 800 ուսուրով: Նույն գնորդը որոշեց նրա հարեանի կովն էլ առնել: Հարեանը համառեց, թե ինքը 1000 ուսուրով է վաճառում: Գնորդը զարմացավ. «Այ մարդ, — ասաց, — իրար նման կովեր են, ինչո՞ւ պիտի քեզ 1000 տամ»: «Ձէ, — ասաց, — հարեանը, իմ կովը Բեզի կովից թանկ արժե»: «Ինչո՞ւ, — զարմացավ Բեզը, — կարող ա՞՞ք կովը ինստիտուտ ա ավարտել»:



Շահնազ բիրը տնից գնում էր իրենց բախշան: Հարեանները խոսեց-նելու համար կանգնեցնում են, ասում. «Աչքդ լույս, Եելունց Անահիտը մի տղա էլ ա բերել»:  
— Խե՞ ինձ եք ասում, թող տյուրմին նաչալնիկին աչքը լույս ինի, վար մի տյուրեմճիկ էլ ա իվիլնական...



Մույնիսկ ոմբակոծությունների ամենադաժան օրերին, երբ «Ալազան» կոչված հրթիռներն աջ ու ձախ ավերածություններ էին գործում Վերին Եենում, մարզիկ դարձյալ չէին կորցնում իրենց կենսաուրափությունը: Ալազանի պայթյունից հետո Յոլակն ասում էր՝  
Հա՛յ Ալազան, Ալազան...  
Էդ հինչքա՞ն ա մեծ գազան,  
Վար մտնի վեչ մի զազան...



Վերին Եենով թուրքի քոչն անցնելու ժամանակ Եելունց Տիտիլը մի շամբողջ սայլի բեռն այնպես է դատարկում, որ սայլապանը գլխի չի ընկնում: Հետո, երբ նկատում են, բողոքը հասնում է պրիստավին, պրիստավն ասում է. «Մենակ Տիտիլը կկարողանա էդպիսի գողություն անել»:  
Գալիս է Վերին Եեն, Տիտիլին կապում են գյուղամիջում և ժողովրդին ստիպում, որ բոլորը գան, ասեն՝ «Թու՛հ քո ճակատին»:  
Դա ժողովրդական պատժի ավանդական ձև էր: Բոլորը գալիս են, բացի Սայունց Ստեփանից: Նա դիտմամբ գնում է հանդը, որ չմանակցի պատժին, որովհետև նոր էր խնամի դարձել Տիտիլի հետ, անհարմար էր զգում: Պրիստավը հանդից բերել է ապիս Ստեփանին և ասում. «Դու էլ պիտի քո բաժին պատժը տաս»: Ստեփանն ստիպված գնում, պտտվում է Տիտիլի մոտով և ասում. «Թու՛հ քո մեջքին»:  
Համադյուղայիները բարձրաձայն ծիծաղում են: Պրիստավը ուռս էր, ասածը չէր հասկացել. հարցնում է. թե ինչ ասաց Ստեփանը: Երբ բացատրում են, կարգազրույց է ուստիկանին. տեղնուտեղը Ստեփանի շարվարն իջեցնել, յոթ անգամ ճիպոտով հարվածել հետևին (պատժի այդպիսի ձև էլ կար): Հետո, այնուամենայնիվ, ստիպում են, որ Ստեփանն էլ իր բաժին «պատժը» հասցնի Տիտիլին: Նա մոտենում է և խեղճացած ասում՝ «Իե, ա՛ խնամ, հի՛նչ անեմ, շատ են նեղում»: Եվ կատարում է իր «պարտքը»:



Ժորիկը կնոջ հետ միասին Ամերիկայից հյուր է եկել Հայաստան: Կանչել են համադյուղացիներին, բարեկամներին, խնջույք են կազմակերպել, քեֆ են անում, զվարճանում: Կնոջը գուր չի գալիս, որ ժորիկն իրեն «հասարակ է պահում», անմիջական զրույցներ անում, մանավանդ խոսատուններ տալիս: Անգլիերեն լեզվով ամուսնուն դիտողություն է անում, որպեսզի հյուրերը չհասկանան: Ամուսինը պատասխանում է մեղմորեն: Կինը բորբոքված վրա է տալիս, անգլիերեն ինչ-որ բաներ ասում: Ժորիկը անգլիերեն լեզվով ուզում է հանգստացնել կնոջը: Հյուրերից մեկը կատակով ասում է. «Ժորիկ, օղում ես անգլիերեն ասա, օղում ես՝ ֆրանսերեն, կրիզման կրիզմա ա»:



Մի պապիկ ձուկ ուտելիս քիտտ (փուշ) է կուլ տալիս: Տնեցիներն անհանգստացած իրար են խառնվում: Մարուսն ասում է. «Վախիլ միք, Ջալունց չանը 7 անգամ ասեղ եմ տվել, չի սատկել»:



Կոլտնտեսության «գաղափոյի» ժամանակ (տարեկան հաշվետու ժողով) պարզվում է, որ այգիներից ընդամենը 8 կգ ընկույզ են ստացել, չգիտեն ինչ անել: Մարուսն ասում է. «Տարեք Ջալունց կտրան շորոշ տվեք, հովը հինչքան կարա, թող հվաքի»:



Ներքին Շենի «Կետին դրադին» միլիցիայի աշխատողը մի քանի հոգու պաշտոն մասնավոր առևտուր անում (դե, խորհրդային տարիներին դա արգելված էր): Միմոնն ասում է. «Ով ինչով ուզում է, գրադվի, դա ինձ չի վերաբերում: Հրեն, Գուզվիչանց Գանոն Ռիկին տակին ձուկ ա ծախում, բայց թե դա իմ ի՞նչ գործն ա»:



Արշակ վարժապետը լավ հագնված գնում է Գաղթութ՝ հարսանիքի: Դե, նա ինքն այդ գյուղի փեսա էր: Բոլորը հարգանքով, ուշադիր նրան են նայում: Վարժապետն ասում է. «Հի՛նչ եք պլշել, կեցիս հինչը կա, լոխ իմն ա, մենակ պենջակը մեր թյունինն ա, փափախը՝ Սերգինը»:



Արուսն ամուսնացել, գնացել, կայարանի թաղամասում է ապրում, որտեղ մեծ մասը դեպոյի աշխատողներ են, գրույցի հիմնական թեման էլ գնացքն է ու գծերը: Մի անգամ պատուհանից տեսնում է, որ բակում ժողովուրդն անհանգիստ իրար է խառնվել: Վերևից ներքև հարցնում է հարևաններին.

- Էդ ի՞նչ է պատահել:
- Մնաորիսը «ժիգուլուն» խփել ա, Ջարդուփշուր արել, լավ ա, գոնե վարորդին բան չի եղել:
- Խոսակցություն լսելով՝ տատիկը հարցնում է.
- Էդ ի՞նչ է պատահել, Արուս ջան:
- Պատրիսն ընկել ա ժիգուլու տակ, մամա ջան, — պատասխանում է Արուսը:
- Վո՛ւյ, խեղճ մարդ, տենաս էդ ով ա, կայարանի թաղում էդպիսի մարդ չկա: Արուսը պատուհանից նորից հարցնում է հարևանուհուն.
- Էդ որ խփել ա, բա իրեն ինչ ա եղել:

- Իրեն ի՞նչ պիտի լինի:
- Ո՞նց թե ինչ պիտի լինի: Բա հիմա որտե՞ղ ա:
- Հրեն, գծերի վրա վեր ընգած, — անտարբեր պատասխանում է հարևանուհին:

«Վո՛ւյ, խեղճ մարդ, ով գիտի՝ լրիվ տնտես-անտիրակամ ա», ինքն իրեն ասում է Արուսը: Իսկ հարևանուհին, ինքն իրեն մատրեպով, վերև է նայում ու ասում.

— Ա՛յ Արուս, մատրիսը էն ա, կլի՞, էն գրեկինի նման վապոնն ա, նրան ի՞նչ պիտի լինի ...



Խորհրդային տարիներին խանութում բուն չէր ճարվում: Շաքարը, շաքարավազը և այլ կարևոր բաներ վաճառում էին միայն ծխախոտ պահուցիներին: Վերինշենացի Երվանդը, որ բարեխիղճ աշխատող էր, գութանչի, կոլտնտեսության տարեկան ընդհանուր ժողովում՝ «գաղափոյում» դժգոհում է. «Այ մեծիր, էդ ի՞նչ եք անում: Թուլթունչիներին էնքան շաքար եք տալիս, որ «բիցովի» անեն, ինձ էլ դոնե կնքան տվեք, որ «կծովի» անեմ»:



Միմոնը լսում է, որ Գրեգորը հիվանդ է: Գնում է տեսության, հարցնում է, թե վիճակն ինչպիսի է: Գրեգորն ասում է. «Էն որ քեզ 10 մանթ եմ պարտք, դրանից արխային մնա, տնեցուց թախչուր եմ արել, որ կըր մեռնեմ, քո անունը «սպիտոփի» գլխին գրեն»:



Գտուունց Ասեյարի ազա նիկալը սայլապան էր կոլտնտեսությունում, մի քիչ թեթևամիտ էր, դրա համար պահեստապետը հաճախ տարում էր: Մի անգամ այս նիկալը գնում է պահեստից իրեն հատունելիք ցորենն ստանալու: Մի ջվալ ցորեն է հատնում, բայց պահեստապետ Միմոնն ասում է՝ բուն կլիս այսինչ պատճառով ենք հանում, քսան կիլո էլ հանում ենք այնինչի պատճառով և այլն: Տակը մի քիչ ցորեն է մնում: Նիկալը ջղայնանում, այդ մի քիչը խփում է Միմոնի պլիկն, ցորենը շաղ տալիս: Մայրն ասում է. «Այ իս կիլոխո թաղեմ, վար շաղ տվիր, ցորենը չըսացա՞վ»:

Ավսու, չնայած «խն» էր, պատերազմ տարան, այնտեղ դժգոհեց նիկալը՝



Մտկվայի շուկաներից մեկում դարսիկնարցի մի կին հանդիպում է համալյուղացուն, ոգեորված պատմում, որ առևտուր սինելը լավ սովորել է:

— Ախճի, պա տյու կարում ե՞ս ուտեիրան խոստա, — հարցնում է համալյուղացին:

Ա՛մ, մի սվերել եմ, միննեկա կարալ չի կշտիս չխկըրը քաշի, դե մի ասա, այո՛ կիգիդա՛ս, պրիգուկին ոռուերան հի՛նչ են ասում:

—Ախճի, տա լիճա ոռուերան չի՞:  
—Ձէ, ոռուերան պրիկալ են ասում:



Մի կին շրջանի կուշտուրայի բաժնի վարիչի համար մի զազան մեղր էր բերել: Նրանց մոտ էլ ժողով էր: Ասաց. «Ազջիկներ, թողնում եմ ձեզ մոտ, որ ժողովը պրծնի, կտանեք, տաք իրեն»: Ժողովից հետո Միմյան Ասողիկն ասաց. «Ընդմիջման ժամ է, բերեք այդ մեղրից մի քիչ ուտենք, վալիչը շատ չի իմանալու, թե ինչքան են ուղարկել»: Բուլսոյ կերան այդ մեղրից: Վերջում Հրաձիգ Զախարյանն արտասանեց Սևակի «Մոր ձեռքերը». «Ինչե՛ր ասես, որ չեն արել մոր ձեռքերը», ասաց ու շարունակեց՝ «մեղր են դողացել մոր ձեռքերը...»:



Չայ Գարիսից Առուշանյան Արշակի հայրը կատակասեր մարդ էր, իսկ մայրը մի քիչ «մի վանանի» էր: Մի օր մարդը ուշ է տուն գալիս, կինը զայրանում է. «Ա խրզնհատ, է՞տ հինչ պլան ա, մկել սկսել ես քիշերը ետի կյալ»: Ամուսինն ասում է. «Ա՛ կնեկ, պա ասիլ չես, ինձ ողում են կախողի նախողահ տինեն, ետի-ետի եմ կյալիս, վար մհեկանց սվերես»: Կինը լրջանում է. «Ա՛յ մարդ, գործ չունես, կոխտ էա թրքին տուպրակը մի կոխիլ»:



Չայր ու որդի աղյուսից ոռուական սիսլի վառարան են պատում հաց թխելու համար: Սոփորաբար պատում են, կտուրն էլ վերջացնում, հետո ներսը վառելիք լցնում, վառում, որ պատերը լավ չորանան: Սկսնակ վարպետները պատը շարելուց առաջ ներսում մի մեքենայի անվաղող են դնում, որ հետո վառեն: Կտուրը փակելուց հետո սղան հիշում է. «Պահո՛, բանդածը մնացել ա պակրիշլիկն յիրա, պա հո՛ւնց կհանենք»: Բեղը նկատում է, որ «վարպետները» մնացել են շվարած, հուսադրում է. «Ոչինչ, էդ բանդածի վրա էլ բխկվիթ կթխեք»:



Մարգարե Հաղթանդամ մարդ էր, իսկ կինը՝ Մարուսը, փոքրամարմին, թուլակազմ, շուտ-շուտ էլ հիվանդանում էր: Հարեանների մոտ ասացվածք էր դարձել, կատակով ասում էին. «Իրրըզին ծակը փալաս կուխեցեք, Մարուսը կմրսի»:



Մի աշուն Բեղն ուղում է տղային ամուսնացնել: Խնամիներով պայմանադրվում են հարսանիքը նոյեմբերի 20-ին կատարել: Բեղը պատրաստվում է: Խնամին հեռու տեղում ապրող բարեկամներ ունեք, որոնք ուշանում են, դրա համար էլ նա ուղում է մի օրով հետաձգել հարսանիքը, բայց միտքը ուղիղ չի ասում Բեղին, ասում է. «Բեղ, հարսանիքը ամսի 21-ին անենք, 21-ը լավ թիվ է»: «Այ խնամի, ես քեզ հետ աչքիս եմ խաղո՞ւմ, որ ուղում ես լավ թիվ լինի», ասում է Բեղը:



Մարագետի կին Մաքանը գնում է Ապրես դայու խանութը, հարցնում. «Ոչխարի գլուխ չունե՞ս»: Ապրեսը փնտրում է ապրանքի մեջ, տեսնում է որ չկա, մի այծի գլուխ է փաթաթում, տալիս Մաքանին ու ասում. «Մինչև տուն հասնելը ոչ մի տեղ չկանգնես, ոչ մեկի հետ չխոսես, թե չէ՝ ոչխարի գլուխը այծի գլուխ կդառնա»:

Մաքանը վերցնում է փաթեթն ու զարմացած ասում. «Էդպիսի բան կլինի՞»: Ժանապարհին հանդիպում է իր հին ծանոթ Մարգոն: Կանգնում, մի լավ կրուչում է, գնում սուն, փաթեթը բացում, տեսնում է միջինը այծի գլուխ է: Զարմացած բացականչում է. «Վո՛ւյ, տխրի, Ապրեսը ճիշտ էր ասում, հա»:



Ապրեսը գնում է քաղաք՝ խանութի համար ապրանք բերելու: Ո՛չ Երեկոյան վերագառնում է, բայց դատարկաձեռն: Տղային ասում է. «Աշոտ, առավոտյան ժողովուրդն անհամբեր գալու է խանութ, որ տեսնի քաղաքից ինչ նոր ապրանք եմ բերել: Պիտի մի բան անենք: Մտեր թոնիրը, մոխիրը լրիվ հանիր լցնենք թղթե փոքրիկ տոպրակների մեջ»: Առավոտյան մարդիկ դալիս են խանութ, տեսնում են տոպրակներ կան շարված: Հարցնում են ի՞նչ է: Ապրեսն ասում է՝ ո՞չլի դեղ ա: Պատերազմական ծանր տարիներին ՝ շիրը տարածված էր: Ժողովուրդը վրա է տալիս, «ապրանքը» լրիվ ծախվում է: Մի քունի օրից հետո մարդիկ գալիս են, դժգոհում. «Ա՛յ Ապրես, քո տված դեղը չի օգնում»: Ապրեսն ասում է. «Այ ժողովուրդ, բա ո՞չլիը չա՞տ ա հասկանում, որ դա դեղ է, պիտի բռնեք, լցնեք բերանը»:



Ապրեսը խանութի ճակատին մի ցուցանակ է կպցնում, վրան խոշոր տառերով գրած՝ «Այսօր նաղդ (կանխիկ), վալը՝ նիսյա (ապառիկ)»: Մի կին գալիս է շաքար առնելու, բայց փող չի ունենում, ասում է՝ Ապրես դայի, վաղը կբերեմ: Ապրեսը ցույց է տալիս ցուցանակը, ար



սում է՝ իրավունք չունեմ, տեսնո՞ւմ ես, գրված է. «Այսօր նաղդ, վաղը՝ նիսյա: Կիրնը դատարկ զնում է, հաջորդ օրը նորից գալիս այն հուսով, որ շաքար կառնի «նիսյա»: Ապրեսը նորից է սսում՝ այսօր նաղդ, վաղը նիսյա:



**Ա**պրեսի և Կարապետի խանութները դեմ դիմաց էին: Ապրեսը խանութում մեզը էր ծախում գեղեցիկ կճուճների մեջ: Ճաշի ժամին յուրաքանչյուրն իր խանութում նստում էր, մի բան ուտում, բայց այնպես, որ դիմացինը տեսնի: Կարապետը հացի կտորը վեցրած ձեռքով այնպիսի շարժումներ է անում, կարծես կճուճից մեղր է թաթախում, ուտում: Մի օր դատավորը Կարապետին կանչում է իր մոտ: Այնտեղ Ապրեսը բողբոջում է, թե՛ մեղրս կերել է, փողը չի տալիս: Կարապետն ասում է՝ լավ, հիմա կտամ, ձեռքը մտցնում է գրպանը, դատարկ հանում, ասում՝ էս մի մանեթ, նորից կրկնում է, ասում՝ էս էրկու մանեթ ... Դատավորը զայրացած ասում է. «Մեզ ձեռ ե՞ս առնում, էդ ի՞նչ ես անում»: Կարապետն ասում է. «Ինչո՞ւ եմ ձեռ առնում. ինչպես կերել եմ, այնպես էլ վճարում եմ»:



**Մ**իլիցա Սամսոնն ամեն առավոտ աշխատանքի գնալիս նկատում է, թե ինչպես հարևան պատավը պատուհանը բացած դեպի երկինք է նայում ու աղաչում. «Տեր Աստված, խնդրում եմ հաղար մանեթ զարկես»: Մի օր էլ Սամսոնը պատուհանի մոտ կանգնում է, գրպանից փողերը հանում, հաշվում, հինգ հարյուր ռուբլի պատուհանից ներս գցում ու ինքն իրեն ասում. «Մի տեսնամ էս պատավը սրանից հետո՝ ինչ կասի»: Հաջորդ առավոտ պատավը նորից բացում է պատուհանը, երկնքին նայում ու աղաչում. «Տեր Աստված, հինգ հարյուր մանեթ զարկի, ամմա միլիցավը չղարկես, նա կեսը եր ա տնում»:

## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԽՈՐՏԱԿՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՄԱՐՀԻՑ

*Մեր լեզուն մեր կյանքի հայելին է, որոշ իմաստով նույնիսկ պարամոլո-  
յան շտեմարանը. Մեր բնաշխարհը, գյուղերի կենցաղը, սովորույթները, մարդ-  
կային հարաբերությունները, աշխատանքն ու հանգիստը, խոր անյայտի  
իրողություններից սկսած մինչև նոր ժամանակները ամեն-ամեն ինչ իր  
հեղինակ է թողել մեր լեզվի մեջ առանցիկ բառերի, լեզվական արտահայտու-  
թյունների, թե գրույցների չևով. Երբ նույնիսկ ազգագրովի մեր լեռնաշ-  
խարհը, և այդ հողի վրա վերածնվի հայ կյանքը, դա այլևս չի լինի նախկի-  
նը, ոչ էլ նախկինի շարունակությունը. բնակչության մոտ կազմ, մարդկային  
մոտ հարաբերություններ, մոտ ապրելակերպ և ... լեզվական մի մոտ աշխարհ  
կարողովի: Երջանի կործանման հետ խորտակվեց նաև լեզվական մի ու-  
րույն աշխարհ: Որպեսզի շնորհակցվի, անհետ չկորչի դարերով ստեղծված  
լեզվական մշակույթը, հավաքեցինք, խմբավորեցինք, մաս որոշ քննության  
ենթարկեցինք այդ նյութերը. պարզապես չկարողանալով զսպել մեր ոգևո-  
րությունը. Գիտական հիմնական քննությունը թողնում ենք լեզվաբաննե-  
րին, ազգագրագետներին, այլ մասնագետների:*

...Շահումյանցուն կարելի է հեռուից ճանաչել՝ աչքերից, քայլածքից, մի  
հարիկ բառից: Նրա աչքերի մեջ իր գերյալ հայրենիքն է. կբայլի դեպի քեզ,  
բայց մտովի՝ դեպի իր պապեմական հողը. կխոսի, ու ամեն բառի մեջ նրա  
չքնաղ լեռնաշխարհի հմայքը կզգաս: Նրա համար սրբություն է պապեմա-  
կան ավանդույթը, սահմանված կարգը: «Բախան թանգ ա, ամա շնորհքը  
ըրիհինան ա թանգ» (երեխան թանկ է, բայց շնորհքը նրանից է թանկ),  
կասի նա: Նրա համար կյանքից թանկ է պարիվը. «Մարդու հուքին փյուս  
կյա, անումը փյուս չիկյա» (մարդու հոգին դուրս գա, անունը դուրս չգա. «ա-  
նունը դուրս գալը» վաղ համբավ է նշանակում), այսպիսին է շահումյանցու  
հավատամքը: Նրա լեզուն պարկերավոր է իր անմասն լեռնաշխարհի պես:  
Նա չի ասի՝ հողը անցրն է գալիս, կասի. «Պահ-պահ, մի թոռ ա կյալիս,

*նիստրան փոռնես, կպիցրանաս երզնը»*: Երբ մի բան շար ամուր, դիմաց-կուն է լինում, ասում են՝ *էջը մաշի, փանգը՝ վեշ* (փանգը փալանի վրա թելից գործած ունկ, կանթ է, որը սովորաբար շուր է մաշվում): Երբ ուզում են ընդգծել մեկի քաջությունը, ասում են՝ *ծիավերին ծիան վեր կօնի (հեծյալին չիուց կիջեցնի)* կամ՝ *շահին առաջը խանջած իոզ կտանի*: Սուր լեզու ունեցող և ճարպիկ մարդու մասին կասեն՝ *օջը պյունան կիանի կամ՝ օջը պյունան փյուս կօնի (օջը բնից կիանի)*:

Շահումյանցու երախտագիտությունը սահման չունի. եթե ուրիշները լավության առիթով կասեն՝ մինչև մահս չեմ մոռանա, շահումյանցին կասի՝ *վար իրաս մի հողկ խուր էլ փյուս կյա, միասս քիցիլ չեմ* (եթե վրաս մի թիզ հող էլ բուսնի, չեմ մոռանա), այսինքն՝ մահից հետո էլ հավիտյան կհիշի: Կյանքի փորձը խորհմաստ ու պարկերավոր շար խորհուրդների է ծնունդ փվել, որոնք պարզապես կյանքի դասեր են՝ *մոլլան էլ չի օգում դժոխք քինա, ամմա վար վէտերը քակում ես, վազ փալավ ա քինում* (մոլլան էլ չի ուզում դժոխք գնալ, բայց երբ ուրքերը ծեծում ես, վազելով է գնում) կամ՝ *թորքին նիեպ հինգհորոթին ըրա, ամմա փեյրը ծեռար վեր չի քիցես* (թորքի հեպ ընկերություն արա, բայց փայրը (գենք իմաստով) չեռքից չզցես) և այլն:

Մեր խոսվածքին բնորոշ է բարոյական բարձր մկարագիրը. գռեհիկ, վիրավորական, ամոթալի բառերը մեր լեզվի մեջ փոխարինվում են այլ բառերով, երբեմն նույնիսկ թուրքերենով: Կնոջ վերաբերյալ երբեք հող չեն ասում, այլ՝ պարծառավոր: Բնական պերքերի հեպ կապված բառերի փոխարեն ասում են՝ *վէրաց մանասարի, մրիվեպ*: Նույնիսկ եթե դա կապված է երեխայի հեպ, ասում են այլ բառով՝ «*քաշ օնիլ*» (իջեցնել), «*փյուս օնիլ*» (դուրս փանել): Ուշագրավ է, որ նույնիսկ մարմնի մասերը հաճախ թուրքերեն բառով են ասում, անգամ «*ամոթույք*» չեն ասում, այլ թուրքերենով՝ *այիք* (ամոթ): Քոռ չեն ասում, այլ՝ «*աշկը խարաք*»:

Նուրբ հումորով է շաղախված շահումյանցու խոսքը: Երբ մեկը երկար որոնելուց հետո անհաջող ընկերություն է կապարում, ընկերածի մասին ասում են՝ *հզարում հնդրած, ըխպըհարում քիթած* (հազարի մեջ ընկրած, աղբամուսի մեջ գրած): Այս արտահայտությունն, ինչ խոսք, մակ բարի խորհուրդ է պարունակում:

Իսկ ինչքա՞ն շար կան իմաստուն խորհուրդներ: Ասում են՝ *մեծին վար անգում օնես, վեպր քարին նի չի կյալ* (մեծին որ լես, ուրքը քարին չի դիպչի). *ըրա ինչեպի, սրվերի քրզեպի* (արա ինչ համար, սովորիր քեզ համար) և այլն: Որևէ գործ չեռնարկողին խորհուրդ են փալիս՝ *հացը հըցըրարին փու, մի հաց էլ էվել փու*, այսինքն՝ գործը իմացողին պարավիրիր, մի հաց էլ ավել վճարիր:

Շահումյանցու խոսվածքի մեջ պահպանվել են հայոց լեզվի հնագույն շրջանի՝ գրաբարյան շար հեպքեր՝ *ծյուկուն, մոկուն* և այլն, ինչպես որ գրաբարում էր չուկն, մուկն, *գիրավ փալ* (փաթաթել), *գիրավ հնցնել* (տեսակցել, այցելել), *գինքը* (ինքն իրեն) *քափ փալ, հոփ օնել* (փակել), *կհնալ* (հագնել), այս բառից՝ *կեսկը* (հագուստ) և այլն: Միևնույն ժամանակ, հայ կյանքի նուրագույն երևույթների հեպ կապված, ծնվում են նոր բառեր ու արտահայտություններ, նոր իմաստ են չեռք բերում առանցին բառեր: Այսպես, մեր բարբառում կա *մեկլապուռնի* բառ, որը մշանակում է *բարեկիրք, կուլտուրական*: Դա *անունկլապուրա* (լավիներեն՝ *անունների ցուցակ*) բառն է: Խորհրդային իշխանության առաջին տարիներից պաշտոնյաների անունների հափուկ ցանկ, ցուցակ էր սփռվել, որի հիման վրա այդ մարդիկ հագուստ, գործվածք, մթերքներ էին սրանում, մակ պաշտոնյաների տեղաշարժ էր կադրավում այդ ցուցակով: Այդ մարդիկ հասարակության մեջ որոշակի բարձր խավ էին կազմում: 1930-ական թվականներին գործածական դարձավ «*ժաժիրկա*» բառը, որը ուսներեն «*зажиточный*» (*зажитка*) բառն է: Այդպես անվանում էին միջակներին, ունևորներին, որոնք, հափկապես կուլակության վերապումից հետո, նույնպես դիպում էին խորհրդային կարգերի համար անընդունելի խավ: Երևանում օպերային թատրոնի իրաշակերտ շինության հեպ կապված հայրնվեց նոր արտահայտություն. երբ ուզում են ընդգծել որևէ բանի շար գեղեցիկ լինելը, ասում են՝ *հեկց ա օպերա ինի* (ոնց որ օպերա լինի): Իսկ Շահումյանի շրջանի ողբերգական իրադարձություններից հետո ծնվեց մի նոր արտահայտություն, որի բուն իմաստը հասկանալի է թերևս միայն շահումյանցուն՝ *մնացիլ ա*. ոչ մի ուրիշ բառով հմարավոր չէ արտահայտել դրա իմաստը: Այդպես ասում են այն հարյուրավոր խաղաղ բնակիչների մասին, ովքեր բռնի տեղահանության ժամանակ մնացել են հայրենի գյուղերում կամ ճանապարհին՝ անգառներում, սարերում. նրանց ճակատագիրը մնացել է անհայտ, իսկ ողբերգությունը՝ անզնջելի:

Մի առանցին ուշադրության են արժանի մեր գյուղերում պահպանված հին հայկական գեղեցիկ անունները, որոնցից շարերը պարզապես եզակի են: Այդպիսի անուններ են *Մաքաղաթը, Չարդարիկը, Խորիշահը (Խորիշ), Մարնազը* (սարի չափ մագեր ունեցող), *Մամուռը* և այլն: Հարկապես ուշագրավ է Մաքաղաթը, որը վկայում է մեր աշխարհում հին դարերից սկսած կաշվե մաշկաններ գրելու, մագաղաթի սրբության մասին: Պարտահական չէ, որ գրերին նվիրված հուշարձան երկի թե ամբողջ աշխարհում միայն մեզ մոտ կա՝ *Գիր Խուչ*, նվիրված Մեսրոպ Մաշտոցի սուրբ գործին:

Մի քացառիկ անուն էլ պահպանվել է Հին Խրիստոսի չորում, Գյուլիս-

փրան փրանող ճանապարհի մոտ, Մանդուռին աղբյուրի կիսավեր եկեղեցու արչանագրության մեջ: Այնպեղ գրված է, որ եկեղեցին կառուցվել է 1252 թ. և կառուցողներից մեկը եղել է *Օփարը* (*Ասփար*, որ կարդացվում է Օփար, որովհետև մեքսոյան այբուբենի մեջ «օ» փառ չկար): Եզակի անուններից է *Խորիչը* (կար Ներքին Շենում), որը միջնադարից հայտնի *Խորիչահ* անվան կրճատը չևն է:

Այդ կապակցությամբ արժե հիշել, որ հնում հավաքալիք կար, որ եթե երեխային կոչեն թշմամու անունով կամ որևէ նման չևով, սափաճային դուր չի գա այդ երեխան, ուրեմն՝ նա երկար կապրի: Դրա համար էլ վերջին դարերում մերոնք երեխաներին երբեմն թուրքի անունով էին կոչում, մանավանդ այն ընտանիքներում, որտեղ երկար ժամանակ երեխա չէր ծնվում կամ ծնվում ու շուտ մահանում էր: Այդ Օփար անվանումը հեփազայում գործածվել է թարգմանաբար (պարսկերեն)՝ Ղարիբ չևով, բայց մեր լեռնաշխարհում պահպանվել է այդ անվան հին՝ հայկական չևը:

Մեր լեզվի մեջ պահպանվել են հին հայկական բառապաշարից բազմաթիվ նմուշներ, որոնք չկան գրական հայերենում: Այդ հանգամանքը նույնպես վկայում է, որ հայ կյանքը մեր լեռնաշխարհում բազում դարեր շարունակ հարստ էր անխաթար չևով: Այսպեղ կբավարարվենք այդպիսի մի քանի բառերով, իսկ ընթերցողները կարող են մեր բարբառի մեջ որոնել դրանց նման ուրիշ օրինակներ:

**ՊՈՂ**—մեր բարբառով նշանակում է շիկացած ածուխ: Այսպեղից՝ հին հայերենի պողովար, հեփազայի՝ պողպար բառը (այսինքն՝ շիկացած ածուխով սրացված):

**ՑԱԿԱՏ**—(ցախահատ). ցախ կտրելու շար հարմարավետ, յուրափեսակ գործիք, որ միայն մեր կողմերում է փարածված: «Ցախ» և «հատել» բառերից է կազմված:

**ՃՀԱՆ**—մեփաղե բարակ, երկարավուն կեռ (սովորաբար փայտե կոթով) հացը թոնիրից հանելու համար: «Հաց» և «հանել» բառերից է կազմված՝ «հացահան», որ հնչյունափոխվելով դարձել է «ժհան»:

**ՀԱՐԱՔԱՇ**—(եղրակաշ). կոլեկտիվ աշխատանքի չև, որ փարածված է եղել հնում (վարուցանք և այլ աշխատանքներ միասին էին կատարում, սովորաբար միավորելով իրենց լծկանը):

**ԽԵՐԲԵՂՆՀԱՏ**—(խարազանահատ), այսինքն՝ խարազանված, անիծված, խարազանով կտրված, խարազանով վերջացված, կար հրապարակային պարծի այդպիսի չև. ճիպտով (խարազանով) ծեծում էին գյուղամիջում:

**ԱՃԵԼ**—լցնել է նշանակում (ինչպես որ գրաբարում): ՈՒշագրավ է, որ մեր խոսվածքի այս բառն ավելի ճշգրիտ է արտահայտում փվալ իմաստը, քան գրական լեզվի լցնել բառը, այսպես՝ «բաժակի կեսն աժելը» ավելի ճիշտ է, քան «բաժակի կեսը լցնելը» (չէ՞ որ լցնել նշանակում է լիքը դարձնել):

Բ. ՈՒրբարյանը «Արցախի պատմության» (Երևան, 1994, էջ 21–22) մեջ բերում է գրաբարյան բազմաթիվ բառեր, որոնք համարյա անփոփոխ պահպանվել են Ղարաբաղի բարբառում, բայց չկան գրական հայերենի բառապաշարում. նույն այդ բառերը պահպանվել են նաև մեր խոսվածքի մեջ.

ԳՐԱԲԱՐ	ԲԱՐԲԱՐ	ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ
ազի	հյաքի	պոչ
այգուց	էքուծ	վաղը
ակոռ (կայոիք)	կեռիք	ատամ
արմանալ	ըրմանալ	գարմանալ
գիշերալ	քիշերալ	վաղ առավոտյան
երկայն	երզան	երկար
երկոքեան	ըրկուքան	երկուսն էլ
խոնջան	խոնջան	անդրավարտիքի կապ
կոշկոռ	քշկոռ	հանգույց

ՈՒշագրավ է *սնգյալ* բառը, որը մեր խոսվածքի մեջ և՛ ծույլ, և՛ հիվանդ իմաստներն ունի: Այն նույնպես գրաբարյան ծագում ունի, որից էլ՝ գրաբարից հայտնի *անկեխանոց* բառը: Նույնը կարող ենք ասել *վրեր հաղալ* արտահայտության մասին, որը նշանակում է *ցած քափվել (փլվել)* և գրաբարյան ծագում ունի:

Եվ այսպես, Շահումյանի շրջանը հայ հողի բազմադարյան մի բեկորն է, որը շենացվել է հայի քրտինքով, պաշտպանվել է հայի արյունով: Բազում դարեր այդ հողի վրա ապրելով անխառն ու անխաթար կյանքով՝ հայն այդ չքնաղ լեռնաշխարհում անխառն ու անխաթար պահպանել է մայրենի լեզվի անթիվ իրողություններ, ուշագրավ բառեր, արտահայտություններ, ավանդույթներ, սովորույթներ: Այդ ամենն այսօր չար ճակատագրով շաղ են եկել աշխարհով մեկ՝ իրենց հետ միասին աշխարհով մեկ շող փալով մեր նախնիների ապրումների, զգացումների, խոհերի ու գործերի հեփքերը, որպես հոգևոր գանձեր: Մեր պարփոք համարեցինք ուժերի ներածին չափով հավաքել, կորստից փրկել այդ գանձերը՝ ոչ միայն հաշվի առնելով դրանց գի-



տական ու ճանաչողական նշանակությունը, այլև պարտք զգալով մեր ծնողների ու պապերի հանդեպ: Չէ՞ որ նրանց հոգում է ծնվել այդ ամենը, նրանց կյանքի արտապրումն է եղել: Նրանց կյանքի գնով շենացված, պաշտպանված ու մեզ ժառանգություն թողնված հողը կորցնելուց հետո չկորցնենք գոնե հողեր գանչերը: Քանի դեռ կհիշվեն, կպահպանվեն, կսիրվեն դրանք, ուրե՛մն հողը չի մեռել, հոգին ապրում է, սիրտը բարախում է... Դըրանց հետ կապի մեր հողի կարտը, կորստյան ցավը, վերադարձի հույսը և պահանջարկությունը:

### ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ՀՈԳՈՒ ՀԱՅԵԼԻՆ Է

Հեղափոխության օրինակներ կան, որոնք վկայում են մեր ժողովրդի լեզվական-բարոյական վսեմ նկարագրի մասին: Գռեհիկ բազմաթիվ բառեր, ինչպես արդեն ասվել է, մեր խոսվածքի մեջ առօրյայում փոխարինվել են այլ բառերով, օրինակ՝ *ոտաց ճանապարհ* (իսկ ավելի գռեհիկները չենք ուզում հիշեցնել): Մեր լեզվի մեջ կա *հղի* (յղի) բառը, բայց երբ խոսքը կնոջ մասին է, այդ բառի փոխարեն ասում են՝ *պատճառավոր*: Նույնիսկ ամեծքը իմաստային փարբերակում ունի: *Եր հիմքարծվես* ամեծքը սպանիչ չարություն չի արտահայտում, այսպես անիծում են չարաճճի երեխային: Պարծառը թերևս այն է, որ *վեր համբարծվելը իմաստով կապվում է Քրիստոսի համբարծվելու հետ*:

Առավել հեղափոխիչ է լեզվական հեղափոխությունը: Թուրքերեն բազմաթիվ բառեր մեր բարբառում գործածվում են արևմտաարևելյան իմաստով: Եթե մեկի դեմքը արելի է լինում, ասում են *սփաթ* (*սուֆաթ*): Տիան փեսիկ ասում են *շիբի* (թուրքերեն՝ *շնիբի*): Եվ, ընդհակառակը, եթե մեկը գեղեցիկ փեսք է ունենում, ասում են՝ *ոնց որ պատկերք լինի* (*նկարի ունենալով սրբապատկերք*): *Պուլաղ, դիշ* թուրքերեն նշանակում են *ականջ, ատամ*, բայց մեր խոսվածքում *դուլաղ* ասում են միայն *անասունի ականջին, դիշ խոզի արամին*: Կամ *աղլիկ* անել մեր բարբառով նշանակում է *հիմարություն, սխալ, վնասակար բան անել*, իսկ դա թուրքերեն *աղլըրկ* բառից է, որ նշանակում է *խելոքություն*: Մեր բարբառում կա *աղվես* բառը, բայց եթե ուզում են մեկին *խորամանկ* ասել, թուրքերեն ասում են *թուլքի*: *Քաջ, անվախ մարդուն* ասում են՝ *«կյուլու սերտ ա կերել (գայլի սիրտ է կերել)»*, իսկ *շարակեր, ազահ մարդուն դուրդ* են ասում (թուրքերեն՝ *գայլ*): *Մեծ, անշնորհք բերանին* ասում են *չանթա*, որը թուրքերեն *մեծ պայտասկ* է նշանակում:

*Ալուչա*-ն մեր բարբառում *հիվանդ, փչացած (սպիրակավում դարչած), խակ սալորն է*, որն այդպես էլ չի հասունանում: Իսկ թուրքերենում այդ բառով սովորական սալորն է նշվում: Մեր լեզվի մեջ կա *թուխ* (*թխողեն*) բառը, բայց երբ խոսքը *փիած մարդու* մասին է, գործածում են թուրքերեն բառ՝ *«հենց ա տուլաշ ինի»*, *ոնց որ տուլաշ լինի. տուլաշը* թուրքերեն *ազուս* է նշանակում: Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, մեր լեզվում եղած ազուս (ակուս) բառի փոխարեն գործածված է թուրքերենը: Մեր խոսվածքի *շոխաթ* բառը գործածվում է հեզմական չևով. արգել, անշնորհք, անպետք իմաստով, բայց իրականում դա փոխառյալ *շոհրաթ* բառն է, որը նշանակում է գեղեցիկ, հրաշալի: Այս առումով հեղափոխական է մեր խոսվածքի *«եռլական»* բառը: Մեծ եղեռնից հետո մեր գյուղերում ապաստան գրան փամայակ արևմտահայեր, որոնց փեղացիները *«գաղթական»* (*«կախտական»*) էին ասում՝ անգիտակցաբար խոր ցավ ու վիրավորանք պարծառելով այդ մարդկանց: Ցավոք, «գաղթական» ասողներն իրենք էլ նոր ժամանակներում զբրկվեցին հայրենի հողից, ցիրուցան եղան, և նոր միայն զգում են, թե ինչ դաժան պիտակ է դա: Գաղթական բառին ի պատասխան այն ժամանակներում հորինվել է *«եռլական»* բառը՝ փեղացիների կապակցությամբ: Եվ այդ անհաճո բառի արմատը նույնպես թուրքերենից է վերցված:

Այս երևույթի պարծառը թերևս այն է, որ թուրքախոս ցեղերը մեր ժողովրդի կողմից ճանաչվել են որպես հեղափոխական, բռնի ու գռեհիկ բարբեր ունեցող և նրանց լեզվի շարք բառերն էլ մեր բարբառում այդպիսի երանգ են ստացել:

### Ինչո՞ւ ենք այսպես ասում

Մի բան էթե շարք էժան է լինում, ասում ենք՝ *ջրի գին է*: Պարծառն այն է, որ մերոնք հնում բնակավայր հիմնել են բնական ջրի՝ աղբյուրի կամ գետի, լճի մոտ: Ջուրը նրանց համար առար ու չրի է եղել, հեշտ է չեք բերվել: Կա նաև հակառակը՝ *«կրակի գին»*, որ նշանակում է շարք թանկ: Սա էլ գալիս է այն հնագույն ժամանակներից, երբ կրակը դժվար էին ստանում: Տարեցները երևի կհիշեն, թե ինչպես գյուղերում սովորություն կար՝ *քնկուց առաջ կրակն անթեղել*, այսինքն՝ մոխրով ծածկում էին շիկացած ածուխները, առափոքյան բացում, նորից կրակ վառում: Նույնիսկ սովորություն կար, երբեմն նրանք, ովքեր չեն կարողացել առավարկա համար կրակ պահել, վաղ առավոտյան ջարդված կավե ամանի մի կտոր (*սեկեջիկ*) վերցրած, գնում, հարևանից կրակ էին խնդրում՝ մի քանի շիկացած ածուխ:

**Ավադ անի:** «Ավադ» հնում նշանակում էր հողային սեփականություն, կալվածք: Համապարասխանում էր եվրոպական «ֆեոդ»-ին: Որպես կանոն, այդպիսի հողը շատ խնամքով էր մշակվում, բարեկարգ, չեն վիճակում էր լինում: Այդ պարճառով էլ բառը չեռք է բերել նոր իմաստ՝ շեն, բարեկարգ: *Ավադ անի*, նշանակում է *շենացնել, բարեկարգել* (օրինակ՝ վերադառնանք, *ավադ անենք մեր հայրական օջախը, մեր հողը*):

**Փեշկը մրկած:** Կա այդպիսի արվահայություն՝ «*փեշկը մրկած*»: Ինչպե՞ս է ծագել և ի՞նչ է նշանակում այն: Նախ՝ մրկել բառը չկա գրական հայերենում, «մրկել» նշանակում է մի քիչ վառվելը, ոչ թե վառվելը, այլ կրակի եկաքը մի քիչ երևալը:

Հնում սովորություն կար, որ փրոնդեզի ժամանակ կրակի վրայով ցատկում էին այն հարսները, ովքեր երեխա չէին ունենում: Եթե ցատկելու ժամանակ փոխալ հարսի փեշը մրկում էր, ասում էին, որ նա երեխա կունենա: Երբ մերոնք ասում են «*փեշկը մրկած ա*», դրանով ուզում են հասկացնել, որ «*նրանում մի բան կա*»: Այդպես ասում են հատկապես այն դեպքում, երբ մեկի մասին հանիրավի բացասական կարծիք է լինում:

**Առած-ասացվածքներ, ոճեր, դարձվածքներ**

- Կլխիտ հենց օյին կիտինեմ, շոնը ծեռատ հաց չի եր օնիլ, այսինքն՝ *հավադարիմներն էլ երևս կթեքեն քեզնից*:
- Գեցց այյան կանեմ, վար գիդաս եղը մածնան ա (կամ՝ *թամը մածնան ա*), այսինքն՝ *կեասկանաս պարզ ճշմարտությունը*:
- Գացը թոռնան չի կենում, այսինքն՝ *ինչ գործ բոնում է, չի հաջողվում*:
- Կետին նստած ալիր ա մաղում, այսինքն՝ *աշխատանքը, շարշարանքը իզուր է անցնում, արածի արդյունքը չի վայելում, անիմաստ գործ է անում*:
- Պըլիին (խենթի) աղունը աստված ա աղում, այսինքն՝ *անհասկացող կամ ծույլ մարդու գործը ինքնիրեն է սպալվում*:
- Ծյուկունը ծովունը սովդա չեն անիլ, այսինքն՝ *գործը դեռ չսկսած՝ հաշվարկներ չեն անի*:
- Ծառան ծռատակ հեշտ ա ըրեվում (գործը հեռուից հեշտ է երեւում):
- Աշխարքս մորես կերել ա՞: *Մորեխների «արշավանքից» հեքո սովորարար անդերություն, սով ու ամայություն է լինում*:

- Բոչը շոռ եկավ (շրջվեց), կաղը-կուղը առաջն ինգան: *Այդպես ասվում է անարժան մարդկանց առաջ քաշվելու կապակցությամբ*:
- Խաշիլն ասեց՝ տակս վեկի ա, շիրեփն ասեց՝ պա ես վրդեղա՞ եմ կյալիս, *խաշիլը (ճաշ) ասաց՝ տակս ոսկի է, շերեփն ասաց՝ բա ես որտեղի՞ց եմ գալիս*:
- Մի վտմանի, այսինքն՝ *շատ միամիտ*:
- Օգողն ուզողան, այուրթը կիզողան, այսինքն՝ *բուրդը գզողից կուպեն*:
- Գափոունը աղ չկա, այսինքն՝ *արած լավությունը չի մկարվում, չի գնահատվում*:
- Երի արտի ցորենն ա, այսինքն՝ *իբր շատ ընտիր ու կարևոր է, գործածվում է հեզնական չևով*:
- Կլխունը գյալաջախ կա, այսինքն՝ *իրեն այնպես է պահում, որ մի վադ բամ պարահերու է, փորձանքի մեջ է ընկնելու*:
- Պանը պանան հնցել ա, բանը բանից անցել է, այսինքն՝ *արդեն ուշ է*:
- Ցեխու նման յիրա տված, շատ բերք վերցրած:
- Ճըղնըկոտոր ինիլ, *ճյուղակոտոր լինել շատ բերքից*:
- Էշը ըխաղհարունը թավիլ ա տալիս, այդպես ասում են *շատ հեռու բարեկամի կապակցությամբ*:
- Պըռուշը ճաքիլ, կարոտ լինել, նաև՝ *փախենալ*:
- Բոյը դարդու (եղեգնի ծող) չափել, *դիակի բոյը* (հասակը, երկարությունը) *այդպես էին չափում պատան կարելու կամ դագաղ պարարաստելու համար* (անեծք):
- Թեգունըր ոեշնի, *թիկունքը բորբոսնի*, այսինքն՝ *մեռնի*:
- Գընգըրծակա կյալ, *հանկարծակիի գալ, մեռնել, հավանաբար ինֆարկտի հեք է կտպվում*:
- Կիլոխ պիրել, *արիամարիական չևով շատ մեծ վաստակ ունենալ*: Ինչպես հայտնի է, հնում պատերազմի ժամանակ հաղթելով, թշնամու գլուխը կտրում, բերում էին, հանչնում թագավորին (կամ այլ իշխանավորի): Պա մեծագույն ծառայության նշան էր: Թշնամու գլուխը բերողը արտոնյալ էր լինում, մեծ հարգանք էր վայելում, հենց այդպիսից էլ մնացել է «*կիլոխ պիրել*» արտահայությունը, որը նրանակում է նաև՝ *գործը հաջողացնել*:
- Ծոնն էլ բու թայը չի ինիլ, հեզնական չևով՝ *շատ լավ վիճակում լինել*:
- Տըկըտիյեր անել, հայեռյել՝ *հիշելով վարից վեր բուրբին*:
- Մըլըբըբըթին անել, անշնորիք խոսել՝ *հիշելով նաև համարցյալներին*:
- Աշկը տեսած, *կյանքից դառը դաս սրալսած*:

- Այլ ճրգագատավ քիչանձ, այսինքն՝ լրիվ իրար նման, նույն բնավորությամբ (իրար հետ լծված եզները, գոմեշները, հասկանալի է, նույն ճիւղփոսով էին բշուծ):
- Կու (քու) հոր կըլխին կիմի ածեմ, կաբուկով է ասվում. ակնարկվում է հանգույցալի շիրիմի վրա գիմի լցնելը:
- Հնքին տնրուր տալ, ծանոթության նշան փոխ՝ շան նման, որը ծանոթի հանդիպելիս պոչն ուրախությամբ շարժում է:
- Հնքին ծալած (անհոգ վիճակ՝ շան նման):
- Սելու նման կյալիս ա (շափ առափ, անչրեանման թափվել):
- Էշը մաշի, տանգը՝ վեչ (շափ դիմացկուն):
- Լոկու նման մըեկնըված (անգործ ու անշնորհք պատկած):
- Սելին պիրածը սելը կը տանի:
- Տանել են կըթնըկորեկ (դարչել են շափ սիրով, համերաշխ):
- Երգնքի դուշերը լոխ իմն են, ամա վեչ ծոն են տեսնում, վեչ ճոտերը (երկնքի թռչունները բոլորն իմն են, բայց ոչ չուն են փեսնում, ոչ ճփերը, այսինքն՝ ոչ մի օգուտ չունեն):
- Կիլոխը եղոտ անիլ (հեզանական չեով՝ լավություն անել):
- Քարավ մըհակ կըտրիլ (մեծ դժվարությամբ գործը գլուխ բերել):
- Աովահը փախճիլ (շափ գարմանալ):
- Թուքը ցըմաթիլ (գարմանքից, վախից թուքը ցամաքել):
- Եր թըռած (ինքն իր լավ վիճակից գարմացած):
- Փորը հացուտ ա իլել (ապրուսփոր մի քիչ լավացել է):
- Կատու, աղանձ կեր (շափ գարմանալի բան, երբ մեկն անարժան չեով մի լավ բանի փեր է դառնում):
- Կատուն մտավ շալվարը (վախեցավ):
- Մըսըմորթի փոնել (սկսել շաղանալ): Կա նաև հակառակը՝ մըսըմորթի չի բռնում, այսինքն՝ չի կազդուրվում, շափ նիհար է:
- Չաննան կոտրած (չանչրալի, դանդաղ խոսող):
- Շոնը ըսպընողին են քաշ տալ տալիս (գործն սկսողն էլ պիտի ավարտի):
- Շանը տեղը հաչալ (մեծ դժվարություն կրել):
- Շանը քթան ճյուր խմիլ (շափ ծանր աշխատանք կատարել, դժվար ապրել):
- Շները կապես, նիրան պնց թողես (այսպես ասում են նրա մասին, ում պատիվը ոգնահարվում է և նա զայրացած սկսում է կռվել):

- Շները քոլոլ կըցան ուզողին պանն օնգատն ինգնով (շները կռվեցին իրար հետ, մտրացկանը շահել):
- Շոնը հաչի, քամին տանի (անհետևանք խոսք, գործ):
- Շոնը կըղըկի տալավ ստակիլ չի (շունը կաղալով չի ասպկի):
- Շանը նետ (թորքին նընետ) հինգիրթին ըրա, փըետը, ծըետատ վըեր մի քիցիլ (զգուշության մասին):
- Աջալը ծարավ ա (մահը ծարավի է). (այդպես ասում են մեկին, ով շափ վրանգատոր բան է կատարում):
- Տոնը քարած պահիլ (անընդհատ դիմել նույն հարցով):
- Խըռկը տարած (հիվանդության բաժին դարչած):
- Օձը պնւնան կըհանի (հայրնի է, որ օչը չէր կարող ետ-ետ դուրս գալ բնից, այդպես ասում են շափ սուր լեզու ունեցող, շափ ճարպիկ մարդուն):
- Օձին թըթի՝ կըստակի (շափ, ծանր բնավորություն ունի):
- Ողխան չոր (քշակեր):
- Երկու վոնանին աստված չի իմիլ (մարդ արարածի՝ անխիղճ լինելու մասին):
- Էիտ անել (ուխտ անել, երդվել կատարելու մի շափ կարևոր բան):
- Տելը տալ (գառանցել):
- Սթիին դոնն ինգանձ (մարքերի մեջ խորասուզված):
- Մի ծերը ծովունն էլ չի լվացվիլ (այսինքն՝ մենակ չեորը չի լվացվի):
- Ծերը ծերը ա լվանում, երկու ծերը իրես (չեորը չեոր է լվանում, երկու չեորը երես):
- Շիրմիշեղը փթաթվող, պիցրանող ա, ամա ինքը ուրունավը կարալ չի պիցրանա (շիրմիշեղ բույսը փաթաթվող, բարչրացող է, բայց ինքն իրենով չի կարող փաթաթվել, բարչրանալ, այսինքն՝ նույնիսկ ամենակարող մարդուն աջակցող, հենարան է պեղը):
- Աման խորնազ օտվում չի, աման խոսկ ասվում չի (ամեն ճաշ ուրել չի լինում, ամեն խոսք ասել չի լինում):
- Քարը քարին կըերավ (ակնարկվում է շափ քաղցած լինելը, երբ ջրադայի քարերի արանքը թափվող հացահատիկը վերջանում է, քարերն իրար վրա «դարարկ» պարվում են, քարերը մաշվում են, հարկավոր է լինում կամ ջուրը կտրել, կամ հացահատիկ լցնել):
- Կողերա մոկոն եկավ (Կողերը շոքանի հին գյուղատեղերից է, այսպես



ասում են, երբ մի լավ բան ուրելու ժամանակ հեռվից անսպասելի (նաև անցանկալի) մեկը գալիս է):

- Տիրել և քաղում (այսինքն՝ գրույցից որոշ բան հասկանում է, այդպես արտահայտվում են այլազգի մարդու մասին), իսկ շարք բան հասկանալու դեպքում ասում են Տիրել չի քաղում է, մատը-մատն ա անում (ճողը-ճողը):
- Տորեն հացը քացի տվող ա ինում (երբ մարդու ապրուստը միանգամից լավանում է, անճերելի սխալներ է սկսում թույլ տալ, դեռ լիարժեք չի գնահատում իր նոր վիճակը):
- Չափարը ճմբռել (ընդունված կարգը խախտել, սահմանն անցնել):
- Պյուլերը (խմորի գնդերը) կոխ տալ (անճերելի սխալ թույլ տալ, սրբապղծություն անել):
- Ծնվողնը տիղնոց չկա (ծվում դեղնուց չկա) չափ ու սահմանն անցել է (արածն արդյունք չի տալիս): Այդպիսի մարդու վրա չի կարելի հենվել, նրան չի կարելի վստահել:
- Հավիտումը աղ չկա (թռի մեջ աղ չկա) այսինքն՝ արածը չի գնահատվում:
- Բողը քաշել (ինչ-որ մեկի ամուսնը շոշափել, մեկի հասցեին խոսել նրա բացակայությամբ):
- Կլխիս թնթնունը տուրուր եկավ (նշանակում է՝ մի անսպասելի բանից վրդովվել (երևի ակնարկվում է, որ ուղեղի բոլոր ծալքերում արչագանք գտավ. ծխախոտի՝ թութունի փերենները խնամքով ծալվված են պահվում):
- Տիրմանին տակավը ճնր կապող (դարմանի հարդի փակով ջուր փանող, այսինքն՝ գաղտնի վար գործեր անող):
- Տարմանը տղղրհան անել (դարմանը շարժել, այսինքն՝ քողարկված բանը բացահայտել):
- Երկու վետավ մի հորում, այսինքն՝ շար դժվարին, անելանելի վիճակի մեջ լինել:
- Ես խմորը շատ ճնր կտանի (այսինքն՝ գործը դեռ շար կբարդանա):
- Կյուլը եկավ՝ վա՛յ միճատեր (գայլը եկավ՝ վա՛յ մի հա՛փ ունեցողի տիրոջը, այսինքն՝ տուժում է քիչ ունեցողը):
- Էշը նստիլը մի՛ այիբ ա, վեր կյալը՝ Երկու, այսինքն՝ սկսած գործը կիսատ թողնելն ամոթ է:
- Կենդ ճղոպրին քար չի անիլ (մի հարիկ ընկույզի վրա քար չի նետի, ասում են իր շահը շար լավ խմայող մարդու մասին):

- Ըկռավին խնամին քչեղակը կինի (ագռավի խնամին կաշաղակը կլինի):
- Ըղվեսին վկան իւրան հյաքին ա (աղվեսի վկան իր պոչն է):
- Կնլիւ (շան) փայ տյառած (գայլի (շան) բաժին դարչած):
- Դուղուրմիշ իլած (կատաղած):
- Տափը թուճը ըրած, այսինքն՝ մեռած:
- Վըտնըկուտրին հըղին, այսինքն՝ շար դժվար գնալու փեղ, դժվար ճանապարհ (ուղի):
- Օղտին ունգուճումը քոն իլած (ուղտի ականջում քնած, այսինքն՝ շուրջը կատարվող բաներին անփեղյակ):
- Դունջուր-դունջուր անել (մեծ դժվարությամբ, սրան-նրան խնդրելով, մի կերպ կատարել գործը):
- Կըսըմնսնիլ տաննած (բերքի, արդյունքի, վաստակի մի մասի փշանալը, բերքը չհասունացած քաղելը և այլն):
- Եոն ա խոզում (շուն է խուզում), այսինքն՝ նեղության, սուղ պայմանների մեջ է: Ամեն դժվար, ծանր գործ անում է:
- Ծյուկութ անել (աչքի պոչով, դրան արանքով, թաքում, թեթևակի նայել):
- Էշը էշ ա, մի հետ ա ցեխումը մնում, այսինքն՝ մույն սխալը չի կարելի կրկնել երկու անգամ):
- Թոռնեսքինումի ա («ո՞ր ես գնում» բառերից, նշանակում է՝ մի քիչ խելքը պակաս):
- Հացը թոռնան չի կենում (հացը թոռնից չի կպչում), այսինքն՝ ինչ գործ չենոարկում է, չի սրացվում:
- Վեստանը վեր թողած ա, նշանակում է՝ շար է զբաղված. ասվում է հեգնանքով:
- Մինը կտրում ա, մինը հինում, այսինքն՝ շար է զբաղված, մի գործն ավարտել, մյուսն է սկսում:
- Հացին թաց անել, այսինքն՝ ցանկացած ուրելիք չեռք բերել, միայն թե հացը ցամաք չուրեն:
- Բարծը փոխել, նշանակում է դավաճանել ամուսնուն (կնոջը):
- Եիրին իրեսն անել, այսինքն՝ պարզել, պարզառը բացահայտել:
- Կրակին իրա եղ (ծեթ, նոթ) ածել, նշանակում է կոփվել, թշնամանքը քորքորել, սրել:
- Մի փոր հացը մի օր հացա կիքիցի, այսինքն՝ առօրյա մի փորքիկ շահը կարող է հեղազա մեծ օգուտից զրկել:

- Հավը տանը կըննա, կոտը օտի (*հավը փանը պիտի մնա, որ իր բաժին կուտն ուտի*), այսինքն՝ անհրաժեշտ պահին պեք է գործվել անհրաժեշտ փեղում:
- Կարճ կյարի ա հինձել, այսինքն՝ *շար ծանր գործ է կարարել (գարու արար նոսր է լինում, դժվար է հնչվում, առավել ևս կարճը)*, ասվում է հեզնական իմաստով:
- Մեսը վեր թափել, նշանակում է *շար ամաշել, անհարմար զգալ*:
- Խտորու ինգնել, պառկել:
- Հյաքին խտորը տինել (*կենդանու մասին*), նշանակում է *սափկել*:
- Ղադրաղացի տնկել (*մեկի համար*), նշանակում է *վաստակը գնահատել* (որևէ մեկի), ասվում է կարակով:
- Վետան մի շուն կապես, մինչև րյուզունը կստակի (*ուրքից մի շուն կապես, մինչև երեկո կստակի*), այսինքն՝ շար է վազվզում, չարչարվում, առավուրից երեկո:
- Փափախը ցրել տալ (*ուրախության արտահայտություն՝ փղա ունենալու առիթով*):
- Պոզը վեր ա ինգել, նշանակում է *ամուսնացել է*: Իսկ երբ առաջին երեխան է ծնվում, հոր մասին ասում են՝ երկրորդ պոզն էլ վեր ինգավ:

## Հավաքալի՞ք, խրա՞փ, թե՞ ...

### Ասում են...

- Ով ուտի կաթսայի ճաշի տակին վառած մասը *կառ* կաթսայի տակը քերի, ուտի, նրա հարսանիքին ծյուն կգա:
- Րուզինը կռանալ չեն, իխպիրան ճուր խմեն, տոռը կտա (իրիկնաժամին չեն կռանա աղբյուրի վրա, ջուր խմեն, «փոռ կփոս», «փոռ փալը» մոփավորապես կաթվածի, ուղեղի ցնցման իմաստ է արտահայտում):
- Ծաշը լոխ կոտեն, ամանը թյունզուցնեն, վար նշանածը սյուրուն ինի:
- Թոնրի հացի վառած մասը կամ վառարանի վրա տաքացնելու ժամանակ վառված կտորը ուտողը գայլից չի վախենա:
- Կոքը իմբարին (թրթուր) ով նայի, ատամները կթափվեն:
- Մեծին խոսկը կտրիլ չեն, փիս կինի (մեծի խոսքը չեն կտրի, կեսից չեն ընդհատի, վախ բան կլինի):

- Փահլևանի (լարախաղացի) լարի տակով անցնող անգավակ հարսը երեխա կունենա:
- Եթե ցանողից (տիրոջից) բացի մեկ ուրիշը վարունգի թաղից վարունգ պուկի կամ թաղին ձեռք տա, վարունգները կդառնանան:
- Մութ ժամանակ տնից տուն գնալու, դռներով անցնելու ժամանակ գրկի երեխայի բռի մեջ ածուխի կամ վառած հացի կտոր էին դնում՝ չար դիպվածից խուսափելու համար:
- Հավ (կամ այլ ընտանի թռչուն) մորթելուց հետո նույն դանակով շուրջը գետնին շրջան են գծում, որպեսզի շատ չթայտա:
- Հեռու տեղ ճանապարհելու ժամանակ գնացողի հետևից մի բաժակ ջուր են չարտում, որպեսզի ճանապարհին անփորձանք լինի (*ջրի նման գնա*):
- Բեյվնդա տոնը սիրփիլ չեն, ախպը տեն չեն ածիլ (*ուշ ժամին փունը չեն ավլի, աղբը չեն թափի*):
- Երբ մեկից կաթ կամ մածուն են տանում կամ ստանում, ամանը դատարկ չեն վերադարձնի, կթանը կաթից կկտրվի:
- Փռած լվացքի պարանի տակով չեն անցնի:
- Երեկոյան սխտոր չեն ուտի:
- Օճառը և սխտորը որևէ մեկին տալու ժամանակ ձեռքին չպիտի դնել:
- Երբ մածոն մերան են ուզում մեկից, այդ նույն ամանի մեջ մի քիչ աղ պիտի տանել ամանը վերադարձնելիս:
- Թթմորի ամանը դատարկ չեն վերադարձնի:
- Երեխայի լվացած շորերը գիշերը դրսում փռած չեն թողնի:
- Քիշերը հինգիստիրանավը անց չեն կենալ (*գիշերը գերեզմանույով չեն անցնի*):
- Շենքում չեն կանգնի:
- Կիրակնամուտին կարկատան չեն անի:
- Մութն ընկնելու ժամանակ (ժմժանքավը) երեխա չեն լողացնի:
- Լողացնելիս երեխային չեն ծեծի:
- Մութն ընկնելու հետ (վար ժմժանքում ա...) խերն ու շառը բաժանվում են:
- Տնից դուրս գնացողի հետևից չեն լացի:
- Թաղման թափորի առջևից չեն անցնի:
- Դանակը բացած վիճակով չեն տա ուրիշի:
- Ուտելու ժամանակ չեն ծիծաղի:

- ◆ Տանը չեն շվշվացնի:
- ◆ Ուրիշի հացի պատառը չեն ուտի (աշկին փիս կթվա):
- ◆ Իրզյունվա կերածը կորած ա, այսինքն՝ ուշ ժամին, գիշերը չսփարի ուփեղ:
- ◆ Իրիսվա (առանց լվացվելու) հաց չեն օտիլ (կամ՝ հացին չեռ չեն փա):
- ◆ Ստուլին կշտին մազ չեն սանդղիլ (սեղանի մոտ մազ չեն պանրի):
- ◆ Հացը տափին վեր չեն քիցիլ (հացը գեպնին չեն գցի): Հնում սովորություն կար, երբ հացը մեկի շեռքից ընկնում էր, պիտի վերցնել, թափ փար կամ փչեր, մաքրել, համրուրել, կպցնել ճակատին, հետո շարունակել ուրեղ կամ դներ ամերածեղ փեղը:
- ◆ Տղամարդը թոռնին կոշտը չի կյալ, թա չէ հացը թոռնան չի կենալ, այսինքն՝ հաց թխելիս փղամարդը չպետք է թոռնին մոտենա, թե չէ հացը թոռնից չի կայչի: Պարճառը, կարծում ենք, այն է, որ փղամարդը, ներկա զուգընթացով, կարող է իր դիփողություններով խանգարել, լարվածություն ստեղծել, հացը կտենի կդառնա:

## ՀԱՐԱԶԱՏ, ԱՆՄՈՒԱՅ ԲԱՌԵՐ

Ունենք բարբառային բառեր, որոնք անջնջելի հուշեր են արթնացնում: Երբ *ծրկրտոր* ենք ասում, մեր հայալեզու առջև պարկերանում են հայրական փնամերչի բանջարանոցը, վարունգի մարգերը, առաջին բերքը. *ծրկրտորը* շուկայից չես գնի, դա մի ուրիշ բան է: *Կուկար* ասելիս հիշում ենք հայրենի գյուղի ճամփաները ցեխ ծամամակ, երբ փնից փուն գնալիս հաճախ մարդիկ շարվում էին իրար հեղուկից՝ քայլելով, երբեմն էլ ցարկուրելով *կուկար* փեղերով: Իսկ *փումփո՞ւխը*: Ի՞նչ հաճույքով ու խնամքով էին պարասարում, գարդարում փումփուխը. ընփիր մրգերով, մախշած չվերով, կոնֆեթներով, ամենավերևում՝ փառահեղ «նսրած» հավ, կփուցին էլ՝ սիգարետ (ծխախոտի գլանակ): Հարսամիքների ճոխությունը փումփուխների քամակով էր որոշվում: Բարեկամներն ու հարևանները բոլորն էլ աշխարհում էին մեկը մյուսից լավ փումփուխ փամել որպես նվեր, իսկ ճանապարհին չարածճի պատանիները փորչում էին փումփուխ թոցնել կամ վրայի հավը, գոնե մի խնչոր...

Այդ բառերի մի մասը համդիսում է նաև այլ բարբառներում, որոշ փարբերակներով: Մեր նպատակը չէ որոնել, գրանել եզակի, միայն մեր բարբառին բնորոշ բառեր: Հաճախ ամենափարածված ու գործածական բառերն էլ մեր լեզվի մեջ անկրկնելի երանգ են ունենում՝ արդարացուցելով մեր լեռնաշխարհի կենցաղի, բարբերի, սովորությունների անկրկնելի կողմերը, որոնց հետ վերստին արթնանում են անցած օրերի հուշերը, բորբոքվում է հողի կարոտը:

Այսպեղ բերվում է բառերի մի փոքրիկ շարան, բայց համոզված ենք, որ ընթերցողներն իրենց կողմից անվերջ կհիշեն ու կավելացնեն այլևայլ բառեր, կհամարեն այս ցուցակը:



**Արուտ** — պատիվ, պարկեշտություն:

**Ազդուն (կտրել, դառնալ)** — կատաղած (կատաղել):

**Ակը** — սնիվ:

**Ակնը** — ակունք:

**Այիբ** — քերութիւն, ամոր (նաև՝ ամորոյք):

**Ալավ** — բոց, կրակի լեզվակ:

**Ալուշա** — վնասված, հիվանդ ու խակ սալոր:

**Ամագ** — վաստակ:

**Անգուճ** — ականջ:

**Անթա** — անշնորհք ձևով խոշոր, մեծ:

**Աշ օգել** — կաշին մշակել:

**Աշան** — կալսելուց առաջ կայի մեջ ցաքուցրիվ արած հասկեր:

**Աշկար** — բացահայտ, բացեհրաց:

**Աջալ** — մահ, վերջ, վախճան:

**Աջըղու** — ի հեծուկս:

**Առնդել** — խակ (քրո) միրզ շատ ոտերուց հետո աստամների ցավկլլ հաջորդ, այլ բան ոտերու ժամանակ:

**Առվահ** — զարմանք:

**Առվահը փախչել** — շատ զարմանալ:

**Ավադ** — շեն, բարեկարգ:

**Ա՛վնգ** — փոխարեն:

**Արշին** — երկարության չափի հին միավոր (մուտ 71 սմ):

**Բանդա (տալ)** — գոհ (եյ):

**Բանձի** — որոշ:

**Բանգիրո՛ւղին** — բարետես:

**Բաղրիյար** (անել) — դադարգյուն (անել), տարագիր (դարձնել):

**Բանդուշ** — 1. գիշերահալ, բու, 2. շատ ու տհաճ բարձրաձայն խոսող, 3. հոռետես, վատատես, շարագուշակ, 4. շատ լազող (երեխա):

**Բանդ (ինիլ)** 1. կցան (լինել), սկսել, 2. բակ (բանդ ու բարան ծածկել՝ անցնելու տեղերը, երբեր փակել):

**Բասաբաս** — իրար հետևից, անընդմեջ:

**Բարան** (արսկ. դուռ) — չափարի (տես) ոտնակոխ արված, անցուղի դարձած մասը:

**Բանփա** — ձեռքով արտյ հնձելու ժամանակ 15–20 շանգր (տես) միացնում էին կամով (տես), դարձնում մեկ խորձ՝ բանփա:

**Բի՛զլիկ** — սրածայր:

**Բողումխե՛խտի** (ինիլ) — նաև՝ բողմիշ, վշտերից, հոգսերից խեղդվել:

**Բուս** — հետք:

**Բուս (մտնել)** — մրցակցել:

**Բուսը պահել** — հետևել (հետապնդել իմաստով)՝ սպասելով հարմար պահի:

**Գիլե՛ջա** — գրույց:

**Գիրգիրո՛ւզուն** — շարար օրվա կրեկոն:

**Գիրգյանուտ** (կիրակնամուտ) — շարար օրը:

**Գիրգյանուտ անել** — լողանալ, հագուստը փոխելով հանդերձ, ոլր սովորաբար կատարվում էր շարար օրը:

**Գյալաջախ** — գալիք, կատարվելիք բան, սովորաբար՝ բացասական իմաստով, իսկ ուղիղ իմաստով՝ եկող տարի:

**Գյառ** — գոռոզ, ինքնահավան:

**Գյունան** — 1. հույս (գյունունատեղ՝ հույսի տեղ), 2. բացի (առաջինանը գյունան՝ առաջինից բացի):

**Դամար** — երակ:

**Դամյա՛** — անջրդի հող:

**Դանա** — մեծացած հորթ (1 տարեկանից մեծ):

**Դանգանա՛ր** (անել) — գոյս ցավացնել, դատարկախոսել, շատ խոսել:

**Դարթու տալ** — կտրուկ ձգել, քաշել:

**Դըմըզլե՛ղ** — ցեղ:

**Դըմըզլըղանու** — տեսակը պահելու համար կենդանի:

**Դըռըղլ՛լանկ** — խորոյորբորոյ:

**Դըռըղե՛ս** — սաղապանի պատանի օգնական (դեռահաս):

**Դըռի-դըռի** (անել, հըղըցընել) -- շատ անհանգստություն պատճառել, չարչարել:

**Դըռլի՛գ** -- բանջարատնոց, բանջարեղեն ցանած տարածք (ըրրիզատել):

**Դո՛լ** --- խոզի բուն. **երի դո՛լ** -- նստելու բարձրադիր. պատվախոր տեղ՝ որոշ հեզմանկան իմաստով:

**Դոն** -- իմաստը մեզ պարզ չէ. գործածվում է միայն մեկ արտահայտության մեջ՝ «մաքի դոնն ընկնեկ». այսինքն՝ խորասուզվել մարերի մեջ (դժվարանում ենք կապ տեսնել դոնգուզող բառի հետ):

**Դո՛նգի** -- հիմար. շատ հիմարին երբեմն դոնգի-դրոնգի են ասում:

**Դոնգուզլո՛ղ** -- ջրաղացի այն մասը, որտեղից ջուրը բախվում է պատու-անիվի վրա:

**Եթիմ** -- որբ:

**Եսիր** -- գերի:

**Երիմիշ** (անել) -- գործը գլուխ բերել, տեղ հասցնել:

**Զախկլթոն** -- տես գանհիր (նույն իմաստն ունի):

**Զանիր** -- բույն, անեծք:

**Զանբ** -- այրավուշի (ջրաղացի):

**Զանիրմա՛ր** -- ցավ (հանդիսանություն, բրու խոսք, անեծք), բունավոր խոսք (բույն և օձ բառերից (պրսկ.)):

**Զանդար** -- շեկ, բաց դեղնավուն (մազեր, դեմք):

**Զարկը** -- փիկնգի խաղի ժամանակ հարվածելու ամենահարմար և ուժգին ձևը:

**Զարկը ինգամ** -- գործերը հեշտացան, հեշտ մասը եկավ:

**Զիհար** -- տես գանհիր (նույն իմաստն ունի):

**Զինանան** -- շատ զգայուն, բույլ ու դյուրագրգայ:

**Զո՛ւզակ** -- ցողունի, ճյուղի ներսի փուչ մասը:

**Զո՛ւմբրուխ** -- բունցք:

**Զոխ** -- մատղաշ բույսի՝ արտաքին շերտից մաքրված ցողուն:

**Էտիբա՛ր** -- վստահություն:

**Էտիբա՛րավ** -- վստահելի:

**Ըոզան** -- սողնակ, դասն փական (նաև՝ իոզան):

**Ըխպըհար** -- աղբանոց:

**Թանբուբ** -- դագաղ:

**Թալա** -- բացատ:

**Թաղ** -- 1. բնակավայրի մաս, 2. կամար (թաղ տված՝ կամարակալ), 3. բույսի տունկ:

**Թանյիա** -- կողմնակիցների, տոհմակիցների խումբ (բացասական իմաստով):

**Թանո** -- 1. երաժշտական գործիք, 2. մուգ կապույտ:

**Թանոանչ** (քաշել) -- հառաչել):

**Թանփճակ** -- բահի կոթին ուղղահայաց ամրացված փայտ (նաև՝ երկաթ), որին ոտքով սեղմելով՝ բահը ուժգին խրում են հողի մեջ:

**Թափուրղա** -- լրիվ դատարկված, ունեզուրկ:

**Թեժ** -- 1. բարկ կրակ, 2. օղի թորելու ժամանակ՝ «երկրորդ քաշը», երբ ծո՛ւլը (տեսն) լցնում են կաթսայի մեջ, սկսում թորել, ինչպես նաև այդ թորելուց ստացված թունդ սպիրտը:

**Թեժը կալիս ա** -- սկսում է թունդ սպիրտը գալ:

**Թըղ** -- հացահատիկի մեծ կույտ (կալում):

**Թեշտ** -- լայն, ոչ խոր տաշտ (սովորաբար՝ դոշաբ եփելու համար):

**Թե՛փուկ** -- խաղողի հատիկի կեղևը:

**Թեփուկ անել** -- խաղող ուտելու ժամանակ հատիկների կեղևը լեզվով դուրս նետել:

**Թեփոին տալ** -- 1. ուժգին ցնցումներ ունենալ, ցավ զգալ, 2. շատ ցանկանալ որևէ բան:

**Թըղըմանակ** -- թերմածք:

**Թըղըլհա՛ կ(ել)** -- անտեր-անտիրական, անտեսված, արհամարիված, պատվից զրկված, ողորմելի դարձած մարդ:

**Թըղըխո՛րո** -- մոխիրի մեջ կիսով չափ խորոված ձու (նաև՝ ջրի մեջ կիսով չափ եփած, ոչ պիկո), կա նաև թերխաշ:

**Թութուզի** -- բքի չիր:

**Թուլուկանի**—մանկական խաղ. դեմ-դիմաց նստում են երկու երեխա. ոտքերը մեկնած, փոքրիկ գնդակը մեկը դեպի մյուսը գլորում:  
**Թուռըթափի**—բեթև ծածկ դաշտում կամ այգում՝ անձրևից ու արևից պատսպարվելու համար:  
**Թուշ**—մոտ, կողմ, ուղղություն (մեր բխճին թուշումը՝ մեր այգու կողմերում):  
**Թուշ անել**—նշան բռնել:  
**Թուշին**—դիպուկ:  
**Թուռնուխանի**—բռնրի շեղջը, կրակը խառնելու գործիք:  
**Ժախող**—խիտ, փարթամ մոյախոտեր (ժախոտ):  
**Ժըմահաց**—հոգեհաց:  
**Ժմաժանք**—մնթաղ, իրիկնադեմ:  
**Ժուռ**—խակ միրգ:  
**Ի՛նզլիզ**—շատ սուր (Անզլիայից ներմուծված գործիքների բարձր որակից):  
**Իշատանձ**—խոշոր, բայց ոչ այնքան համեղ տանձ:  
**Իշխտե՛մբուլ**—խոշոր, կոյր դամբուլ, սալոր:  
**Իշխանանչ**—թունավոր խոշոր որդ (բոյ-բոյ):  
**Իրե՛քնակ**—արեգակ:  
**Իրիսկըհատ**—դիմագծեր, դեմքի ընդհանուր տեսքը:  
**Լախտի**—գոտիներով խաղ:  
**Լահ անել**—արագացնել:  
**Լահ անել, լաչունահ**—դիտավորյալ, ինչ-որ մեկին հակառակ:  
**Լինջ**—լանջ. Ներքին Շենում և այլուր հայտնի են Լինջի հողի (լանջի ճանապարհ) տեղանուններ:  
**Լոզտիկ**—սրածայր, բրգածև, կիլիխը լոզտիկ—այսինքն՝ գլուխը լոզտիկ, նշանակում է թուրք:  
**Խահլիս**—խկական, հարմար, լրիվ համապատասխան:  
**Խանչել**—հանկարծակի ուժգին վառել (մարմնի որևէ մասը):  
**Խե՛չակ**—փայտե հենակ:

**Խզնի՛ զնուն**—խոզի ճարպի հալելուց հետո մնացած մանր, կիսաչոր կլ-տորներ:  
**Խըրթ անել**—մորթել:  
**Խմանակ**—ինչ-որ բան հիշեցնող, ինչ-որ բանի նման:  
**Խիզան՛տակ**—ծոծրակ:  
**Խոզնըհատ**—խարագանահատ, անեծք, չար խոսք:  
**Խոճըեպ**—ուժգին քրտինք:  
**Խոճեպը վեր ա կոխել**—ուժգին քտնել է:  
**Խոռկ**—ցավ, հիվանդություն:  
**Խոռկը տարած**—անիծված:  
**Խտորու**—անպետք, շեղ, խոտոր: Հյարքին խտորը տինիլ՝ սատկել::  
**Խրարու**—առանց ցանկու աճած բույս:  
**Խրեկ**—քիչ:  
**Խրթիլնկ**—կոկորդ:  
**Խո՛րնագ**—ճաշ:  
**Խոն**—փայտե աման, հացահատիկի չափման միավոր:  
**Խո՛ւրդան**—մանր:  
**Խուրդա անել**—մանրել:

**Ծալք** - դարսված անկողին (ծալքատեղ՝ անկողինը պահելու տեղ):  
**Ծանծան**—մեջտեղը ցցված մարդուն այդպես են ասում (ծառացած իմաստով):  
**Ծան՝ն-ծան՛**—փոքր երեխային երբ սովորեցնում են կանգնել, այդպես են ասում:  
**Ծանդրը**—1. ծանր. 2. խոժոռ. մռայլ, խստահայաց (բնավորություն. ծերըը ծանդրն ա՛ հարվածը ցավագին է, ծանր է), 3. **ծանդրը պահել՝** արժանապատվորեն պահել:  
**Ծանպի**—նիհար ու քնճոռ:  
**Ծեպ**—կայծ:  
**Ծերք**—1. Չեռք. 2. համալիր (.կոմպլեկտ)՝ հագուստ, տեղաշոր («մի ծերք շոր»):



**Ծիւար-ծւպան**— ծայրը ծայրին. մի կերպ հասցրած:

**Ծիվանգել**— շատ նիհարել, ուժասպառ լինել:

**Ծիտրում**— քեթևտիկ:

**Ծկլըել**— արագ վազել, փախչել:

**Ծլըպատակ**— ոտքերը խաշաճև ծալած, տակը դրած:

**Ծխըծո՛ւ**— աջն ու ձախը խառնած:

**Ծխլըկենի**— ձախլիկ:

**Ծկակին տալ**— անսպասելի շնչափողը փակվելու պատճառով շնչակտուր ձայներ հանել՝ համապատասխան շարժումներով:

**Ծկըթել**— կտորվել, ջարդվել:

**Ծկըտոր**— փոքր վարունգ, դեռ ծաղիկը չընկած:

**Ծհան**— հացը թոնրից հանելու՝ երկար կոթով հարմարանք:

**Ծյուծյուկը**— ճկույթ:

**Ծոխ**— ծուխ:

**Ծոճի**— երկար ձող (ընկույզ թափ տալու և այլ նպատակների համար):

**Ծպուլի**— 1. աղոտ, թույլ լույս, 2. լույս տալու պրիմիտիվ հարմարանք (ձեթի, նավթի):

**Ծոլ**— օղի թորելու ժամանակ առաջին քաշից ստացվող թույլ սպիրտ:

**Ծոլոլ**— մրսածի. հիվանդի քթից կախվող ջուրը (ծոլոլը կախ—ծուլ, անկարող):

**Ծուդրուդու**— 1. աքորականչ, 2. մաքրած ընկույզի ամրողչական միջուկը:

**Կագ**— 1. շերամից ստացվող թել, 2. բույսի տեսակ:

**Կակալ**— կանաչ կեղևից նոր մաքրված ընկույզ:

**Կահաղ**— 1. ընկույզի կանաչ կեղև, 2. կանաչ կեղևից դեռևս դուրս չեկած ընկույզ:

**Կաղլիկ**— կաղ:

**Կաճ**— բարձր տեղ, սարերի վերին ու երկար ձգվող մասը (Վերին Ըննում հայտնի է Ծիրանին կաճ, Ներքին Ըննում՝ Էրզան կաճ և այլ տեղանուններ):

**Կամ**— 1. Կալում հասկերը տրորելու պարզ գործիք՝ հատիկներն առանձնացնելու համար. մեկ կամ երկու իրար միացված ամուր փայտից տախտակներ, ագուցված քարերով, 2. հասկերի խուրճը կապելու համար արմատից պոկված երկարավուն բույս (հաճախ՝ հենց հասկ):

**Կանփսը**— կազմվածք, մարմնի կառուցվածք (բնատուր գծեր):

**Կըեխտակ**— մաքրված ընկույզի միջուկի քառորդ մասը:

**Կեսկ**— հագուստ:

**Կըեղ**— վերքի չորացած մասը:

**Կըեռիք**— 1. ատամ, 2. սխտորի մասնիկ, ինչպես նաև ընկույզի կըեխտակի կեսը:

**Կըետ**— սուր, խայթող իշամեղու:

**Կըետըել**— 1. կտրուկ և արագ վազել (ինչպես որ կըետը կծած), 2. կենդանիների, մանուփանդ հորթերի արագ վազել-փախչելը՝ կըետը կծելու դեպքում:

**Կյազ**— գագ, կանգուն, երկարության չափի հին միավոր (38-46 սմ):

**Կզնվըել**— բարկանալ (կզնվըցընիլ՝ ջղայնացնել):

**Կըըզանգի**— նիհար, մեջքից կոացած մարդ (վիրավորական):

**Կծըխրել**— գայրանալ, վրդովվել:

**Կճըեպ**— 1. կեղև (ձվի), 2. փոքրիկ կտոր:

**Կճպել**— ինչ-որ բանից մի քիչ պոկել:

**Կճիպ**— հավի ետնամասի ճարպոտ տեղը:

**Կոթուճ**— կերած մրգի վերջում մնացած կոթի ու կորիզների մասը:

**Կոնչոլ**— ճաշատեսակ (տես համապատասխան բաժնում):

**Կոշտ**— կոշտ, նաև՝ մոտ, մոտիկ (կշտին), նաև՝ կուշտ:

**Կոաժմունք**— չար խոսքեր, անեծք:

**Կոե՛չան**— երկար փայտե ձող, ծայրը՝ կեռ. ծառի կամ մոշու և այլ ճյուղեր մոտեցնելու համար (կեռ բառից):

**Կրկըենի**— թխվածքի տեսակ (տես համապատասխան բաժնում):

**Յալավ**— շապիկ:

**Հաշան**—ձկան տեսակ:

**Հասրաթ**—կարոտ:

**Հանվասկը**—կարագ ստանալու համար կուտակված սերուցքը, նաև մածունը՝ խնոցի հարելու նպատակով (իսկ ամանը՝ հրվլսկանման): Կարծում ենք, հավաքել բայի կրկնակի հոգնակի ձևն է (հավաքածք):

**Հանրանկ**—արձակ, լայնոտ, ազատ (հագուտո և այլն):

**Հանրիչտան**—արիչտա:

**Հափուռ**—բուռ:

**Հընդի**—կիսահասուն հասկ, ինչպես նաև այդ հասկը խորովելուց հետո ուտելու համար մաքրված, առանձնացված հատիկները:

**Հըդի (հըդեց)**—փողոց, ճանապարհ:

**Հըղըցա իլած կամ հըղըցա տոնս եկած**—ճանապարհից դուրս եկած (անառակ):

**Հըղլակ**—պարանի ծայրին, անհրաժեշտ պահին արված օղակ:

**Հընցըլուկ**—չիլինգի (տես) խաղալու ժամանակ փայտի կտորի (չիլինգի) դուրս գալը նշված սահմանից կամ սխալ կատարված հարվածը:

**Հընցընել**—1. հանգչել, 2. անցնել:

**Հըրակաչ**—աշխատանքները միասին, կիսովի կատարող:

**Հիլորել**—ոլորել:

**Հիթան**—շատախոս:

**Հինդի**—հնդկահավ:

**Հոռ անել**—ոլորելով ճկել, նաև՝ հաղթել:

**Հոռի**—ուռենի:

**Հոռ-հոռ անել**—չարչարվել:

**Հովուր**—1. կրակից կամ այլ տեղից եկող տաք օդ (հովուր-հովար անիլ՝ ուժեղ տաքություն), 2. պահ, կարճ ժամանակ (մի հովուր):

**Հպարապ**—պարապ, անգործ:

**Հուլա գալ**—եռ գալ, երեխաների չարածճի աշխուժություն:

**Հովըկեռ**—բուն նպատակը, որը հստակ չի ասվում (հեռվից կեռումեռով է ակնարկվում):

**Հրի՛շտըրակ**—հրեշտակ բառն է, որ գրաբարում բարոյ խորհրդանիշն էր, ներկա բարբառում՝ չարի:

**Հրշտա տալ**—հորանջել:

**Հրսնընքահար**—հարսանիքի մեջ ներգրավված, զբաղված:

**Հրսնընքվեր**—հարսանիքին մասնակից, երավիրված, հարսանքավոր:

**Հունար**—ընդունակություն, հնարավորություն (խելք, ճարտարություն (պրսկ.)):

**Հուրթանկապ**—պարանը կապելու այնպիսի չև, որով հանգույցը չի շարժվում, չի՝ խեղդի կապված կենդանուն և այլն:

**Հուրթանտել**—հորթը վիժել:

**Ղադր**—հարգ, պափիվ, արժեք (արաբերեն):

**Ղադրաղաջի**—փոխարեբական իմաստով ծառ, որ փնկվում է մեկի հանդեպ հարգանք ցույց փայլու համար, նրա լավության դիմաց:

**Ղալամ**—զրչածայր (արաբերեն՝ գրիչ):

**Ղայա**—ծայր (թրք.):

**Ղայիմ**—ամուր:

**Ղառի (թորթու ղառի)**—թորթուհի:

**Ղարդու**—եղեգ:

**Ղդըղա**—արգելք:

**Ղենգ**—եղունգ:

**Ղե տալ**—կանչել:

**Ղընմիչ (անել)**—չափստալ (չխմայել իմաստով):

**Ղըն տալ**—կանչել:

**Ղըրթ (անել)**—կտրուկ, արագ կտրել:

**Ղժրըտակել**—շափ արագ վազել:

**Ղիդի (տալ, ածել)**—խուտուր (փալ, ածել):

**Ղլդըրդի**—շերեփուկ:

**Ղըլըր**—շափ ճարպիկ:

**Ղվըեկ**—փոքր կաթսա:

**Ղոբի**—չորակ:

**Ղոլ**—կողմ:

**Ղոչ**—խոյ:

**Ղով**—փայտի չորացած, փրած, հեշտ փառվող մաս (հիմնականում չի-բուխի, նաև այլ կրակ վառելու համար):

**Ղորթ**—ծիշտ, ուղիղ:

**Ղուփել**—ուժգին քորել:

**Ղուղի-ղուղի**—ներքին անհանգստություն:

**Ղուռննթն**—ինչ-որ բանի փակի մանր-մունր մնացողը:

**ճաթ**—գարուց կամ այլ հացահատիկներից պատրաստած կոշտ, դժվարամարս, ցածրարժեք հաց:

**ճըզտը (տյուս կյալ)**—ուժասպառ լինել, շար շարչարվել:

**ճիլ**—1. ճահճուրում աճող թելանման բույս, 2. ճահճուր (ճիլկոտ), 3. ճարպիկ:

**ճիրաման**—ջրի աման:

**ճոտու ճիրաման**—շար փոքրամարմին աղջիկ, հարս, կին (փոխաբերական իմաստով):

**ճլագտրիկ**—նիհարուր, փոքրամարմին:

**ճլըվը՛զտ (տալ)**—ջիջիլ գցել, պարծենալով ցուցադրել:

**ճղոպոր**—քնկույզ:

**ճոթ**—1. կտորեղենի, գործվածքի ամողջական փաթեթ, 2. թոնրի հացի կեսը. **ճոթ անել**՝ հացը կիսել չեռքով, **ճոթը կտրել**՝ հարսնացուի համար զգեստի կտոր գնել, **ճոթը ծեվել**՝ հարսնացուի համար զրն-ված կտորը չնել զգեստի համար:

**ճպան**—ճիպոտ:

**ճոեխե (ճոեխած)**—պայծառ լույսերով ողողված, լցված (աստղերը ճոեխած), նաև՝ պտուղներով ծանրաբեռնված:

**ճուխտըլանիակ**—1. գույգ ոտքերով ցարկելու չև, 2. արագ վազել, վարգել:

**ճուտանտըլ**—ճուտը վիժել:

**Մանգնլ**—անասունների, ոչխարների կեսօրվա հանգիստը (մակաղելը):

**Մանլում (անել)**—նշան (անել), նշմարվել:

**Մաշա**—վառարանի մեջ կրակը կարգավորելու, ածուխները բռնելու մեղադրե գործիք:

**Մաշալլա**—ջահ, որ օգտագործվում էր հարսանիքների ժամանակ գիշերը փողոցը, բակը լուսավորելու նպատակով:

**Մասանորիա (սարքել)**—երկար-բարակ պատմություն (անել):

**Մզոված**—նզոված:

**Մըելավ (կենալ)**—վստահ (լինել), հույս ունենալ:

**Մթնըժուռել**—ու լրիվ մթնել:

**Միհնջան**—ճաղաշարք սրահի, գերեզմանի (չնափորած փախտակից կամ մեղադրից):

**Միճիճել**—խճճել (թելը, գործերը և այլն):

**Մշկածյու**—փափուկ կեղևով չու, որն ընկնում է՝ հավի մեջքին խփելու պատճառով:

**Մոզի**—գոմշի հորթ:

**Մուլլաղուլաղ**—փոյլալ գործից (արհեստից) որոշ չափով տեղեկություն, ընդունակություն ունեցող, հեզմակամ:

**Մրկըլ**—շորը թեթևակի այրել, ո՛չ վառել, միայն այրելու հեղքի երևալը:

**Մուկլումանդիր**—սարդոստայն:

**Յաղի**—թշնամի, շար արարած, **յաղին տարած**—անեծք (պարսկերեն՝ օրինազանց, ապստամբ):

**Յղի**—հղի (միայն կենդանիների վերաբերյալ):

**Յոխկուռ**—խարխուլ մարմին ունեցող, խիստ անկարող ու հիվանդուր:

**Յորդա**—չիու արագ վազելու տեսակ, նաև՝ այդպես վազող չի (էշ):

**Յորդան**—վերմակ:

**Յորդան-դոճակ**—տեղաշոր:

**Նանչար**—մեղավոր:

**Նաչար**—խեղճ:

**Նան**—քարավանի առջևի ուղիքը. շար լավ տեսք ունեցող:

**Նանսար**—հավաքամբ, սկզբունք:

**Նարա (տալ)**—շար ցանկանալ:

**Նի ածել**—լցնել, անշնորհք չևով խմել (լակել):

**Նիզարան**—անհանգիստ կարոտ՝ տեղեկություն չունենալուց:

**Նի կընալ**—վառվել:

**Նի՛ կյալ**—դիպչել:



- Նի՛ կցընել—վառել:
- Նի՛ մտնել—ներս մտնել:
- Նի՛ պրծնել—ներս խցկվել:
- Նիստա տալ—միացնել, կպցնել:
- Նի՛ տալ—1. ներս տալ, 2. չեռք տալ:
- Նի քաղել—շարել՝ անցկացնելով ինչ-որ բանի միջոցով:
- Նի՛ քիցիլ—ներս գցել:
- Նոբաթ—հերթ (որպես կանոն՝ կապված ջրադայի հետ):

**Շաղիք**—սրբին հովուություն բերող շաղ (ցող):

**Շիրմիշեղ**—փաթաթվող բույս:

**Շիաղ(տ)**—վկա:

**Շմբալոթ**—շագանակ:

**Շուտի**—կենդանիներին բշելու հարմարանք՝ կաշեթելից գործած, ամրացված փայտին: Կա նաև դամշի՝ միայն չիու համար, ավելի խնամքով պատրաստված ու չևակորված (մտրակ):

**Շորվա**—ջրալի ճաշ. շորվա ա անում, լուծում է՝ փոխաբերական իմաստով՝ վախենում է:

**Շոռ կյալ**—1. ման գալ, 2. փնտրել:

**Շոռ ածել**—ման տալ:

**Շոռ տալ**—շրջել:

**Շոռ օնիլ**—ծածկվել:

**Շուվվի՛**—շվի:

**Չաբալաշմիշ (կնլ)**—փանջանք, չարչարանք (կրել):

**Չաթու**—թելից պատրաստված պարան:

**Չաթուքնասան**—կապը կտրած:

**Չալըխ կյալ**—ջանք թափել, չարչարվել (**Չալըխ**—թաթարերեն՝ ճարպիկ, համարչակ):

**Չախկալմագ**—մանկական խաղ. եթե խաղացողներից մեկը նկատի, որ խաղընկերոջ չեռքը գրպանի մեջ է ու հասցնի այդ պահին խփել նրա՝ գրպանում դրված չեռքին, կշահի գրպանի պարունակությունը:

**Չախկաչուխկ (անել)**—թեթևակի զբաղմունք, որոշ թեթև գործեր (անել):

**Չանաղ**—խոշոր ափսե:

**Չանգ**—արտը չեռքով հնչելու ժամանակ հնչված մեկ բուռ հասկը:

**Չարգոճ**—սայլին, գութանին լրացուցիչ լծված գույգ լծկան:

**Չարգոճչի**—չարգոճը բշող (սայլապանի օգնական):

**Չղըլհաղի**—մերկանդամ:

**Չիզլագին տալ**—բայլելիս ոտքին մի բան է դիպչում. քիչ է մնում՝ ընկնի:



Սայլին լծված երկրորդ գույգը չարգոճ էր կոչվում, իսկ այն բշող սայլապանի օգնականը՝ չարգոճչի: Հատուկ բառերով նշվում էին սայլի ամեն մի մասը, սահնակի, քրոջայի և այլ իրերի, գործիքների, շինության զանազան մասերը, որոնք բոլորն այստեղ չենք կարող հիշատակել:

**Չիլինգի**—մանկական խաղ՝ չեռնափայտով փարբեր չեռքով խփում են փոքրիկ փայտի կտորին, որը չիլինգ է կոչվում:

**Չին**—արտը չեռքով հնչելու արամնավոր գործիք՝ մանգաղ:

**Չինը բամի ա ընկել**—հոգնել է, չանչրացել է:

**Չխկը՛րը կյալ**—թեթև շարժում անել, մի փոքր բան անել. գործածվում է ժխտական չևով՝ կարալ չես չխկըրը կյաս:

**Չխկլդանի**—մանկական խաղ՝ խաղում են մեկ ուրիշով ցատկոտելով գեղանին գծած վանդակների վրայով:

**Չովուշ**—կատարածու, զգիր, փողոցներում շրջելով բարձրաչափայն հայտարարում, բնակչությանը տեղյակ է պահում ինչ-որ լուր:

**Չորուկ**—1. ծառերի վրա չորացած ճյուղեր, 2. թաղի վրա չորացած հատուն լոբի:

**Չունչլուխ (սուջուխ)**—պատրաստվում է հեղուկ կերպ. թելի վրա շարված ընկույզի միջուկի մասերը, երբեմն նաև մեկընդմեջ չամիչ կամ այլ չիր թելի վրա շարելով, շարանը խաղողի հյութից ու ալյուրից պատրաստված շփոթի մեջ թաթախելով, չորացնելով:

**Պապ**—1. Հոր կամ մոր հայրը, 2. Սրբություն, ուխտավայր: Այս երկրորդ իմաստը դժվարանում ենք ստույգ մեկնաբանել. թերևս պապը գիտակցվում է որպես հզոր և արդար հովանավոր. ասում են՝ գնանք, օրինակ՝ Բեզարանց պապին տակը, այսինքն՝ Բեզարանց ուխտավորեղը, սրբավայրը:

**Պանց-պիցիհար**—լոբի բաց (անուշադրության մատնված երանգով):

**Պենձիկ**—ջարդված կավե ամանի կտոր, որ շարունակում են օգտագործել տան արհեստության մեջ (դրվում է բակում, մեջը ջուր լցվում հավերի համար, դրանով նաև կրակ են բերում հարևանից):

**Պրեծ**—կայծ:

**Պեռը**—1. իշամեղու, 2. բեռ, նաև՝ չափի միավոր (մի իշաբեռ խտր):

**Պըլըհո՛վդուռ**—խենթ, փարօրինակ (ոչ շատ բացասական երանգով):

**Պինակալ**—բնակալ:

**Պիրթիկիզի (տալ)**—զգվտոյ, իրար քրքրել (բուրդ գգել բառերից):

**Պիրինըպատառ**—բերանի պատառ, նաև փոքր չափ է նշանակում:

**Պծըկրակ**—շափ սուր, եռանդուն, շարածճի:

**Պհեզ**—պարտեզ, այգի (գործածական է միայն Գյուլիստանում):

**Պդոճ**—բլուճ (միջափ):

**Պյուլ**—խմորագունդ:

**Պոզ**—եղջյուր:

**Պռատ**—թերի, մի մասը պակաս:

**Պռըշկել**—տխրել, հոնքերը կախել, պոռոշը կախել:

**Պոռթոլ**—վայրի հացահատիկային բույս, վարսակ (մշակվում էր չիերի կերակրման համար):

**Պոռկ**—բողբոջ:

**Պոռըյեր**—մեջքի վրա պատկած (անհոգ, նաև՝ անշնորհք, պոռպոջ վեր):

**Պոռուշ-պոռուշ անել**—հեկեկալուն նախորդող տխուր վիճակը:

**Պտկան ծաղկած**—ինքնագոհ, քմահաճություններ ունեցող, չմահավան:

**Պտղունց**—մատներով վերցվող փոքր չափ:

**Պտոկ**—ծայր:

**Պտրիհան**—պատի մեջ թողնված տեղ, որմնախորշ՝ նկուղներում, գոմերում, որոշ առարկաներ դնելու համար:

**Պրանըել**—շրջել, պտուկեցնել:

**Պրիշակ**—ավերակ:

**Ջնրմն**—վնաս (նաև՝ գլխին մնացած, բեռ դարձած բան):

**Ջուվար**—1. Ռմն, մարդ (անորոշ), 2. Ջվար, ջուր բաշխող, ջրի հերթը կանոնավորող՝ ջվար (ոռոգման համար):

**Ռան իլ**—կորիք:

**Ռադ լինել**—կորչել (արհամարհական):

**Ռըեշնըել**—բորբոսնել:

**Թեզունքս ոըեշնի**—ամեծք (մահ):

**Ռըխըելեր**—շափակեր, նաև՝ անշնորհք խոսող:

**Ռըհելը քաշել**—փաստափուսեն քաշել, հեռանալ:

**Ռուզի**—ապրուստ, հաջողություն, եկամուտ:

**Սազ**—1. երաժշտական գործիք, 2. լարված, պատրաստ վիճակ:

**Սազ անել**—հարմարեցնել:

**Սան հիկ**—անմիտ, թեթևալիկ, դատարկախոս, դատարկամիտ:

**Սանդ**—ընկույզի միջուկ, սխտոր և այլն ծեծելու փայտե խոր աման:

**Սանդըերք**—բուրդ գգելու գործիք:

**Սանդըր**— սանր:

**Սասնա** —կեղծավոր, շողոմախոս:

**Սարփա**—շահերիմ համընկնող:

**Սարփանդար**—իր շահը լավ գիտակցող և պաշտպանող:

**Սարփուճ**—օղի թորելու սարքի կախարիչը:

**Սել**—հորդ անչրև, հեղեղ:

**Սըեզը**—1. պտուղ (ալոճ), 2. ծառերի կեղևի վրա հայտնվող խեժի գնդիկ:

**Սիլիտարանք**—սելը քշած, փարած, փիղմ և այլ բաներ:

**Սլեթա**—աներես, չարածճի:

**Սկըհընել**— սայթաքել (սահելով), նաև՝ սահել:

**Սլյուկնը**— փզրուկ:

**Սխտուրութակի**— սխտոր ծեծելու փայր:

**Սկանալ**—1. լսել 2. հասկանալ:

**Սղուլիկ**—ողորկ, սայթաքուն մակերես ունեցող:

**Սողան**—տիխ:

**Սոնգ**—ժառանգ, մարդ արարած՝ բացասական երանգով:

**Սովդա**—հաշվարկ, սակարկություն, խորհրդակցություն:

**Սովդա անել**— սակարկել, քննարկել:

**Սովդաքյար**—տոկորական:

**Սվըմիճիճ**— փուսճուրեն խճճված, չսիրված բան:

**Սրթսրթիլիկ**—չփես, երեսը պիմոճ (վիրավորական), պնդերես:

**Սո՛ւղի**—ժիր, չարածճի, աշխույժ (միայն մանուկների վերաբերյալ):

**Սուրը փիս**— սուրը պահաս, վստի նշան ունեցող, այն, ինչից վար բան է գուշակվում (սուր չունեցող՝ թույլ, անզոր):

**Սուրսուզ**—խեղճ, անզոր, անընդհատ մի բան խնդրող, մուրող, բառացի՝ սուր չունեցող, թույլ, անզոր:

**Տագ անել**—լռել:

**Տախժը**— դադչ:

**Տախտեղ**— փաքղեղ:

**Տալոթիկ**—արմար:

**Տանգ**—ունկ, բռնակ (ջվալի, փալանի, կախելու գորգի և այլնի վրա):

**Տան պըն անել**—դարան մընել, դարանակալել, թաքնվել, անշարժանալ:

**Տելը տալ**— գառանցել:

**Տեղթափ**—այնպիսի համով ուրելիք, որի ուրողը դեղի կարիք չի զգա:

**Տըրըպիլոր**—մահվան փարեկից:

**Տիղան պետ**—ընփր ուրելիք, որ պահվում է, նկատի ունենալով, որ պետք կգա որևէ հիվանդի համար իբրև դեղ:

**Տինգ**—կորկուր ծեծելու հարմարանք:

**Տիշվել**—սուշել:

**Տիտոթիկ**—անհամ, անիմաստ, ջրիկ զրույցներ անող, թեթևալիկ:

**Տխտըկճը**—եզան լեզու (բույս):

**Տկոկըհան անել**—արմատախիլ անել:

**Տկտիյեր անել**—հայիտյել վարից վեր (հիշելով բոլորին):

**Տհար**—բարձր փեղ (Վերին Շենում կա **Տինգի տհար**, Սանաշիրում՝ **Գիլնրա տհար** և այլն):

**Տշտըբիլի**—1. փաշտը բերելու գործիք, 2. վերջին զավակը բազմազավակ ընտանիքում:

**Տոկոթիկ**—անկարող, անդամալույծ:

**Տորոն**—արմար, որից կարմրավուն ներկ են սրանում:

**Տրեկան**—մեծ խոզ:

**Տրխամաշ**—շափ հնարած, ոչ պիտանի դարչած բան (մաշված փրեխն այլևս ոչնչի պետք չի գալիս):

**Տրխանտան**—փրեխը ուրքին ամրացնելու (փաթաթելու) երկար հյուսված թել:

**Տրքճան**— մանկական խաղ:

**Տրքճանի տալ**—մանկական խաղ, որի ժամանակ ցեխից փորքիկ թաս են պատրաստում. բերանի վրա ուժեղ հարվածում գեղմին. հափալկի մասը պայթելով պատռվում է, խաղրնկերը պարտավոր է այդ անցքի շափով ցեխ փայլ:



**Բաժան**—կաթի սեր (մասն մածնի):

**Ցիցանակ ինիլ**—գլխիվայր, շափ արագ իջնել, ընկնել, սլանալ:

**Ցիցնոնակ**—ծիծեռնակ:

**ՈՒՂԱՆՔԱՍԻ ԻՆԻԼ**—կապերը լրիվ կտրել, խզել, վերջ տալ հարաբերություններին:

**ՈՒՄԻՊ**—հույս:

**ՈՒՆՈՒՂԱՄԵՂ**—հույսի տեղ:

**ՈՒՆԳՈՒԾԱԿԱԼ**—լսող:

**ՈՒՆԳՈՒԾՈՒՓՈՆՈՒԿ**—ուրախ լուր, մասն աշխատիս լուր հայտնողին տրված նվերը:

**ՈՒՆԳՈՒԾՈՒՓՈՆՈՒԿ ԱՆԵԼ**—ուրախ լուր հայտնել:

**ՈՒՄԲՐ**—կյանքի տևողություն:

**ՓԵՆՋԱԿ**—չեռքով արտը հնչելու ժամանակ հասկերի մեծ կույտը՝ 15-20 բախա (տես՝). սովորաբար դրանով էր հաշվվում հնչվորի օրվա աշխատանքի արդյունքը («Ղահրամանանց Սերգին սօրի 20 փենջակ հունչ ա ըրել»):

**ՓՂՍՐՂՎԵՐ**—բերանքսիվայր:

**Փթրոկ**—ճաշարեսակ (տես համապատասխան բաժինը):

**Փթակ**—փտած:

**ՓԼՍՏՐԱՄԻՆ ՄԱԼ**—փայլվել:

**Փսպղին տալ**—պսպղալ:

**Փռեչնը**—բռինչ:

**ՓՐԱՄԻՈՒԽ**—հարսանիքին տարվող մրգերի, քաղցրավենիքի «ծառ»:

**Փուրջակ**—1. փորի ցավ 2. ինչ-որ հոգս, անհանգստություն պատճառող անելիք, որ բացահայտ չի ստվում:

**ՔԱՂԱՄ**—կաղամբ:

**Քաշ**—ցածր, նաև՝ կշիռ:

**Քաշիկ**—ցածրիկ:

**ՔԵՆՈՒՐ**—երկար պարան, սովորաբար մազից գործած կամ կաշվից պատրաստված:

**ՔԵՐԻՆՉ**—թոնրի պատից պոկված հալի վառված մնացորդ (բարակ շերտով):

**ՔՂՔՂՎԵԼ**—ստուգել (մազերը), նաև՝ քթել ամել:

**ՔՂՂՔԱՆՅՈՒՂ**—քարադողոշ:

**ՔՂՂՎԱՐԱՆՈՒԿ ԱՆԵԼ**—քարեր նետել իրար կամ մեկի կամ ինչ-որ բանի վրա:

**Քթոց**—կողով:

**Քիրթ (գիրթ)**—կտրուկ:

**ՔՆԵՆՔ ԱՆԵԼ**—խորհել:

**ՔՆթեռ**—այգեկության ժամանակ շնկարված, մնացած խաղող, միրգ:

**ՔՆթահորս անել**—այգում քնթեռ (մնացորդ) որոնել:

**ՔՆՈՒՆՔՈՒ ՄԱԿ ԻՆԳՆԵԼ**—մտածմունքի մեջ ընկնել:

**Քշկոռ**—հանգույց:

**Քշկոել**—հանգույց կապել:

**Քու**—անտառ:

**Քուամանի**—վայրիվերո, անկազմակերպ, անկարգ:

**Քու**—1. արոտավայր մեկնող կամ վերադարձող ոչխարի հոտ 2. անտույթ, անկազմակերպ, փնթի վիճակ («հենց ա քու ինի»):

**Քուաքու ինիլ**—անընդհատ տեղից տեղ տեղափոխվել:

**Քուա վեր ինգած**—տոգեղ, անշնորհք երեխա, «**հենց ա թորքու քուա վեր ինգած ինի**»—կարծես թուրքի քուչից ընկած լինի:

**Քոսակ**—գոտակ, նոսր:

**Քոցի**—կավե մեծ պուլիկ, անոթ՝ թթու դնելու, յուղ կամ պանիր պահելու համար:

**Քչև**—կեղև:

**Քուլատանձ**—վայրի տանջ:

**Քուլուխինձոր**—վայրի խնչոր:

**Օթի**—նախորդ օրվա (ջուր, ճաշ):

**Օխլավ**—խնորք բարակեցնելու, հարթեցնելու երկարավուն, գլանաձև փայտե գործիք:

Օնջ — ժանգ (ընջոտել — ժանգոտել):

Օջախ — 1. Կրակ վառելու տեղ 2. գերդաստան 3. սրբավայր, ուխտատեղ:

Օջաղորթ — ամբողջ տոհմը, գերդաստանը, ընտանիքի բոլոր անդամները միասին:



...Կռճոտք, Կապեր, Լինջ և այլ ու այլ բազմաթիվ տեղանուններ, հետաքրքիր բառեր՝ կապված մեր լեռնաշխարհի, բնակավայրերի, բուսական ու կենդանական աշխարհի հետ, ցավոք, չկարողացանք բոլորը հավաքել, ի մի բերել, հիշել բերված բառացանկի մեջ և ընդհանրապես այս գրքում: Համոզված ենք, որ հետագայում այդ աշխատանքն անպայման կկատարվի մեր կամ մեկ ուրիշի կողմից, որովհետև դրանք և՛ լեզվական, և՛ պատմական ուշագրավ նյութ են պարունակում:

## ՉՓՔԾՈՒ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Լեռնաշխարհի գյուղերն ունեցել են բազմաշնորհ երգիչ-ասացողներ, որոնք երգում էին սերնդեսերունդ փոխանցված, հաճախ էլ իրենց կողմից փոփոխված երգեր, արտասանում բանաստեղծություններ աշխատանքի, թե հանգստի ժամին, օրոքույցի մոտ կամ օջախի շուրջը: Տարածված էին Վաչագան թագավորի մասին և այլ թեմաներով հեքիաթներ, աշխատանքային, սիրո, մարտական և այլ երգեր, բանաստեղծություններ: Պատմում, երգում, արտասանում էին թե՛ հանդիսությունների ժամանակ, թե ընտանեկան միջավայրում, զավակներին, թոռներին, երբեմն մաս հարևաններին խմբած իրենց շուրջը: 1960-ական թվականներին գրի են առել մի քանի մուշներ մորս՝ Սոնա Ղահրամանյանի (Շարվերյան) արտասանածներից:



Վերցակը կանչեց բաղումը,  
Վետները մեկնեց շաղումը,  
Ես մի փունջ մինեշակ՝  
Իմ ախպոր փըփաղումը:



Իմ ախպեր Բաքվա ծառին տակին նստած ա,  
Սաղմոսը կռնըտակին տիրած ա:  
Սաղմոսը կիր տյառավ,  
Լյուզին բյուբյուլ տյառավ:  
Շաքար մաղեմ, կեր, ախպեր,  
Ոջխարքիս տեր ախպեր:



Թոռ ա կյալիս շղղիլավ,  
Կանանչ տիրեվ տյուղիլավ,  
Յրես եկավ իմ ախպեր՝  
Գյոգ ծին տակին խղղիլավ:



Ալ խըլեղըտ կարել եմ,  
 Կունկընեքըտ շարել եմ:  
 Շյաքարը մաղած պիտեր,  
 Ղանդավ շըղաղած պիտեր,  
 Չուվա ախպորս կյալը  
 Շինին կեսը պիժանած պիտեր:  
 Շյաքարը մաղեմ, կեր, ախպեր,  
 Իրիքնակին տեր ախպեր:

Շատեղնիյեր հանդեր ա,  
 Լոխ ըրծաթի բյանդեր ա,  
 Տյանակ պիրեք սերտ ճըղենք,  
 Բողում-բողում դյարդեր ա:

Լյորը թռավ էն արտան,  
 Կտրեց սրտիս փյարդան,  
 Լոխ էն աննամուս  
 Յարին դյարդան:

Շոխկը կաթեց կյիրանին,  
 Ավալ ծաղկեց ծիրանին:  
 Մատումըս կա մըտանի,  
 Հովն իմ սիրածին ինձանա հանի,  
 Նիրա լուզին յաման տանի:

Ձ \* Ձ

Խորհրդային իշխանության առաջին փարիներին փարածում սրապան  
 նոր քաղաքական շահերից բխող հորինվածքներ: Սպորն բերում ենք դրան-  
 ցից երկու նմուշ, որոնք գրի ենք առել Ռուբեն Բաբայանից:

Հոպլա, գյադա, հոպլա, գյադա,  
 Բարով եկար, բրիգադա,  
 Թե որ դու էլ գործ չանես,  
 Պոչդ կապիր ու հայդա:



Բանաստեղծական ուշագրավ տողեր, սրտառուլ խոսքեր շատ կան մեր գյուղերի պատմական  
 տարբեր հուշարձանների վրա փորագրված, որոնք սպասում են իրենց հետազոտողին ...

Ջագսով պսակ մենք կանենք,  
 Տերտեր, քո աչքը հանենք,  
 Ոչ վարում ես, ոչ ցանում,  
 Որիշի բաժինն ես տանում:

Ձ \* Ձ

Սովորություն կար, որ ժողովրդական փարբեր հանդիսությունների և  
 ուրախալի հավաքների ժամանակ մեկը երգում կամ արտասանում էր որևէ  
 թեմայով, երկրորդը շարունակում էր նրան, հետո՝ երրորդը, չորրորդը: Այդ-  
 պես գնալով կարող էր թեման հարստանալ, մասնակիցները կարող էին  
 ավելի ու ավելի շարունակել, միջոցառումը դարձնել ավելի աշխույժ ու փայ-  
 վորիչ: Այդպիսի մի սպեղծագործություն, որը ներկայացվում է սպորն, փա-  
 րիներ առաջ գրական մշակման է ենթարկել Սլավիկ Մնացականյանը:





Երևանից ժամանած ամեն մի գրող կամ բանաստեղծ, քատերական խումբ, երգիչ կամ երաժիշտ շրջանի գյուղերում առաջ էր բերում քե հայրենասիրական մեծ ոգևորություն և քե խթան էր դառնում մշակութային կյանքի զարգացման համար: Յավոք, այդպիսի ուրախ առիթներ հազվադեպ էին լինում, որովհետև կուսակցական «զգոն» ղեկավարությունը զգուշանում էր, որ Բաբվի կողմից դա չհամարվի նացիոնալիզմ: Այնուամենայնիվ, մայր հայրենիքի հետ հոգևոր կապը կտրել անհնարին եղավ: Լուսանկարում նշանավոր գրող Սերո Խանգաղյանը Շահումյանի շերջանում, մի խումբ հայրենակարոտ երիտասարդության հետ:

### ԵՍ ԻՄ ՍՈՒՐԱԶԻՆ ԶԸՍԱ...

Ապրի տյուկուն, տյու պար եկ,  
Ա՛ շըհանոռը, տյու ճաքի:

Ուտեղնիեր արտեր էր,  
Ուտեղնիեր հանդեր էր,  
Քոչը կիկյար սըրերավ,  
Որըբեքը քուլերավ,  
Այան եղը հալած էր,  
Ապան գիկին քամած էր,  
Աշի, տաշի, տուշի ա,  
Բալաս եղավ բիշի ա:  
Ուտեղ իմ ծառին հըսա,  
Արություն ապա, տյու ասա:

Ապրի տյուկուն, տյու պար եկ,  
Ա՛ շըհանոռը, տյու ճաքի:

Մի մարդ եկավ Սըրավա,  
Մարդ մի ասա՛ ալավ ա,  
Խստությունը ծնկումը,  
Լենինի գիրքը սումկումը,  
Խառնեց արտ ու կըլատեղ,  
Սարքեց շենը շիլատեղ:  
Այան տարան լիկկայան,  
Ապան քշին գիկկայան:  
Աշի, տաշի, տուշի ա,  
Բալաս եղավ բիշի ա:  
Ես էլ իմ քարին հըսա,  
Դովուֆ ապա, տյու ասա:

Ապրի տյուկուն, տյու պար եկ,  
Ա՛ շըհանոռը, տյու ճաքի:

Բալշևիզմի պայքար էր,  
Հարուստ մարդը համքար էր,  
Սըկան ծակն էր տաս թուման,  
Օրըս սև էր ու դուման:  
Այան դարձավ գրագետ,  
Մարունց Մոսին՝ հըվագետ,  
Ազին անցավ կոմսոմոլ,  
Էլ հի՛նչ ինգնեմ քար ու քոլ...  
Աշի, տաշի, տուշի ա,  
Բալաս եղավ բիշի ա:  
Ես էլ իմ ծյորին հըսա,  
Սաքան ապա, տյու ասա:

Ապրի տյուկուն, տյու պար եկ,  
Ա՛ շըհանոռը, տյու ճաքի:

Ծըմակ ու ծյոր խըռնեցին,  
Թորքը տանձաս կըպեցին,  
Սարըս տյառավ Մուավդաղ,  
Հոնքըս տրանայա կախ:  
Աշի, տաշի, տուշի ա,  
Բալաս եղավ բիշի ա:  
Ես էլ իմ քուլին հըսա,  
Վեսկան ապա, տյու ասա:

Ապրի տյուկուն, տյու պար եկ,  
Ա՛ շըհանոռը, տյու ճաքի:

Աշի, տաշի, տուշի ա,  
 Բալաս եղավ բիշի ա:  
 Բալաս կանգնեց կտրանը,  
 Զյունագ կանչեց կռնանը,  
 Եկան տղերք Սըրավա,  
 Եկան տղերք Մըռավա,  
 Աման միևը մի ճըրագ,  
 Աշքընեըը ճոխտ կրակ:  
 Միրված թոր են ու թվանք,  
 Ուղտեցին ծյոր ու վանք:  
 Աշի, տաշի, տուշի ա,  
 Բալաս եղավ բիշի ա:  
 Ես իմ մուրագին հըսա,  
 Մնացածն էլ տյուն ասա...

Շրջանի գյուղերում (ինչպես և այլուր) փարածված են եղել ժողովրդի կողմից հորինված բանաստեղծություններ սրբալիմյան դաժան ռեժիմի մասին՝ բազմաթիվ փարձերակներով: Դրանց հեղինակները հայրմի չեն, բայց արքայազանության շարքերը 1930–1940-ական թվականներին պատժվել են: Վերինշենացի ճանաչված դրսորդ Մարգիսը (Մաքի դայիմ) 1936 թ. հուլիսի 18-ին երիտասարդների մի մեծ խմբի առաջնորդել է դեպի Մոսկվա գագաթը և հենց այնտեղ արքայազան է այսպիսի մի բանաստեղծություն, որը հիշողությանը գրի է առել այդ խմբի անդամներից մեկը՝ վաստակավոր ուսուցչուհի Վարդանուշ Հակոբյանը\*:

Ստալին, բեղերդ դալին,  
 Մեջքդ տեմ ըրել Մոսկվա սարին,  
 Մին մեկ ես օգում, մին՝ կալին,  
 Պա ես հո՛ւնց պահեմ իմ բալին,  
 Ա՛ ես թաղեմ քու բալին ...

Ներքինշենացի սրբազործող Կոլյա Խաչատրյանը 1930–1950-ական թվականներին հորինել է փարբեր թեմաներով գվարճալի բնաստեղծություններ, որոնք բերնեբերան անցել են, փարածվել բոլոր գյուղերում, փոփոխությունների ենթարկվելով դարձել ժողովրդական սրբազործություն: Մեզ հաջողվել է գրի առնել դրանցից մեկը.

Պանրի գավոդ՝ բանկի տակ,  
 Եղբայր, այսպես էլ կատա՛կ.  
 Բանկի դուռը չքացած՝  
 Հոտ է գալիս փչացած ...

\* Մեր ինդրանքով Վարդանուշ Հակոբյանը գեղարվեստական շնչով գրի է առել Վերին Շենի անցյալին վերաբերող բազմաթիվ արժեքավոր փաստեր ու տեղեկություններ, որոնք շնորհակալությամբ կօգտագործվեն մեր կողմից՝ շրջանի իսնագամանալից պատմությունը գրելու համար:

Ժողովրդական բանահյուսության ուշագրավ ճյուղերից են հիշույքը, անեծքը, օրհնանքը, սպորն կրեբենք մեր գյուղերում փարածված *օրհնանքի* մի քանի նմուշներ՝:

*Վետա քարին նի շիկյա:*

*Բըլեքա ճուխաճուխնտավեն:*

*Լյավ տեղ զուսուցընես:*

*Չոր քարին քինաս՝ կընանշի:*

*Մըրոքա սիպտակի* (այսինքն՝ հասնես ծերության. գրի է տղա երեխային այդպես օրհնում էլիս մեծերը և ծեռքին ձու դնում):

*Կըլխավո շոռ տամ* (այդպես օրհնում են երիտասարդներին, ակնարկելով այն, որ հարսանիքի ժամանակ նորապասակների շուրջը պտտվում են մոմերով՝ «կլխավը շոռ են տալիս»):

*Քու քինական Հըղըցին մատաղ* (նկատի է առնվում անցնելիք կյանքի քարի ճանապարհը):

*Քու բըլոցը մատաղ ինես:*

*Աստված քեզ ուզի տա:*

*Ծլեք, ծաղկեք, ծերանաք:*

*Միմն ծերունի տյանաս:*

*Ստոլին քմակին նստես* (այսինքն՝ բարձր պաշտոն ունենաս):

*Քու մինը Հարյուրը տյանա* (այսպես օրհնում են մեկ երեխա ունեցող ծնողին):

*Մինը քիցես, Հապորը Հըվաքես:*

*Օխտը տըպինավ սեղան նստես:*

*Աստված տիերան Հըսցընի:*

*Աստված ըրիտա տեր ինի* (Աստված երեխայիդ տեր լինի):

*Աստված ՀնՀավեր անի, իրչինակն էլ տղա ինի* (օրհնանք նորապասակներին՝ հարսանիքի ժամանակ):

*Մուրապիտ Հընես:*

*Դիրտիտ տեղը տա* (այսինքն՝ Աստված կատարի խնդրանքը):

*Յուղուրավ ինի* (այսպես օրհնում են նոր իր, հագուստ առնելու առիթով):

*Էրգան ումբըրավ ինես* (այսինքն՝ երկար կյանք ունենաս):

*Հըղեցր պարի ինի* (այսպես օրհնում են որևէ մեկին ճանապարհելու ժամանակ):

\* Մեզ է տրամադրել Վարյա Խաչատրյանը. նա հավատում է մեր գյուղերի սագաբանական նյութեր, որոնք, հուսով ենք, մի օր կհասնեն ընթերցողներին:



## ՔԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Հնում մեր գրիչներն իրենց մաքրյալն ավարտել են հիշապակարանով, որտեղ գրել են իրենց ապրած ժամանակի և պայմանների մասին, ու հաճախ սկսել են այսպես. «Գրեցայ ի դառն և ի նեղ ժամանակի»: Մեր պատմության նյութերը հավաքել և ուսումնասիրել սկսեցի 1964 թվականից, շարադրեցի փարբեր առիթներով, բայց հանգամանորեն՝ 1992 թվականի դառն ու կակժալի ժամանակներից սկսած, երբ մեր գերյալ գյուղերից վավերագրեր չէին մնացել, իսկ վկաներն օր օրի պակասում էին, ցրվում աշխարհով մեկ: Կարող և անասելի թանկացել էր ամեն ինչ: Համալսարանի դոցենտիս ամսական աշխատավարձը մոտ 1000 դրամ էր (2,2 ԱՄՆ դոլար), իսկ 1 կգ կարագը՝ 1300 դրամ, միսը՝ 800—1000 դրամ: Հացը չէր բավարարում, վաճառվում էր կարոնով, ըստ շնչի (մեկ շնչին՝ 350 գրամ, բայց կշռում էր հազիվ 200), պեքրական խանութում 70 դրամ, մասնավոր՝ 100—130 և անասելի անորակ: Ըստ շնչի էր վաճառվում բրինձը (ամսական 500 գր), կարագը (800 գր), շաքարը (1 կգ), նույնիսկ բենզինը (մեքենա ունեցողներին): Հաճախ էլ կարոնները մնում էին առանց իրացման: Ջեռուցում չկար, էլեկտրական հոսանքը օրական 1-2 ժամ էր փրվում, այն էլ ոչ միշտ: Վառելիք չեռք բերելը շատ դժվար էր. 1 մ<sup>3</sup> թաց փայտը 20 դոլար արժեք (ռուսականով՝ 70000 ռուբլի), 1 փուփ լուցկին՝ 10 դրամ, 1 ժամ վառվող մոմը՝ 60 դրամ, 1 լիտր նավթը՝ 200 դրամ, ավտոբուսի փոմսը՝ 25 դրամ, իսկ մասնավորը՝ 50-60, մինչև 100 դրամ, նայած օրվա ժամին ...

Օրինյալ լինեն նրանք, ովքեր աջակից եղան: Աստված ողորմի մեր նախնիներին, որոնք գրելու և հպարտանալու արժանի պատմություն են կերպել: Աստված ողորմի փողերս կարդացողի հանգույցյալներին ու նրանց շարքում՝ ծնողներին՝ Հարություն և Սոնա Ղահրամանյաններին, որոնք պատգամեցին կորստից փրկել մեր հողի անցյալը: Աստված ողորմի ականավոր հայ գործիչ Բագրատ Ռէլուբաբյանին, որն ինչ, համար լույս-փարոս եղավ գիտության ճանապարհը բռնելու օրվանից և համբերաբար ուսուցիչ: Հազար ողորմի մեր սուրբ նահապակներին, որոնց հիշապակը անխոնջ նվիրում է պահանջում ...

Փառաբանենք ու բարին մաղթենք Շահեն Հովասափյանին և Վիրալի Գրիգորյանին, որոնց հովանավորությամբ փոխադրվեց սույն գիրքը: Աստված օգնի հայրենակորույս շահունյանիներին, որոնց փառապանքն ու հույսը խթան եղան ինչ, համար: Ինչպես կասեին անցյալում «անմեղադիր լեռուք», այսքանը միայն ի վիճակի եղա:

ԿԻՄ ՂԱՀՐԱՍՏԱՆՅԱՆ

## ՇԱՀԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ



«Մոսկվի դոդանջների» մեջ կարողավ այն մասին, որ Շահեն Հովասափյանն սրանցնել է մեր գերյալ գյուղերի պատմությունն արտապուղի գրքերի մեկենասությունը, աշխարհի փարբեր կողմերից մեր հայրենակիցներն իրենց սրտի խոսքն են հղել այդ առիթով. «Լավ արմատները լավ շառավիղ են փվել: Շահենի հայրը՝ Վարդգեսը, Հայկազ դային, Ավագ ապերը, բոլոր նախնիները մեծ հարգանք վայելող, գործարար, օգնող ու բարի մարդիկ են եղել... Շաք ապրես, Շահեն»:

Այդ փոհմից Անդրեաս Հովասափյանը Գանչակի նահանգում ճանաչված գործիչ է եղել, հայկական մանկավարժական ուսումնարանի փնօրենը, արքունիկ է 1937 թ.: Տեր Կոռյունը Գյուլիստան գյուղի քահանան է եղել, նրա որդի Գառնիկը Սարդարապատի ճակատամարտի հերոսներից է: Հայրնի գինագործ է եղել Ավագ Հովասափյանը: Նրա որդին ճանաչված դասախոս էր Պսկովի համալսարանում: Մինաս Հովասափյանը 1930-ական թվականներին ռազմական խոշոր գործարանի փնօրեն էր Կիևում: Հեղափոխում գործարանը կոչվեց նրա անունով:

Այդ փոհմի արժանի զավակ Շահեն Հովասափյանը ծնվել է 1958 թ., Գյուլիստանում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ծառայել խոր-



կորդային բանակում, հեղտ սրացել բարչրագույն կրթություն, վերադարձել հայրենիք: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Շահումյանի շրջանում: Արցախյան շարժումն սկսվելուց հետո դարձել է շրջանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի տեղակալ և շրջգործկոմի նախագահի տեղակալ, որի վրա էր գործնականում ծանրացած շրջանի ղեկավարումը: Կարևոր դեր է կատարել պարտիզանական ջոկատի կյանքում, որից հետո էլ՝ Շահումյանի շրջանային վարչակազմի ստեղծման և վերաբնակեցման գործում: Այսօր էլ շարունակում է բազմաբնույթ աջակցությունը մեր հայրենակիցներին, միաժամանակ կատարելով ղեկավար փարքեր աշխատանքներ ՀՀ կառավարության համակարգում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	3
ՀՅՈՒՄԻՍՄԱՅԻՆ ԱՐՅԱՆ, ՀՈՂԸ ԿԱՆՉՈՒՄ Է .....	5
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐ .....	41
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ՎԻՍՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	63
ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ .....	84
ՀՆԱՍՅԱ ՄԱՏՅԱՆՆԵՐ .....	95
«ՄՈՍՎԻ ԳՈՂԱՆՋՆԵՐ». ՅԱՎ ՈՒ ԿԱՐՈՏ, ՀՈՒՅՍ ՈՒ ՀԱՎԱՏ .....	99
ՄԵՐ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ .....	115
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ .....	134
ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ .....	137
ԲԵՐՔԱՀԱՎԱՔ՝ ԿԼՈՐ ՏԱՐԻՆ .....	161
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ .....	163
ՄՐՅՈՒՄՆԵՐ, ԽԱՂԵՐ .....	175
ԱՐՅՈՒՆՔՈՏ ԺՊԻՏՆԵՐ .....	182
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԽՈՐՏԱԿԱՍԾ ԼԵԶԱԿԱՆ ԱՇՆԱՐՀԻՑ .....	227
ՀԱՐԱՁԱՏ, ԱՆՍՈՌԱՅ ԲՍՈՒՐ .....	243
ՉԱՓԱԾՈ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ .....	267
ՕՐՀՆԱՆՔ .....	273
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ .....	274
ՄԵՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԸ .....	275

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԿԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

**ՕՋԱԽԻ ԳԻՐՔ. ՆՇԽԱՐՆԵՐ**

Պատասխանատու խմբագիր՝ **ԱԼՎԱՐԳ ՂԱԶԻՅԱՆ**  
Շարվածքը և ձևավորումը՝ **ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ**

«ՕՋԱԽԻ ԳԻՐՔ. ՆՇԽԱՐՆԵՐ» գիրքը Շահունյանի շրջանի ծրագրված հանրագիտարանի առաջին հատորն է: Երկրորդ հատորը «ՕՋԱԽԻ ԳԻՐՔ. ՀՈՂԸ ԿԱՆՉՈՒՄԷ», նվիրված կլիմայի շրջանի հանգամանակից պատմությանը: Երրորդ հատորը՝ «ՕՋԱԽԻ ԳԻՐՔ. ԿԱՐՈՏԻ ՀԱՍՅԵՆԵՐ», կամփոփի տեղեկություններ տարագիր շահունյանցիների մասին:

Հանձնված է արտադրության 08.05.2002 թ.

Չափսը՝ 60 x 84/16

Տպագրական 17,5 մամուլ

Պատվեր՝ 264

Տպարանակ՝ 1000 օրինակ

Տպագրված է «Տիգրան ՍՆՃ» ՓԲԸ հրատարակչության տպարանում

Հասցեն՝ Երևան, Արշակունյաց պող. 2